



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АРАМ ГАНАЛАНЯН

ОЧЕРКИ
ПО ИСТОРИИ АРМЯНСКОЙ
ФОЛЬКЛОРИСТИКИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ,
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՇԱԼԻ

891.981.03+338(473.25)

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

A 72802



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

*Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:*

*Պատասխանատու խմբագիր,
բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղանալանյան, Ա. Տ.

Ղ 360 Դրվագներ հայ բանագիտության պատմության Պատ. խմբ.
Ս. Բ. Հարությունյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985.—293 էջ,
1 թերթ նկ.

*Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Արեղյանի անվ. գրակ. ին-տ
Աշխատության մեջ ներկայացվում են հայ բանագիտության զարգացման
պատմական ուղիները, հայ բանագիտության պատմության մեջ նշանակալից
գեր խաղացած ութ անվանի գործիչների բանագիտական վաստակը բնութագրող
գիմազատիկները և հայ բանագիտության ու բանահյուսության մատենագիտու-
թյունը:*


*Նախատեսված է բանասեր-բանագետների, գրականագետների, մշակույթի
պատմաբանների, ուսանողների և ընթերցող լայն շրջանների համար:*

460400000
Ղ. 703(02)—85 26—84

ԳՄԴ 82



Արամ Վանյանյան
(1909—1983)



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ակադեմիկոս Արամ Ղանալանյանի «Դրվագներ հայ բանագիտության պատմության» աշխատությունը յուրատեսակ ամփոփումն է հեղինակի՝ հայ բանագիտության պատմության ուսումնասիրման բնագավառում կատարած շուրջ կեսդարյա տարբեր հետազոտությունների:

Աշխատությունը բաղկացած է երեք հիմնական բաժիններից. 1. Ներածությունից, ուր շարադրված է հայ բանագիտության պատմական զարգացման համառոտ ուրվագիծը՝ սկզբից մինչև մեր օրերը. 2. Հայ բանագիտության պատմության մեջ նշանակալից դեր խաղացած գրական, գիտական ու մշակութային ութ անվանի գործիչների (Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Գ. Սրվանձատյանց, Մ. Աբեղյան, Կոմիտաս, Ն. Մառ, Հ. Օրբելի, Կ. Մելիք-Օհանջանյան) բանագիտական վաստակը բնութագրող դիմապատկերներից և 3. XIX դարի կեսերից մինչև մեր օրերը հրատարակված բանահյուսական նյութերի և ուսումնասիրությունների մատենագիտությունից:

Աշխատությունը հրատարակության հանձնելուց առաջ հեղինակը մտադիր էր այն համարել հայ առանձին բանագետներին (Մ. էմին, Հ. Գաթրըճյան, Ստ. Պալասանյան, Գր. Խալաթյանց, Գ. Հովսեփյան) նվիրված գլուխներով, ինչպես նաև նախասովետական շրջանի հայ բանագիտության պատմությանը վերաբերող ներառական ուրվագծի նոր շարադրմամբ: Սակայն հեղինակի անժամանակ մահվան պատճառով այդ մտադրությունը մնաց չիրականացված: Հեղինակի այդ մտադրությունը մասամբ իրագործելու նպատակով ինստիտուտը հարմար գտավ ներածության հիշյալ բաժնում նույնությամբ ղեկավարել Ա. Ղանալանյանի 1945-ին հրատարակած «Հայ ժողովրդական բանահյուսություն» Ա պրակից («Հայ բանագիտությունը», էջ 6—38) նախասովետական շրջանի հայ բանագիտության համառոտ, բայց բավական լավ սխտեմավորված պատմությունը և այն կցել այս աշխատության համար հեղի-

նաեկի՝ կյանքի վերջին ամիսներին շարադրած սովետահայ բանագիտության պատմության ներածական ուրվագծին:

Աշխատության «Մատենագիտություն հայ բանահյուսության» բաժնի նյութերի մի մասը (մասնավորապես՝ սովետական շրջանի) քարտադրված և ժամանակագրորեն դասակարգված էր հեղինակի կողմից, իսկ մնացած նյութերի մեծագույն մասը՝ դասակարգված ըստ հեղինակների, նյութերի բնույթի և բանահյուսական ժանրերի, գրված է շուրջ 35 աշակերտական մեծ ու փոքր տետրերի մեջ, հավաքված հեղինակի կողմից 1928—1936 թթ. ընթացքում: Մատենագիտական այդ նյութերի վերջնական համակարգումն ու համեմատությունը կատարված է աշխատության խմբագրի կողմից: Խմբագրի կողմից են կատարված նաև ներածության սովետահայ բանագիտության պատմությանը վերաբերող որոշ փաստերի ու տվյալների տողատակի մի քանի հավելումները՝ համապատասխան նշումներով: Աշխատության մեջ, «Մատենագիտությունից» առաջ, հավելվածի կարգով դրված է Սարգիս Հարությունյանի՝ Ա. Ղանալանյանի կյանքին ու բանագիտական գործունեությանը նվիրված մենագրական ակնարկը, ուր բացահայտված է ու գնահատված Ա. Ղանալանյանի գիտական դերի ու վաստակի պատմական նշանակությունը՝ սովետահայ բանագիտության դարգացման մեջ և այդ առումով գալիս է յուրովի համալրելու «Դրվագներում» ղեկողված նշանավոր բանագետների դիմապատկերների շարքը:

Հրատարակության հանձնելով հանգուցյալ Ա. Ղանալանյանի «Դրվագներ հայ բանագիտության պատմության» աշխատությունը՝ Մ. Աբելյանի անվան զրականության ինստիտուտը համոզված է, որ անկախ աշխատության մեջ որոշ բանագետների դիմապատկերների բացակայությունից, «Մատենագիտության» բաժնի մի շարք նյութերի պակասությունից, այն ընդհանուր առմամբ ամբողջական պատկերացում է տալիս այլ բանագիտության անցած պատմական ուղու, ձևեր բերած արդյունքների, նշանավոր բանահավաք-բանագետների ներդրած վաստակի մասին և գալիս է որոշ չափով վերացնելու հայ բանագիտության պատմության ցարդ նկատվող բացակայությունը և մեծապես նպաստելու դալիքում հայ բանագիտության համակարգված գիտական ամբողջական պատմության շարադրմանը:

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատության բովանդակությունը կազմող գլուխների մեծ մասը, իբրև առանձին հոդվածներ, տարբեր առիթներով նախապես լույս են տեսել զանազան գիտական հանդեսներում ու ժողովածուներում («Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գրական-բանասիրական հետախուզումներ», «Ն. Մառը և հայագիտության հարցերը», «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության»):

Ելնելով այն հանգամանքից, որ նշված բոլոր հոդվածներն էլ նվիրված են հայ բանագիտության ականավոր երախտավորներին ու կարևոր թեմաներին և որ ցարդ մեղմում չի գրված այդ բանագիտության ամբողջական պատմությունը, նշված բացը մասամբ վերացրած լինելու նըպատակով, որոշեցինք հիշյալ հոդվածները միացնել իրար և դասավորել ժամանակագրական հաջորդությամբ, լույս ընծայել մի գրքով՝ «Իրվագներ հայ բանագիտության պատմության» ընդհանուր խորագրի տակ:

Հոդվածները հրատարակության հանձնելուց առաջ հիմնովին վերանայված են. դրանք համալրված են նոր կարևոր նյութերով, կատարված են խմբագրական և կառուցվածքային նշանակալից փոփոխություններ, ճշտված են որոշ գնահատականներ:

Մասամբ նոր է գրված աշխատության «Ներածությունը», ուր տրված են հայ բանագիտության պատմության ընդհանուր ուրվագիծն ու գլխավոր նշանածոները՝ սկզբից մինչև մեր օրերը:

«Դրվագներ»-ի վերջում իբրև հավելված կցել ենք անցյալի և արդի հայ բանագիտության վերաբերյալ առանձին դրքերով և պարբերական մամուլի էջերում հրապարակված նյութերի «Մատենագիտությունը»: Այն ոչ միայն կարող է պիտանի լինել աշխատության մեջ հիշատակված բանագիտական տարբեր հարցերի լրացուցիչ պարզաբանման, այլև մեծա-

պէս նպաստել «Դրվագներին» բացը որոշ շափով լրացնելու և հայ բանագիտութեան պատմութեանն ավելի ամբողջական ընկալելու գործին:

Ավելորդ չենք համարում նշելու, որ տվյալ «Մատենագիտութեանը» սկսել ենք կազմել տակաւին ուսանողական տարիներին (1928—1929 թթ.), հայ ժողովրդական բանահյուսութեան առարկայի մեր այն ժամանակվա դասախոս Մ. Աբելյանի անմիջական խորհրդով: Այդ աշխատանքը տասնամյակների ընթացքում մեծապես լրացվելով ու աճելով, դարձավ բավական ընդարձակ ու ինքնուրույն արժեք ներկայացնող մի գործ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ուրվագիծ հայ բանագիտության պատմության

1

Հայ բանագիտությունը մեր մշակույթի պատմության ուսումնասիրության ուրույն մի ճյուղն է: Այն, ավել կամ պակաս շափով, կապված է մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական մտքի հետ և յուրովի անդրադարձնում է իր մեջ այդ կյանքի ու մտքի պատմական տարբեր փուլերը, վերջիններիս կարևոր առանձնահատկությունները:

Հայ բանագիտության նախապատմությունն ունի բավական հին ծագում: Նրա ակունքները հասնում են մինչև օտար (Հերոդոտ, Ստրաբոն) և հայ հնագույն պատմիչների (Մ. Խորենացի, Եղնիկ) գրվածքներում պահպանված համապատասխան նյութերն ու տեղեկությունները և վերջիններիս առթիվ նրանց կողմից արված դիտողություններն ու դասողությունները:

Ինչպես ուրիշ սովորի մեջ, այնպես էլ մեզ մոտ, ժողովրդական բանահյուսությունն անցյալում, ընդհանուր առմամբ, եղել է անտեսված ու արհամարհված վիճակում: Այդ երևույթի հիմնական պատճառներից մեկը հանդիսացել է հին դրականության եկեղեցական, կրոնական ուղղությունը: Բանահյուսությունն իր հեթանոսական-աշխարհային էությունից, բնական է, որ չէր կարող հետաքրքրել քրիստոնեական աշխարհայացքի տեր հին հեղինակներին:

Եկեղեցու հայրերը, ոչ միայն թերազնահատել ու անտեսել են ժողովրդի բանավոր ստեղծագործությունը, այլև, հաճախ, բառ չեն խնայել պարսավելու և պախարակելու համար այդ ստեղծագործության առավել աշխարհիկ-հեթանոսական բնույթ ունեցող նմուշները:

V—X դարերի սակավաթիվ հայ հեղինակներ միայն իրենց պատմական երկերում, այլ գրավոր աղբյուրների բացակայության պատճառով, մասամբ էլ տարերայնորեն և կամ քննադատելու ու մերժելու միտու-

մով, բերում են որոշ բանահյուսական նյութեր, հատկապես պատմա-
կան բնույթի երկեր (ղրույց, ավանդություն, վեպ և այլն):

Այս տեսակետից մեղադրում ամենանշանավոր հեղինակն է Մովսես Խորենացին: Խորենացին, իբրև բանիմաց ու կրթված մարդ և ժամանա-
կի գիտությունների բարձր մակարդակի վրա կանգնած պատմիչ, գիտակցել
է ժողովրդական բանահյուսության կարևորությունը՝ տվյալ ժողովրդի
պատմությունը գրելու գործում, և ըստ այդմ քննադատորեն օգտագործել
այն իր Հայոց պատմության մեջ:

Խորենացու հայացքով առասպելներն մեջ իրականությունն արտա-
հայտված է ալլաբանորեն («զճշմարտութիւն իրացն ալլաբանաբար յին-
քեանս ունին թաքուցեալ»), ուստի և նա դրանցից օգտվելիս մեկնում է
առասպելները և միջի «հավաստին» վերցնում: Բարեբախտաբար, նա
հաճախ բերում է առասպելի համառոտ բովանդակությունը, երբե-
մըն նույնիսկ բնագրի բառերով, և ապա տալիս իր մեկնությունը կամ
բացատրությունը: Բացի այդ, Խորենացին ուրիշ կերպ էլ է օգտվում
առասպելներից. նա երբեմն առասպելը վկայակոչում է իր այս կամ այն
գրավոր աղբյուրից վերցրած պատմությանը (այդպես է, օրինակ, նրա
մոտ հիշատակված Շամիրամի առասպելը). երբեմն էլ բերում է առաս-
պելի բովանդակությունը առանց «մեկնության», այն պատճառով, որ
արհամարհում է այդ առասպելները (այդպես է, օրինակ, Տորքի առաս-
պելը):

Բանահյուսական նմուշների օգտագործման նման եղանակներ գրա-
նում ենք նաև մեր մի երկու ուրիշ հին հեղինակների՝ Նզնիկի և այլոց
մոտ:

XI դարից և առանձնապես XII և XIII դարերում փոխվում է գրու-
թյունը: Կյանքի և աշխարհայեցության փոփոխման հետևանքով, որ
արդյունք էր առևտրական կապիտալի զարգացման և քաղաքների բար-
գալաճման, տեղի է ունենում դրականության աշխարհականացումն ու
վերածնունդը: Առաջ է գալիս ուժեղ ձգտում դեպի աշխարհիկ կյանքն
ու բնությունը, մերժվում է հին կրոնական գաղափարախոսությունը,
հանդես են գալիս գրական նոր թեմաներ և նոր տեսակներ, նոր (ժողո-
վրդական) լեզվով:

Գրականության այդ վերածննդի և աշխարհիկ ոգու հաղթանակի
պատճառով փոխվում է նաև ժողովրդական բանահյուսության նկատ-
մամբ նախկինում եղած ժխտական վերաբերմունքը:

XIV—XV դարերից սկսած, գեղարվեստական չափածո և արձակ եր-
կերին նվիրված ժողովածուների մեջ, այլև առանձին պատմական գոր-

ժերում, անհատ հեղինակների գրվածքների կողքին սկսում են երևալ նաև ժողովրդական երգերի, առակների, ավանդույթյունների և այլնի նըմուշներ:

Ժողովրդական բանահյուսության նյութեր պարունակող այդպիսի հուշարձաններ են XIV, XV և հետագա դարերում կազմված մեր բաղմաթիվ «Տաղարանները», «Առակագրքերը», «Ոսկեփորիկները», ինչպես նաև XVII դարի պատմագիրներից՝ Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Սարկավազի «Պատմությունները»: Հատկապես վերջինս իր գործով («Պատմագրություն» Ա հատորը), ինչպես ճիշտ կերպով նկատում է պրոֆ. Մ. Աբեղյանը, — «հանդիսացել է հայոց ֆոլկլորի ... առաջին հավաքողը խորենացուց հետո»¹:

2

Ինչպես ուրիշ ազգերի մեջ, այնպես էլ մեզ մոտ ժողովրդական բանահյուսության հավաքումն ու ուսումնասիրությունը սկսվում է միայն XIX դարի առաջին տասնամյակներից:

Մի շրջան էր դա, երբ Եվրոպայի առաջավոր երկրներում ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման հարցերը սերտորեն միաձուլվում էին տվյալ ժողովրդի ազգային ինքնաճանաչման և նրա զարգացման պատմական ուղու կարևոր խնդիրների հետ:

XIX դարի առաջին տասնամյակներին էր, որ ծավալեցին իրենց բեղմնավոր բանագիտական և բանահավաքչական գործունեությունը գերմանացի անվանի գիտնականներ Գրիմմ հղբայրները՝ մեկը մյուսի հետևից լույս ընծայելով իրենց ժողովածուներն ու հետազոտությունները գերմանական ժողովրդի բանավոր ստեղծագործության տարբեր տեսակների վերաբերյալ, որոնք հետագայում օրինակ հանդիսացան և կարևոր դեր խաղացին մյուս ազգերի բանահյուսության հավաքման և ուսումնասիրման գործում:

Եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցության տակ, XIX դարի առաջին կեսերին, Եվրոպայի հայ գաղութներում և բուն Հայաստանում, հայ և մասամբ էլ հվրոպացի գիտնականների ձեռքով, սկսվում է նաև հայ ժողովրդական բանահյուսության հավա-

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, Երևան, 1946, էջ 456:

քոմն ու ուսումնասիրությունը, որը մի քանի տասնամյակ հետո արդեն ձևեր է բերում իր ինքնուրույն ազգային-հասարակական հիմքն ու տեղը:

Այսպես, 1843 թվականին, Վենետիկում հրատարակվող «Բաղմամէյա» հանդեսում տպագրվում է «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» խորագրով անստորագիր մի հոդված, Վանա ժողովրդական երգերի մի նմուշի հետ միասին, ուր խոսվում է ազգային երգերի և ավանդությունների մեծ արժեքի մասին, և կոչ է արվում վերջիններիս հավաքման և ուսումնասիրման անհրաժեշտության վերաբերյալ:

«Ճշմարիտ ազգասիրի մը առջև,—կարդում ենք հիշյալ հոդվածում,—շատ հարգի բաներ են նաև ան ավանդները, որ բերնեբերան անցնելով՝ ինչլան իր օրերը հասած են: Վասն զի ազգի մը պատմությունը, բնավորությունները, սովորությունները, լեզուն ու լեզվին դանադան փոփոխությունները, ոչ միայն գրավոր պատմություններն կիմացվի, հապա նաև ան գրավոր հիշատակություններն առաջ անգիր ավանդություններով կը հաստատվին:

...Փափագելի բան է, որ մեր ազգայինք ալ, ուրիշ բարեկիրթ ազգաց պես վառվէին ազգային ավանդությանց սիրովը, ու ձևերեն և կածին չափ, ջանային հավաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմություններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդելին՝ կամ առանձին տըպագրությամբ, և կամ ազգային օրագիրներեն մեկտուն խրկելով»: Այնուհետև, մեջ բերելով վերևում հիշված վանեցոց կրգը, և տուն առ տուն վերլուծելով այն, հոդվածագիրը եզրակացնում է. «Ահա այսպիսի բանաստեղծություններն են, որ ազգին անարատ ու սկզբնական հանճարը կը հասկըցնեն մեզի»²:

Նույն «Բաղմամէյաի» մեջ, հիշյալ և հաջորդ տարիներին, պարբերաբար լույս են տեսնում բաղմամթիվ «հայախոս առածներ», «առակական առակավոր խոսքեր», ինչպես նաև ժողովրդական երգերի նմուշներ:

1847 թվականին, Թիֆլիսում լույս տեսնող «Կովկաս» լրագրի մեջ երևում են նույնպիսի նյութեր. իսկ № 16-ում խոսվում է խորհնացու Հալոց պատմության մեջ պահպանված բանահյուսական պատառիկներին մասին:

XIX դարի առաջին կեսի հետ է կապված նաև հայկական բանահյուսության նյութերի հավաքման և ուսումնասիրման ուղղությամբ եվրո-

² «Բաղմամէյա», 1843, էջ 332—334:

պացի մի երկու գիտնական-ճանապարհորդների կատարած աշխատանքը³։

Այսպես, գերմանացի Ֆրիդրիխ Բոդենշտեյտը XIX դարի սկզբներին լինելով Հայաստանում, խաչատուր Աբովյանի օգնությամբ հավաքել է տեղական ժողովրդական երգերի որոշ նմուշներ³։

Նույն գործով է զբաղվել նաև եվրոպացի մի ուրիշ նշանավոր գիտնական-ճանապարհորդ՝ Բառոն Ալգուստոս Ֆոն Հաֆստհաուզենը, Հայաստանում իր կատարած ճանապարհորդության ընթացքում, որին, ինչպես Բոդենշտեյտին, այդ գործում, դարձյալ մեծապես նպաստել է խաչատուր Աբովյանը⁴։

Կարելի է հիշել նաև ֆրանսիացի ականավոր հայագետ Ռյուվորեի անունը, որը մեկ զբաղեցնող ժամանակաշրջանում, հայ լեզվի պատմության և գրականության հարցերի հետ, զբաղվել է նաև հայոց ժողովրդական երգերով։ Ուշագրավ է այս տեսակետից նրա ընդարձակ հոդվածաշարը «Հայոց ժողովրդական երգերը» խորագրով, տպագրված Թիֆլիսում լույս տեսնող «Кавказ» լրագրի մեջ⁵։

Եթե մինչև 50-ական թվականները բանասերները գերազանցապես զբաղվում էին բանահյուսական նմուշների հավաքումով, ապա 50-ական թվականներից նրանց ուշադրությունը բեկուվում է գլխավորապես խորենացու Պատմության մեջ եղած բանահյուսական նյութերի ուսումնասիրության վրա։

Այսպես, 1850 թվականին Մոսկվայում լույս է տեսնում Լադարյան ճեմարանի դասախոս, անվանի հայագետ Մ. Էմիլի՝ գրաբար լեզվով գրված «Քննությունը»՝ «Վէպը հնոյն Հայաստանի» վերնագրով, որի մեջ հեղինակը, հակառակ հայ գիտնականների և եվրոպացի հայագետների մինչ այդ ունեցած այն սխալ ու անհիմն կարծիքի, թե՛ հին հեթանոս Հայաստանը չի ունեցել իր վիպասանությունը, ապացուցում է, որ հին հայերն ունեցել են ընդարձակ վեպեր, «որոնք այդ երկրի հնագույն դարերի պատմության տեղն էին բռնում»։

Նույն թվականին, «Եվրոպա» լրագրի մի շարք համարներում, և ապա Վիեննայում առանձին զրքով լույս է տեսնում Հ. Գաբրեկյանի մի աշխատանքը խորենացու Պատմության մեջ եղած բանահյուսական նյութերի

³ Բոդենշտեյտ, Ճանապարհորդություն դեպի Հայաստան, «Հանդես գրականական և պատմական», Բ գիրք, Մոսկվա, 1889, էջ 236։

⁴ Август фон Гакстаузен, Закавказский край, часть II, СПб., 1857, стр. 48, 50, 53—55.

⁵ «Кавказ», 1853, № 3—6, 8.

վերաբերյալ⁶, ուր հեղինակը, էմիլիյե բուրբուլին անկախ, քննության է առնում նույն հարցը և գալիս նման ելլրակացության: Գաթրճյանը, միաժամանակ, առաջին անգամ մեր գրականության մեջ, բավական ճիշտ բնութագիր է տալիս հիշյալ նյութերի բովանդակությանն ու արվեստին:

Հնի ուսումնասիրության հետ մեկտեղ խնդրո առարկա ժամանակաշրջանում (50-ական թվականներ) շարունակվում է նաև նոր բանահյուսության հավաքումն ու ուսումնասիրությունը:

Այդ աշխատանքի ռահվիրան ու ամենակարկառուն դեմքն է թիֆլիսահայ նշանավոր գիտնական-բանահավաք, բժիշկ Գևորգ Ախվերդյանը: 40-ական թվականների վերջից և 50-ական թթ. սկզբից նա ձևոնամուխ է լինում իր հայրենի քաղաքի ժողովրդական և աշուղական հարուստ բանահյուսության նմուշների հավաքմանը: 1852 թվականին հրատարակության է հանձնում իր այդ հավաքած նյութերից՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի դավթարը⁷, դրանով իսկ կատարելով իր առաջին անգնահատելի ծառայությունը հայ գրականությանը:

Իր «Հառաջաբանի» մեջ, խոսելով վերահիշյալ նյութերը հավաքելու համար իր ունեցած գիտումների մասին, Ախվերդյանը գրում է. «...Սըրանց (խոսքը աշուղներին և ժողովրդական երգիչներին է վերաբերում—Ա. Ղ.) մե քանի խաղերից ավելի ենք նկատում ազգային հոգին ու ոճն, քան թե պատմագրական հաստ-հաստ գրքերիցն: Էս վերջին հանգամանքն ավելի հորդորում է ինձ, որ հաղորդեմ ազգակիցներուս մեր աշուղներու երգերն՝ սկսելով Սայաթ-Նովու խաղերիցն, սրանցից կու հայտնվի մեզ՝ ազգի ճաշակն, ազգային բանաստեղծներու մտաց աճումըն ու օտարական ազդեցությունն» (էջ ք):

Նույն տարին, երբ Մոսկվայում ապագրվում է Ախվերդյանի «Սայաթ-Նովան», Վենետիկում լույս է տեսնում Ղևոնդ Ալիշանի «Ռամկական երգը հայոց» խորագրով ժողովածուն, միջնադարյան տաղերի և «Բազմավէպ»-ից քաղված ժողովրդական-ռամկական երգերի նմուշներով⁸:

50-ական և ապա 60-ական թվականների առաջին կեսերին, ժողո-

⁶ Հ. Խաբլրցյան, Պատմություն մատենագրության հայոց, Անգիր ժամանակ, Վիեննա, 1851:

⁷ Սայաթ-Նովա, Լուս զցած աշխատասիրութենով Գևորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852:

⁸ Ղ. Ալիշան, Ռամկական երգը հայոց, Վենետիկ, 1852:

վերդական բանահյուսությանը իրենց էջերում բավական լայն տեղ են հատկացնում նաև արևմտահայ ու արևելահայ պարբերականները:

Այսպես, 1855 թվականին «Աստղիկ Արևելյան»-ը տպագրում է մի շարք առածներ ու ասացվածքներ: 1859 թ. նույնը անում է և «Մեղու Հայաստանի»-ն, միաժամանակ խոսելով դրանց հավաքման անհրաժեշտության մասին: 1860 թվականին «Կոռնկ»-ը տպագրում է Միք. Քոչարյանի հավաքած ժողովրդական առած-ասացվածքների բավական սովոր ժողովածուն: 1861 թ., «Բազմավէպ»-ն ու «Արծուի Վասպուրական»-ը հրատարակում են ժողովրդական երգեր և առածներ: 1863 և 1864 թվականներին «Կոռնկ»-ն ու «Մեղու Հայաստանի»-ն տալիս են ժողովրդական հեքիաթներ և երգեր:

Եթե մինչև 60-ական թվականները ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման գործը մեղանում ընթանում էր ավելի ելրոպական և ռուսական բանագիտական մտքի ազդեցության ներքո, ապա 60-ական թթ. երկրորդ կեսից այդ գործը ձևով է բերում իր ինքնուրույն հասարակական հողն ու հիմքը:

Մի շրջան էր դա, երբ ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման խնդիրները մեղանում ևս միաձուլվում էին հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման և նրա զարգացման պատմական ուղու կարևոր խնդիրների հետ:

Ազգային զարթոնքի, հայրենի գրականության ու մշակույթի վերածնության դրոշակի տակ, 60-ական թվականների երկրորդ կեսերից համախմբվում և այդ գործին ծառայելու են որդեգրում իրենց հասարակական տարբեր խավերի ծոցից դուրս եկած հայ մտավորականներ՝ հրապարակախոսներ, լրագրողներ, ուսուցիչներ... Յուրաքանչյուրն իր նախասիրությունների և ունակությունների համեմատ սկսում է ծառայել ազգային դպրոցի, մամուլի, գրականության զարգացմանը:

Հատուկ ուշադրություն է նվիրվում և ժողովրդական բանահյուսությանը: Վերջինիս բուն ջատագույներ են դառնում նախ և առաջ 60-ական թվականների հայ լուսավորիչները, որոնց մեջ այս տեսակետից ամենից ավելի աչքի է ընկնում Մ. Նալբանդյանը:

Ժողովրդական բանահյուսությունը Նալբանդյանին հետաքրքրել է ոչ միայն տեսական-գիտական առումով, այլև իբրև ժողովրդի կյանքի ու պայքարի և հատկապես գրականության ժողովրդայնության հարցերի հետ կապված մի բնագավառ:

60-ական թվականների երկրորդ կեսերից ժողովրդական բանահյու-

սովորելը սկսում է լրջորեն զբաղեցնել ժամանակի մանկավարժներին: Հայրենի գրականության հետ միասին, բարձր դասարանների դասավանդման առարկա է դառնում նաև ավանդական բանահյուսությունը, գրվում են համապատասխան դասընթացներ:

Այս տեսակետից ուշագրավ գործ է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի գրականության դասատու, ժամանակի նշանավոր գրական-գիտական գործիչ Ստեփանոս Պալասանյանի «Հայոց գրականության պատմության» Ա հատորը, որն ամբողջապես նվիրված է «Բանավոր գրականությանը»:

Իր այս աշխատության մեջ հեղինակը բնութագրում է ընդհանրապես ժողովրդական բանահյուսությունը և մանրամասն վերլուծման է ենթարկում մասնավորապես հայոց դիցաբանական-գլուցազնական առասպելները, պատմական վեպերն ու ավանդությունները, քնարական երգերը, զրույցները, կենդանական վեպերը և այլն:

Պալասանյանի հայացքների վրա նկատելի է գերմանացի և ռուս նշանավոր բանագետների (Գրիմմ, Շերր, Բուսլան) տեսությունների ազդեցությունը, որ խոստովանում է և ինքը՝ հեղինակը:

Ավելի արժեքավոր է ինքնուրույն է Պալասանյանի շարադրանքի այն մասը, ուր նա խոսում է հայկական բանահյուսության զանազան տեսակների բովանդակության ու արվեստի մասին: Եթե բանահյուսության մասին ընդհանրապես խոսելիս, Պալասանյանը հիմնականում հարասում է եվրոպացի և ռուս բանագետների մոտերը, ապա այստեղ նա կատարում է ինքնուրույն հետաքրքիր դիտողություններ և ընդհանրացումներ:

Առանձնապես ուշագրավ են այս տեսակետից հայոց վիպասանական երգերի ներքին միությունն ու ամբողջության մասին Պալասանյանի հայտնած մոտերը, որոնցով նա հիմնովին տարբերվում է նախորդ բանագետներից (Էմին, Գաթերճյան):

«Բոլոր այն գրագետները առհասարակ,— գրում է Պալասանյանը,— որոնք մինչև այժմ հայոց վիպասանական երգերի վրա գրել են, ցույց տալով թե ազգային նախնական պատմությունը ամբողջ երգերից հանված ու նրանց վրա հուսված է, այնպես որ թե այս երգերը ամբողջ վիպասանությունների հատուկտոր հատվածներ են, որ այլ և այլ ժամանակներում հորինել են մեր վիպասան երգիչները... Սխալը այստեղ այն բանումն է, որ նրանք արտաքին միությունը ու ամբողջությունը խառնում են ներքին միությանն ու ամբողջության հետ: Սկզբնական վիպասանական բանաստեղծության մեջ բանը առաջին միությունը գտնելը չէ

այնքան, որքան այն ազգայնության ներքին միությունը, որով ազգի կանոնավոր զարգացման իդեալները իրենց բացառությունը գտնում են այլ և այլ ժամանակներում հորինված երգերի մեջ...»⁹ (ընդգծումները մերն են—Ա. Ղ.):

Ժողովրդական բանահյուսությունը 60-ական թվականների երկրորդ կեսից լայնորեն մուտք է գործում նաև ժամանակի երգարանները: Ծիշտ է, դրանից առաջ էլ (50-ական թթ.) մի քանի երգարաններում, անհատական-ազգային երգերի կողքին երևացել էին ժողովրդական երգերի նմաններ էլ (հիշենք՝ Ալիշանի «Ռամկական երգք հայոց»-ը, 1852 թ., Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան»-ը, 1856 թ.), բայց դրանց իմիջը սահմանափակ էր:

1868 թվականին Մ. Մխանադյանցի խմբագրությամբ Պետերբուրգում լույս է տեսնում «Քնար հայկական» վերնագրով, հետագայում այնքան տարածված, հարուստ ու սովոր «ազգային երգարանը»: Նպատակ ունենալով տալ մի այնպիսի ժողովածու՝ «... ուր հավաքված լինին մեկ տեղ արեւելյան, արեւմտյան, հյուսիսային և հարավային հայերի երգերը, թե՛ տեղական բարբառով և թե՛ ամենեցուն հասկանալի հայերեն լեզվով», ժողովածուի կազմողը, առաջին անգամ մեր իրականության մեջ, գրական, աշուղական և այլ երգերի կողքին, լայն տեղ է տալիս նաև ժողովրդական երգերին, ղեկավարելով դրանք հատուկ բաժնի մեջ «Հասարակական (ռամկական) երգեր» ընդհանուր խորագրի տակ (էջ 130—185):

Զբաղարարվելով միայն «ռամկական» երգերով, Մխանադյանցն իր երգարանի վերջում, իբրև հավելված, տալիս է նաև 500-ի շուրջ ժողովրդական առածներ ու ասացվածքներ, նպատակ ունենալով՝


ա) «ընթերցասիրաց մտավոր զբոսանք պատճառել.

բ) առավել հարցախնդիր ուսումնականաց ազգիս այսօրինակ կենդանի աղբյուրներից նյութ հաղորդելով, ազգային բարուց և հանճարովերա բանադատությունների հառաջ բերել տալ, և

գ) առիթ տալ հայ ուսումնասիրաց այս փոքր հավաքածուն ավելցնել այն հայախոս առածներով, որոնց գործ է ածում մեր ցրվյալ ազգը զանազան տեղ և որ ժամանակով կարելի լինի ի լույս հանել կանոնավոր և առանձին տպագրությամբ...»¹⁰:

⁹ Ստ. Պալասանյան, Պատմություն հայ գրականության, Ա. մաս, Թիֆլիս, 1865, էջ 245—246:

¹⁰ Միֆ. Մխանադյանց, Քնար հայկական, Պետերբուրգ, 1868, Հավելված:



Հայ բանագիտութիւնն պատմութիւնը, փաստորեն, սկսւում է անցյալ դարի 70-ական թվականներից, երբ հայ ժողովուրդը թեւեւ լիարժեք էր պատմական կյանքի մի նոր փուլ: Կապիտալիզմի զարգացման հետեւանքով սկսել էր խախտւել դարերով սրբազորած նրա նահապետական գոյակերպը, փոխւում էին հնօրյա բարքերը: Մի շրջան էր դա, երբ մեզանում բուռն վերելք էին ապրում ազգային-ազատագրական ոգորումները, երբ հասարակական լայն զանգվածները սկսել էին տոգորվել ապագայի ոռոմանտիկ երազանքներով:

Ազգային ինքնորոշման նշանաբանի տակ հայ ժողովուրդը ի տես աշխարհի տապալի էր հանում իր բազմադարյան հոգեւոր ու մտավոր հարստութիւնները, իր ներկան ու անցյալը, իր ինքնութիւնը: Սկսում են նորանոր հետազոտութիւններ կատարվել հայոց պատմութիւն, լեզուի, գրականութիւն, ազգագրութիւն բնագավառներում: Ժողովրդական բառ ու բանի նկատմամբ տասնամյակներ առաջ ծայր առած տարերային հետաքրքրութիւնը 70—80-ական թվականներին դառնում է գիտակցված անհրաժեշտութիւն: Ասպարիզ են գալիս հատուկ բանահավաքներ, իբրեւ ուսումնասիրութիւն ուրույն ու կարեւոր մի բնագավառ հանդես է գալիս բանագիտութիւնը:

Հայ բանահյուսութիւնն պատմութիւնն շրջադարձային այդ փուլի հիմնադիրն է ահա մեզանում դառնում հայ ժողովրդական բանահյուսութիւն մեծագույն երախտավոր, բանահավաք Գաբեգին վարդապետ Սրբվանձտյանցը:

1874 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Սրբվանձտյանցի «Գրոց-բրոց» ինքնատիպ վերնագրով ազգագրական, հնագրական ոչ սովոր ժողովածուն, որ ի շարս ազգագրական, տեղագրական և հնագրական նյութերի ղեւեղված էր նաև ժողովրդական ավանդութիւնների մի գեղեցիկ փունջ (Բեկի ուղտերն ու ուղտապանները, Հարսն ու փիսան, Սուրբ թռնիրը, Սիփանը ու Մասիսը և այլն):

Սակայն «Գրոց-բրոց»-ի մեծագույն նշանակութիւնը հայ բանագիտութիւնն պատմութիւնն համար հիշյալ ավանդութիւնները չեն, այլ նրա՝ «Հավելվածը», որ արված է հայ ժողովրդի ազգային մեծ էպոսի առաջին պատումը՝ Մշո բարբառով, «Աստուծոյ Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, հանդերձ վեպի մասին բանասեր-բանահավաքի սեղմ, բայց չափազանց ուշադրով առաջաբանով, որով Սրբվանձտյանցը հանդես է գալիս ոչ միայն իբրեւ վեպի հայտնաբերող ու առաջին գրառող, այլև նրա առաջին ուշիմ ու հմուտ ուսումնասիրող:

Իր գրքույկի թե՛ առաջաբանում և թե՛ վերջաբանում, խոսելով իր նկատառումների ու գրողումների մասին, Սրվանձությանցը գրում է. «Իմ փափաքս եղած է, որ բանասերը ուշադրություն դարձունեն Հայաստանի մեջ բնակած Հայոց ժողովրդական լեզվաց, և այն լեզուներով հրատարակեն վեպեր, տրամախոսություններ և այլն, և այսպիսով սիրելի և ծանոթ կացուցանեն զանոնք գրագիտաց, որպեսզի նոցա ձևքով հետըզհետև ի կանոնավոր գործածություն վերածին այն լեզուները, և ժամանակին մաշող ժանիքն զեծածանին ազգային դառավոր բանից և ավանդից հիշատակները, որոնց արժեքը կորսվելին հետո կզգանք, զանոնք ավաղելու համար միայն» (ընդգծումները մերն են—Ա. Ղ.): Եվ քիչ անց, ավելացնում. «Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա, բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինեն և այսպանողներ, ոչ միայն այս գրվածին կտորը (խոսքը՝ «Սասունցի Դավիթ» մասին է—Ա. Ղ.), այլ ամբողջ սույն գրքույկը, ընդոր և իմ անձը: Ասոնք չհասկացողներ են: Բայց մեր փուլթը չէ: Քաջալերված կը համարիմ զիս, եթե համրանքով քսան հոգի և եթ լինին հավանող այս գործույն»¹¹:

Սրվանձությանցի թերահավատությունն անհիմն էր: Նրա գործը բավական ջերմ ընդունելություն է գտնում ժամանակի առաջավոր մտավորականության տարբեր շրջաններում: Քաջալերանքի խոսք են ասում այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպես՝ Ղ. Ալիշանը, Գ. Պատկանյանը, Մ. Աղաբեկյանը, Հ. Շահնազարյանը և ուրիշներ: Արևմտահայ և արևելահայ թերթերը՝ «Սիոն», «Արևելյան մամուլ», «Մասիս», «Մշակ», «Մեղու Հայաստանի» ... տպում են զրվատական գրախոսություններ, որոնցից պետք է հատկապես հիշատակել «Մշակ»-ի գրախոս Մելիքզադեի (=Րաֆֆի) ընդարձակ հոդվածը:

«Գրոց-Բրոց»-ի հրատարակումից մի տարի անց (1875 թ.), ժամանակի հայտնի լեզվաբան-բանասեր, պրոֆ. Բ. Պատկանյանը իր «Նյութեր հայերեն բարբառների ուսումնասիրության համար» աշխատության Բ պրակում, լեզվաբանական նպատակներով, տպում է Սրվանձությանցի «Սասունցի Դավիթ» բնագիրը:

Ոգևորված իր գործի գտած լավ ընդունելությամբ, Սրվանձությանցը կրկու տարի հետո՝ 1876 թվականին, Կ. Պոլսում տպագրում է Լրկորոգ ժողովածուն՝ «Մանանա» վերնագրով, որ ընդգրկում է ժողովրդական հեքիաթների, երգերի, հանելուկների և այլ նյութերի մի շարք նմուշներ

¹¹ Գ. Սրվանձությանց. Գրոց ու Բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 192, 131:

(«Գրառնիկ աղբեր», «Անխելք մարդ», «Բյուրապատիկ», «Երազատես», «Հազարան Բուլբուլ», «Սիրտս նման էր...», «Լուսնակն անուշ», «Կոտու կես կորեկ» և այլն):

«Գրոց-Բրոց»ի նման՝ լավ բնդունելություն է դառնում նաև «Մանա-նա»-ն:

Հետևելով Սրվանձությանցի օրինակին, արևմտահայ և արևելահայ մի շարք մտավորականներ, յուրաքանչյուրն իր շրջանում գրի է առնում և հրատարակում (թե՛ մամուլի էջերում և թե՛ առանձին ժողովածուներով) տեղական բանահյուսության նմուշները: Միաժամանակ, լույս են տեսնում նաև առանձին գրքեր, թարգմանություններ, հոգվածներ ու գրախոսություններ:

1877—1879 թվականներին «Մեղու Հայաստանի» լրագրի և «Փորձ» ամսագրի էջերում լույս են տեսնում ժողովրդական հեքիաթներ, աշխատանքի և հարսանեկան երգեր, հանելուկներ և այլն:

1880 թվականին Վենետիկում հրատարակվում է Ս. Ճուլարտյանի ժողովրդական առածների բավական ստվար ժողովածուն (շուրջ 4.000 առած-ասացվածքներով), «Առածք աղգայինք» վերնագրի տակ:

Նույն թվականին Ս. Մանդինյանը գրական լեզվի է վերածում Սրբվանձությանցի «Գրոց-Բրոց»-ում տպված «Սասունցի Դավիթ»-ը և գետեղում այն իր կազմած «Աղգային-գիցաբանական աշխարհ» խորագրով մալրների լեզվի դասագրքի մեջ:

1881 թվականին լույս է տեսնում Մ. էմինի ռուսերեն ուսումնասիրությունը Մ. Խորենացու Պատմության մեջ եղած բանահյուսական նյութերի մասին («Монсей Хоренский и древний эпос армянский») և Գ. Խալաթյանի՝ Սասունցի Դավիթ ռուսերեն թարգմանությունը («Давид Сасунский (Армянский народный эпос)») հանդերձ թարգմանչի առաջաբանով և ծանոթություններով:

1882—1883 թվականներին մեկը մյուսի ետևից տպագրվում են Սրբվանձությանցի արևելահայ գրչակցի, հետագայում հայտնի բանահավաք Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի Ա և Բ գրքուկները և «Հայ ժողովրդական ավանդություններ»-ի Ա գրքուկը:

Իր հեքիաթների հիշյալ երկու գրքուկներով Նավասարդյանը տալիս է Արևելյան Հայաստանի հեքիաթների մի քանի բնորոշ նմուշներ, իսկ «Ավանդություններ» գրքուկով՝ բազմաթիվ ժողովրդական հանելուկներ, անեծքներ, շուտասելուկներ, երգեր, առածներ և այլն:

Սրվանձությանցի ժողովածուների նման աննկատ չեն մնում նաև Նավասարդյանի գրքուկները:

Այսպես, 1884 թվականին Հովհ. Հովհաննիսյանը «Նոր Դար» լրագրի էջերում անդրադառնալով դրանց, կոչ է անում մեր հասարակությանը օգնելու «աղնիվ դադափարներով սոգորված ու վառ եռանդով» աղքատ երիտասարդին, «շարունակելու այն գործը, որին նա հոգով նվիրված է,—շարունակելու հավաքել ժողովրդական ավանդությունները»¹²:

Իր հոգովածում, հետադայի անվանի բանաստեղծը, խոսում է նաև այդ գործի կարևորության մասին, երևան բերելով ժողովրդական բանահյուսության հասարակական դերի և գիտական մեծ արժեքի իր խոր մեծնումը: Նա գրում է.

«Ժողովրդական գրականության ուսումնասիրությունը նպաստում է ազգայնության գաղափարի, ազգային ինքնաճանաչության զգացմունքի զարգացմանը:

Ժողովրդական գրականության ուսումնասիրությունը անհրաժեշտ է ազգային հնագույն պատմությունը, ժողովրդի ներքին կյանքը հետազոտելու համար:

Ժողովրդական գրականության ուսումնասիրությունը անհրաժեշտ է դավառական բարբառների քննության համար, որ առաջին ու գլխավոր պայմանն է գրականական լեզվի կանոնավոր մշակության»:

Հայ ժողովրդական բանահյուսության հավաքման և ուսումնասիրման պատմության բեղմնավոր տարիներից մեկն է 1884 թվականը:

1884 թվականին են լույս տեսել Հ. Ալլահվերդյանի «Ունիա կամ Զեյթուն» գիրքը, ղեկավարող ժողովրդական բանահյուսության մի շարք նմուշներով, Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» Գ գիրքը, որի մեջ մենք գտնում ենք մի հրաշապատում հեքիաթ («Ջան փուլատ»), երգիծական մի պատմվածք («Սուտասան»), քնարական ու վիպական երգեր («Ծովուն խավքըմ կեր...», «Եղնիկ, քո դարտեն...», «Վարթ մի պացվի», «Շորորա, Սալաթ...»):

Այդ թվականին է լույս տեսել Գ. Սրվանձտյանցի երրորդ ժողովածուն՝ «Համով-հոտով» վերնագրով, որ պարունակում է իր մեջ բաղմաթիվ ժողովրդական հեքիաթներ («Իմաստուն ջուլհակը», «Դրժիկոն», «Անտես-Աննաման», «Օձեմանուկ-Արևամանուկ...»), Գեղջկական երգեր («Սարե-Սիփանե», «Ծածուկ սիրողի երգ», «Մոկացի հայոց հարսանյաց պար») և այլն:

1885 թվականին ժողովրդական բանահյուսության վերաբերյալ լույս տեսած գրականության մեջ աչքի է ընկնում վանեցի ուսուցիչ-բա-

նահալաք, Սրվանձտյանցի արևմտահայ հետևորդներից՝ Գևորգ Շերենցի «Վանա սաղ» վերնագրով բանահյուսական ժողովածուի և գիրքը, նվիրված Վանա ժողովրդական երգերին (էջ 9—86), հեքիաթներին (էջ 86—120), առածներին (էջ 121—138), հանելուկներին (էջ 139—150) և շուտասելուկներին (էջ 157—158)։

1886 թվականը հայ ժողովրդական բանահյուսության պատմության մեջ, ի շարս այլ հրատարակությունների, նշանավորվում է թիֆլիսեցի հրատարակար-բանահալաք Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի բանահյուսական հարուստ ժողովածուի հրատարակումով, որ կրում է «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» խորագիրը և ընդգրկում իր մեջ հին թիֆլիսեցոց ժողովրդական աղոթքները (էջ 13—20), երգերը (էջ 21—64), առածներն ու ասացվածքները (էջ 65—174), հանելուկներն ու շուտասելուկները (էջ 175—178), հեքիաթները (էջ 328—428) և այլն։

Հայ բանագիտության շրջագարձային տարեթվերից է 1887-ը։ Այդ թվականին Մոսկվայում լույս է տեսնում կաղարյան ճեմարանի դասախոս, հայագետ Գրիգոր Սալաթյանի «Մրագիր հայ աղագրության և աղագլխին իրավաբանական սովորությունների» խորագրով գիրքը, ժողովրդական բանահյուսությանը նվիրված հատուկ գլխով («Ժողովրդական բանավոր գրականության տեսակները», էջ 77—84)։

Մինչ այդ, աղագրության և մասնավորապես ժողովրդական բանահյուսության հավաքումն ու ուսումնասիրությունը մեղանում կրում էր բավական տարերային բնույթ։ Նյութերի հաշտնաբերումն ու գրանցումը հիմնականում կատարվում էր պատահական կերպով և ի միջի այլոց։

Ուսուցչական աշխատանքի ընթացքում, հոգևոր հովվի իրենց պարտականությունները կատարելիս և այլն, մեր բանահավաքները հարմար առիթ ու ժամանակ գտնելով, գրի են առել նաև բանահյուսական պատահած նյութը։ Յուրաքանչյուրը նրանցից այդ պործում առաջնորդվել է իր նախասիրություններով. գոյություն չունեին բանահավաքման քիչ թե շատ կայուն ու միասնական մի սկզբունք։ Լսածը տեղն ու տեղը, ամենայն հարադատությամբ արձանագրելու փոխարեն, բանահավաքներից ոմանք տվել են նրա համառոտ կամ ընդարձակ բովանդակությունը, ըստ կամս «խմբագրել» են այն, փոխել բարբառը գրականի և այլն։ Ուրիշները, ավելի հեռուն գնալով, մշակել-ոճավորել են իրենց գրի առածը։

Բանահավաքման աշխատանքի մեջ գոյություն ունեցող վերահիշյալ բացերը, ավելի կամ պակաս չափով, նկատելի է մինչև 1887 թվականը լույս տեսած հավաքածուների մեծ մասի մեջ։

Հայ ազգագրության և բանահյուսության նյութերի հավաքման և ուսումնասիրման բնագավառում առկա հիշյալ բացերը վերացնելու համար Գր. Խալաթյանը կազմում է իր «Ծրագիրը»:

Իր գրքի առաջաբանում այդ առթիվ հեղինակը գրում է. «Անհիշելի ժամանակներից ժողովրդի բերանում շրջող երգը, հեքիաթը, հանելուկը, առածը և այլն, արդարև դարերի ընթացքում փոփոխվելով, բարդվելով, ձևակերպվելով, բայց և միշտ հավատարիմ հայտարար հանդիսանալով՝ ազգային կյանքին, ժողովրդի ձգտումներին ու իդեալներին,—մի կողմից հաստատ հիմք կղնեն մեր ժողովրդական գրականության և մյուս՝ առատ նյութ կընծայեն եվրոպական ազգերի համանման բանահյուսության տեսակների համեմատական ուսումնասիրության:

Մինչև այսօր հավաքված զանազան նյութերը բավական միակողմանի են. նոքա՝ ամենաշնչին բացառությամբ, ժողովրդական գրականությանն են վերաբերում՝ այն ևս գրականության ոչ բոլոր տեսակներին, որպես և ոչ բոլոր հայ գավառներին հավասարապես. այնպիսի գավառ կա, որ մի քանի ժողովաժուռ ունի, մինչդեռ շատ-շատերը և ոչ մեկը ունին. երբեմն բազմաթիվ երգեր ու առածներ կան գրված այս կամ այն բարբառով, իսկ հանելուկ, հեքիաթ կամ աղոթք և ոչ մեկը:

...Այս մասին փոքր ի շատե կանոնավոր, գիտության պահանջներին հարմարեցրած ազգագրության ծրագիրը կարող էր ոչ սակավ ծառայություն մատուցանել գործին՝ ձեռնարկի կամ հրահանգի տեղ ծառայելով ոչ միայն ամեն մի սիրաբան հավաքողին, այլև մասնագետներին»¹³:

Եվ իրոք, Խալաթյանի «Ծրագիրը» քաջ ծառայում է հիշյալ նպատակին:

Կարճ ժամանակամիջոցում այն տարածվում է և իր նկատելի ներգործությունն է ունենում բանահյուսական նյութերի հավաքման գործի վրա:

Ժամանակի սլարբերականները ողջունում են «Ծրագրի» հրապարակ գալը և իրենց էջերում աշխատում են տարածել նրա բովանդակությունը:

Ավելանում է մի կողմից բանահավաքների թիվը, մյուս կողմից՝ սիստեմ և գիտական բնույթ է հաղորդվում նրանց աշխատանքին:

Մամուլը ավելի լայն տեղ է սկսում հատկացնել իր էջերում ժողովրդական բանահյուսությանը (նյութեր, հոգևածներ, գրախոսականներ):

¹³ Գր. Խալաթյան. Ծրագիր հայ ազգագրության, Մոսկվա, 1887, էջ ԺԳ:

Կրկնապատկվում է առանձին հրատարակությունների (ժողովածուներ, ուսումնասիրություններ) թիվը:

1888 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի Դ գիրքը՝ Արարատյան բարբառի մի շարք հեքիաթներով:

1889 թվականին Շուշիում տպագրվում է Մ. Աբեղյանի գրի առած «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի երկրորդ պատումը՝ «Դավիթ և Մըհեր» վերնագրով (Մոկաց բարբառով):

Նույն թվականին «Մուրճ» ամսագրի մի քանի համարներում հրատարակվում է Մ. Աբեղյանի «Աղգային վեպ» արժեքավոր հեռագրոտությունը, որտեղ հեղինակը, վեպի իբ ձևերի տակ հղած երկու պատումների հիման վրա, հանգամանորեն վերլուծում է նրա պատմականության, գյուցադնականության ու հնություն հարցերը:

1890 թվականին հրատարակվում է Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի Զ գիրքը, իսկ պարբերականներում երևում են մի քանի հոդվածներ ու գրախոսություններ (Լևոյի գրախոսությունը «Դավիթ և Մհեր»-ի մասին, Ղ. Աղայանի «Հայոց աշխարհի բանավոր երգերը» և այլն):

1891 թվականին լույս են տեսնում Գ. Տիգրանյանի Նոր Նախիջևանի հայոց բանահյուսությանը նվիրված ժողովածուն՝ «Առածք, ասացվածք և զրույցք հայոց Նոր Նախիջևանի» վերնագրով, Հ. Ղ. Հ-ի բանագիտական կարևոր հեռագրությունը հայկական առակների մասին՝ «Մեր առակաց հեղականաց հետ հարաբերությունը» վերնագրով («Հանդես ամսօրյա», էջ 175—210) և այլն:

Առանձնապես բեղմնավոր տարի էր 1892 թվականը: Հրատարակված աշխատանքներից կարևորագույններն են՝ Նրվանդ Լալայանի «Ջավախքի բուրմունք» ժողովածուն, նվիրված Ջավախք գավառի ժողովրդական երգերին (էջ 18—41), ավանդություններին (էջ 44—65) և այլն և Գարեգին Հովսեփյանի երկու ժողովածուները՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» և «Սասնա ծռեր» վերնագրով, որոնցից առաջինը նվիրված է նշանավոր հայ ժողովրդական վիպերգներին՝ Ասլան աղա, Կարոս խաչ, Նարեկացի, Մոկաց Միրզա և այլն (էջ 3—26), սիրո երգերին (էջ 26—29), առակներին (էջ 30—31), ավանդություններին (էջ 32—46), հարսանեկան, աշխատանքի և այլ երգերին, հանելուկներին և այլն (էջ 56—82), հեքիաթներին (էջ 85—113), իսկ երկրորդը՝ հայ ժողովրդական վեպի երկու նոր պատումներին՝ Ապարանի և Մոկաց բարբառներով (էջ 13—151):

1893—1895 թվականներին լույս տեսած աշխատանքներից ամենակարևորը Հ. Ճանիկյանի «Հնությունք Ակնա»-ն է (Թիֆլիս, 1895 թ.), ուր աղագրական, տեղագրական ու հնախոսական զանազան նյութերի կողքին գտնում ենք նաև բաղմամբով ժողովրդական հանկուկներ (էջ 188—189), հեքիաթներ (էջ 189—203), առածներ (էջ 203—214), ասացվածքներ (էջ 214—280), օրորոցի, հարսանեկան, պանդխտության և այլ կրգեր (էջ 406—500)՝ Ակնի բարբառով:

90-ական թվականների երկրորդ կեսից հայ բանագիտությունը թևավորվում է իր զարգացման ավելի բարձր փուլը:

Բաղմապատկվում է ժողովրդական բանահյուսությանը նվիրված հրատարակությունների թիվը: Ավելի ծրագրված ու սխեմատիկ են դառնում բանահյուսական նյութերի գրանցումները: Պարբերական հրատարակությունները սկսում են լայն տեղ տալ իրենց էջերում ժողովրդական բանահյուսությանը: Հայկական հին բանահյուսության բեկորների ուսումնասիրության հետ մեկտեղ, բանագետներն զբաղվում են նաև XIX դարում գրի առնված նյութերի հետազոտությամբ: Որդեգրվում և յուրացվում են հիմնական և ուսումնական բանագիտության պատմականորեն ավելի նոր ու առաջավոր տեսություններն ու մեթոդները:

Եթե բանագիտությունն առաջ իր սրմատներով կապվում էր աղագրիկ ուսմանտիղի հետ, ապա նրա այս նոր փուլը հասարակականորեն նշանավորվում է դեմոկրատական հոսանքի ուժեղացման փաստով, մի հոսանք, որը հենվում էր ժողովրդի վրա, համակված էր ժողովրդական մտածելակերպով:

90-ական թվականների երկրորդ կեսերից հայ բանագիտության մեջ առաջ եկած վերոհիշյալ բեկմանը մեծապես նպաստում են նաև նվրուպայի և Ռուսաստանի համալսարաններից հայրենիք վերադարձած նոր սերնդի բանասերները, որոնք մեծ խանդավառությամբ ձևոնամուխ են լինում իրենց ժողովրդի մշակույթի, մասնավորապես բանավոր ստեղծագործության ուսումնասիրմանը:

Հրամայական սլահանք է դառնում մասնագիտական հանդեսներ ու պարբերականներ ունենալու խնդիրը:

1896 թվականին Երվանդ Լալայանի ջանքերով Թիֆլիսում հիմնադրվում է «Աղագրական հանդեսը», որը զոյատևում է մինչև 1916 թվականը:

Պոլսի հայտնի «Բյուրակն» երկշաբաթյաթերթը, որը լույս էր տեսնում Գ. Անդրեասյանի և Դ. Խաչկոնցի խմբագրությամբ, 1898 թ. նոր

շրջան է բաց անում, հատկապես հայ լիզագորութեանն ու բանաձևութեանը նվիրված:

1901 թվականից Գր. Խալաթյանի խմբագրութեամբ Մոսկվայի Հազարյան ճեմարանում սկսում է հրատարակվել «էմինյան ազգագրական ժողովածուն», որն իր հատորների մի ղգալի մասը տրամադրում է ժողովրդական բանահյուսութեանը:

Հիշյալ մասնագիտական հանդեսների և մյուս պարբերականների էջերում, ինչպես նաև առանձին հրատարակութեամբ, 90-ական թթ. երկրորդ կեսից մինչև 1914 թ. լույս են տեսնում բազմաթիվ մեծ ու փոքր բանագիտական հոդվածներ ու ուսումնասիրութեւոններ, բանահյուսական ժողովածոներ: Դրանցից կարևորներն են.

Մ. Արեղյանի Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մեջ (Վաղարշապատ, 1899 թ.), արտատպված «Արարատ» ամսագրից):

Բ. Խալաթյանի Հայ ժողովրդական դէուցալական վեպը (Վիեննա, 1903 թ., արտատպված «Հանդես ամսօրյայից»):

Մ. Արեղյանի Ժողովրդական խաղերը (Վաղարշապատ, 1904 թ., արտատպված «Արարատ» ամսագրից):

Նույնի Հայ ժողովրդական վեպը (Թիֆլիս, 1908 թ., արտատպված «Ազգագրական հանդես»-ից):

Ստ. Կանայանի Զոջանց տուն... ազգային-ժողովրդական վեպի պատմականը (էջմիածին, 1907 թ., արտատպված «Արարատ» ամսագրից):

Կոմիտասի Հայ գեղջուկ երաժշտութեւոնը («Անահիտ» ամսագիր, 1907 թ., № № 3—5):

Մ. Գաբրիելյանի Ակնա բարբառին բանաստեղծութեւոնը («Հանդես ամսօրյա», 1909 թ.):

Տ. Վ. Պալյանի Կեսարիայի հայերի ժողովրդական բանահյուսութեան նմուշները՝ անտունի, հարսանեկան երգ, հեքիաթ, օրոր և այլն («Բյուրակն», 1898 թ.):

Մ. Դանիելյանի Դիարբերի, Վանա, Խիանի, Մշո հայոց ժողովրդական առածները, երգերը, հանելուկները և այլն («Բյուրակն», 1898 թ.):

Գ. Նժդեհյանի Ալաշկերտի բանավոր զրականութեւոնը՝ ժողովրդական երգեր, առածներ, առացվածքներ, առակներ և այլն («Ազգագրական հանդես», 1899 թ.):

Մ. Մուրադյանի Սասունցոց բարբառով պարերգերն ու հանելուկները («Բյուրական», 1900 թ.):

Ա. Հայկունու Ժողովրդական վեպ և հեքիաթը՝ 6 ժող. վեպեր, այդ թվում «Սասնա ծռեր»-ի երկու պատում Մոկաց բարբառով և 42 հեքիաթ գերադանցորեն արեմտահայ բարբառներով («Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Բ, 1901 թ., Մոսկվա—Վաղարշապատ):

Նույնի Ժողովրդական հեքիաթը—48 հեքիաթներ՝ արեմտահայ և արևելահայ մի շարք բարբառներով և «Սասնա ծռեր»-ի 2 պատում՝ Շատախի և Արարատյան բարբառներով («Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Դ, 1902 թ., Մոսկվա—Վաղարշապատ):

Նույնի Հայ-բրդական վեպը—28 քրդական վեպ-վիպերգ, մեծ մասամբ արեմտահայ բարբառներով և մասամբ քրդերեն բնագիր և բառացի թարգմանություն գրական լեզվով. վերջում քրդական եղանակներ՝ Կոմիտասի ձայնագրությամբ («Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ե., 1904 թ., Մոսկվա—Վաղարշապատ):

Երվ. Լալայանի Բորչալուի գավառի բանավոր գրականությունը. Ժողովրդական աղոթքներ, երգեր, աշուղական խաղեր, հանելուկ, առած, հեքիաթ և այլն («Ազգագրական հանդես», XI, 1904 թ., Թիֆլիս):

Ա. Հայկունու Ժողովրդական երգեր, առածներ, ասացվածքներ, հանելուկներ, աղոթքներ և այլն, արևելահայ և արեմտահայ այլևայլ բարբառներով («Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Զ, 1906 թ., Մոսկվա—Վաղարշապատ):

Նույնի Ժողովրդական առակները կամ կենդանական վեպերը, արեմտահայ բարբառներով (1907 թ., էջմիածին):

Արփալիկի Ղափանի ավանդություններ, թվով 11 հատ, կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ («Ազգագրական հանդես», XVIII, 1908 թ., Թիֆլիս):

Խ. Դադյանի Վարանդայի բանավոր գրականությունը, ջանգլուկներ («Ազգագրական հանդես», XVII—XVIII, 1908 թ., Թիֆլիս):

Ա. Սոլաֆյանի Վանա բանահյուսությունը. ավանդություններ, երգեր, հեքիաթներ, հանելուկներ, շուտասելուկներ և այլն («Ազգագրական հանդես», XIX, 1910 թ., Թիֆլիս):

Տ. Զիրունու Սասմանց տունը (1910 թ., Կ. Պոլիս):

Երվ. Լալայանի Վասպուրականի բանահյուսությունը (1912 թ., Թիֆլիս) և հատ ուրիշներ:

1914—1926 թվականներին, հայագիտության մյուս բնագավառներին

հետ զգալիորեն թուլանում ու նվազում է ժողովրդական բանահյուսության հավաքումն ու ուսումնասիրումը: Ընդհատվում կամ բոլորովին փակվում են մասնագիտական, գրական պարբերականներից ու հանդեսներից շատերը. վերանում են գիտական, հրատարակչական ընկերությունները:

Պատճառը հիմնականում իմպերիալիստական առաջին պատերազմն էր, ապա ազգամիջյան և քաղաքացիական կոիվները, դադթը, կոտորածը, սովը...

Մերթընդմերթ միայն, գործը սիրող, ձևներից բանասերների ու բանահավաքների ջանքերով, հնարավոր էր լինում գլուխ բերել բանագիտական այս կամ այն աշխատանքը:

Այսպես, 1915—16 թվականներին Երվանդ Լալայանը, մեծ եռանդ գործադրելով, «Ազգագրական հանդես»-ի նախկին աշխատակիցներից և արևմտահայ մի քանի բանահավաք-ուսուցիչներից (Արտաշես Բարսեղյան, Սենեքերիմ Շալճյան, Շահեն Կուժիկյան, Նազարեթ Մարտիրոսյան, Երվանդ Պեղաղյան և այլն) կազմում է մի հատուկ արշավախումբ, որը շրջելով Անդրկովկասի և հատկապես Հայաստանի մի շարք գավառներ, 1915—1916 թթ. գաղթին՝ այդ գավառներում ապաստան գտած արևմտահայ գաղթականներից (վանեցի, ողմեցի, շատախցի, մշեցի, ալաշկերտցի և այլն) գրի է առնում վերջիններիս բանավոր ստեղծագործության հաղարավոր նմուշներ (հեքիաթ, վեպ, տոպ, երգ և այլն):

Նույն Երվանդ Լալայանը 1914—15 թթ. լույս է ընծայում ժողովրդական հեքիաթների երեք սովորաձավալ գրքեր՝ «Մարգարիտներ հայ բանահյուսության» ընդհանուր խորագրով:

Ավելի ուշ, վանեցի բանահավաք Հ. Աճեմյանը հրապարակում է Վանա ժողովրդական բանահյուսության նմուշները, հատկապես վիպական երգերն («Մոկաց Միրզա», «Կարոս խաչ») ամփոփող իր ժողովածուն՝ «Մաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» խորագրով (Էջմիածին, 1917 թ.):

1917 թվականին հրաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը, Գար. Գարդաշյանի հետ միասին, Թիֆլիսում ապաստանած վանեցի գաղթականներից ձայնագրում է նրանց ժողովրդական երգերի, մասնավորապես պարերգերի բաղմաթիվ նմուշներ:

Նույն թվականին, Թիֆլիսում, լույս է տեսնում Սպ. Մելիքյանի «Շիրակ» խորագրով աշուղական և ժողովրդական երգերի ժողովածուն (ևվրոպական նոտաներով):

Այսպես և մի երկու ավելի մանր գործեր:

1920 թվականից, երբ Հայաստանում հաստատվում են նոր պետական կարգեր, ամուր հիմքերի վրա են դրվում նաև ժողովրդական բանահյուսության գրառման և ուսումնասիրման աշխատանքները: Այն, ինչ մինչ այդ մեղանում իրականացվում էր հիմնականում մոտիկ ու հեռու հայաբնակ վայրերում (Թիֆլիս, Բաքու, Կ. Պոլիս...), մասամբ էլ զանազան գաղթօջախներում (Մոսկվա, Պետերբուրգ...) սովյալ գործին նվիրված առանձին անհատների և ազգագրական, գավառագիտական ու հրատարակչական ընկերությունների նախաձեռնությամբ ու ջանքերով, ստանձնում է երկրի ղեկն իր ձեռքն առած նոր իշխանությունը: Վերջինս լրջորեն մտահոգվում է ոչ միայն ժողովրդի լայն խավերի նյութատեսական կյանքի բարելավումով, այլև այդ խավերի դարավոր ավանդույթներ ունեցող հոգեոր մշակույթով, այդ թվում նաև նրանց հարուստ ու հին բանավոր խոսքի գեղարվեստական ստեղծագործություններով:

1921 թվականին Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը էջմիածնում կազմակերպում է խորհրդային Հայաստանի առաջին գիտական ինստիտուտը (նախագահ՝ Կ. Մելիք-Օհանջանյան): Նրա շուրջը համախմբվում են ժամանակի առաջավոր մտավորականության մի շարք ներկայացուցիչներ (Լևո, Թ. Թորամանյան, Թ. Ավդալբեգյան, Ա. Տերտերյան, Ե. Տեր-Մինասյան, Խ. Սամուելյան և ուրիշներ), որոնք մինչ այդ արդեն իսկ հայտնի էին իրենց տպագրած գիտահետազոտական ուշագրավ գործերով: Նշված մտավորականների ջանքերով 1921—1922 թթ. լույս է ընծայվում «Բանբեր Հայաստանի գիտության ինստիտուտի» անունով տարեգիրքը (գիտ. քարտուղար՝ Ե. Տեր-Մինասյան): Այստեղ, ի շարս հայագիտական այլ արժեքավոր գործերի, լույս են տեսնում նաև Խ. Սամուելյանի «Տոտեմիզմը հայաց մեջ» և Լ. Մելիքսեթ-բեկի «Արտավազդ և Մհերի հետքերը Վրաստանում» բանագիտական արմատներ ու միավածք ունեցող հետազոտությունները¹⁴:

Առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանում հիմնվում է 1920-ական թթ. սկզբին՝ Երևանի համալսարան անունով, ուր իրրե դասախոսներ հրավիրվում են Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններն ավարտած տարբեր առարկաների մի շարք հայագի որակյալ մասնագետներ:

¹⁴ «Բանբեր Հայաստանի գիտության ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջ 15—34, 93—104:

Մ. Աբեղյանը առաջիններից մեկն էր այդ մասնագետներից, որը 1919 թ. կեսերին, Թիֆլիսից Երևան է հրավիրվում տեղի նոր բացվելիք Համալսարանում՝ հայոց լեզվի տեսության, հայոց հին գրականության պատմության և հայ ժողովրդական բանահյուսության բուհական դասընթացները կարդալու, առարկաներ, որոնց վերաբերյալ նա մինչ այդ արդեն հայտնի էր իր հրատարակած հմուտ աշխատություններով:

Համալսարանում դասախոս նշանակվելու առաջին տարվանից Մ. Աբեղյանը շարադրում և լույս է բնծայում հայ բանագիտության պատմության իր բուհական անդրանիկ սեղմ տեսությունը¹⁵:

Նույն համալսարանի մականիշով է լույս տեսնում նաև արդի հայ բանագիտության առաջին հիմնադրար աշխատությունը՝ նվիրված հայոց հին գուսանական երգերի համակողմանի հետազոտությանը¹⁶:

1921 թ. էջմիածնում կազմակերպված վերոհիշյալ ինստիտուտից հետո, գիտահետազոտական երկրորդ հաստատությունը, որը հիմնադրվում է Երևանում 1925 թ., գիտության և արվեստի ինստիտուտն է (նախագահ՝ Մ. Աբեղյան): Գիտության և արվեստի այլ բնագավառների հետ միասին, ինստիտուտը զգալի աշխատանք է ծավալում նաև բանագիտության ուղղությամբ:

Բանահյուսական նյութեր գրի առնելու նպատակով ինստիտուտն իր աշխատակիցների միջոցով 1926—1928 թթ. հատուկ գիտարշավներ է կազմակերպում նորաստեղծ հանրապետության տարբեր շրջանները:

Այլ գիտարշավներից մեկը զլխավորում է անվանի աղագրադեստ Երվանդ Լալայանը: Վերջինս 1926 թ. ամռանը իր մի խումբ աշխատակիցներով մեկնում է Կոտայքի շրջան: 40 օր մնալով այստեղ, գիտարշավը գրի է առնում շուրջ 400 հին ու նոր ժողովրդական խաղիկներ, հինգ տասնյակի չափ հեքիաթներ, զրույցներ ու առակներ¹⁷:

Մյուս գիտարշավը, երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանի զլխավորությամբ, նույն թվականին Ախտաչի և Կոտայքի գյուղերում ձայնա-

¹⁵ Մ. Աբեղյան. Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության. Պետհրատ, 1923 թ. (մերենագիր. ապակետիպ):

¹⁶ Մ. Աբեղյան. Հին գուսանական ժողովրդական երգեր, ռՍԽՖՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 1927 թ., № 2—3, 1928, № 4, 1930, № 6: Նույնը առանձին գրքով, 1931, Երևան:

¹⁷ Տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1927, № 2, էջ 220—225 (Ե. Լալայանի հաշվետվությունը):

գրում է հիսունի շափ ժողովրդական երգեր¹⁸։ Հաջորդ գիտաբշակը, դարձյալ Սպ. Մելիքյանի գլխավորությամբ, 1927 և 1928 թթ. մեկնում է Արագածի շուրջն ընկած սասունցիների գյուղերը, Ապարանի, Ստեփանավանի, Փամբակի շրջանները և գրի առնում թվով 358 տարբեր տիպի ժողովրդական երգեր։

Գիտության և արվեստի ինստիտուտի բանագիտական կարևոր ձեռնարկումներից է նաև նրա գեղարվեստական և պատմահասարակագիտական բաժինների 1928 թ. կազմակերպած ժողովրդական երգերին վերաբերող գիտաժողովը։ Այստեղ կարգացված ղեկուցումներից հիշարժան են՝ Սպ. Մելիքյանի «Ի՞նչ ժողովրդական եղանակներ և ինչպե՞ս են հավաքված մինչև այժմ», «Ժողովրդական երգերի գամմաները», Վ. Ղորղանյանի «Ժողովրդական երգերի հավաքման մեթոդները», Մ. Աբելյանի «Ժողովրդական երգերի բառերի հավաքումը մինչև այժմ և ապագայում» և Գ. Լեոնյանի «Հայ աշուղական և ժողովրդական երգերի փոխառաբերությունը» ղեկուցումները։

Գիտաժողովի ընդունած որոշումների մեջ լավագույնս բացահայտված է երիտասարդ հանրապետության անդրանիկ զիտական հաստատության լուրջ մտահոգությունը հայրենի բառ ու բանը մոռացումից փրկելու ուղղությամբ և դրա իրականացման համար նախատեսվող միջոցառումները։ Վերջիններիս մեջ, ի միջի այլոց, նշված է.

1. «Աչքի առաջ ունենալով, որ Խորհրդային Հայաստանի ժողովրդական երգերն արագ փոխվում են և մատնվում կորսության՝ առաջարկել գիտության և արվեստի ինստիտուտին՝ աշխատանքներին հարվածային բնույթ տալ և շտապ կերպով միջոցներ հատկացնել երաժշտական-ազգագրական աշխատանքներին։

2. Նկատի ունենալով, որ գյուղական ուսուցիչները միևնույն տեղում ապրելով, հնարավորություն և հարմարություններ ունեն ժողովրդական երգերը ժամանակին լսելու, հանձնարարել նրանց՝ կապվելով գավառագիտական կազմակերպությունների հետ, գրի առնելու ժողովրդական երգերի բառերը և այլն»¹⁹։

Նույն ինստիտուտը 20-ական թթ. վերջերին ձեռնարկում է Կոմիտասի կողմից ժամանակին գրառած 255 ժողովրդական երգերի ազգագրական ժողովածուն տպագրության պատրաստելու աշխատանքը։ Այդ գործը

¹⁸ Նույն տեղում, էջ 227 (տե՛ս Ս. Մելիքյանի հաշվետվությունը)։

¹⁹ «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1928, № 4, էջ 190—193։

հաջողութիւնամբ ի կատար է ածում ինստիտուտի գեղարվեստական բաժնի անդամ, Կոմիտասի նախկին աշակերտ Սպ. Մելիքյանը²⁰:

Ինչպէս քնդգրկած նյութի հարստութիւնամբ, այնպէս էլ այդ նյութի հավաստիութիւնամբ ժողովածուն մեր երաժշտագիտական գրականութեան մեջ իրավացիորեն համարւում է հայ ժողովրդական երգերի լավագույն հրատարակութեաններից մեկը: Այն հիմնական աղբյուր է ոչ միայն ժողովրդական երաժշտութեան առանձնահատկութեանների գիտական ուսումնասիրութեան, այլև պրոֆեսիոնալ երաժշտութեան տարբեր տիպի երկերի ստեղծման համար²¹:

Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գիտութեան և արվեստի ինստիտուտը Սովետական Հայաստանի գիտական այն կենտրոններն էին, որոնք իրենց շուրջը համախմբելով տվյալ բնագավառի առկա լավագույն մասնագետներին (Մ. Աբեղյան, Ե. Լալայան, Սպ. Մելիքյան), վերջիններիս ջանքերով կարողացան դնել սովետահայ բանագիտութեան ամուր հիմքերը:

Առանձնապէս զնահատելի է գիտութեան և արվեստի ինստիտուտի կողմից ավանդական հայ բանահյուսութեան թանկարժեք նշխարների հայտնաբերման և գրառման ուղղութիւնամբ տարված մեծ աշխատանքը: Յուրահատուկ շուտափույթ օգնություն էր դա հայ բանահյուսութեանը՝ փրկելու այն վերահաս կորստից, որ սպառնում էին նրան կյանքում կատարված հասարակական-քաղաքական մեծ հեղափոխմանը:

Շատ շանցած գիտութեան և արվեստի ինստիտուտի հիմքի վրա կազմակերպւում է (1931 թ.) Հայաստանի կուլտուրայի պատմութեան ինստիտուտը: Հայագիտութեան այլ ասպարեզների հետ ինստիտուտն իր գիտահետազոտական աշխատանքների ծրագրի կարևոր կետերից մեկը դարձնում է բանահյուսութեան ուսումնասիրութեանը: Այդ նպատակով ինստիտուտի կազմում հիմնվում է հատուկ բաժին, որի ղեկավար է նըշանակվում բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանը²², աշխատանքի են ընդունվում համապատասխան կադրեր:

Հաջորդ իսկ տարիներին (1932—1933 թթ.) բաժինը Կ. Մելիք-Օհանջանյանի և Սպ. Մելիքյանի գլխավորութիւնամբ բանահյուսական գիտար-

²⁰ Կոմիտաս. ժողովրդական երգեր (Ազգագրական ժողովածու), հայերեն նոտադրութեան փոխադրեց եվրոպականի, տառաբանով և գիտադրություններով Սպիրիդոն Մելիքյանը, ՀՍՍՀ Պետհրատ, 1931 թ.:

²¹ Ալ. Բաղեոսյան. Սպիրիդոն Մելիքյանը և հայ ժողովրդական երգը, Երևան, 1964, էջ 194:

²² Այդ պաշտոնը Կ. Մելիք-Օհանջանյանը վարում է մինչև 1937 թ.:

շաւներ ք է կազմակերպում Սովետական Հայաստանի ղանադան շրջաններ (Աշտարակ, Թալին և այլն), հայտնաբերվում ու գրի են առնվում ժողովրդական բանաստեղծական խոսքի և երաժշտական մեղեդիների բազմաթիւ արժեքավոր նյութեր: Դրանցից հիշարժան են՝ «Սասնա ծռերի» վեց նոր պատմւմները Սասունի, Ալաշկերտի, Մոկաց և Շասախի բարբառներով, «Մուշեղի բադմությունը» կոչված պատմական ուշագրաւ ավանդությունը, «Արշակ խան» հետաքրքրական հեքիաթը, «Մոկաց-Միրզա» և «Ասլան ադա» վիպերգերի մի քանի նոր տարբերակները, բազմաթիւ առակներ, երգեր և այլն:

Այդ գիտարշաւներին, ի թիւս ուրիշների, մասնակցել է ժամանակի մեր ժողովրդական-ազգագրական պարերի հիմնալի կատարող և հմուտ պարուսույց, հետազայում հայտնի արվեստաբան-պարագետ Սրբուհի Լիսիցյանը:

Ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը տարիներ ընթացքում շնորհակալ աշխատանք է կատարում նաև մասնաւոր մարդկանց մոտ և ղանադան հիմնարկներում ցրված բանահյուսական ձեռագրերի հայտնաբերման, կենտրոնացման և գիտական մշակման ուղղությամբ:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել Երվ. Լալայանի ջանքերով 1915—1916 թթ. կազմակերպված բանահյուսական խմբարշաւի գրի առած նյութերի ձեռքբերման և մշակման կարևոր գործը:

Երևանի պետական պատմական թանգարանից ձեռք բերելով այդ նյութերը, ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը 1932—1934 թթ. Կ. Մելիք-Օհանջանյանի անմիջական ցուցումով, ղրանց մշակումը (ցուցակագրում, դասակարգում, հեքիաթների համառոտագրությունների կազմում) հանձնարարում է տղերս գրողին, որը և երկու տարի անընդմեջ աշխատելով, իրականացնում է այդ հանձնարարությունը: Վերահիշյալ նյութերը ներկայումս պահպանվում են Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիւում և կազմում են այդ արխիւի ամենանշանակալից հարստություններից մեկը: Դրանք, ըստ անհրաժեշտության, օգտագործվում են բաժնի կատարած բանագիտական տարբեր տիպի ուսումնասիրությունների և հրապարակումների մեջ:

Սովետական Միության ուրիշ հանրապետություններին նման, Հայաստանում ևս 1934 թվականից նոր թափ են առնում ժողովրդական բա-

նահյուսության ինչպես հայտնաբերման ու գրառման, այնպես էլ տա-
րածման և ուսումնասիրման աշխատանքները: Դրան մեծապես նպաս-
տում է խորհրդային գրողների համամիութենական առաջին համագու-
մարում Մ. Գորկու կարդացած պատմական ղեկուցման մեջ ժողովրդա-
կան լայն խավերի բանավոր ստեղծագործության տարբեր ժանրերին
տրված պատշաճ տեղն ու բարձր գնահատականը (հասարակական,
գաղափարական, գեղարվեստական և կուլտուր-պատմական մեծ արժեքի
ու արժանիքների հատուկ ընդգծումը, իբրև հավաքական հանճարի ցայ-
տուն արտահայտություն): Համագումարին մասնակից գրողներին Գոր-
կին կոչ էր անում ավելի շատ զբաղվել, օգտագործել և հատուկ ուսում-
նասիրել ժողովրդական բանահյուսությունը, որի մեջ լավագույնս ար-
տահայտված են աշխատավոր ժողովրդի տարերային մատերիալիստա-
կան աշխարհայացքի նշանները, նրա լավատեսությունը, բանաստեղծա-
կան լեզվի անուրանալի արժանիքները, տիպերի ու հերոսների կերտման
բարձր արվեստը, դարերի ընթացքում գրականության վրա նրա ունե-
ցած բարերար մեծ ազդեցությունը²³:

Մ. Գորկու կոչի անմիջական դրդմամբ մեղանում առավել է ակ-
տիվանում բանահյուսական նյութերի գրառումը, ուսումնասիրումը և
գրական վերամշակումը:

Հիմնվում են միութենական և հանրապետական հատուկ տներ,
որոնք զբաղվում են ժողովրդական բառ ու բանի, երգ-երածյալության,
կիրառական արվեստների վերաբերյալ նյութերի հայտնաբերումով ու
ցուցադրմամբ: Առավել բեղմնավոր է դառնում համապատասխան գի-
տահետազոտական հիմնարկների գործունեությունը: Հաճախակի կազ-
մակերպվում են բանագիտական խմբարշավներ, կրկնապատկվում է
բանահյուսական նյութերի ժողովածուների, բանագիտական ուսումնա-
սիրությունների հրատարակումը, բազմապատկվում է բանագիտական
թեմաներով կարդացվող ղեկուցումների թիվը, բուհերի ծրագրի մեջ
ավելի լայն տեղ է հատկացվում ժողովրդական բանահյուսության դաս-
ընթացին:

Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտին փոխարի-
նած պատմության և գրականության ինստիտուտը 1934—1939 թթ. ըն-
թացքում հաջողությամբ շարունակում ու զարգացնում է նախորդ ինստի-

²³ Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 150, 177,
274—276, 283—284, 292 և այլն:

տուտի բանագիտական աշխատանքները: Առանձնապես գնահատելի գործ է կատարվում ավանդական և ժամանակակից բանահյուսության վերաբերյալ նոր նյութերի հայտնաբերման ուղղությամբ:

Ինստիտուտն իր բանահավաքներին պարբերաբար գործուղում է հանրապետության շրջանները (Վաղարշապատ, Լենինական, Զանգեզուր, Գիրիջան և այլն) և Հայաստանից դուրս գտնվող հայաշատ վայրերը (Բոգդանովկա, Ախալքալաք և այլն) տեղի ավանդական և ժամանակակից բանահյուսական նյութերը հայտնաբերելու համար: Գրի ևն առնվում մեծ քանակությամբ հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, առակներ, աշխատանքի, սիրո և այլ տիպի երգեր, առած-ասացվածքներ, հանելուկներ և այլն: Հայտնաբերվում, գրառվում և տպագրվում են հին և նոր ժողովրդական բանահյուսության տարբեր ստեղծագործություններ, կատարվում են բանագիտական նոր ուսումնասիրություններ: Տվյալ ուղղությամբ բեղմնավոր աշխատանք են ծավալում՝ բանահավաք-աշուղագետ Գ. Թարվերդյանը (1934—1937 թթ.), բանահավաք-ազգագրագետ Վ. Բդոյանը (1937—1939 թթ.), բանագետ և բանասեր Կ. Մելիք-Օհանջանյանը (1934—1936 թթ.) և ուրիշներ:

Միաժամանակ հետևողական հետախուզումներ են կատարվում դրսի երբեմնի բանահավաքների ու վերջիններիս ժառանգների մոտ տակավին պահպանված բանահյուսական նյութերը ձեռք բերելու և ինստիտուտի արխիվում կենտրոնացնելու համար (Տ. Նավասարդյան, Կ. Մելիք-Շահնազարյան, Արշ. Աթայան, Հ. Ավչյան, Գ. Աղադատյան, Ս. Շալչյան, Շ. Կուժիկյան և այլն):

30-ական թվականներին ինչպես Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում ժողովրդական բանահյուսության առարկայի դասընթացը մտնում է մշտակա ու հեռակա մանկավարժական բուհերի ծրագրերի մեջ:

1934—1959 թթ. և հետագա տարիներին ձեռագրի իրավունքով բանահյուսության հատուկ ծրագրեր ու առաջադրություններ են պատրաստվում և հրատարակվում ինչպես ուսանողության, այնպես էլ ուսուցչության համար:

Բանահավաքչական և մանկավարժական նման կարգի դործերի խրթանման հետ, մեղանում զգալի վերելք են ապրում նաև ժողովրդական բանահյուսության հուշարձանների հրատարակչական և զիտահետադոտական աշխատանքները:

1936 թվականին Երևանում, Հայաստանի պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի վարիչ Նդ. Չարենցի անմիջական նախա-

ձեռնությամբ, նույն հրատարակչության կողմից լույս է ընծայվում «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի 25 տպագիր ու անտիպ պատումների առաջին հատորը՝ խմբագրությամբ Մ. Աբեղյանի և աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի:

30-ական թվականների երկրորդ կեսերից Հայաստանում սկիզբ է առնում հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն շրջանների գրականության վրա ժողովրդական բանահյուսության ազդեցության ուսումնասիրումը:

Այս առումով առաջին հերթին հիշատակելի են ժամանակի նշանավոր գրականագետ Ա. Տերտերյանի մի շարք աշխատությունները, ուր ժողովրդական բանահյուսության ազդեցությունը որոշ հայ հեղինակների ստեղծագործության վրա, իրավացիորեն դիտված է իբրև այդ հեղինակների երկերի ժողովրդայնության և գեղարվեստական կատարելության կարևոր գործոն:

Նույն և հաջորդ տարիներին Մ. Գորկու նշած դրույթների ոգով՝ Ֆրիկի, Աբովյանի, Աղայանի, Սունդուկյանի և այլ հայ հեղինակների ստեղծագործությունների բանահյուսական ակունքների վերլուծմանը նվիրված հոդվածներով ու գրքերով հանդես են գալիս նաև տողերս գրողը և ուրիշ գրականագետներ ու բանագետներ:

1935 թվականից բանագիտական աշխատանքները մեղանում կենտրոնացվում են Երևանում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) պատմության և գրականության, ինչպիսի նաև լեզվի և գրականության ինստիտուտներում: Վերջիններիս ղեկավարությունը 1938 թ. հանձնարարվում է ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն:

Սովետահայ բանագիտության եղակի տարեթվերից է 1939 թվականը: Այդ թվականի մայիս ամսին Հայաստանի կառավարության հատուկ որոշումով²⁴ մեծ հանդիսավորությամբ նշվում է «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանը: Դա իսկական ազգային մի տոն էր, հայոց հնադարյան մշակութի յուրահատուկ ստուգատեսը, որին մասնակցեցին նաև Սովետական Միության մյուս բոլոր ժողովուրդները:

«Սասունցի Դավիթ» հոբելյանը ամենից առաջ առիթ հանդիսացավ հայ ժողովրդական վեպին նվիրված մի կարևոր գործի ստեղծման համար: Խոսքը 1939 թ. Հ. Օրբելու խմբագրությամբ և ծավալուն առաջա-

²⁴ «Գրական թերթ», 1938 թ., սեպտեմբերի 14, № 41 (222):

բանով լույս տեսած էպոսի համահավաք հյուսվածո բնագրի մասին է²⁵, ուր ի մի են բերված «Սասնա ծռերի» 50-ից ավելի պատմվածքներում նշած այն բոլոր դրվագները, որոնք ներքնապես կապված են վեպի սյուժեի զարգացման հետ և շին հակասում նրա ամբողջական կառուցվածքին ու ոգուն: Իբրև ուրույն մի ծաղկաքաղ, համահավաքն իր պարզ ու հասկանալի լեզվով ժամանակին կարևոր դեր կատարեց և այժմ էլ կատարում է «Սասունցի Դավիթ» բովանդակության և գեղարվեստական արժանիքների մասին ընդհանուր պատկերացում կազմելու գործում:

Իր ազգային-հասարակական մեծ նշանակության հետ մեկտեղ «Սասունցի Դավիթ» հոբելյանն ունեցավ նաև գիտական նշանակություն: Այն զգալիորեն խթանեց հայ էպոսագիտության զարգացմանը: Լույս տեսան մի շարք ուշագրավ գրքեր ու հոդվածներ, որոնց մեջ լուսաբանվեցին մինչ այդ լավ չուսումնասիրված կամ ճիշտ չմեկնաբանված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են վեպի ժանրային, գեղարվեստական առանձնահատկությունների, նրա պատմափոխիստփայության, գաղափարական բովանդակության, ուրիշ ժողովուրդների վիպական ստեղծագործությունների հետ ունեցած ընդհանրության և այլ խնդիրներ:

Թերթերում և ամսագրերում հրապարակված բազմաթիվ ու բազմազան հետաքրքիր ու արժեքավոր հոդվածների հետ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի, պատմության և հնագիտության ինստիտուտների և Երևանի պետական համալսարանի կողմից 1939 թ. երևանում լույս են ընծայվում «Սասունցի Դավիթ» ընդհանուր վերնագրով երկու հոբելյանական մեծ ժողովածուներ, որոնց մեջ տպագրվում են Մ. Աբեղյանի, Դ. Դեմիրճյանի, Ա. Տերտերյանի, Գ. Լևոնյանի և այլոց ծավալուն հոդված-ուսումնասիրությունները հայ ժողովրդական վեպի տարբեր հարցերի վերաբերյալ:

Այդպիսի հոսիվածներ լույս են տեսնում նաև Միության մյուս հանրապետություններում ուսեսերեն և ուրիշ լեզուներով, որոնց մեջ արժարժվում են «Սասունցի Դավիթ» բովանդակության և արվեստի արժանիքներն ու առանձնահատկությունները, նրա նմանություններն ու տարբերությունները ուրիշ էպոսների համեմատությամբ, նրա վիպասան-ասացողների կյանքի ու վարպետության հանգամանքները և ուրիշ հարցեր:

²⁵ «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, տեքստը կազմեցին՝ պրոֆ. Մ. Աբեղյան, պրոֆ. Գ. Արով, ավագ գիտ. աշխ. Ա. Ղանալանյան, ընդհ. խմբագրություն և առաջարան ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու, Երևան, 1939:

Կարեւոր է հիշատակել նաև Երևանի պետական հանրային գրադարանի «Սասունցի Դավիթ» վերնագրով մատենագիտության Ա պրակը, ուր ժամանակագրական հաջորդականությամբ տրված են 1874 թ. մինչև 1939-ի հունիս ամիսը հայ ժողովրդական վեպի մասին տպագրված նյութերի մատենագիտական ցանկը²⁶։

1942 թվականին էրմիտաժի հիմնական հարստությունները խոր թիկունք տեղափոխելու դժվարին աշխատանքներն ավարտելուց հետո, Հ. Օրբելին իր մի քանի աշխատակիցների հետ գալիս է Երևան, ուր և նա իրեն հատուկ եռանդով ձևնամուխ է լինում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահի պարտականությունների կատարմանը։

Պատերազմի պահանջների համեմատ նա հնարավորության չափով վերակառուցում է մասնաճյուղում մինչ այդ տարվող գիտական աշխատանքները, այդ թվում նաև պատմության և գրականության ինստիտուտի կազմում կատարվող բանագիտական գործերը։

Հ. Օրբելու անմիջական նախաձեռնությամբ հիշյալ ինստիտուտի աշխատակիցները պատրաստում և լույս են ընծայում այնպիսի աշխատություններ, ուր պատերազմական ժամանակի պահանջներին համապատասխան արժարժվում են հայ ժողովրդի դարավոր հայրենասիրության, հերոսության և ազատագրական պայքարի գաղափարները, փաստական նյութերի վրա վեր են հանվում այդ պայքարի առավել ցայտուն դրվագները, դրանք գնահատվում իբրև մեր նախնիների հետագա սերունդներին ավանդած ուսանելի օրինակներ։ Միաժամանակ դրանց մեջ բացահայտվում են վիպական և քնարական անգրագաբժում գտած և իրենց այժմեականությունը պահպանած հայրենիքի նվիրականության և հերոսականության գաղափարները, տմարդի, դաժան ու արյունարբու

²⁶ «Սասունցի Դավիթ» գրավոր կենսագրությունը սկսվելով նրա առաջին պատմի տպագրությամբ (1874 թ.), չի ավարտվում վեպի հաղարամյակի հոբելյանական տոնակատարությամբ։ Այն, ավել կամ պակաս չափով, շարունակում է հետագա տարիներին ևս, հասնելով ընդհուպ մինչև մեր օրերը։

70-ական թվականներին մեղանում վերստին նորոգվում է վեպի նոր պատմների որոնման, հալտնաբերման ու հրատարակության գործը։ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում ժամանակին ապաստան գտած արևմտահայ նախկին գաղթականներից և սրանց տեղացի ժառանգներից հայտնաբերվում են «Սասնա ծռերի» 100-ից ավելի նոր տարբերակներ։ Որոշ անտիպ պատմներ ի հայտ են բերվում նաև հին բանահավաքների արխիվներում։ Դրանցից հատկապես արժեքավոր են Սասնո պատմները։

Թշնամու դեմ ժողովրդի մղած դարավոր ոգորման արժեքն ու նշանակու-
թյունը²⁷:

Բանագիտական նշված աշխատությունների հետ, Հայրենական պա-
տերազմի տարիներին հայ բանահավաքների և բանագետների հատուկ
ուշադրությանն են արժանանում ռազմաճակատում ու թիկունքում ինք-
նաբերաբար ծնված բանավոր, մասամբ էլ ինքնուս հորինողների ստեղ-
ծագործություններն (ևրգ, անեկդոտ, անեծք, մանրապատում, ասաց-
վածք...), ուր ճշմարտացի ներկայացվում են ինչպես ռազմաճակատում,
այնպես էլ թեկունքում կատարվող ողբերգական և գոտեպնդիչ իրադարձ-
ությունները, վերջիններիս իրական ու անբռնազբոս առանձին դրվագ-
ները: Դրանք արժեքավոր են ոչ միայն հայ բանագիտության, այլև հատ-
կապես Հայրենական մեծ պատերազմի պատմության համար, իբրև
այդ պատերազմին անմիջական մասնակցած հայ զինվորների, հրամանա-
տարների և վերջիններիս հարազատների հուշվերի ու մտորումների վա-
վերական սկզբնաղբյուրներ:

Այդպիսիք են, օրինակ, Ս. Խանգադյանի, Վ. Բոդյանի և ուրիշների
գրի առած համապատասխան նյութերը, որոնք ներկայումս պահվում
են ՀՍՍՀ ՖԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի
ժողովրդական ստեղծագործության տան բանահյուսական արխիվներում:

6

Արդի հայ բանագիտության պատմության առավել կարևոր տարի-
ներից է 1943 թվականը: Այդ թվականին ՍՍՀՄ ժողկոմխորհի որոշմամբ,
միութենական ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիման
վրա, Երևանում ստեղծվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադե-
միան: Վերջինիս կազմակերպումով մեր հանրապետությունում պատշաճ
հիմքերի վրա են դրվում ոչ միայն մինչ այդ մեզանում գոյություն չունե-
ցող մի շարք նոր գիտաճյուղեր, այլև նշանակալից Վերելք են ապրում
հայագիտության այնպիսի բնագավառներ (լեզվաբանություն, պատմա-
գիտություն, գրականագիտություն, ազգագրություն, հնագիտություն...),
որոնք մինչ այդ էլ համապատասխան արմատներ ունեին հայ մշակույթի
պատմության մեջ: Թվարկված բնագավառներից մեկն էլ բանագիտու-
թյունն էր:

²⁷ Ա. Ղաճալանյան, Թշնամու կերպարը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1947 և
ուրիշներ:

Հայաստանի ակադեմիայի հիմնադրումով բանագիտական աշխատանքներն աննախընթաց լիակատար ստացան մեղանում թե՛ ըստ ծավալի և թե՛ ըստ էությունից:

1943 թվականից ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, ի թիվս այլ բաժինների, կազմակերպվում է ժողովրդական բանահյուսության հատուկ բաժին²³: Վերջինս, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում իբր շուրջն է համախմբում ոչ միայն ներսի ու դրսի կարող ուժերին, այլև համապատասխան նախասիրություններ ունեցող երիտասարդ կադրեր և ծրագրված կերպով սկսում պատրաստել տվյալ առարկայի տպագրամանագետներ: Այդ նպատակով բաժինը սիստեմատիկաբար ասպիրանտներ է ընդունում հայ բանահյուսության մասնագիտությամբ:

Բաժնում ընդունված ասպիրանտներից տարբեր տարիների թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել՝ Մ. Մկրտչյանը («Հայ ժողովրդական պատմությունների երգեր», 1944 թ.), էմ. Պիվադյանը («Մ. Դրոյի առակները և նրանց ժողովրդական զուգահեռները», 1947 թ.), Գր. Գրիգորյանը («Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի արտահայտչական միջոցները», 1947 թ.), Արտ. Նազինյանը («Սովետահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը», 1953 թ.), Ս. Հարությունյանը («Հայ ժողովրդական հանելուկները», 1959 թ.) և ուրիշներ:

Բաժնում աշխատող ավագ սերնդի բանագետների հետ վերահիշյալ ևրիտասարդները ձեռնամուխ են լինում և տարիների ընթացքում իրականացնում են մի շարք կարևոր մասնագիտական աշխատանքներ: Այսպես, 1943—1960 թթ. Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը լույս է ընծայում՝ հայ ժողովրդական առած-ասացվածքների համահավաք ժողովածուն, համապատասխան ընդարձակ ներածական ուսումնասիրությամբ և գիտական տպագրատով, աշխատություններ՝ ժողովրդական բանահյուսության տեսություն, սովետահայ գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերության, սովետահայ բանահյուսության բովանդակության և արվեստի առանձնահատկությունների, հայ ժողովրդական հանելուկների բովանդակության, արվեստի և ժանրային առանձնահատկությունների մասին, հայկական էպոսին նվիրված մենագրություններ, Արարատ-

²³ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմում գոյություն ունեցող ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչը 1944—1959 թթ. եղել է տողերիս զրողը, որի կամավոր հրաժարումից հետո այդ պաշտոնը 1960 թ. ստանձնել է մինչև օրս անփոփոխ վարում է նույն բաժնի աշխատակից Ա. Նազինյանը:

յան դաշտի ժողովրդական հեքիաթների համահավաք ժողովածուի երկու ծավալուն հատորները, համապատասխան նախաբաններով և ծանոթագրություններով, Ախալցխայի ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների ժողովածուն՝ անհրաժեշտ առաջաբանով, ծանոթագրություններով, բառարանով և այլն:

Նույն թվականներին ժողովրդական բանահյուսության բաժնից բացի, բանագիտական թեմաների ու խնդիրների հետ ուղղակի առնչվող գրքեր ու հոգվածներ են հրատարակվում նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մյուս բաժինների և գիտական այլ հիմնարկների կողմից: Արդի հայ բանագիտության պատմության տվյալ տարիների աշխատանքների պատկերը առավել ամբողջական ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է հիշատակել նաև այդ գրքերից ու հոգվածներից կարևորները ևս:

Դրանցից են. «Արա Գեղեցկի պաշտամունքը», «Հայկական միջնադարյան ժողովրդական երգերը», «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», «Կոմիտասը և ժողովրդական երգերը» (տե՛ս «Հայ երաժշտության պատմության ակնարկներ» գրքում), «Մ. Աբեղյանը իբրև ֆուլկլորագետ», «Վիպասանական հայերենը», «Միթրա-Միհրը «Սասնա ծռեր»-ի մեջ», «Գր. Մագիստրոսի մոտ պահպանված Արտաշեսի վերաբերյալ պահպանված վիպասանական հատվածի մասին» և այլն:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը 1943—1960 թթ. առաջվա նման շարունակում է կատարել նաև բավական բեղմնավոր բանահավաքչական աշխատանք: Նրա հաստիքային բանահավաքների և գիտական աշխատողների ջանքերով Հայաստանի և հարևան հանրապետությունների շրջաններում (Էջմիածին, Աշտարակ, Ղուկասյան, Զանգեզուր, Ախալքալաք, Ղարաբաղ) գրի են առնվում զգալի թվով բանահյուսական նոր նյութեր և արդեն հայտնի հին ստեղծագործությունների տարբերակներ:

Այդ աշխատանքներին մասնակցում են՝ Վ. Բդոյանը, Ս. Խանգաղյանը, Ս. Իսրայելյանը, Ա. Նազինյանը, Ս. Հարությունյանը, Վ. Սևակյանը և ուրիշներ:

7

Սովետահայ բանագիտությունը ավելի լայն գիտահետազոտական հունի մեջ է մտնում 1960 թվականից հետո, երբ ՀՍՍՀ ԳԱ նախագահու-

Բյան հատուկ որոշումով ժողովրդական բանահյուսության բաժինը տեղափոխվում և բանագիտական աշխատանքներն առհասարակ կենտրոնացվում են ՀՍՍՀ ԳԱ նոր հիմնադրված հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմի մեջ: Եվ դա բնական ու հասկանալի «տեղաշարժ» էր: Հայտնի է, որ ժողովրդական բանահյուսությունը ունենալով հանդերձ գեղագիտական ուռուցիկ ֆունկցիա, իր ծագումնաբանական արմատներով և ընդհանուր նկարագրով սերտորեն կապված է ազգագրության հետ: Այդպես է եղել երկար տարիներ ինչպես մեր կրկրում, այնպես էլ արտասահմանում, երբ ժողովրդական բանահյուսությունը իրավացիորեն համարվել ու համարվում է ազգագրության կամ ժողովրդագիտության կարևոր մարզերից մեկը:

Հիշյալ տեղափոխությունից որոշ ժամանակ անց (1972 թ.), հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինն զուգընթաց հիմնվում է նաև բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման նոր բաժինը, ղգալիորեն ավելանում է ժողովրդական բանահյուսությամբ ղբալվող կաղերի քանակը, լայնանում են նրանց ուսումնասիրության առարկայի շրջանակները: Ժողովրդական բանավեստի հարցերն ու թեմաները սերտորեն ղուգակցվում են բուն ազգագրության, երաժշտական ֆուլլորի և ժողովրդական պարարվեստի հարցերի ու թեմաների հետ:

Ինստիտուտի բանահյուսական ղույզ բաժինները տարիների ընթացքում անհատական գործուղումների և ղիտական արշավախմբերի ձևով, բանահավաքչական սխտեմատիկ աշխատանքներ են կատարում թե՛ Հայաստանի տարբեր շրջաններում և թե՛ այլ հանրապետությունների ու մարղերի հայաբնակ վայրերում, հավաքելով բանահյուսական, երաժշտական և պարարվեստի բաղմածանր ու հարուստ նյութեր:

Հիշարժան են հաստիքային բանահավաքներ Ա. Կարապետյանի և Մ. Առաքելյանի ամենամյա երկարատե և արղյունավետ բանահավաքչական աշխատանքները Հայաստանի տարբեր շրջաններում, հարևան հանրապետություններում և մասնավորապես Լեռնային Ղարաբաղում, բանագետներ Ռ. Գրիղորյանի տեական ու բաղմարղյուն աշխատանքները Սեանի ավաղանում (Կամո, Մարտունի, Վարղենիս, Սեան), Վ. Սրվաղլյանինը՝ Հայաստանում բնակվող նախկին մուսալեռղինների միջավայրում, Ա. Ղաղիյանինը՝ Լեռնային Ղարաբաղում և Կիրովաբաղում, Թ. Գեղրղյանինը՝ Լոռիում և Հրաղղանում, Ա. Սահակյանինը՝ Շիրակում և այլուր, է. Խեմղյանինը՝ Իջեանում և Շամղաղինում, Ռ. Խաղա-

տըրյանինը՝ Թալինում, Ժ. Խուրշուդյանինը՝ Լեռնային Ղարաբաղում, ժողովրդական պարարվեստի մասնագետներ է. Պետրոսյանինը և Ժ. Խաչատրյանինը՝ Աշտարակում, Հոկտեմբերյանում, Արարատում, Արտաշատում, Ղուկասյանում, Թալինում, Շիրակում, Զավախքում և այլն: Անհատական բանահավաքական գործուղումների հետ միասին հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական բաժինները 1960—70-ական թթ. առանձին կամ նույն ինստիտուտի ազգագրության բաժնի, մասամբ և արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության մասնագետների հետ միասին ժողովրդագիտական կոմպլեքսային մի շարք արշավախմբեր են կազմակերպում դեպի Հայաստանի տարբեր շրջաններն ու հարևան հանրապետությունների հայաբնակ վայրերը: Դրանցից հատկանշական են Ռոստովի մարզի (1959 թ.), Իջևանի (1960 թ.), Նոյեմբերյանի (1961 թ.), Կարմիրի (1962 թ.), Աբխազիայի (1963 թ.) կոմպլեքսային արշավախմբերի, Ալավերդու (1963 թ.), Ստեփանավանի (1964 թ.), Լենինականի (1965 թ.), Աշտարակի (1966 թ.), Զանգեզուրի (1967 թ.), Ապարանի (1968 թ.), Ախուրյանի (1969 թ.), Արթիկի (1970 թ.) զուտ բանահյուսական արշավախմբերի, ինչպես նաև «Սասնա ծռերի» պատումների գրառման նպատակային արշավախմբի (1971—73 թթ.) արդյունավետ աշխատանքները՝ Հայաստանի 18 շրջաններում ու քաղաքներում: Այդ արշավախմբերը հիմնականում գլխավորել են բանահյուսական բաժինների վարիչներ Ա. Նազինյանը, Ս. Հարությունյանը, ազգագրության բաժնի վարիչ Դ. Վարդումյանը, բաժինների աշխատակիցների գործուն մասնակցությամբ²⁹:

Անհատական գործուղումների և խմբական գիտարշավների միջոցով գրի առնված հարուստ նյութերի հետ, ինստիտուտի բանահյուսական արխիվը տաբեների ընթացքում համալրվում է ժողովրդական բանահյուսությամբ շահագրգռված «սիրող» բանահավաքներից ձեռք բերված կաշկոր նյութերով: Այս առումով հիշարժան են Մ. Գրիգորյան-Սպան-

²⁹ Հարկ ենք համարում այստեղ նշելու, որ ժողովրդական երգերի ձայնագրության և ուսումնասիրության ուղղությամբ, տարբեր տարիների բեղմնավոր աշխատանք են կատարել՝ Ռ. Մելիքյանի անվան երաժշտական կարինեստը (Ա. Քոչարյան, Հ. Հարությունյան), Վոմիտասի անվան կոնսերվատորիան (Ք. Քուշնարյան, Ալ. Շահվերդյան, Մ. Աղայան, Ալ. Թադևոսյան, Ռ. Աթաջան, Մ. Բրուտյան, Վ. Սամվելյան, Մ. Մուրադյան, Ա. Փահլևանյան), ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժինը (Մ. Մուրադյան, Մ. Մանուկյան, Զ. Թադաբեյան, Ն. Զուրարի և ուրիշներ):

դարյանից (Լեոնային Ղարաբաղ), Ա. Բարսեղյանից և Ա. Դարբինյանից (Մոկոս), Պ. Բարսեղյանից (Շիրակ), Մ. Հակոբյանից (Գուգարք), Գ. Գև-
վորգյանից (Աշտարակ), Բ. Ղազիյանից (Լեոնային Ղարաբաղ և Հայաս-
տանի այլ շրջաններ), Հր. Մկրտչյանից և Ա. Գևորգյանից (Լենինական),
Գ. Ստեփանյանից (Սևանի ավազան) և շատ ուրիշներից ձեռք բերված
ազգագրական տարբեր շրջանների և բանահյուսական տարբեր ժանրերի
ստեղծագործությունները:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վերոհիշյալ զույգ
բաժինները իրենց ընթացիկ աշխատանքներին զուգահեռ, հետևողակա-
նորեն զբաղվում են նոր բանագիտական կադրերի պատրաստման և
եղած հին կադրերի գիտական որակավորումը բարձրացնելու աշխա-
տանքներով: Տարբեր տարիների և տարբեր թեմաներով ինստիտուտում
պաշտպանվել են ինչպես թեկնածուական, այնպես էլ դոկտորական մի
շարք գիտերտացիաներ:

«Հայ ժողովրդական հերոսական էպոսը» թեմայով 1960 թ. դոկտո-
րական դիսերտացիա է պաշտպանել բանասիրական գիտությունների
թեկնածու Գր. Գրիգորյանը:

«Հոմերոսը և հայ գրականությունը» թեմայով 1964 թ. թեկնածուա-
կան դիսերտացիա է պաշտպանել Ռ. Գրիգորյանը:

«Սարգիս Հայկունու կյանքն ու գործունեությունը» թեմայով 1965 թ.
թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Վ. Սվազյանը:

«Հայ քաղաքային ժողովրդական հրգարվեստը» թեմայով 1969 թ.
թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Արաքսի Հարությունյանը:

«Հայ ժողովրդի ռազմի և զինվորի երգերը» թեմայով 1971 թ. թեկ-
նածուական դիսերտացիա է պաշտպանել Ալ. Ղազիյանը:

«Մանուկ Աբեղյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով 1971 թ.
դոկտորական դիսերտացիա է պաշտպանել բանասիրական գիտությու-
նների թեկնածու Ս. Հարությունյանը:

«Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն» թեմա-
յով 1972 թ. թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Ա. Սահակ-
յանը:

«Տիգրան Նավասարդյանի ավանդը հայ բանագիտության մեջ» թե-
մայով 1982 թ. թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել Ս. Վար-
դանյանը:

Ինստիտուտի ժողովրդական բանահյուսության զույգ բաժինները
ներկայումս ունեն մի քանի ասպիրանտներ ու դիսերտանտներ, որոնք

պատրաստվում են առաջիկայում պաշտպանելու իրենց թեկնածուական դիսերտացիաները:

Գալով հնագիտության և աղագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինների 1960—1983 թթ. իրականացրած գիտահետազոտական աշխատանքներին ու հրապարակումներին (բանահյուսական ստեղծագործությունների այս կամ այն շրջանի ու գավառի տեղական ժողովածուներ, աղագրական տարբեր շրջանների ժողովրդական հերիաթների համահավաք հրատարակություններ, Հայաստանի, հարևան հանրապետությունների և այլ հայաբնակ վայրերի բառ ու բանի, երաժշտական ֆոլկլորի և պարավիստի ստեղծագործությունների գիտական ուսումնասիրություններ ու հրատարակություններ և այլն)³⁰, ապա դրանցից առաջին հերթին պետք է հիշատակել հայ ժողովրդական հերիաթների համահավաք ժողովածուի 11 մեծադիր հատորները³¹, ժո-

³⁰ 1970 թ. հնագիտության և աղագրության ինստիտուտի դիրեկցիայի և գիտական խորհրդի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Հայ աղագրություն և բանահյուսություն» մատենաշարը: Նպատակն էր՝ մատենաշարի էջերում պարբերաբար հրատարակել ինստիտուտի բանահյուսական ու աղագրական արխիվներում կուտակված ժողովրդագիտական հարուստ նյութերը, ինչպես նաև ինստիտուտի աշխատակիցների կատարած աղագրական և բանագիտական ուսումնասիրությունները: Մատենաշարը եկավ որոշակի զարկ տալու ժողովրդագիտական նյութերի և ուսումնասիրությունների հրապարակումների աշխուժացմանը, միաժամանակ և պարտերացնելու, համախմբելու և օրինաչափ դարձնելու այդ հրապարակումները: Մատենաշարի մինչև այժմ լույս տեսած 14 մեծադիր հատորներում են հրապարակվել ինստիտուտում կատարված բանագիտական հետազոտությունների և հավաքված բանահյուսական նյութերի զգալի մասը (ծանոթ. խմբագրի):

³¹ Հիշյալ ժողովածուի XI հատորի հրապարակման առթիվ լույս տեսած մի հոդված-գրախոսության մեջ (հեղինակ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Գրիգորյան) գրված է. «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հայ բանահյուսության բաժնի վարիչ, անվանի ֆոլկլորագետ Արտաշես Նազինյանի ներկայացրած պլան-պրոսպեկտի հիման վրա՝ ինստիտուտի գիտական խորհուրդը որոշում է իրականացնել հայ ժողովրդական հերիաթների հրատարակությունը քսանհինգ հատորով» (տե՛ս «Գաղուն» ամսագիր, 1981, № 3, էջ 68):

Հայ բանագիտության իրական պատմությամբ հետաքրքրվողներին թյուրիմացություններից զերծ պահելու համար պարտք ենք համարում կատարել հետևյալ ճշտումները.

1. Ինստիտուտի գիտական խորհուրդը ոչ թե որոշել, այլ միայն հավանություն է տվել դիրեկցիայի (դիրեկտոր՝ Գ. Ն. Հովնան) անմիջական նախաձեռնությամբ և Հայաստանի ԳԱ նախագահության (նախագահ՝ Հ. Ա. Օրբելի) եռանդուն մասնակցությամբ և նրա անձնական ջանքերով վերադաս մարմինների հետ հատուկ համաձայնեցված համապատասխան որոշմանը (հոդվածագիրն ըստ երևույթին անտեղյակ է այս բոլորին):

ղողմը դական հանելուկներին, ժողովրդական խաղիկներին, օրորոցի և մանկական երգերի նմանատիպ համահավաքները, Գ. Սրվանձտյանցի երկերի ժողովածուի երկու ծավալուն հատորները, մի շարք արժեքավոր մենագրություններ՝ նվիրված ժողովրդական անեծքներին և օրհնանքներին, «Սասնա ծերեր» պատումների համեմատական քննությունը, հայ վաստակաշատ մի քանի բանահավաքների կյանքին ու գործունեությանը, պատմական տարբեր ժամանակաշրջանների հայկական վիպերգերին և պատմական-երգային բանահյուսությանը, հայ քաղաքային ժողովրդական երգարվեստին, հայ ժողովրդական պարերին ու թատերական ներկայացումներին, Զավախքի հայ ժողովրդական պարերին, սովերների (= զարագոզ) թատրոնին, միջնադարյան Հայաստանի մանրանկարների թատերական գծերին և այլն:

Բացի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինների 1960—1983 թթ. հրատարակած բանագիտական աշխատանքներից, նվաճ տարիներին մեղանում տարբեր հիմնարկներին ու հրատարակչությունների կողմից տպագրվել են նաև ժողովրդական բանահյուսության հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող ուրիշ գործեր ևս, նվիրված Սպ. Մելիքյանին և հայ ժողովրդական երգերին, հայ վիպական և քնարական բանահյուսությանը, հայ ժողովրդական հեքիաթներին, հայ միջնադարյան զրույցներին, հիկլար Իմաստունի խրատներին, հայ ժողովրդական երաժշտությանը, ներքին Բասենի պարերգերին, ազգագրությանը և բանահյուսությանը, հայ բանաստեղծության ակունքներին, «Կոունկ» երգին և նրա պատմությանը, միջնադարյան Հայաստանի թատրոնի ակունքներին և այլն³²:

2. 1956 թ., երբ ինստիտուտի գիտական խորհրդում քննարկման է դրվել հերիաթների բազմահատորյակի «սլան-սրոսպեկտը» (սլանը է գրվել՝ ծրագիրը—Ա. Ղ.), Արտաշես Նաղինյանը ոչ բաժնի վարիչ էր, ոչ էլ ակումանի ֆուկորադետ, այլ բաժնի սովորական գիտական աշխատողներից մեկն էր, և նման «սլան-սրոսպեկտ» նա չի ներկայացրել ինստիտուտի գիտական խորհրդի քննարկմանը:

3. Նախապես ծրագրված է եղել հայ ժողովրդական հերիաթների համահավաք ժողովածուն հրատարակել ոչ թե 25, ինչպես նշել է հոգիածաղիրը, այլ ընդամենը 10 հատորով (տե՛ս գիտական խորհրդի հիշված նիստի՝ 1956 թ. Հոկտեմբերի 27-ի արձանագրությունը, որը ներկայումս պահվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում):

32 1970-ական թթ. սկզբներից ի վեր րանագիտական, րանահավաքական-մեթոդական արդյունավետ աշխատանքներ են կատարվում Երևանի պետական համալսարանում, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության հանրապետական

Արդի հայ բանահյուսության նյութերի հայտնաբերման, գրառման և ուսումնասիրության ղուգընթաց, վերջին 60 տարիների ընթացքում մեղանում նկատելի գործ է կատարվել նաև ազգային փոքրամասնությունների ժողովրդական բանավոր ստեղծագործության բնագավառում: Դրա սպացույցն են Հայաստանում բնակվող հզղի քրդերի էպոսի, վիպերգերի, հեքիաթների, երգերի, առած-ասացվածքների գրառումը, ուսումնասիրությունն ու դրանց մի մասի թարգմանությունը հայերեն, այդ ստեղծագործությունների տպագրությունը մայրենի և հայերեն լեզուներով:

Կա կարևոր մի հանգամանք ևս, որի անտեսումը պակասավոր կըղարձնի արդի հայ բանագիտության պատմության ընդհանուր պատկերը:

գիտամթողական կենտրոնում, Սարգարապատի ազգագրական և լենինականի «Կումայրի» արդևուց թանգարաններում և այլու:

Երևանի պետհամալսարանի հայ ժողովրդական րանահյուսության առարկայի դասախոս Ն. Հակոբյանը 1970-ին թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել «Երգիծանքն ու հումորը «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպում» թեմայով, բանասիրական ֆակուլտետի ուսանողության միջոցով տարիների ընթացքում հավաքել է տվել ու կուտակել բանահյուսական հարուստ ու րազմածանր նյութեր, պարբերարոր կազմակերպել ու կազմակերպում է ուսանողական բանագիտական նստաշրջաններ, ավարտող ուսանողներին հանձնարարել է տալիս բանագիտական թեմաներով դիպլոմային աշխատանքներ, Արծա Սահակյանի հետ համատեղ հրատարակել է «Հայկական ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն (1980 թ.):

Երևանի Վ. Բրյուսովի անվ. ուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի ողցնտ Ս. Գուլակյանը վերջին տասնամյակում հետազոտել է հայկական հրաշապատում հեքիաթները, կազմել 500-ից ավելի հեքիաթների մոտիվների նշանացանկը:

Լենինականի Մ. Նալբանդյանի անվ. մանկավարժական ինստիտուտի դասախոս Ն. Գինոսյանը 70-ական թթ. սկզբներին թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել միջնակարգ դպրոցներում ժողովրդական րանահյուսության դասավանդման մեթոդիկայի վերարերյալ, լենինականից և կից շրջաններից գրառել ժողովրդական երգիծական մանրապատմների րազմաթիվ արժեքավոր նմուշներ:

Երիտասարդ րանագետներ Հ. Թարուկյանի, Արծ. Սահակյանի և Ա. Սարգսյանի ետանդուն շաների շնորհիվ մշակվել է ու կարգավորվել ՀՍՄՀ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության հանրապետական գիտամթողական կենտրոնի րանահյուսական արխիվը, համարվել նոր նյութերով: Ա. Սարգսյանը հանրապետության մի շարք շրջանների մշակութային տներում ստեղծել է րանահամարների տեղական ակտիվ, գրել և հրատարակել է ժողովրդական րանահյուսության գրառման և րանահավաքական գործի կազմակերպման վերարերյալ մեթոդական գրքույկներ:

Բացի այդ, 1950—80-ական թթ. «Սասնա ծռեր» հերոսավեպի, հայկական հեքիաթների մի շարք թարգմանություններ, հրատարակություններ և ուսումնասիրություններ են կատարվել արտասահմանյան մի շարք երկրներում, եվրոպական ու արևելյան տարրեր լեզուներով (ծանոթ խմբագրի):

Հայտնի է, որ անցյալում հայ ժողովրդական բանահյուսության վերաբերյալ ուսանողներն և այլալեզու հրատարակությունները ինչպես իրենց քանակով, այնպես էլ հետաքրքրվող ընթերցողների շրջանակով շատ սահմանափակ են եղել: Բացի նեղ մասնագետների որոշակի ոլորտից, դրանցով քչերն են զբաղվել: Բոլորովին այլ պատկեր ունի դրուսթյունը մեր օրերում:

Վերջին 60 տարիներին հայ ժողովրդական բանահյուսության վերաբերյալ ուսանողներն թարգմանությամբ և ուսերենի վզալի օգնությամբ հրապարակ է եկել նկատելի քանակով գրականություն (գրքեր, ժողովածուներ, հոդվածներ): Այդ թարգմանություններից առաջին հերթին պետք է հիշատակել «Սասունցի Դավիթ» էպոսի հյուսվածո համահավաք բնագրի ամբողջական և մասնակի բաղմաթիվ հրատարակությունները, հայ ժողովրդական հեքիաթների մի քանի ժողովածուներ, «Հայկական ֆոլկլոր» ընդհանուր վերնագրով երկու ժողովածուներ, «Հայ ժողովրդական ավանդություններ» համահավաք բնագիրն իր ծավալուն ներածությամբ, հայ ժողովրդական երգերի, առած-ասացվածքների մի քանի համեմատաբար ընդարձակ հրատարակություններ և այլն³³:

Արդի հայ բանագիտության ազգային շրջանակներից առկա լայն ոլորտներ դուրս գալու խոստուն դասերուններից մեկն էլ վերջին մեկ-երկու տասնամյակում մեր բանագետների միջազգային համաժողովներին

³³ Վերահիշյալ միանգամայն պատշաճ մակարդակ ունեցող գործերի շարքը, ցավոք, սողոսկել են նաև ոչ մի քննադատության չդիմացող ժողովածուներ ևս: Գրանցից են Գրիգոր Հովհաննեսի Կարապետյանի՝ Մոսկվայում ուսանող լեզվով հրատարակած հետևյալ ժողովածուները. «Армянские пословицы и поговорки» գրքույկը, տպված 1964 թ. և զգալիորեն ընդարձակված ու վերահրատարակված 1973 թ., «Армянский фольклор» ժողովածուն, տպված 1969 թ. և զգալիորեն ընդարձակված ու վերահրատարակված 1979 թ., բոլորն էլ «Найка» հրատարակչության կողմից: Մեղ լավ ծանոթ աչղ ժողովածուները լեզուն են փաստական, թարգմանական բաղմաթիվ ու բաղմադան սխալներով, նյութերի պատահական ընտրությամբ, վայրկյան դասավորությամբ, անհարկ ծանոթություններով, բարբառային րառերի հաճախակի հանդիպող անհիշտ րացատրություններով, որոնք դարձանք են առաջացնում ոչ միայն մասնագետների, այլև հայ ժողովրդական բանահյուսությանը, ազգագրությանը, պատմությանն ու աշխարհագրությանը բիշ թե շատ ծանոթ մարդկանց մեջ:

Եվ չնայած ՀՍՍՀ ԳԱ հրատարակչական խորհրդի հեղինակավոր նախագահի աչղ առթիվ ում հարկն է ժամանակին արված նախազգուշացմանը և մամուլում լույս տեսած ուսանող խիստ քննադատությանը (տե՛ս «Գրքերի աշխարհ», 1979 թ. Ա՝ 7, 15 հուլիսի), «Найка» հրատարակչությունը, տարօրինակ հետևողականությամբ, շարունակում է լույս ընծայել Գ. Հ. Կարապետյանի վերը հիշատակված խոստան գրքերը, դրանով իսկ արջի ծառայություն մատուցելով արդի հայ բանագիտությանը:

և միութենական նստաշրջաններին ու գիտական սեմինարներին ունեցած պարբերաբար ու դործուն մասնակցություն փաստն է, որին մենք չենք հանդիպել հայ բանագիտության անցյալի պատմության մեջ:

Հիշենք դրանցից՝ 1956 թ. Օրջոնիկիձեի համամիութենական գիտական նստաշրջանը՝ նվիրված նարտական էպոսի ուսումնասիրության հարցերին, 1964 թ. Մոսկվայի մարդաբանների և ազգագրագետների միջազգային գիտական համաժողովը, Օրջոնիկիձեի (1968 թ.), Թբիլիսիի (1971 թ.), Դուշանբեի (1976 թ.), Երևանի (1978 թ.) ազգագրության և բանահյուսության դաշտային-հետազոտական աշխատանքներին նվիրված համամիութենական գիտական նստաշրջանները, 1969 թ. Լենինգրադի Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական համամիութենական գիտական նստաշրջանը, 1971 և 1975 թթ. Լենինգրադում գումարված «Բանահյուսություն և ազգագրություն» պրոբլեմային 2-րդ և 3-րդ կոնֆերանսները, 1975 թ. Երևանում գումարված միութենական և արտասահմանյան մի շարք երկրների էլեկտրոնային հաշվիչ մեքենաների միջոցով երաժշտական ֆուլկլորի ուսումնասիրությանը նվիրված սեմինարը և այլն:

Շարադրված փաստերը ցույց են տալիս, որ սովետահայ բանագիտությունը անցել է բավական բարդ ու բեղմնավոր ուղի:

1960—80-ական թվականների հայ բանագիտության մեջ արմատապես հաղթահարվում են 30—50-ական թվականներին գոյություն ունեցող որոշ բացեր ու թերություններ (բանահյուսական երկերին արվող գոհճիկ-սոցիոլոգիական մեկնաբանությունները, անհատի պաշտամունքի հետևանքներով պայմանավորված ինքնուս հորինողների գովաբանական ասքերն ու երգերը «ժողովրդական բանահյուսություն» անվան տակ հրապարակելն ու դրանց կեղծ-բանագիտական արժեքավորումները և այլն):

Արդի բանագիտական հրապարակումներն ու հետազոտությունները թե՛ քանակով և թե՛ գիտական մակարդակով ու որակով որոշակի վերելք են ապրում: Դրանց մեծապես նպաստում է սովետական և արտասահմանյան բանագիտության մեջ եղած նոր նվաճումների յուրացումն ու ստեղծագործական կիրառումը:

Հատկապես ընդգծելի են այս առումով բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործությունների գիտական պատշաճ մակարդակ ունեցող հրատարակությունները (սկզբնաղբյուրների գիտական դասակար-

գում, անհրաժեշտ առաջաբան-ներածությունների, տարբեր տիպի ծանոթագրությունների ու բառարան-ցանկերի առկայություն):

Շուրջ 10 տարի է՝ հնագիտության և աղագրություն ինստիտուտի բանահյուսական բաժինների մի խումբ մասնագետների կողմից, Միություն առանձին հանրապետություններում և արտասահմանյան մի քանի երկրներում փորձարկվող կառուցվածքային և քանակական վերլուծությունների նորագույն մեթոդներով, հաշվիչ մեքենաների կիրառությամբ իրականացվում է բանահյուսական արխիվային նյութերի գիտական վավեհագրումն ու դիտավոր կատալոգի կազմումը, հայ բանահյուսության որոշ ժանրերի (խաղիկներ, կենդանական հեքիաթներ ու առակներ) առկա բազմահազար նյութերի գիտական համահավաքների ստեղծումն ու ուսումնասիրությունը: Այդ աշխատանքներն իրականացվում են հատկապես բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Հարությունյանի ղեկավարությամբ և բանասիրական գիտությունների դոկտոր Ի. Գ. Լեինի (Լենինգրադ) կազմած հատուկ ծրագրով ու անմիջական վերահսկողությամբ:

Սխալ կլիներ պնդել, թե արդի հայ բանագիտությունը արդեն լուծել է իր առջև ծառացած բոլոր հարցերը: Կատարված ըստ ամենայնի շնորհակալ շատ գործերի հետ, քիչ չեն նաև առաջիկայում կատարվելիք անելիքները: Հայ ժողովրդի բազմադարյան հարուստ բանահյուսության բոլոր ժանրերն ու ստեղծագործությունները, թեմաներն ու հարցերը չէ, որ ցարդ արժանացել են հավասար ու անհրաժեշտ ուշադրության: Համեմատաբար քիչ են հայտնաբերված, գրի առնված, ի մի բերված և ուսումնասիրված մեր ժողովրդական մանրապատմաները, հմայական աղոթքները և այլն: Մասնագիտական հատուկ և հանգամանալից ուսումնասիրության են կարոտ հայ ժողովրդի ստեղծած բյուրավոր հեքիաթները, ծիսական բանահյուսությունը, հայ նշանավոր բանասացների, բանահավաքների ու բանագետների մի ղգալի մասի կյանքի ու գործունեության հանգամանալից բնութագիրն ու գնահատականը: Իրենց բանիբուռ հետազոտողներին են սպասում այնպիսի կարևոր և բարդ խնդիրների ու թեմաների մասնագիտական քննությունները, ինչպիսիք են՝ հայ ժողովրդական բանահյուսության աղգային առանձնահատկությունների, միջաղգային զուգահեռների, բանաստեղծական լեզվի ու ոճի, ժամանակակից բանահյուսության սովետահայ մշակույթի մեջ ունեցած տեղի ու դերի, հայ միջնադարյան գրականության և ժողովրդական բանահյուսության աղերսների հարցերը և այլն:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Հայ բանագիտության պատմության մեջ ուրույն տեղ ունի Խաչատուր Աբովյանը: XIX դարի ժողովրդանվեր լուսավորիչներից շատերի պես՝ մատաղ սերնդի ուսման, դաստիարակության, գիտության տարածման, հին լեզվի, գրականության վերափոխման հիմնական հարցերին զուգընթաց նա պատշաճ ուշադրություն է հատկացրել նաև ժողովրդական լայն խավերի բանավոր գեղարվեստական ստեղծագործությանը:

Աբովյանը հայ առաջին դասական գրողներից է, որը ոչ միայն լայնորեն օգտագործել է իր գրվածքներում ժողովրդական բանավոր ստեղծանքները, մոտիվները, թեմաները, կերպարներն ու արտահայտչական միջոցները, այլև հանդես է եկել իբրև բանահավաք ու բանագետ, հետամուտ եղել, գրի առել և ըստ արժանվույն գնահատել է ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների բառ ու բանը:

1

Հիմնավոր են ժողովրդական բանահյուսության հետ Աբովյանի ունեցած կապերը:

Վաղ մանկությունից մինչև կյանքի վերջին տարիները, թե՛ հայրենի Քանաքեռ գյուղում և թե՛ Հայաստանի այլ վայրերում, Աբովյանը հաճախակի առիթներ է ունեցել հայ և այլադղի ժողովրդական երգիչներից, հեքիաթասացներից ու առակախոսներից լսելու բաղձաթիվ բանահյուսական ստեղծագործություններ՝ օրորոցի երգերից մինչև անեծք-օրհնանքներ: Իրենց բովանդակության ու արվեստի բարձր հատկանիշներով այդ ստեղծագործությունները արժանացել են գրողի հատուկ ուշադրությանը, խորը հետք թողել նրա հոգևոր աշխարհում:

Ինքնակենսագրական բանաստեղծություններից մեկի մեջ Աբովյանը հիշատակում է հոր երգած օրորոցի երգերը.

«Ի կոյսս արհարաց նանի ձայնելով
Զիս օրօրէի, հայր գորովագութ.
Եւ ի գիրկս անկեալ ծնողական գթով
Համբոյք քո կնքէր զիմ քուն քաղցրանիւթ»

(Հ. I, 97)¹:

Մի ուրիշ բանաստեղծութեան մէջ նա վերարտադրում է արեւի և լուսնի մասին իր լսած ժողովրդական ավանդութեան բովանդակութեանը, ըստ որի արեւը մի քնքուշ ու գեղեցիկ աղջիկ է, որ ցերեկներն է միայն շրջում և սուր ճառագայթներով ծակում է մարդկանց աչքերը, որպէսզի սրանք չհանդգնեն նայելու իր երեսին, իսկ լուսինը՝ քաջասիրտ ու ըմբոստ մի պատանի, որ անվախ, գիշերներն է դուրս գալիս «հերքելու խավարը» (Հ. I, 97):

«Վերբ»-ի սուաչաբանում անդրադառնալով այն հարցին, թե ի՞նչ ստեղծագործութիւններ են հարազատ ժողովրդի հոգուն, Աբովյանը հիշատակում է հասարակական զանազան հավաքութեաներում բաղմիցս լըսած ժողովրդական-գուսանական երգերն ու խաղերը:

«Շատ անգամ,—գրում է նա,—տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի էնպես են հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ անկաջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մեջիւս ու հարսանիք ևս՝ առանց սաղանդարի երբ հացը կուլ կերթար» (Հ. III, 4):

«Ուղեւորութուն դեպի Անիի ավերակները» ճամփորդական նոթերում Աբովյանը մտաբերում է հայ գուսաններից մանկութեան տարիներին լսած ու սովորած երգը Մաղասա բերդի վերջին տիպակալ, ամբողջ երկրամասում սարսուփ տարածած ավազակ Զոր-Կարա-Գյողի ողբալի մահվան մասին (Հ. VII, 205):

«Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտութիւնը» հոդածում Աբովյանն ակնարկում է տարբեր տիպի հավաքութեաներում բաղմաթիւ առիթներով լսած բազմազան ժողովրդական երգերի մասին:

«Ինչ որ տեսնում եմ մի այլ երաժշտութիւն այնպես չի հուզել, չի խանդավառել, ամեն կարգի տրամադրութիւններով չի համակել, որքան այս երաժշտութիւնը: ... Ես չափազանց շատ առիթներ եմ ունեցել հո-

¹ Այս և հաջորդ բոլոր հոմեական թվանշանները ցույց են տալիս ն. Աբովյանի նրկերի լիակատար ժողովածուի երեանյան գիտական հրատարակութեան (1947—1961 թթ.) համապատասխան հատորները, իսկ արաբական թվանշանները՝ նույն հրատարակութեան համապատասխան էջերը:

գեկան միենուն հուզումը դիտել ամբողջ հավաքույթում և հափշտակվել այնպիսի շափով, որի նվազագույնն իսկ Եվրոպայում ոչ մի տեղ ունեցնող իրենքի մոտ չեմ նկատել...» (Հ. X, 107—108):

«Ավարհալի ու կարճ պատմությունն» գրվածքում Աբովյանը մտաբերում է Քյոո-օղլու, Քյարամի և ուրիշների մասին երեխա ժամանակ աշուղներից լսած հերոսական և սիրային երգախառն հեքիաթ-սյատմությունները (Հ. IV, 99):

«Խովարառ շենքը» ժողովրդական առակի սկզբում իբրև բնաբան Աբովյանը գրել է՝ «Հավ հարեանը վատ բարեկամից բոլոր անգամ լավ ա, լսել եմ խալխից» (Հ. VII, 425):

Դորպատում անցկացրած ուսումնառության տարիներին (1830—1836 թթ.) Աբովյանի մեջ ավելի է խորանում ու ամրապնդվում ժողովրդական բանահյուսության նկատմամբ նրա մեջ մինչ այդ եղած հետաքրքրությունը: Դրան մեծապես նպաստում է այն մթնոլորտը, որ այդ տարիներին գոյություն ունեւ ինչպես էստոնիայում, այնպես էլ վերջինիս մերձավոր երկրներում:

30-ական թվականների սկզբին համալսարանին կից, Աբովյանի աշխատառ, հիմնվում է մի ընկերություն՝ «էստոնական գիտական ընկերություն» անունով, որի մեջ ընդգրկվում են ժամանակի էստոն առաջավոր մտավորականության լավագույն ներկայացուցիչները (Ֆ. Ֆելման, Ֆ. Կրայցվալդ, Դ. Յուրգենսոն, Խ. Նեյս և ուրիշներ): Ընկերության հիմնական նպատակը էստոն գյուղացիության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի բարվոքման հարցն էր: Այդ նպատակով ծրագրվում էր շրջագայություններ կատարել երկրի գյուղերում ու ավաններում, ուսումնասիրել գյուղացիության անցյալն ու ներկան, կենցաղն ու աշխարհայացքը: Ընկերության կանոնադրության մեջ առանձին տեղ էր տրվում նաև ժողովրդի բանավոր ստեղծագործության հուշարձանների հայտնաբերմանը, գրառմանը, ուսումնասիրությանն ու հրատարակությանը²:

Նույն այդ տարիներին, երբ Աբովյանը ուսանում էր Դորպատում, տեղի «Ինլանդ» ամսագրում և «Պրովինցիալբլատտ» թերթում տպագրվում են 1826—1833 թթ. Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետի սան, հետազայում նշանավոր գրող, լուսավորիչ, բանահավաք ու բանագետ, էստոն ժողովրդի ազգային էպոս «Կալեվիպոեգ»-ի կազմող ու մշակող Ֆ. Ռ. Կրայցվալդի գերմաներեն մի շարք հոգվածները էստո-

² Э. Сызель, Жизнь и деятельность Крейцвальда, Таллин, 1953, стр. 9, 10 и след.

նական դիցաբանության, ժողովրդական ավանդությունների, հեքիաթների ու երգերի մասին³:

Ժողովրդական բանահյուսության բնագավառում վերոհիշյալ տարիներին նման տիպի աշխատանքներ են կատարվում նաև էստոնիայից դուրս:

Ֆինլանդիայում 1829—1831 թթ. հրատարակվում է Լյոնրոտի ֆիննական ժողովրդական երգերի ժողովածուն («Kantele taikka suomen Kansan»), իսկ 1835 թվականին էլ նույն հեղինակի խմբագրությամբ լույս է տեսնում կարելտֆիննական էպոսի («Kalevala») առաջին հրատարակությունը:

Ռուսաստանում տպագրվում են՝ վ. Ի. Դալի բանահյուսական առաջին գրքերը («Русские сказки», 1832 թ., «Были и небылицы», 1833—39 թթ.), Ի. Մ. Սնեգիրևի ուսումնասիրությունը նվիրված ռուսական ժողովրդական առածներին («Русские в своих пословицах», кн. 1—4, 1831—1834), Ի. Պ. Սախարովի ռուսական ժողովրդական ասքերի ժողովածուն («Сказания русского народа», 1836—37 թթ.), Ի. Ի. Սրեկինսկու ուկրաինական բանահյուսությանը նվիրված ժողովածուն («Запорожская сторона», 1833—38 թթ.):

Գերմանիայում հրապարակ են գալիս Գրիմմ եղբայրների ուսումնասիրությունները գերմանական ժողովրդի հերոսական ասքերի և դիցաբանության վերաբերյալ («Die deutsche Heldensage», 1829 թ., «Deutsche Mythologie», 1835 թ.) և այլն:

Աբովյանի նման գրականության և գիտության ծառավի մարդը, որը մանկությունից հատուկ հետաքրքրություն էր ցուցաբերել ժողովրդի բառ ու բանի նկատմամբ, Դորպատում եղած տարիներին դժվար թե անհաղորդ մնար վերը հիշատակված փաստերին:

Նրա օրագրային գրառումներից պարզվում է, որ Դորպատի ուսուցչական սեմինարիայի ազատ ունկնդիր եղած ժամանակ (1831 թ.) մոտիկից շփվել է հիշյալ սեմինարիայի տեսուչ «էստոնական գիտական ընկերության» հիմնադիրներից, էստոն ժողովրդի լեզվի ու բանավոր ստեղծագործության քաջ պիտակ Դիտրիխ Հայնրիխ Յուրգենսոնի հետ, հաճախ եղել է վերջինիս տանը, վայելել նրա սիրալիր վերաբերմունքը⁴:

³ Նույն տեղում, էջ 9, 124 և այլն:

⁴ Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809—1836), Երևան, 1967, էջ 444—446:

Անհավանական չէ, որ Աբովյանը, Յուդզենսոնի միջոցով, ծանոթացած լինելու նրա գաղափարական ընկերների՝ Կրայցվալդի, Ֆելմանի և մյուսների՝ էստոն ժողովրդի բանավոր ստեղծագործության հուշարձաններին հայտնաբերման, գրառման և ուսումնասիրման ուղղությամբ կատարած աշխատանքներին, տեղական մամուլում կարդացած լինելու նրանց հրապարակած համապատասխան նյութերն ու հոգեվածները:

Դորպատում եղած ժամանակ Աբովյանը մտերմական հարաբերություններ է ունեցել նաև տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետի երբեմնի շրջանավարտ, ապագա նշանավոր ռուս բառարանագիր և բանագետ Վ. Դալի հարազատ մոր և հղբոր՝ Յուլյա և Պաուլ Դալերի հետ, հաճախակի եղել է նրանց հարկի տակ, այս կամ այն գիրքը ձեռք բերելու համար դիմել է նրանց օգնությանը: Հակված ենք կարծելու, որ նա Յուլյա և Պաուլ Դալերի միջոցով կարող էր ծանոթ լինել Վ. Դալի այդ տարիներին լույս տեսած ռուսական ժողովրդական բանահյուսությանը նվիրված վերը նշված գրքերին⁵:

Ինչ վերաբերում է Լյոնրոտի, Սնեգիրևի, Սախարովի, Սրեզնեկու և Գրիմմ եղբայրների գրքերին, ապա դրանք Աբովյանը անձամբ կարող էր ձեռք բերել Դորպատի համալսարանի հարուստ մատենադարանից և լավ իմանալով թե՛ ռուսերեն և թե՛ գերմաներեն լեզուները, ծանոթանալ դրանց բովանդակությանը:

Ծիշտ է, Աբովյանի կարդացած 200-ից ավելի տարբեր լեզուներով գրքերի մեջ վերոհիշյալները շեն նշված, սակայն այդ հանգամանքը հիմք չի տալիս մեզ հրաժարվելու մեր ենթագրությունից, քանի որ նրա կարդացած գրքերից, հմուտ աբովյանագետ Պ. Հակոբյանի հավաստմամբ, «շատ բան առայժմ փաստերով հավաստելն անկարելի է»⁶:

2

Ընդհանրապես բարձր կարծիք ունենալով ժողովրդական բանավիճարի մասին, Աբովյանը թե՛ Դորպատ մեկնելուց առաջ և թե՛ հայրենիք վերադառնալուց հետո, առիթ բաց չի թողել գրի առնելու համար այդ բանավիճարի լավագույն նմուշները (երգ, առակ, հեքիաթ, զրույց և այլն):

⁵ Նույն տեղում, էջ 521—527:

⁶ Նույն տեղում, էջ 547, 551:

«Սկզբից ի վեր Աբոյւյանը սեր ուներ երգեր հորինելու և հավաքելու. յուր աշակերտներին կանչում էր իրեն մոտ երգեր ասելու»,—վկայում է նրա երբեմնի աշակերտներից մեկը իր հուշերում⁷:

Ահա և նման կարգի մի ուրիշ վկայություն.

«Խալիլի բերանից լսած բաները ժողովելով, ոտանավոր դարձնելով՝ սաղացնում էր աշակերտներին համար»⁸:

Իր լսած ու գրի առած բանահյուսական նյութերը Աբովյանը երբեմն բառացի, երբեմն վերաշարադրված ձևով (մերթ բարբառով, մերթ էլ գրաբար) մեջ է բերել իր տարբեր բնույթի գրվածքներում: Այսպես.

«Մեկնություն երկնային մարմնոց ըստ հասկացողության հայոց» բանաստեղծության մեջ օգտագործված է արևի և լուսնի հայտնի ժողովրդական ավանդությունը (հ. I, 99):

«Մեկաստան սուրբ Գեղարդայ վանից» բանաստեղծությանը կից, իբրև ծանոթություն բերված են երկու ժողովրդական ավանդություններ՝ մեկը վանքի կառուցման, իսկ մյուսը Լենկ-Խիմուրի վանքի վրա կատարած հարձակման մասին (հ. I, 227):

«Վերեւ Հայաստանի» վեպում օգտագործված են հարյուրից ավելի ժողովրդական առած-ասացվածքներ, մի ժողովրդական երգ (ուսաների կողմից Երևանը գրավելու մասին) և մի ավանդություն (Երևանի մոտ գտնվող Ապրանքափոս կոչված քարայրի մասին, հ. III, 159, 177, 178, 193 և այլն):

«Ուղեորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածություններում հիշատակված են՝ Անիի կործանման պատճառի, Գրիգոր Լուսավորչի կանթեղի, Անիի հաղար ու մեկ եկեղեցիների և «Գեղարգյալմաղ» կոչվող գետնուղու ավանդությունները, բերված է մի գուսանական երգ (Մաղասաբերդի տիրակալ Զոր Կարա-Գյուղ ավաղակի մասին (հ. III, 159, 191, 194—195, 203, 205):

«Զվարեալի և կարն պատմություն» գրվածքում գտնում ենք մի երգիծական մանրապատում (Դավիթ 5-րդ կաթողիկոսի մասին) և ավանդություն (Տիգրան Մեծի մասին), (հ. IV, 67, 92, 99):

«Նախաշավիղ» կոչված դասագրքում առկա են ժողովրդական մի քանի մանրապատումներ («Շինականն ու վաճառականը», «Գյուղականը և իր որդիքը» և այլն), (հ. V, 32, 34 և այլն):

⁷ Ն. Տեր-Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Տփլիս, 1897, էջ 109:

⁸ Ս. Փամպլյան, Նեմեց և հայ ծերերի պատմածն Աբովյանց անմահ Խաչատուրի մասին (տե՛ս «Սովետական գրականություն» ամսագրի 1940 թ., № 8—9-ում):

«Համառոտ պատմական ակնարկ Երևան Դաղախի» գրվածքում կա ժողովրդական մի ավանդություն՝ Երևան անվան մասին (Հ. VIII, 287):

Աբովյանի կատարած բանահավաքչական աշխատանքների մեջ անձնական նախաձեռնությունները գրի առնված վերոհիշյալ նյութերից հետո, Երկրորդ տեղը գրավում են այն նյութերը, որ նա գրի է առել ուրիշների խնդիրքով կամ առաջարկով:

Ալապխի նյութերից է քրդական ժողովրդական երգերի այն հավաքածուն, որ Աբովյանը իր «Բղեր և Եղիներ» ուսումնասիրության հետ միասին 1847 թ. ուղարկել է գերմանացի ճանաչված գիտնական Մորից Վալենբերին, որն այդ երգերից մի քանի հատված հրատարակել է „Reise nach Persien und dem Land der Kurden“ գրքի Երկրորդ հավելվածում (էջ 256—258)⁹:

Աբովյանի գրի առած վերոհիշյալ երգերից 7-ը քրդական են («Սիրուհիս, աղբյուրից եմ գալիս», «Հետևակ եմ ուղարկել նրա ետևից», «Սիրտս վիրավոր է», «Սիրածիս նժույգը ականջներն է կախել», «Յոթ աստղերը դուրս են եկել Կշեռքի հետ», «Իմ սիրականը դուրս է եկել մեզ մոտ», «Սիրածս հյուր եկավ մեզ մոտ»), իսկ 3-ը՝ հղդիական («Մտամբուլից ֆերման եկավ», «Ռադվանում սունկ է բուսնում», «Աղան յուրաքիններին խորհրդի է կանչել») (Հ. VIII, 279—283):

Ալապխի նյութերից է քրդական և հայկական ժողովրդական ու գուսանական երգերի այն տետրակը, որ Աբովյանը գրի է առել ու պատրաստել գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Բոդենշտեդտի համար՝ վերջինիս խնդիրքով, և 1846 թ. ուղարկել է Գերմանիա¹⁰:

⁹ Երգերին կից կա Մորից Վալենբերի հետևյալ բացատրականը. «Շնորհիվ պարոն Աբովյանի սիրավիրության ինձ հաղորդվեցին... բառացի թարգմանությամբ քրդական և հղդիական պոեզիայի նմուշներ: Դրանց մեծ մասը էպիկական պատմողական բնույթ ունի: Ռադմի և ճակատամարտերի շուրջ հյուսված երգերի կողքին կան նաև սիրո երգեր: Թարգմանություններից դատելով՝ ձեռք մասամբ անհարթ են, բովանդակությամբ պարզ ու քնական, երբեմն հանդիպում են աչքիս անուշ կտորներ, ինչպիսի Ուկրաինայի կաղակալակ՝ Երգերում: Ընդհանրապես այդ երգերը մեր սրտին ավելի հարազատ են, քան կարելի է սպասել մի վայրենի ժողովրդից» (ն. տ., էջ 255):

Հիշյալ տեղեկությունները բաղել ենր Խ. Աբովյանի Երկերի ժողովածուի VIII հատորի (Երևան, 1953) ծանոթագրություններից, որ պատրաստել է Պ. Հակոբյանը (էջ 424—425):

¹⁰ Այս առթիվ Բոդենշտեդտը գրել է. «Գլխավորապես ևս պարտական եմ մեր բարի Աբովյանին, որ հույսս անկատար չմնաց, որովհետեւ ինքս անձանոթ լինելով հայ ժողովրդական լեզվին, ստիպված կլինեի մի քանի քրդական և թաթարական հրգերով սահ-

Տեսորակի պարունակած ժողովրդական և գուսանական երգերից 7-ը քրդական են՝ սիրային, սգո, բնության և ուղմի բովանդակությամբ («Նաղողի հատիկների պես սև են աչքերդ», «Գարնան քամու շունչն եկավ», «Ես դաշտից էի գալիս», «Սկզբի տառերը այբն ու բենն են», «Մեր քոչի արոտավայրերը ամենից բարձր են», «Կտրիճի գերեզմանն իմ դիմաց է ահա», «Կտրիճը թախծով հեծավ յուր գեղեցիկ ձին»), իսկ 1-ը թուրքերեն ներբող է՝ ուսաների նրեան մտնելու առթիվ, հորինված մի հայից («Նիկուլայ Պավլովիչի գահին ու թագին մատաղ»), (հ. VII, 354—356):

Այդպիսի նյութերից են հայազգի անվանի գուսան Քեշիշ-օղլու Աբովյանի կողմից գրաված 5 երգերը, որոնք ժամանակին ուղարկվել են նույն Բողենշտեդտին:

Այդ երգերն են՝ «Հատված աշուղների Քեշիշ-օղլու և Ալլահվերդու մրցութունից», «Կինը, որ հոգով-սրտով հավատարիմ լինի ինձ», «Դու հրաշագեղ, անուշ աղջիկ», «Գեղանի է իմ հարսնացուն», «Ինձանից թրուած տատրակին եմ փնտրում»: Նույն տեղում, տողատակի մի ծանոթության մեջ, գրված է Լոխման հեքիմի մասին թիֆլիսեցիների պատմած ժողովրդական մի ավանդության բովանդակությունը (հ. VII, 439—442):

Ի վերջո հիշենք նաև այն նյութերը, որ Աբովյանն անձամբ է հաղորդել այլազգի գիտնական ճանապարհորդներին, քաղելով դրանք տարիների ընթացքում իր հիշողության մեջ ամբարված բանահյուսական հարուստ պաշարից: Այդ մասին ունենք Հաքսուհաուզեանի հետևյալ վկայությունը:

«Եկեղեցական ոչ ներգաշնակ երգեցողությունից բացի, հայերի մոտ ես ուրիշ երգ չեմ լսել, հորինվածքներ չեն հավաքել և խոստացվածներն էլ չստացա, այլ լսել եմ միայն Աբովյանի, նրա հորեղբոր Հարությունի և Պետրոս Նեյի (խոսքը Կովկասում ապրող արևելյան լեզուներին քաջատեղյակ մի գերմանացի կոլոնիատի մասին է.— Ա. Ղ.) պատմածները, որոնք և բերում եմ այստեղ առանց չնչին իսկ փոփոխության: Այդ հեքիաթների ու առակների մեջ ամենից ավելի պարզ է ցոյանում ժողովրդի հոգին ու պատմությունը»¹¹:

մանափակել իմ ժողովածուն, եթե Աբովյանը հանձն չառներ կազմել ինձ համար նրեանի սարգարի բոլոր ժողովրդական երգերի ժողովածուն: Դեռ մինչև նվրոպա վերադառնալս ես ստացա Աբովյանից յուր ձևորով դրած և գերմաներեն լեզվով ծանոթաբանած մի տետր, ուր նա խոստանում էր դեռ մի քանիսն էլ ուղարկել» (հ. VII, 482):

¹¹ «Закавказский край», путевые впечатления и воспоминания барона Августа фон Гакстгаузена, часть 2, С. Петербург, 1857, էջ 53—54:

հոսքը հեղինակի «Transkaukasia» գրքում մեջ բերված թվով 13 ժողովրդական ավանդությունների, առակների, զրույցների ու հեքիաթների մասին է: Դրանցից են՝ Երեւանի մոտ գտնվող Ապրանքափոս կոչված քարայրի և Ասլի-Քյարամի ավանդությունները, Երախտապարտ կախարհի և Ժերուխյան տարիներին երջանկացած սուլթանի հեքիաթները, դյուլացու, սառած օձի, ձիու, եղան և աղվեսի առակը և այլն¹²:

Աբովյանի խորին համոզմամբ ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների գրառման դործը, անհրաժեշտ, կարևոր և անհետաձգելի դործ է: Այն կարելի է գլուխ բերել լուրջ մոտեցման և համապատասխան պայմանների (նյութական և այլ կարգի) առկայության դեպքում միայն:

Ահա թե ինչ է գրել նա այդ առթիվ.

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածություններում կարգում ենք. «... Երգեր, լեգենդներ... հավաքելու, պատմական ավանդություններն ու փաստերը ստուգելու... համար պետք է ոչ թե մեկ օր, այլ շաբաթներով, հաճախ նաև ամիսներով, ճամփորդել և սպրել այն վայրերում, որտեղից կարելի է քաղել տեղեկություններ... Տվեք ազատություն և միջոցներ, այն ժամանակ այդ բոլորը հեշտ և հարմար կլինի ձեռնարկել» (հ. VII, 197):

«Քրդեր» խորագիրը կրող ուսումնասիրության մեջ, խոսելով քուրդ ժողովրդական երգիչների բանաստեղծական ստեղծագործությունների բարձր արժանիքների մասին, Աբովյանը ցավով ընդգծում է, որ՝ «Ոչ ոք դեռ դրանք գրի չի առել և, ինչպես բոլոր գուսաներգությունները և բանավոր ավանդությունները, դրանք էլ տարեցտարի ավելի ու ավելի մոռացության են տրվում»: Նա գտնում է, որ եթե որևէ գիտնական ոչ ծախսը խնայելով, ոչ էլ աշխատանքը, որ անհրաժեշտ է այդ թանկարժեք նյութերը հավաքելու համար, շրջագայի քրդերի կրկրում, շատ գանձեր կարող էր գտնել այնտեղ ժողովրդական սովորությունները, հավատալիքներն ու զրույցներն ուսումնասիրելու համար (հ. VIII, 377):

Աբովյանն ինքն անձամբ լայն ծրագրեր է ունեցել զբաղվելու բանահյուսական նյութերի գրառումով և այդ ուղղությամբ հանդես է բերել ինքնաբերական պատրաստակամությամբ:

¹² Նույն տեղում, էջ 56—77: Մի քանի ավանդությունների, հեքիաթների ու առակների համար Հարստհատուկներ ծանոթության մեջ հիշատակում է, որ տվյալ նյութը իրեն պատմել է կամ Աբովյանը, կամ Նրա հոգեդրայրը, կամ էլ՝ Պ. Նելը, մնացած նյութերը թողնելով առանց նման տիպի անվանական ծանոթության:

Բողոքնշտեղտին ուղարկված ժողովրդական երգերի բացատրականի մեջ Աբովյանը գրել է. «Եթե իսկապես պոեզիայի մանկության շրջանում ծաղկող այս փորձերը կարող են Ձեզ և Ձեր աջակցությամբ, և՛ բնական հասարակության համար որևէ հետաքրքրություն ներկայացնել, ապա խոստանում եմ Ձեզ ամբողջ գրքեր լցնել նրանցով և, ինչպես այժմ, ժամանակ առ ժամանակ ուղարկել Ձեզ: Դուք բարի եղեք իմ թարգմանությունները չպարսավելու, ես բառացիորեն եմ մեկնել բոլորն էլ: Ավելի լավ կլիներ, որ մենք միացյալ ուժերով մի ինքնատիպ գործ գլուխ բերեինք...» (Հ. VII, 356):

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածություններում, կարդում ենք.

«Գիտական աշխարհը ինձանից բազմիցս դանազան տեղեկություններ է պահանջել՝ ինչպես պատմական, այնպես էլ, հատկապես, վիճակագրական, բուսաբանական, ժողովրդական լեզնդներ, հեքիաթներ և այլն: Չնայած իմ դպրոցական պարապմունքներին, որոնք ինձանից խրլում են համարյա ամբողջ ցերեկը, այնուամենայնիվ, ես հաճուքով և շնորհակալությամբ կցանկանայի, ըստ իմ ուժերի և գիտելիքների, բավարարել ինձ համար այնքան հրապուրիչ և հաճելի նրանց պահանջները» (Հ. VII, 197):

Ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների բանավոր ստեղծագործությունների Աբովյանի կատարած գրառումները քանակով, ճիշտ է, մեծ չեն, բայց իրենց բանահավաքչական որակով դրանք (առանձնապես եվրոպացի գիտնականների համար գրառված նյութերը) կարող են բավարարել անգամ արդի բանագիտության պահանջները:

Աբովյանն աշխատել է, որքան այդ հնարավոր է եղել, հարազատությամբ ու ճշտությամբ վերարտադրել իր լսած հեքիաթների, երգերի, առակների, զրույցների ինչպես բովանդակության, այնպես էլ ձևի (իզու, արտահայտչական միջոցներ) առանձնահատկություններն ու նրբությունները: Իբրև սկզբունք և՛ բնական, զգացմունքային գիտնականներին ուղարկվելիք ժողովրդական նյութերը նա ներկայացրել է առաջին հերթին սկզբնաղբյուրի լեզվով (հայերեն, քրդերեն, ադրբեջաներեն), հայերեն կամ լատիններեն տառադարձությամբ, որից հետո միայն տվել է դրանց գերմաներեն տողացի թարգմանությունները: Դժվար թարգմանելի ոճերի և արտահայտությունների համար նա տողատակերին տվել է անհրաժեշտ բացատրություններ:

Նշանակալից են մասնավորապես այս կամ այն բանահյուսական

ստեղծագործության համար Աբովյանի կողմից տրված պատմական, աշխարհագրական, ազգագրական, կենցաղային, հավատալիքային և այլ բնույթի բացատրություններն ու ծանոթագրությունները: Դրանք զգալի չափով օգնում են պատկերացնելու համար այդ ստեղծագործություններին ծնունդ տվող պատմական, էթնիկական, աշխարհագրական, ազգագրական, կենցաղային, հավատալիքային միջավայրն ու հանգամանքները: Այսպես, ռուսների նրեան մտնելու առթիվ հայալզի գուսանի հորինած երգի մեջ հիշվող Մելիք անունը ծանոթագրված է. «Երևանի հայ իշխան, որ մեծ հարգանք էր վայելում թե պարսիկների և թե ռուսների մոտ: Նրա իսկական անունը Մելիք-Սահակ էր, մի երևելի մարդ» (Ն. VII, 356): Նույն երգի մեջ հիշվող Յուսուֆ անունը ծանոթագրված է. «Այսինքն Հովսեփ, հորինողի անունը» (Ն. VII, 356):

Հայալզի գուսան Քեշիշ-օղլու «Կինը, որ հոգով սրտով հավատարիմ լինի ինձ» սկզբնատողով երգի՝ «Լոխմանի նման ամեն վեբք բուծում» տողը ծանոթագրված է. «Լոքմանը մի առասպելական անձնավորություն է դարձել, որը արևելքի մի քանի վայրերում, ժողովրդի մեջ, բերնից բերան է անցնում իբրև բոլոր իմաստությունների, իսկ այլ տեղերում էլ՝ իբրև բոլոր տիպի հիվանդությունները բուժողի մարմնավորում և այլն (Ն. VII, 440):

Քրդական ժողովրդական սիրո երգի՝ «Ես էլ զատկին երկու անգամ կաղաքեմ» տողը ծանոթագրված է. «Այս տարօրինակ ակնարկը, հավանորեն, վերաբերում է նրան, որ թեպետ քրդերը չեն աղոթում, սակայն կնոջ սիրո համար մինչև իսկ այդ էլ կանեն» (Ն. VII, 355), այսպես և ուրիշ դեպքերում:

Առավել կարևոր են այն բացատրություններն ու ծանոթագրությունները, որ տվել է Աբովյանը ժողովրդական բանասացների ու գուսանների տարիքի, սեռի, իրավական դրության, սոցիալ-կենցաղային միջավայրի, բանահյուսական ու պարտուարի, բնատուր ընդունակությունների, կատարողական արվեստի վերաբերյալ: Այդ բացատրություններն ու ծանոթագրությունները հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացնելու բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթը, հեղինակային, կատարողական, ստեղծագործական, ժանրային առանձնահատկություններն ու հանգամանքները:

Խոսելով տարբեր բնույթ ու բովանդակություն ունեցող (սեր, աշխատանք, հերոսություն, բաժանություն, սուգ և այլն) ժողովրդական երգերի ստեղծման, կատարման միջավայրի և կատարողների մասին, Աբովյանը գրում է.

«Հավաքույթների ժամանակ դրանք երգում են շատերը (բայց բուրբ միշտ միաձայն), այնպես էլ անհատները՝ փողոցներում, այգիներում, կտուրների վրա, դաշտում վար անելիս: Հաճելի է ամռան օրերին, մանավանդ երեկոները, երբ մարդիկ մեծ մասամբ քնում են կտուրների վրա կամ դաշտում բացօթյա, ունկնդրել, թե ինչպես բոլոր կողմերից միմյանց հետ մրցում և ուրախ ճիշեր են արձակում: Միայն թե, դժբախտաբար, կանացի սևուրը ղրկված է այս գեղեցիկ վայելքից: Չափազանց աններելի անհամեստության կհամարվի, եթե մի կին, ինչ դասի էլ նա պատկանի, իր ձայնը լսել տա: Դրա համար էլ նրանք սովորաբար ունկնդիրների դեր են կատարում: Եվ որքան հաճախ կարելի է դիտել նրանց քնքուշ հոգու համակվելը երգով, երբ նրանք ամբողջովին ողողված են արցունքներով, և նրանց խոր հառաչանքները վերադարձնում են իրենց մաքուր, դեռևս չապականված ղգայուն բնությունը» (հ. X, 107):

Մի ուրիշ առիթով խոսելով ժողովրդի ծոցից դուրս եկած պրոֆեսորնալ երգիչ-բանաստեղծների մասին, Աբովյանը գրում է.

«Հատուկ վարպետներ երգում են՝ սիրերգեր, բալլադներ, հերոսապատմաներ, երգիչների արկածներ: Նրանք այդ իրենց զբաղմունքն են դարձրել. շատերը նրանցից շնորհալի բանաստեղծներ ու երգիչներ են, ոմանք էլ՝ իսկական հանճարներ: Նրանք թաթարական աշղը անունն են կրում: Այդ անունը, դժբախտաբար, առանց կարևոր հիմքի չէ, որի մասին, սակայն, ես հետազայում կիսոսեմ: Նրանք մի տեսակ միջնադարյան սիրերգողներ (Minesänger) են. թափառում են երկրից երկիր, իրենց հետ ման ածելով աշակերտների: Նրանց առաջնորդում են աշակերտները, քանի որ իրենք մեծ մասամբ կույր են, այդ իսկ պատճառով էլ ավելի քան աչքի են ընկնում: Նրանք իրենց արվեստի մեջ այնքան են հմտացած, որ ամեն առիթով ի վիճակի են իսկույն հանպատրաստից ոտանավորներ և եղանակներ հորինել» (հ. X, 107—108):

Անդրադառնալով այնուհետև հասարակական հավաքույթներում նույն այդ երգիչ-բանաստեղծի ունեցած ելույթներին և այդ ելույթների հանդիսականների վրա ունեցած ազդեցությանը, Աբովյանը գրում է.

«Այսպիսի հավաքույթները սովորաբար տեղի են ունենում ձմռան երեկոներին, որտեղ և այս վարպետները հնչեցնում են իրենց ձայնը: Ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում, բոլորը, ով կարող է, առանց տոմսի ու հրավերի, վաղում է այնտեղ, ուր մի այսպիսի երաժշտական ղվարձալիք կա: Խեղճ երգչին միայն տալիս են մի քիչ մթերք, ինչպես՝ ցորեն, գինի, բամբակ կամ էլ դրամ, որ երգեցողության վեր-

ջին հաճախ նրա բերանն են կոխում,—և այդ է բոլորը, որ, սովորաբար իբրև նյութական և բարոյական վարձատրություն, մատուցվում է նրան: Անշուշտ, նրանք էլ ավելի առատ նվիրաբերության են արժանի, սակայն այս քնով էլ են գոհանում» (Տ. X, 107—108):

Նույն կարգի բացատրություն-ծանոթագրությունների ունի Աբովյանը նաև ժողովրդական առակախոսների և հեքիաթասացների վերաբերյալ: Ուշագրավ է այս առումով նրա հետևյալ դիտողությունը Անիի հազար ու մեկ եկեղեցիների և «Գեղար-գյալմաղ» կոչված գետնուղու վերաբերյալ հրաշապատում առասպելների պատմողների մասին:

«Մեր արևելցի հեքիաթ ասացողները այդ բոլորը պատմում են այնքան կենդանի, ճշմարտանման և նույնիսկ բնականորեն, հիշատակելով թե տարին, թե այնտեղ կորածների թիվը, որ նման խորամիտ, բայց իրենց տեսակի մեջ գեղարվեստական-հրաշապատում, մտացածին բաներին չհավատացողն էլ, ակամայից, սարսուռ է զգում՝ լուկ միայն հետաքրքրությունից իրեն նման փորձության ենթարկելու մտքից» (Տ. VII, 203—204):

Աբովյանի կատարած բանահավաքչական աշխատանքների կարևոր առանձնահատկություններից է նաև այդ աշխատանքների ընդգրկած տեղագրական լայն ոլորտը: Դրան մեծապես նպաստել է այն հանգամանքը, որ նա տարբեր ժամանակ ղանազան առիթներով, ավելի կամ պակաս ժամկետներով, իզել է ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի տարբեր վայրերում:

«Այն օրվանից,—գրել է այս առնչությամբ ինքը՝ Աբովյանը,—երբ Ռուսաստանը նվաճել է Հայաստանը, բախտն ինձ ժպտացել է մեկից ավելի անգամ ամենալուրջ առիթների ներկայացնել շրջելու իմ հայրենիքի տեսարժան վայրերը» (Տ. VII, 169):

Բացի հայրենի Քանաքեռ գյուղից, ուր ծնվել ու անց է կացրել իր մանկութունն ու պատանեկութունը, Աբովյանը եղել է նաև Երևանում, էջմիածնում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Անիում, Լոռի-Փամբակում, Շուշիում, Բոլնիսում, Դիլիջանում, Սևանում, Ծաղկաձորում, Դեղարդում, Սարգարապատում, Շարուրում, Ակոուիում, Բայազետի փաշայությունում, Մակուում, Դիադինում և այլուր (Տ. VII, 39—61, 92—104, 166—208 և այլն):

Մեր ձեռքի տակ իղած տվյալների համաձայն, Աբովյանը արևի և լուսնի մասին ժողովրդական ավանդությունը լսել է հայրենի Քանաքեռ գյուղում, հայազգի գուսան Հովսեփի հորինած երգը՝ ուսների կողմից

Երևանը գրավելու մասին, գրի է առել Երևանում, Գեղարդավանքի կա-
ռուցման և Լենկ-Թևմուրի վանքի վրա հարձակվելու մասին ավանդու-
թյունները, հավանորեն, լսել է Գեղարդում եղած ժամանակ, քրդերի ու
եզդիների ժողովրդական մի շարք երգեր գրի է առել Բայազետի փաշա-
յությունում և այլուր, Լոխման հեթմի վերաբերյալ ավանդությունը լսել
է Թիֆլիսում, ժերուխների պատմած Սուրբ Գևորգի հրաշագործություն-
ները գրի է առել Բոլնիսում և այլն:

Աբովյանն առաջինն է այն հայ բանահավաքներից, ովքեր հարադատ
ժողովրդի բառ ու բանը հետ միասին, համապատասխան առիթը ներկա-
յանալիս, գրի են առել և կորստից փրկել նաև ուրիշ ժողովուրդների բա-
նավոր ստեղծագործության նմուշները:

Աբովյանի համար, իբրև իսկական լուսավորչի, այդ հանգամանքը
շատ բնորոշ է: Լինելով ըստ ամենայնի մեծ հայրենասեր, ազգի համար
գլուխը ետ դրած գործիչ, նա իր մանկավարժական, հասարակական, դը-
րական և զիտական գործունեությունը արհեստական կերպով չի սահ-
մանափակել միայն ազգային շրջանակներով: Միշտ և ամենուր մտահոգ-
վելով, առաջին հերթին, հարադատ հայրենիքի ու հայրենակիցների շա-
հերի պաշտպանության գործով, նա չի արհամարհել նաև մյուս ժողո-
վուրդներին, հատկապես նրանց, ովքեր իրենց բնակավայր-միջավայրով,
տնտեսական, իրավական, քաղաքական վիճակով ավելի կամ պակաս
չափով կապված են իզլի Հայաստանի ու հայերի հետ:

Հայրենիքում եղած ժամանակ Աբովյանը հայ ժողովրդական բանա-
հյուսության հետ միասին հետաքրքրվել է նաև Հայաստանում և վեր-
ջինիս սահմանակից վայրերում ապրող եզդի և մահմեդական քրդերի,
ադրբեջանցիների բառ ու բանով, հայկական նյութերի հետ գրի է առել
նաև հիշյալ ազգերի բանահյուսության մի շարք նմուշներ: Ապացույց,
գերմանացի գիտնականներ՝ Հաբստհաուզենին, Բոդենշտեյտին և Վագ-
ներին նրա ուղարկած քրդական և եզդիական ժողովրդական երգերի հա-
վաքածուները (հ. VII, 480—482): Ապացույց, նրա՝ «Քրդեր» և «Քրդեր ու
եզդիներ» խորագրով ազգագրական ուսումնասիրությունները (հ. VIII,
349, 377), «Աշուղ-Ղարիբ», «Ասլի-Քյարամ» արեւելյան սիրավեպերի,
«Քյոռ-օղլի» հերոսավեպի, Մուլա-Նասրաղինի անեկդոտ-առակների վե-
րաբերյալ նրա հաղորդած տեղեկություններն ու պրառումները (հ. II,
195—285, հ. IV, 99, 82):

Դորպատում եղած ժամանակ Աբովյանը հետաքրքրվել է գերմա-
նական շրջաններում պատմվող ժողովրդական զրույցներով, ավանդու-

թյուններով ու անեկդոտներով, զրի է առել մի շարք նմուշներ: Ապացույց, «Զվարճալի ու կարճ պատմությունք» գրվածքում և այլուր թարգմանաբար օգտագործված նյութերը, «Կարլոս Մեծի ջահելության սերը» ավանդությունը և այլն (հ. IV, 106):

Աբովյանի բանահավաքչական աշխատանքների մասին, դեռևս նրա կենդանության օրով, մեծ գոհունակությամբ են արտահայտվել Արևելքում և մասնավորապես Հայաստանում եղած այլազգի գիտնականները, որոնք օգտվել են նրա այդ աշխատանքների արդյունքից:

Հաքստհաուզենը «Անդրկովկասյան մարդ» խորագրով իր գրքում գրել է. «Առանձնապես հրավիրում եմ պ. Աբովյանին գործադրել իր հիանալի տաղանդը և հասարակական դիրքի ընձևած հնարավորությունները՝ հավաքելու և հրատարակելու այն ամենը, ինչ պահպանվել է ժողովրդական երգերից, հեքիաթներից ու ավանդություններից, որպեսզի դրանով խրախուսվեն և ուրիշները՝ կատարելու այդ կարևոր հետազոտությունը»: Իսկ քիչ անց, վկայակոչելով Մխիթարյանների կարծիքը խորհրդակցության մեջ պահպանված հնօրյա վիպական երգերի մասին, ավելացնում է. «Մխիթարյանները պնդում են, որ մինչև հիմա էլ պատմություն ունեն հին հայկական վիպական երգեր, որոնք երգվում են մի քանի լեռնային շրջաններում, օրինակ՝ Գողթնում, Երևանի մոտ... Այդ բոլորի իսկությունը կարող է հետազոտել միմիայն Աբովյանը»¹³:

Նման ձևով է արտահայտվել Աբովյանի ազգագրական և բանահավաքչական աշխատանքների մասին նաև Մորից Վագները: Իր „Reise nach Persien und dem Land der Kurden“ գրքում անդրադառնալով քրդերին վերաբերող Աբովյանի ազգագրական-բանագիտական ուսումնասիրությանը, որն Աբովյանը տրամադրել էր նրան՝ օգտագործելու, Վագները գրել է.

«Առաջավոր Ասիայից վերադառնալուցս մի քանի տարի անց, շնորհիվ Երևանի գավառական դպրոցի տեսուչ, իմ բարեկամ Աբովյանի սիրալիրության, որն հանդիսանում է Արևելքի լավագույն հետազոտող ու գիտակ և հիմնավորապես տիրապետում է ասիական շատ լեզուների,— ևս ստացա մի շատ հետաքրքրական ազգագրական աշխատություն Արևմուտյան Ասիայում ապրող մի քանի ազգությունների և, հատկապես, քրդերի մասին, որոնց նա առիթ էր ունեցել երկար ժամանակ ուսումնասիրե-

¹³ «Закавказский край», путевые впечатления и воспоминания барона Августа фон Гакстгаузена, часть 2, С. Петербург, 1857, стр. 48—49.

չու ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ Պարսկաստանում և Բայազետի փաշայությունում...» (ընդգծումը մերն է.—Ա. Ղ.)¹⁴:

3

Բանահավաքչական աշխատանքներից պակաս ուշագրավ ու կարևոր չեն նաև այն ասույթները (կարծիքներն ու դիտողութունները), որոնք տարբեր ժամանակ և զանազան աղիթներով հայտնել է Աբովյանը ժողովրդական բանահյուսութեան մասին ընդհանրապէս, և վերջինիս առանձին ժանրերի, ստեղծագործութունների և դրանց հորինողների ու կատարողների վերաբերյալ մասնավորապէս: Այդ կարծիքներն ու դիտողութունները ի մի բերելով, մենք ստանում ենք ներքնապէս իրար հետ կապված և տրամաբանորեն իրարով պայմանավորված հարցերի մի ամբողջ շարք, որը բավական հստակ պատկերացում է տալիս հեղինակի ունեցած բանագիտական հայացքների էութեան մասին:

Աբովյանի խոր համոզմամբ ժողովրդական բանահյուսութեանը, անկախ այն հանգամանքից, թե որ աղգին է պատկանում, ժողովրդի մտաշխարհի ու հոգևոր կյանքի անխարդախ հայելին է: Այն թե՛ բովանդակութեամբ և թե՛ ձևով (արվեստով) բարձրարժեք և կատարյալ ստեղծագործութուն է, ըստ ամենայնի կարևոր և ուսանելի:

Ժողովրդական բանահյուսութեան ըստ Աբովյանի, ամենից առաջ, հարուստ և թանկագին նյութ կարող է տալ ազգագրագետի համար, քանի որ նրա մեջ լայնորեն զրսևորված են ժողովրդի հավատալիքները, սովորութիւնները, վարքն ու բարքը (հ. VIII, 377, ծանոթ. ա):

Պակաս նշանակալից չէ, նրա կարծիքով, նաև այն դերը, որ կարող է ունենալ ժողովրդական բանահյուսութեանը գրականութեան համար: Աբովյանի հավաստմամբ «Գրական տեսակետից, առհասարակ մի թանկագին զանձ կլինիր, եթե մարդ աղատ ժամանակ և միջոցներ ունենար ի մի հավաքելու այն բոլոր երգերը, պատմվածքները, անէկզոսները և ասացվածքները, որոնք տարածված են հասարակ ժողովրդի մեջ» (հ. I, 47):

«Վերբ Հայաստանի» վեպում, հարազատ ժողովրդի բանավոր ստեղ-

¹⁴ M. Wagner, Reise nach Persien und dem Land der Kurden, Leipzig, 1852, B. II, S., 219 և հտվ.: Քաղվածքը բերում ենք Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի VII հատորին կցված Պ. Հակոբյանի ծանոթագրութիւններից (հ. VII, 424-425):

ծագործութիւնը քաջատիղյակ մարդու համոզվածութեամբ, Աբովյանը ընդգծել է հայրենի բանահյուսութեան ժանրային բազմազանութիւնն ու հարստութիւնը, այդ բանահյուսութեան ստեղծողների ու կատարողների անսպառ պաշարը. «Առակ, մասալա, սուր-սուր խոսքեր՝ որ ուզենաս հո՛ էն հետին ռամիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի» (հ. III, 3):

Աբովյանին հիացմունք են պատճառել, մասնավորապես, հայկական և քրդական ժողովրդական և գուսանական երգերը և այդ երգերի հեղինակները: Իրեն հատուկ դիպուկ, բովանդակալից ու սեղմ խոսքով, նա կարողացել է բնութագրել վերջիններիս բնորոշ առանձնահատկութիւնները, տալ դրանց արժանի գնահատականը:

«Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտութիւնը» հոգվածում, անդրադառնալով ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքին և մեղեդուն, Աբովյանը հատուկ ընդգծել է դրանց ազգային բնույթը և ղգայական ներգործման մեծ ուժը. «Շատ ավելի կարեւոր և, անկասկած, շատ կողմնուով խիստ ազգային են ժողովրդական երգերը. պարզ, կարճ, սակայն մեկոգիկ, բովանդակալից և յուրաքանչյուրի համար հոգեհուշ ու ամեն մեկի սրտի բաղձանքին պատշաճ: Նրանց գլխավոր բնույթը, ինչ բովանդակութիւն էլ ունենան, մեծ մասամբ արտահայտում է թախիծ և շրավարարված տենշանք: Դրանք բազմազան բովանդակութիւն ունեն: Մեծ մասամբ սերը, հերոսութիւնը, բաժանումը և դժբախտ ղկաքերն են, որ կենդանացնում են այդ երգերը» (հ. X, 107): Եվ ապա. «Ինձ դեռես ոչ մի այլ երաժշտութիւն այնպես չի հուզել, չի խանդավառել, ամեն կարգի տրամադրութիւններով չի համակել, որքան այս երաժշտութիւնը» (հ. X, 107):

«Քրդեր» ուսումնասիրութեան մեջ, խոսելով հայազգի գուսանների օտար լեզվով հորինված երգերի մասին, Աբովյանն ընդգծում է դրանց ղկարվեստական բարձր արժանիքները.

«Այդ ասիական տրուբադուրների բանաստեղծական հորինվածքները արժանի են առանձին ուշադրութեան և բավարարում են ամենախիստ քննադատութեան պահանջներին» (հ. VIII, 377, ծանոթ. ա):

«Նախաշավիղ»-ին կցված «Դիտողութիւններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին» բացատրականում, վերստին անդրադառնալով օտար լեզվով հորինող հայազգի գուսաններին, Աբովյանը վեր է հանում նրանցից ոժանց բնատուր մեծ ձիրքը: Նա գրում է.

«Մի Քելիշօղլի (քահանայի տղա), մի Ալլահվերդի (Աստվածատուր) հանճարներ են եղել, որ մի ժողովրդի դրական փառք ու պատիվ կրերին.

թաթարները հիանում են դրանց բանաստեղծությունների և երգերի գեղեցկությամբ, մինչդեռ դրանք հայ են ևղելւ Առանձնապես առաջինը, որ մի քանի տաթի առաջ մեռավ, կույր էր, և շնորհիվ իր արտակարգ բանաստեղծական տաղանդի, թուրքական արքունիքում մեծ հարգանք էր վայելում» (հ. V, 47)*:

«Ուղեւորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածություններում Աբովյանը խոսում է հայ գուսանների ստեղծագործությունների ճանաչողական մեծ արժեքի մասին. «որով ամենից ավելի կարելի է իմանալ ժողովրդի թե՛ կենցաղը, թե՛ բնավորությունը և թե՛ նրա մտավոր ու բարոյական բոլոր ըմբռնումները» (հ. VII, 194):

Նույն «Քրդեր» ուսումնասիրության մեջ Աբովյանը մեծ հիացմունքով ընդգծում է քուրդ ժողովրդի բանաստեղծական անվիճելի ընդունակությունները, դրվատում նրա ստեղծած երգերի գեղարվեստական կատարելությունը. «Ամեն մի քուրդ, մինչև իսկ քրդուհի ի բնե հոգով բանաստեղծ է. նրանք բոլորն էլ հանպատասախից հորինելու դարմանալի շքնորհք ունեն... Նրանք շատ պարզ և անպաճույճ երգում են իրենց հովիտները, լեռները, ջրվեժները, աղբյուրները, ծաղիկները, վեճերը, նժույգները, դինվորական քաջագործությունները, իրենց գեղեցկուհիներին և նրանց հրապույրները,— այն ամենը, ինչ մատչելի է նրանց զգացմունքին ու ըմբռնողությունը, դարդարում են դրանք համեմատություններով և ճգնում են ավելի ևս կենդանի ներկայացնել այդ բոլորը քաղցրանվագ

* Թե՛ առհասարակ որքան թանկ է գնահատել Աբովյանը ժողովրդական և գուսանական երգերն ու վերջիններս ստեղծողներին, երևում է այն հոգստար վերաբերմունքից, որ նա հանդես է բերել անվանի հայ գուսան, հանգուցյալ Ազրար-Ադամի ընտանիքի նկատմամբ, գուսանի որդու մահվան առնչությամբ: Անօգնական մնացածների «սեւ օրին» համեմատ համար, Աբովյանը անձամբ օգնություն է կազմակերպում, հանգանակության թերթիկի վրա գրելով հետևյալ սրտաշարժ շարժած կոչը, ուղղված իր «սարեպաշտ հայրենակիցներին».

«Ազրար-Ադամի ասած խոսքերը,
Նրա քաղցր լեզուն, սիրուն մտքերը
Ո՞ր երեանցու ախանջումն, սրտում
Հաղար ցավ, կսկիծ էսօր շեն շարժում:

Նա հողի տակիցն, մերն գետնի վրեն,
Զիվան որդու մահն իր աղբատ տանեն
Հալով, սգալով մեզ են տալիս ձեն.
Ով երեանցիք, դուք եր մեր շարեն...»

(հ. I, 261):

մեղեգիներով ... որոնք թանկարժեք են, իբրև արտահայտություն նրանց հոգեկան կյանքի և մի ինքնուրույն ժողովրդի մտածելու ևղանակի» (Ն. VIII, 246, 377)։

Ինչպես Աբովյանի բանահավաքչական գրառումները, այնպես էլ ժողովրդական բանահյուսության մասին նրա կարծիքներն ու դիտողությունները ունեն նշանակալից արժեք ու հետաքրքրություն։ Դրանք հայ մեծ լուսավորչին բնութագրում են իբրև սարբեր ազգերի ժողովրդական զանգվածների ստեղծած հոգևոր արժեքների բարձր զնահատողի, միաժամանակ նշանավորում նրա խաղացած դերը հայ բանագիտության պատմության մեջ, իբրև այդ պատմության առաջին երախտավորներից մեկի։

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայ մեծ հրապարակախոս Միքայել Նալբանդյանի գրական մառան-
գության մեջ թեև չկան բանագիտական բնույթի հատուկ գրվածքներ, սա-
կայն նրա քննադատական ու այլ կարգի գործերում առկա են բազմաթիվ
ուշագրավ մտքեր ու դիտարկումներ, որոնք նշանակալից արժեք են ներ-
կայացնում հայ բանագիտության անցած ուղու բնութագրման համար:
Այդ մտքերն ու դիտարկումները ակնառու կերպով արտացոլում են այն
ըմբռնումները, որ ունեցել է Նալբանդյանը ժողովրդական լայն զանգ-
վածների հասարակական կյանքում կատարած բախտորոշ դերի, նրանց
ստեղծագործ ուժի մասին:

Հրապարակախոսը խստորեն քննադատել է նրանց, ովքեր ազգի
ստեղծած հոգևոր արժեքները վերագրել են միայն վերնախավերին:

«Մենք կարծում ենք,— գրել է նա,— թե իրավունք չկա առանց դրա-
կան ապացույցների ունենալու, ամեն մի հին ավանդության մնացորդ
տեսնելու ժամանակ վազել թագավորների քամակիցը. ազգը մինչև թա-
գավորության հասնելը, ստանում է և ստեղծում է իր ավանդությունքը,
ծեսերը և արարողությունքը, որոնք, այո թե թագավորների ժամանակ և
թե նոցանից հետո ընկնում են դարերի ազդեցության տակ»¹:

Ժողովրդին համարելով ոչ միայն նյութական, այլև հոգևոր արժեք-
ների հիմնական աղբյուրը, Նալբանդյանը ըստ այդմ գրականության ա-
կունքները տեսնում է նրա ստեղծած անգիր բանահյուսության մեջ: Նալ-
բանդյանի կարծիքով, բոլոր ազգերի մոտ էլ գրականությանը անմիջապես
նախորդել է մի շրջան, երբ գեղարվեստական ստեղծագործությունը դըր-
սեորվել է երգերի, առածների և բանարվեստի ուրիշ ժանրերի միջոցով:
Խոսքը մասնավորելով հայ գրականության «մանկության» շրջանով,
Նալբանդյանը գրել է. «Գրականութիւն լեզուիս, որչափ լոյս տան մեզ
նշխարք մնացեալք առ հինաւորցն խորնոյ, յար և նման առ ամենայն
ազգս՝ սկսաւի վիպասանական երգովք զքաջագործութեանց դիցազանց,

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1940, էջ 163:

զորս ղեռ ի շորրորդ և ի հինգերորդ դարս երգիչքն ի Գողթան բամբուսմբ երգէին»²։

Հակառակ այն մտածողների, ովքեր ժողովրդական բանավեպի մեջ փնտրում էին լուի հեռավոր անցյալի արձագանքները, Նալբանդյանը գտնում է, որ այդ բանավեպի մեջ անցյալից ոչ պակաս արտացոլել է նաև ժամանակակից կենցաղը։ Սերտորեն կապված լինելով ժողովրդի կյանքի ու աշխարհայացքի հետ, այն պարզանում, փոխվում և նորոգվում է յուրաքանչյուր նոր դարաշրջանում, համապատասխանելով տնտեսական, հասարակական, քաղաքական նոր երևույթներին ու հարաբերություններին։ Ահա թե ինչու նա խտրություն չի դնում պատմական տարբեր դարաշրջաններում ստեղծված բանավեպի հուշարձանների մեջ, ըստ արժանվույն դնահատելով թե վաղնջական դարերից եկող առասպելների և թե նոր ժամանակների գյուղական խաղիկների ճանաչողական և գեղարվեստական արժեքը³։

Ի տարբերություն այն ըմբռնման, որի համաձայն ժողովրդական բանավեպի մեջ բուն ժողովրդական ստեղծագործությունները որոշակիորեն տարբերել է հասարակական վերնախավների հոգևորությունն ու տրամադրություններն արտացոլող հորինվածքներից։ Նա իրավացիորեն վեր է հանել առաջինների արժանիքները և քննադատել վերջինների ստվերոտ կողմերը։

Նալբանդյանը հիացմունքով է արտահայտվել, օրինակ, Արսուվազդի ավանդության մասին, համարել է այն իսկական «անտիկյան» մի ստեղծագործություն, ուր հանձին դարբինների, նրա համոզմամբ, խորհրդանշված է հայ ժողովրդի կորույնն ու կամքը՝ սանձահարելու աշխարհին կործանում սպառնացող դիվային շար ուժը⁴։

Ճիշտ հակառակ կարծիք է արտահայտել Նալբանդյանը մոգական քավագանով շոր տեղից ջրի առու հանող Սուրբ Ակնատեսի ավանդության վերաբերյալ, համարելով այն «ութերորդ անհնախավար դարի արձագանքը»⁵։

Զհամաձայնվելով այն տեսակետներին, ըստ որի տարբեր ժողո-

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Երևան, 1947, էջ 25 («Ձաղագս հայկական մատենագրության»)։

³ Նույնը, հատ. 3, էջ 161—163։

⁴ Նույն տեղում, էջ 137—138։

⁵ Նույն տեղում, էջ 138։

վերադարձի բանահյուսական հուշարձաններում առկա նմանությունները բացատրվում էին այդ ժողովուրդների նախապատմական ցեղային ազգակցությամբ կամ էլ փոխառությամբ, Նալբանդյանը տվյալ երևույթի հիմնական պատճառը համարել է նույն այդ ժողովուրդների «բնական կամ ընկերային պայմանների» ընդհանրությունը: «Թող ինչ կամին խոսին, բայց մարդկային հոգին ցուացնում է արագքին բնությունը»⁶:

Հիմնական շեշտը իրավամբ դնելով յուրաքանչյուր ազգի անգիր ստեղծագործության ինքնուրույն տարրի վրա, Նալբանդյանը չի անտեսել նաև փոխազդեցության հնարավորությունը: Տվյալ դեպքում նա մեկնակետ է ունեցել տնտեսական, հասարակական և քաղաքական այն սլայմանները, որոնք պատճառ են հանդիսացել այդ երևույթների համար:

«Մեկ մարդ տասը տարի մնալով մի օտար ընկերության մեջ, քիշշատ ընկնում է այդ օտար լեզվի, օտար ազդեցության տակ. հայր հաղար տարի ընկած լինելով թուրքի, թաթարի և ուրիշների ազդեցության տակ, ինչպե՞ս կարելի է պահանջել, որ պատմական իրողությունքը իրենց կնիքը խոր չդրոշմեին ազգի սրտի և հոգու վրա. ինչպե՞ս կարելի է, որ այդ դրոշմը չցուանար նոցա լեզվի և մտածելու ձևերի վրա»⁷:

Առանձնակի ուշադրության արժանի են այն դիպուկ և ճշմարտացի բնութագրումները, որ տվել է Նալբանդյանը բանահյուսական տարրեր ժանրերին: Այդ բնութագրումները հեռվից հեռու համընկնում են այն մտնեցումների ռոգուն ու էությունը, որ դրսևորվում է արգի բանագրոություն մեջ այդ ժանրերի նկատմամբ:

Վիպասանական երգերի հետ հնադույն ստեղծագործություններ համարելով դիցաբանական առասպելներն ու ավանդությունները, Նալբանդյանը գտնում է, որ դրանց մեջ բանաստեղծական ձևով դրսևորված են ժողովուրդների հեթանոսական շրջանի հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները, նրանց պատկերացումները արևի, կրակի և բնության ուրիշ երևույթների մասին⁸:

Բերելով Լուսավորչի կանթեղի առասպելական ավանդության օրինակը, Նալբանդյանն աշխատել է բացատրել նման կարգի ստեղծագործությունների էությունն ընդհանրապես: Արագածի կատարին կախված հրաշալի կանթեղի լույսը, որի մասին խոսք կա հիշյալ ավանդու-

⁶ Նույն տեղում, էջ 183—184:

⁷ Նույն տեղում, էջ 184—185:

⁸ Նույն տեղում, էջ 21:

թյան մեջ, նա բացատրել է «բնության մեջ եղած կրակներով կամ լույսերով»:

«Հայոց ազգը,—գրել է նա,—Արագածի վրա կրակ կամ լույս եթե չտեսներ, անհնար է, թե չեղած տեղից կանխել հնարեր և լուսավորչին ուղարկեր այնտեղ նարեկ քաղելու: Մենք այդ լույսը կամ կրակը Արագածի վրա բնդունում ենք որպես իրողություն»⁹:

Աներկբայելի է լուսավորչի կանխեղին նալբանդյանի տված վերոհիշյալ բացատրությունը, իբրև բնության մեջ եղած լույսերի յուրօրինակ մի անդրադարձման: Ավելի ճիշտը, սակայն, ոչ թե Արագած լեռան խոռոչներում եղած ծծմբից կամ ֆոսֆորից առաջ եկած լույսերն են, ինչպես նշել է նա, այլ այն լույսերը, որ գոյանում են հիշյալ լեռան կատարին կատարվող համապատասխան էլեկտրական պարպումներից:

Դիցաբանական ստեղծագործությունների ծագումն ու գոյությունը բացատրելով բնության երևույթներով, նալբանդյանը միաժամանակ իրավացիորեն ընդգծում է, որ այդ երևույթները ժողովրդի պատկերացման մեջ, հին դարերում այդ պատկերացման նախնական աստիճանի պատճառով, ուսացել են սխալ մեկնաբանություն:

«Ուրբան մոլորությունք որ կան աշխարհի երեսին, այդ բոլորը ըսկըվենաբար ծագել են կամ բնությունը թյուր հասկանալուց, կամ իսպառ չհասկանալուց: Եվ այդ մոլորությունքը ոչինչ ուրիշ բանով չեն փարատիլ, մերժվիլ, եթե ոչ բնության ուղիղ հասկանալով»¹⁰:

Ուշագրավ է այն հետաքրքրությունը, որ ցուցաբերել է նալբանդյանը գլուղական երևույթների միջավայրում պահպանված նուրիների ծիսական: Երգի նկատմամբ, նրանում կռահելով հնուց եկող մի ստեղծագործություն:

«Երաշտության ընդդեմ նուրիների ավանդությունը թեև իսպառ չգիտենք թե ի՞նչ բան է այդ և ի՞նչ արարողության մնացորդ, բայց և այնպես կարծում ենք, թե հին բան լինի: Սաստիկ գրգռում է այդ բանը մեր հաճախությունը, մանավանդ, երբ տեսնում ենք, որ շատ խոր արմատացած է նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մասին»¹¹:

Եվ նալբանդյանը չի սխալվել: Նուրիների երգը, սրան զուգակցող համապատասխան ծիսական արարողության հետ միասին, իրոք արժանի

⁹ Նույն տեղում, էջ 144—147:

¹⁰ Նույն տեղում, էջ 146—147:

¹¹ Նույն տեղում, էջ 141:

է նման հետաքրքրության: Այստեղ յուրովի անդրադարձել է Հայկական լեռնաշխարհի հնօրյա բնակիչների համար կենսականորեն մեծ նշանակություն ունեցող ջրի հետ կապված պաշտամունքը: Զրի դիցուհու տոնի շրջ մեղանում ժամանակին գոյություն ունեցող ջուր ցրելու, նույն դիցուհու արձանը գետը տանելու, ջրեզրին կամ գետերի մեջ կանգնելու վաղնջական ծիսական սովորության վերապրումն է դա, որը, ինչպես իրավացիորեն դիտված է մեղանում, մինչև XIX դարի վերջերը և ներկա դարի սկզբներին կատարվել է հայկական: գյուղերում հրաշտի հետեանքով ցամաքած ոռոգման առունների ջուրը առատացնելու նպատակով¹²:

Կարևոր են հատկապես այն դիտողությունները, որ արել է Նալբանդյանը պատմական ավանդությունների վերաբերյալ:

Նրան առաջին հերթին ղբաղեցրել է այն հարցը, թե ի՞նչ հողի վրա են առաջ եկել այդ ավանդությունները, որո՞նք են դրանց ծնունդ տվող հասարակական պատճառները:

Ինչևիդ մատերիալիստ մտածող, Նալբանդյանը ավանդությունների առաջացման հիմքը համարել է «կյանքի և ընկերական պայմանքը», «մի ստույգ պատահած իրողություն» կամ էլ՝ «մի գաղափար»:

«Որ ազգի մեջ կամենա թող լինի, բայց և այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն, որ առանց ամենայն պատճառի առաջանար»¹³, — հավաստել է նա:

Նույն դիրքերից էլ Նալբանդյանը մեկնաբանել է պատմական ավանդությունների մեջ դարերի ընթացքում կատարված փոփոխությունները: Նրա հայեցակետով այդ ավանդությունները որքան հեռանում են իրենց ժագման ժամանակից, այնքան ավելի են կերպարանափոխ լինում: Ընկնելով ժամանակների և հասկացողությունների ազդեցության տակ, դրանք այնքան են այլափոխվում, որ շատ անգամ դժվար է լինում հասկանալ կամ մեկնել նրանց իմաստը¹⁴:

Նման կարգի տեղաշարժերը, ըստ Նալբանդյանի, կապվում են ավանդությունների մեջ հանդես եկող պատմական անձանց ու հերոսների «ազգի մեջ ունեցած խորհրդի, արժանավորությունների ու հատկության» հետ: Ահա թե ինչ է գրել նա այդ առթիվ. «Հայտնի է, թե մի պատերազմ, մի քաջագործություն, մի հաղթություն չի վերագրվիլ մի սուրբի, որպես նաև մի հրաշագործություն մի երևելի զորավարի: Եթե ազգը Թորոսի

¹² Տե՛ս Մ. Արեղյան, Վիշապներ կոչված կոթողները..., Երևան, 1941, էջ 89, 91:

¹³ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 144—145:

¹⁴ Նույն տեղում, էջ 144:

օրով տեսնել է մի խորհրդավոր անցք, բայց Թորոսի վրա բնավ համարում չունի, ազգի հետագա զավակները այդ անցքը անպատճառ կխլեն Թորոսից և կվերագրեն մի մարդու, որ կամ առաջ է ապրել Թորոսից կամ վերջը, որի վրա ազգը մեծ համարում ունի քաղաքականապես կամ կրոնապես, նայելով անցքի բնավորության: Ավանդությունքը, զրկվելով այսպես ժամանակագրական ճշտությունից, շատ անգամ այնքան շատ հավաքվում են մի մարդու վրա, ով այդ մարդը շատ դարեր հետո դառնում է մի պահարան, մի շտեմարան սքանչելի անցքերի և գործերի, իսկ մյուս բոլոր մարդիկը, այն մեկ նշանավոր մարդու օգտի համար զրկվում են իրենց ստուգապես ունեցածից»¹⁵:

Վերոհիշյալ փաստից հեղինակը տրամաբանորեն բխեցրել է մի ուրիշ կարևոր եզրակացություն: Այդ այն է, որ որևէ անվան առկայությունը այս կամ այն ավանդության մեջ՝ բավական չէ վերջինիս ստեղծման ժամանակը որոշելու համար: Իբրև օրինակ բերելով դարձյալ Լուսավորչի կանթնդի ավանդությունը, Նալբանդյանը գրել է. «Լուսավորչի անունը այդ ավանդության հետ խառը տեսնելով չէ կարելի պնդել, թե ստուգապես չորրորդ դարումն է երևել այդ կրակը: Այո, կարող էր և այն ժամանակ երևիլ. մեր խոսքը այդ չէ. այլ այն, թե լոկ անունը չէ կարող ընդունվի որպես ապացուցություն ժամանակի ավանդությանց մեջ»¹⁶:

Նալբանդյանի բանագիտական հայացքների հետ ուղղակիորեն առնչվող հարցերից մեկն էլ զրականության ժողովրդականության հարցն է: Գրականության հիմնական խորհուրդը համարելով «հասարակ ժողովրդի», այսինքն՝ ազգի մեծամասնության հոգու, Կնրջինիս հասկացողությունների, վարք ու բարքի, սովորությունների, ծեսերի և բարոյական վիճակի արտացոլումը, մեր հեղինակը տվյալ գործի մեջ կարևոր տեղ է հատկացրել գրողի կողմից ժողովրդական ստեղծագործության ակունքներին մոտ լինելու հանգամանքին և այդ ստեղծագործության լավագույն նմուշներով զրականությունն առողջացնելուն ու թարմացնելուն: Այս առումով ամենեկին պատահական չէ, որ նա ջերմորեն ողջունել է հայոց նոր զրականության այն ներկայացուցիչներին, որոնց գրվածքներում տեսել է ժողովրդական բանահյուսության այդ բարերար ազդեցությունը:

Նալբանդյանը միանգամայն իրավացիորեն ուսանելի է համարել նախ և առաջ Աբովյանի, և ապա՝ նրա հետևողությանը, Պոռչյանի օրինակները, որոնք ստեղծագործաբար և շատ հաջող օգտագործել են ժո-

¹⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 145:

¹⁶ Նույն տեղում:

դովորական բառ ու բանը, դրանով իսկ, իր բառերով ասած, «աղ ու համ» և «հոգի ու սիթտ» են տվել իրենց գրվածքներին¹⁷:

Իր հայտնի «Կրիտիկա»-ում, գրված Պետրոպավլովյան բանտում, խոսելով Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մասին, Նալբանդյանը գրել է. «Արգո հեղինակը հետևելով պ. Աբովյանի ուղղության, իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առջև ունեցել է գործ դնել աղգային առածներ, ասացվածքներ: Մենք լիակատար շնորհակալություն ենք հայտնում մեր հեղինակին»¹⁸: Եվ ասպա. «Պ. Պոռշյանի ոտանավորքը մեծ հարազատության ունին Արարատյան աշխարհի և տեղ-տեղ էլ ամբողջ ազգի ոգու և ձևի հետ»: Եվ իբրև նմուշ մեջ բերելով «Սոս և Վարդիթերի» 74-րդ էջում տեղ գտած «Ջան գյուլումը», Նալբանդյանը ավելացնում է. «Շատերը կան նույնպես ազնիվ, նույնիսկ գեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն «Նանիկը» մեջ բերել (եր. 100), ուր հայ պառավի ոգին ու սիրտն ամեն հարազատությանը թափել է հեղինակը»¹⁹:

Բարձր գնահատելով ինչպես Աբովյանի, այնպես էլ Պոռշյանի զբաղմունքները և փորձը տվյալ բնագավառում, Նալբանդյանը ևս իր գեղարվեստական և հատկապես հրապարակախոսական երկերում բաղմիցս դիմել է ժողովրդական բառ ու բանին, դրանով իսկ ավելի դիպուկ ու պատկերավոր դարձնելով գաղափարական հակառակորդների դեմ ուղղված իր քննադատական խոսքը:

«Հիշատակարանի» մեջ անդրադառնալով «Ծռաբաղ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների աշխատակից Հովսեփ Զերբեղյանի «Հյուսիսափայլի» և սրա գործակիցների դեմ գրած ամբաստանական հոդվածներին, Նալբանդյանը գրել է. «Պ. Զերբեղյանը յուր բոլոր կյանքում միշտ գտնվել է վարագույրի քամակում և յուր հսկայական գիտության ապացույցը գրավորական կերպով բերած դրած չէ հանգիսի մեջ, որ հասարակությանը կարող լինի բան հասկանալ և չհավատալ այնուհետև շարժվողների խոսածին, թե՛ դատարկ տակառը մեծ ձայն է տալիս»²⁰:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատության մեջ խստորեն դատապարտելով Նվրոպայի բուրժուական աղ-գերի փոխադարձ ոչնչացման գիշատիչ միտումը, Նալբանդյանը զայ-

¹⁷ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 279, հատ. 3, էջ 165, 168, 183, 187—188:

¹⁸ Նույն տեղը, հատ. 3, էջ 183:

¹⁹ Նույն տեղում, էջ 187—188:

²⁰ Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 458:

րույթով գրել է. «Հերիք է, որչափ կույր և ֆանատիկական ազգությունը
եւնի յուր եսական կողմերը. հերիք է, ասում ենք, որ մի ազգություն
յուր մի շամփուր խորովածի համար մոռնում է մյուս ազգի եզրը»²¹ և այլն:

Ժողովրդական լայն զանգվածների ստեղծած հոգևոր արժեքների
պաշտպանության գիրքերից Նալբանդյանը մերժել է հասարակական
մտքի ընդդիմադիր հոսանքների ներկայացուցիչների կողմից ժողովրդի
բանարվեստի հանդեպ ցուցաբերված ժխտական վերաբերմունքը: Հրա-
պարակախոսը բավական խիստ քննադատության է ենթարկել, օրինակ,
50—60-ական թվականների այդպիսի հայազգի գործիչներից մեկի՝
Ա. Խուդաբաշովի «Обозрение Армении в географическом, исто-
рическом и литературном отношении» գիրքը, ուր այն թեզն էր
առաջադրվում, թե Հայաստանում հեթանոսական շրջանում իբր մտավոր
զարգացումը եղել է չափազանց ցածր աստիճանի և որ իբր մեղանում
գոյություն չեն ունեցել քիչ թե շատ ուշագրավ բանահյուսական ստեղ-
ծագործություններ²²:

Հակառակ Խուդաբաշովի, Նալբանդյանը վեր է հանել վաղնջական
ժամանակներից մեզ հասած ժողովրդական բանարվեստի մի շարք փայ-
լուն նմուշների նշանակալից արժեքը, միաժամանակ երախտագիտության
ջերմ խոսք ասել դրանք մոռացումից փրկողների հասցեին:

«Հալոց հին դպրությունը ևս ունեցել է երգեր, ավանդություններ և
առածներ,—գրել է նա,—որոնցից մի քանիսը Խորենացի պատվական
Ժերունու միջնորդութենովը կամ այլ Ոսկեփորիկների միջնորդութենով
հասած են մեզ. որպես «Նրկնէր երկին և երկիր», «Հատուած գնացեալ
Վարդգէս մանուկն», «Հեծաւ արի արքայն Արտաշէս» և այլ մի քանիսը.
որոնց շատիցը բաղդի անգթանալովը այժմուս զրկված ենք. և այս քը-
չիցը, որ մեր ձեռքը հասած է, եղրակացնում ենք, որ պիտո է անհամար
շատ բնենայինք այսպիսի երգեր մեր քաջերի վերա, որոնք կացած էին
նահապետական ժամանակներում. պիտո է, որ ունենայինք և մահնա-
կան կամ նվիրական երգեր, որովհետև դիցապաշտ, արեապաշտ և կրա-
կապաշտ էինք, իսկ ինքն ըստ ինքյան դիցաբանությունը բանաստեղծու-
թյուն է, և ի՞նչ հնար կար, որ առանց նվիրական երգերի կատարվեին
նոցա պաշտամունքը»²³:

²¹ Նույնը, հատ. 3, էջ 82:

²² Նույն տեղում, էջ 418:

²³ Նույնը, հատ. 1, էջ 21:

Մի ուրիշ անգամ անդրադառնալով Մ. Էմինի «վէպը հնոյն Հայաստանի» աշխատութեանը (Մոսկվա, 1850 թ.) և գնահատելով հեղինակի իմացութեանը, նալբանդյանը քննադատել է նրան այն բանի համար, որ նա միակողմանիորեն տարվելով հեռավոր անցյալի բանահյուսական նյութերի ուսումնասիրութեամբ, մոռացութեան է տվել հայ ժողովրդի հետագա դարերի բանարվեստի հուշարձանները:

Մ. Էմինի աշխատութեան մյուս նկատելի թերութիւնը նալբանդյանը համարել է այն, որ խորհնացու Պատմութեան շատ հատվածներ անհիմն կերպով դիտված են իբրև բանահյուսական նյութեր: Քաջ գիտակ լինելով Պատմահոր աղբյուրներին և ունենալով բանասերի անուրանալի զգացողութիւն, նա իրավացիորեն հավաստել է, որ այդ հատվածները կապ չունեն ժողովրդական բանահյուսութեան հետ:

Տեղին է նշել, որ տասնամյակներ անց, հանգամանորեն վերադիւրով Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ բերված ժողովրդական առասպելների և վիպական պատառիկների հետադրութեամբ, Մանուկ Աբեղյանը անառակելի ապացուցներով հաստատեց Մ. Էմինի աշխատութեան վերաբերյալ նալբանդյանի արած դիտողութեան իրավացիութիւնը²⁴:

Ժողովրդական բանահյուսութեան տարբեր տիպի ստեղծագործութիւններին նալբանդյանի տված գնահատականները և բնութագրումները դժուարեւորում են մեծ մտածողի խորաթափանց միտքը, ինքնուրույն կարևոր դիտարկումների և ընդհանրացումների անժխտելի տվյալները: Այդ զբնահատականների և բնութագրումների լույսի տակ բացահայտվում են ժողովրդական բանարվեստի ոչ միայն հասարակական էութիւնն ու ճանաչողական նշանակութիւնը, այդ բանարվեստին բնորոշ հատկանիշները, այլև, որ պակաս կարևոր չէ, պարզվում է դարերի ընթացքում նրա կրած փոփոխութիւնների իրական պատկերը:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում հատուկ արձանագրել Միքայել Նալբանդյանի բանագիտական հայացքների զուգադիպութիւններն ու ընդհանրութիւնները Բելինսկու, Դոբրոլյուբովի և Զեմլիշևսկու հայացքների հետ, որոնք արտահայտված են առաջինի՝ «Письмо к Гоголю» և «Общий взгляд на народную поэзию» («Отечественные записки», 1841, «Полярная звезда», 1855), երկրորդի՝ «О степени участия народности в развитии русской литературы» («Современ-

²⁴ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 3, 7—8:

ник", 1858) և *Կրթորդի*՝ „Песни разных народов“ և „Полеми-
ческие красоты“ („Современник“, 1854, 1861) հայտնի հոգևածներում:

Հայ հրապարակախոսին ամենայն հավանականությամբ ծանոթ
պետք է լինեին ինչպես Բեքինսկու, այնպես էլ Դոբրոլյուբովի և Չեռնի-
շևսկու վերոհիշյալ հոգևածները, քանի որ նա, ինչպես հայտնի է, հետևել
է թե՛ „Отечественные записки“-ին ու „Полярная звезда“-ին և
թե՛ մանավանդ, „Современник“-ին:

Ճիշտ չէր լինի, սակայն, նախնադյանի և նրա ողու համախոհների
բանագիտական հայացքներում առկա որոշակի նմանությունները համա-
րել լոկ ազդեցության, առավել ևս՝ փոխառության հետևանք: Մինչդեռ
նախնադյանի մտքերի և ընդհանրացումների հոդն ու զինարանը ամ-
բողջապես հանդիսացել են հայ ավանդական դիցաբանության ու բան-
արվեստի փաստերը, հայկական բնաշխարհը, հայ ժողովրդի պատմու-
թյունն ու մատենագրությունը, նրա ողու համախոհների համար այդ դե-
րը կատարել են ողուական ժողովրդական բանահյուսության փաստերը,
ողուական բնաշխարհը, ողու ժողովրդի պատմությունն ու գրականու-
թյունը:

„Ինչ վերաբերում է վերը նշված զուգահեռություններին ու ընդհան-
րություններին, ապա դրանք պետք է բացատրել ոչ թե սովորական ազ-
դեցությամբ կամ փոխառությամբ, այլ հասարակական, քաղաքական,
փիլիսոփայական, գրական-գեղագիտական ըմբռնումների այն ընդհան-
րությամբ, որ ունեցել են հայ և ողու մեծ 50-ականները:

Յուրովի շարունակելով ու զարգացնելով Թադիագյանի, Աբովյանի,
Ալիշանի, Ախվերդյանի հայացքները ժողովրդական բանահյուսության
վերաբերյալ, Միքայել Նախնադյանը նոր էջ բաց արեց հայ բանագիտա-
կան մտքի պատմության մեջ: Նրա հայացքները ժողովրդական բանար-
վեստի մասին իրենց հասարակական-գաղափարական ճիշտ մեկնակետի
և գիտական բնույթի շնորհիվ, արժանի են առանձնակի ուշադրության:
Դրանք ունեն ոչ միայն պատմական, այլև ակնհայտ արդիական նշա-
նակություն:

ԳԱՐԵԳԻՆ, ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ

Անցյալ և ընթացիկ դարում շատերն են մեղանում զբաղվել ժողովրդական բանահյուսության գրառման և հրապարակման գործով: Հայ բանահյուսության այդ բաղմաթիվ երախտավորների շարքում կա մեկը, սակայն, որի կատարած դերը բացառիկ է: Գարեգին Սրվանձտյանցն է դա, մեր բանահավաքների ճանաչված ռահվիրան: Նրա անվան հետ է կապված հայ բանահյուսության տասնյակ ընտիր նմուշների և առաջին հերթին հայոց ազգային ժողովրդական մեծ վեպի՝ «Սասունցի Դավթի» հայտնագործման նշանակալից փաստը: Սրվանձտյանցի հետևորդներն ու աշակերտներն են եղել մեր լավագույն բանահավաքները թե՛ Արեմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում (Գ. Շիրենց, Հ. Ճանիկյան, Տ. Նավասարդյան, Գ. Տեր-Աղեքսանդրյան, Ս. Հայկունի և ուրիշներ):

1

Սրվանձտյանցը հայ գրականության և մշակույթի պատմության մեջ մնալուն տեղ է գրավում իր ազգագրական և բանահյուսական ժողովածուներով: Թեև նա տրտնջացել է, որ ինքը տարիների շարունակ լինելով քարոզիչ, նվիրակ, դաստիարակ, առաջնորդ, ուղեոր, վանահայր..., զբոսականությամբ զբաղվելու շատ քիչ ժամանակ է ունեցել, բայց պետք է խոստովանել նաև, որ նույն այդ պարտականությունները, որոշ իմաստով, բարենպաստ դեր են խաղացել նրա համար ազգագրական և բանահյուսական նյութերի հայտնաբերման ու գրառման գործում: Ի պաշտոնե շրջագայելով Հայաստանի բաղմաթիվ դավառներում և հայաբնակ այլ վայրերում, հաճախ ստիպված լինելով ոտքով չափելու իր հայրենիքի լեռները, հովիտները, ձորերը, գետերը, քաղաքները, գյուղերը, շեներն ու ավերակները, Սրվանձտյանցը մոտիկից շփվել է հայ հասարակության ամենալայն խավերի հետ, լավ ուսումնասիրել հարազատ ժո-

ղովորդի կյանքը, կենցաղը, վարքը, բարքը նիստն ու կացը, հնադարյան հարուստ բառ ու բանը:

Այդ շրջագայությունների անդրանիկ արդյունքն է Գարեգին Սրվաճըրտյանցի ազգագրական և բանահյուսական նյութերի առաջին ժողովածուն՝ «Գրոց-բրոց» ինքնատիպ խորագրով, լույս տեսած Կ. Պոլսում, 1874 թվականին:

Գրքի սկզբում դրված առաջաբանի մեջ համառոտակի անդրադառնալով իր գործի բնույթին ու բովանդակությանը, Սրվաճըրտյանցը բացահայտել է գրական-հասարակական այն դրդումները, որոնք թելադրել են նրան հրապարակ հանելու տվյալ գործը:

«Մտածելով թե փայտերը, քարերը և ամենայն ակունք ու ալլ նյութերը նախքան զարվեստավորել իրենց բնական բույսին և կազմին մեջ թիպեալ անվայելուչ և անշնորհք երևույթ մը ունին, բայց արվեստավորք դանոնք թանգ կը գնեն. և ինչո՞ւ ամեն արհեստական նյութը իրեն նախնականը պատրաստողն ու վաճառողն ունի, ինչո՞ւ գրարվեստն ալ չունենա: Թիպեալ ժամանակե մը հետե կը նշմարենք առավել Ռուսաստանի Հայ բանասիրաց մեջ ծաղկլալ այս ճաշակը, ուր ժողովրդական կյանքեն նկարագիր կընեն. Հայաստանի տեղագրությունը, ռամկական երդերը և դանազան ծեսերը, վեպերը, առածները կը տպագրեն: Ահա այս խորհրդով իմ երկրես իբրեւ ընծա այս գրվածքս կը նվիրեմ... զորս քաղած եմ հայրենի մրգաստանեն... այն հողեն ու ջրեն, որ Հայաստանի անունը կը կրեն տակալին, ժողովրդե մը՝ որ սերունդ և անուն Հայության ունին... առանց Հոմերական և Վիրգիլիական ճարտար հյուսվածոց և պաճուճանքներու. և առանց նույնիսկ Հայոց պատմությանց և բանաստեղծությանց դարգն ու նմանությունը անոնց տալու. ալ մերկ, պարզ, և ինչպես գտած ու ըմբռնած էի...»¹:

Հեղինակի բուն նպատակը, իր իսկ վկայությամբ, եղել է «ժողովրդական կյանքի ծանոթություններ հիշել, որոնք լույս կարող են տալ մեր ազգային պատմության և լեզվին կամ պրականության», «որոնք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունը կը կազմեն»:

Ժողովածուն բաղկացած է երկու հիմնական մասերից:

Առաջինի մեջ հեղինակը բավական հանգամանորեն խոսում է հայ ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի, մասնավորապես Տարոնի ու Վասպուրականի բարբառների առանձնահատկությունների մասին: Բաղդատելով հայոց գրական և «գավառական» լեզուները, նա գտնում է, որ

¹ Գ. Սրվաճըրտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 3, 7—8:

առաջինը համեմատաբար աղքատ է իր բառապաշարով, մինչդեռ երկրորդը աչքի է ընկնում իր հարստություններով: Իբրև ապացույց իր ասածի Սրվանձտյանցը բերում է գյուղատնտեսական գործիքների ու վերջիններիս առանձին մասերի, թուղանների ու կենդանիների, բույսերի ու պտուղների, ծառ ու ծաղկի տարբեր տեսակների բուն ժողովրդական-բարբառային բազմաթիվ ու բազմատեսակ անուններ (կուռիկ, ակուկա, բուրբոթ, ամբրոց, տուճիկ, նուկանոց, կաթալիք, սեռիկ, կթոց, բղկկ, տլուշ, ցամալիք, բղբղիկ, թնթոց, փարատիկ, փուռնիկ, տողիկ, հրեսբաց, արապահ, թաթալան, միջան, ուլնիկ, ջորոթան, առջկան, մասրան, վիլակն և այլն), որոնք բացակայում են գրական լեզվի մեջ և այս հիման վրա իրավացիորեն առաջ է քաշում գրական լեզուն ժողովրդական լավագույն բառերով ու ոճերով հարստացնելու կարևոր հարցը: Դրա հետ միասին Սրվանձտյանցը հեզնում է նվրոպայում կրթություն ստացած այն օտարամոտներին, որոնք մոռացած լինելով իրենց մայրենի լեզուն ու բարբառը, «ի՞նչ են բնիկն ու հայրենին, ազգայինն ու ընտանին», թերագնահատում են նրա արժանիքները և այդպիսով հետզհետե կտրվում հարազատ լեզվից ու միջավայրից, սիրում են օտարը, հարմարվում վերջինիս²:

Նա գտնում է, որ հայոց գրական լեզվի բառապաշարը հարստացնելու համար պետք է դիմել ոչ թե օտարազգի բառարաններին, այլ լեզվի բուն ստեղծողին՝ ժողովրդին. «Մենք կը շվարինք տեսնելով նավի մրկազմվածքը այնքան մասունքների և տեսակների, որոց բառարանը՝ նավապետն ու նավաստիքն են... Գնա նաև Վանա Ավանց գյուղը, այնտեղի գեղացի նավավարներուն մոտիկ արա՝ և տես ու ուսիր բառեր»³:

«Գրոց ու բրոց»-ի առաջին մասում Սրվանձտյանցը խոսում է նաև Տարոնի ու Վասպուրականի գավառներում գտնվող լեռների, հովիտների, ձորերի, գետերի, շենների ու ավերակների անունների մասին, հիշատակում նրանց վերաբերյալ ժողովրդի մեջ պահպանված մի շարք ուշագրավ պատմաառասպելական ավանդություններ: Դրանցից են. Բելի ուղտերի և ուղտապանների, Հարս ու փևսայի, Սուրբ Թոնրի, Մասսի ու Սիփանի, Նեմրութի և Գրգուռի, Շիրինի ու Ազնավուրի, Քառասուն Մանկունքի, Աբելի ու Կայինի, Վիշապ-օձերի, Միծեռնա սանդի, Մշո ու մշուշի, Փրեբաթմանի, Կաղ-Դևի, Կոնկու վանքի, Ծամբարի, Լուսնի և Արևի, Տըբշոզ, Հայկ և Աստվածաշեն գյուղերի ավանդությունները, որոնք ար-

² Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 17:

³ Նույն տեղում, էջ 24—25:

տացուում են հին հայերի պատկերացումները բնության և հասարակական կյանքի բազմապիսի երևույթների ու առարկաների մասին: Հանդիսանալով այդ երևույթների ու առարկաների յուրահատուկ «անգիտակցական գեղարվեստական մշակումները» և հայ դրականության ու արվեստի «հոդն ու ղինարանը», հիշյալ ավանդույթյուններն ունեն ինչպես նախադրական, այնպես էլ գեղարվեստական նշանակալից արժեք:

Քննության առարկա ժողովածուի մեջ տեղ գտած մյուս նյութերից անհրաժեշտ է հիշատակել նաև Տարոնի ու Վասպուրականի ժողովրդական բժշկության, հարսանիքի, Համբարձման վիճակախաղի, Վարդավառի տոնախմբության հետաքրքիր նկարագրությունները, բուժիչ աղբյուրների, սթեպան համարված ծառերի, հրաշագործ քարերի, Թուխ Մանուկների, Յասման խաչերի, օձի պաշտամունքի վերաբերյալ ուշագրավ տեղեկությունները, ինչպես նաև «Ավագ մկնիկ» հետաքրքիր կենդանական զրույց-հանգերգը Վանա բարբառով:

Առավել արժեքավորը, սակայն, «Գրոց ու բրոց» ժողովածուի Բ մասըն է, ուր գետնդված է հայ ժողովրդի ազգային մեծ վեպը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, որը մինչ այդ անհայտ էր մեր գրականությանը:

Սրվանձությանցի պատումն ունի պատմական բացառիկ նշանակություն: Նրա հետ է փաստորեն կապվում հայ ժողովրդական վեպի հայտնագործման կարևոր հանգամանքը և հերքումը ոմանց այն թյուր ըմբռնման, ըստ որի մենք իբր թի չենք ունեցել մեր ազգային մեծ վեպը:

Սրվանձությանցի պատումի արժեքը միայն պատմական չէ: Այն աչքի է ընկնում նաև ըստ էության. իր ընդարձակ ծավալով, հարուստ բովանդակությամբ, գեղարվեստական հատկանիշներով և, որ նույնպես շատ կարևոր է՝ դրառման հարազատությամբ: Այսօր էլ, երբ մեր ձեռքի տակ կան «Սասնա ծռերի» 100-ից ավելի ղանաղան պատումներ, Սրվանձությանցի գրառումը, իրավացիորեն, համարվում է լավերից մեկը:

Ուշագրավ է նաև վեպի մասին հեղինակի գրած սեղմ առաջաբանը, որով նա հանդես է եկել ոչ միայն իբրև «Սասունցի Դավիթ» հայտնաբերող ու առաջին գրի առնող, այլև իբրև նրա առաջին բանիբուն գնահատողը և ուսումնասիրողը: Այստեղ առանձին դիտողությունների ու ակնարկների ձևով արծարծված են «Սասունցի Դավիթ» բովանդակության ու արվեստի էական հարցերը, տրված է վերջիններիս սեղմ, բայց և մեծ մասամբ ճիշտ պատասխանը, հարցեր, որոնք հետագայում մշակվեցին

ուրիշներէ: և առաջին հերթին Մ. Արևիկանի կողմից՝ նրա «Ազգային-վեպ» (1889) և «Հայ ժողովրդական վեպը» (1908) մեծարժէք ուսումնասիրութիւնների մեջ:

Կարսոյր ևն Սրվանձտյանցի գիտողութիւններն ու դատողութիւնները «Մասունցի Դավթի» ծագման ժամանակի, տեղագրական միջավայրի, նրա իմքում ընկած գաղափարների և գեղարվեստական առանձնահատկութիւնների մասին:

Կր տեսնվին այս ասացվածքին մեջ այնպիսի կտորներ, — գրում է Սրվանձտյանցը. — որ պատմագրութեանց կը համաձայնի, բայց և կտորներ ալ կան. որ բոլորովին ժամանակագրութեան, տեղագրութեան, և ամեն լանջամանաց չափառակ են: Դեպքեր՝ որ հառաջ քան ղճրիստոսն են, քրիստոնեարար կը զրուցվին: Ասոր մեջ հիշված Մըսըր՝ գուցե Մուսուլ կամ Մուսլ լինի, որ հավանականութիւն կը վերցնե, և Սասնո տիրապետութեան սահմանին շատ հեռու չէ: Բաղդադն՝ Բաղդադ է, Խլաթըն՝ Խլաթ. Կապուտկոդն՝ Կապուտկոդ. նույնպէս և մյուս ամբողջ հասուկ անունով տեղերը ուղիղ են: Եվ ապա.

«Ամբողջ այս զրուցքը նկարագիր է քաջութեան, ընտանութեան, բարեպաշտութեան և պարզ ու անխորամանկ հարաբերութեան Դավթին՝ յուր սիրուն լույն հետ, յուր ակոյանին հետ»:

Այս գրվածքը յուր բոլոր անկանոնութեամբ հանդերձ՝ հիանալի ոճեր ունի ասացվածքի: Դուրսագնի բաղկի ուժը անհամեմատ ցույց տալու խոսքը՝ երբ Դավթիին խել կուտա Զորջիղի ձեռքն գուրդը, նստել կուտա աւելեւ ուժգին. որ տակաւին մինչև ցայսօր կերթա նստելու թափին. Դավթի ուժո անսահմանութիւնը ցուցնելով: Դարձյալ.

«Այս գրվածքի մեջ կը տեսնե հետաքրքիրն՝ գեղջկական կյանքի հանգամանքները. Աբամելիքի մահվան համար Սասունցոց սուգը. Քեռի Թորոսի տխուր՝ «Հաջն ու գինի, տներն կենդանի» երգումն, հպատակեցնելու համար թորի տակէն անցընելու սովորութիւնը, Դավթի և յուր հորթարած ընկերներին մտերմութիւնը, Խանդութ խանութին աշուղ զրկելը՝ Դավթի իրեն վրա սիրեցնելու»:

Ի վերջո հիշենք նաև Սրվանձտյանցի խորաթափանց կուսումը Մըհերի կերպարի դիցաբանական ակունքների վերաբերյալ: «Մհերի դոան» մասին նա իբրև ծանոթութիւն գրում է, թե այն՝ «ամենալերջ քար է, որ տալիս է կոկիւր ևն մեծ դոան ձեռով և վրան բեկոտորներ գրած են խիստ հեռակէ: Ապա նա բերում է մի քանի ավանդութիւններ այդ «դոան» ետեւում իբր փակված Մհերի մասին, ավելացնելով, թե «ուրեմն այս

կերպով Մհեր կը լինի աշխարհի բախտը դարձնող և ոսկի բաշխող շատու-
ված մը. գուցե Մհերն ինքն Միհր Մեծն լինի, և իր դուռը ուղղակի հա-
րավո հանդեպ կամ արևու լինելով՝ պաշտելու պատշաճ»⁴:

Մհերի և Միհրի միջև եղած կապի մասին հեղինակի այս կոհաճումը
տարիներ հետո փաստական հարուստ նյութերի և զուգահեռների հիման
վրա հավաստեցին ու հաստատեցին մեր ականավոր բանասերները⁵:

Զգալով հանդերձ իր ժողովածուի մեջ ամփոփված նյութերի և մաս-
նավորապես «Սասունցի Դավթի» կարեւորութիւնը հայ ժողովրդի «ազ-
գային դարավոր բանից և ավանդից հիշատակներ» ուսումնասիրութեան
համար, Սրվանձտյանցը միաժամանակ տարակուսանք է հայտնել իր
դրբի գտնելիք ընդունելութեան առթիւ: Նրա թերահավատութիւնը, սա-
կայն, անհիմն էր: «Գրոց ու բրոցը» բաղական ջերմ ընդունելութիւն է
գտնում ժամանակի հայ մտավորականութեան տարբեր շրջաններում: Հե-
ղինակին բաշխելում են այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպես՝ Ղ.
Ալիշանը, Գ. Պատկանյանը, Մ. Աղաբեկյանը, Հ. Շահնաղարջանը և ուրիշ-
ներ: Արեւմտահայ և արեւելահայ պարբերականներից շատերը («Սիոն», «Ա-
րեւելյան մամուլ», «Մասիս», «Մեղու Հայաստանի», «Մշակ») տպագրում
են զրմատական գրախոսականներ, որոնցից հատկապես հիշատակելի
են Մելիքզադէի (= Բաքի) և Գ. Տեր-Աղեքսանդրյանցի ընդարձակ հոդ-
վածները⁶:

Գոտեպեղված իր առաջին ժողովածուի գտած ընդունելութեամբ, Սըր-
վանձտյանցը նույն 1874 թվականին Կ. Պոլսում հրատարակում է երկ-
րորդ գրքույկը՝ «Հնոց և նորոց» խորագրով:

Խոսելով Հայաստանի հինավուրց վանքերում ցրված մագաղաթյա
մատյանների և վերջիններիս պատմագրական արժեքի մասին, Սրվան-
ձտյանցը խստորեն քննադատում է այն վանականներին, որոնք անտար-
բել են մշակութային այդ դանձերի նկատմամբ, և «որոց խուցք և դա-
րանք կահավորեալ են կթխայովք և շիշովք և ըմպանակօք, ուր չերկին
ոչ գիրք ընթեռնույց և ոչ սեղան գրելույ...»⁷:

⁴ Գ. Մելիքզադէ, *Գրոց ու բրոց*, էջ 126—135:

⁵ Թ. Ավդալբեկյան, *Միհրը հայոց մեջ*, Վիեննա, 1929, Կ. Մելիք-Օնանջանյան, *Միթ-
րա-Միհրի արրանյակներն ու գործակիցները* (տե՛ս «Գրական-բանասիրական հետախու-
զումներ» ժողովածուն, Երևան, 1946, էջ 269—327):

⁶ «Մշակ», 1875, № 2 (էջ 1—3) և 3 (էջ 1—3): «Մեղու Հայաստանի», 1875, № 15,
16:

⁷ Գ. Սրվանձտյանց, *Հնոց և նորոց*, Կ. Պոլիս, 1874, էջ 192:

Նա միաժամանակ կոչ է անում ձեռնհաս անձանց («բանագետ ուսուցիչներին կամ գրադետ վանականներին») լրջորեն ղեաղվելու հիշյալ մատյանների ուսումնասիրությամբ, հավաքման ու պահպանման գործով, գտնելով, որ «քան զանթիքա զրամս և քարինս առավել անթիքայք են այսպիսեաց հավաքումն ու տարածումն»⁸:

Սրվանձտյանցը շի բավարարվել լուկ այդ կարեւոր հարցի առաջաշումով և ոչ էլ միայն ուրիշներին բարի խորհուրդներ տալով: Նա բերել է մի շարք ուշագրավ քաղվածքներ Մշո ս. Կարապետի վանքում եղած գրչագիր մատյաններից:

Առանձնապես արժեքավոր են այս տեսակետից Մովսէս Խորենացու և Դավիթ Անհաղթի վերաբերյալ բերված զրուցապատումները, որոնք լույս են սփռում հիշյալ նշանավոր դեմքերի կյանքի ու գործունեության վրա, ինչպես նաև հայազգի Քեշի-Պոլոյի (Տեւ-Պոլոսի) և Եզդի Միրզեքի կողմից Բոհտանի տեր մարացի բռնակալ Միր-Մեհմետ ամիրայի զորքերի ու զորապետի դեմ մղված անհավասար հերոսամարտի բանավոր հուշապատումը, որը հեղինակը հեռու հիշեցնում է Վարդան Մամիկոնյանի ու Վարդանանց կռիվը Հաղկերտի բանակի դեմ:

1876 թվականին, Կ. Պոլսում լույս է տեսնում Սրվանձտյանցի երրորդ ժողովածուն՝ «Մանանա» խորագրով, որը հեղինակի նախորդ երկու գրքերից տարբերվում է ինչպես ծավալի ընդարձակությամբ, այնպես էլ պարունակած նյութերի բազմազանությամբ: «Առաջաբանի» մեջ բացահայտելով իր գործի բնույթն ու հետապնդած նպատակները, Սրվանձտյանցը գրում է.

«Ես գրականության այն շինական մշակն եմ, որ ի վաչրիս և ի մայրիս կը թարթափի. լեռնային, դաշտային տուններ, ծաղիկներ և բույսեր կը ժողովի, և կողովով կածե զայն ի վաճառ ի հրապարակս քաղաքին, հորմե առյալ քաղաքացին՝ արվեստիլ կը վերատնկե զայն և կը դարմանե ի պարտեզս և ի բուրաստանս ասպարանից մեծատանց:

Իսկապես այս է իմ երկն. Բանասիրաց և գրասիրաց համար պատրաստած նախնական նյութ»⁹:

«Մանանա»-ում տեղ գտած հարուստ նյութերից առանձնապես արժեքավոր են ժողովրդական հեքիաթներն ու երգերը («Հաղարան բըլբուլ», «Գառնիկ ախպեր», «Անխելք մարդ», «Բյուրապատիկ», «Սիրտս նման էր...», «Հուսնակն անուշ», «Կոտ ու կես կորեկ» և այլն): Սրվան-

⁸ Նույն տեղում, էջ 20:

⁹ Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 6:

ձըտյանցը հանդես է գալիս ոչ միայն իբրև ժողովրդի ստեղծած հեքիաթ-ների ու երգերի հայտնաբերող ու հրատարակիչ, այլև իբրև դրանց առաջին գնահատողն ու բնութագրողը:

«... Վեպն ու զրույցը, որ ժողովրդյան բերնով «հեֆլաք» է,—գրում է նա,—հորինված կը լինի բարոյական խրատու համար. և իբր դու-ցազներգություն՝ քաջաց քաջություն հռչակելու կամ այլոց օրինակ տա-լու համար: Հեքիաթներու շարադրության մեջ միշտ կարգ մը կա. ուղեո-րություն հեռավոր և անծանոթ աշխարհները. հրաշալի և ահուկ նկա-րազրությունք վայրաց և անձանց. դիպվածք. արկածք ի նենգութենե քն-կերաց կամ եղբարց, երբեմն նա ի ծնողաց:

Միտահարականն ամեն հեքիաթի աղն է. բավական ճարտար հան-գույցներ ու կապեր ունի. բարի և չար ոգյաց՝ ջիններու, դևերու դերեր. անմահություն ջրույն և պտղույն, տեղվույն և կենաց միշտ հետամուտ: Ի պաշտոն կը կոչվին կենդանիք, գաղանք և թռչունք. որք յուրաքանչյուր մեկ մեկ մարդ անձանց դեր կը կատարեն:

Դյուցազունք և դյուցազնուհիք երբ ի հանդես կուգան, և երբ ճա-պուկ ճարտար լեզու մը զանոնք կը զրուցե, մարդու մտաց առջև կը պըզ-տիկնան Հերակլյա դյուցազնությունք. Ոսկի գեղման հեքիաթն. Տրովա-դայի վեպն. Ողիսևսն և յուր կղզիներ. Նրեկօրյա պարտեզներն, յորս Հո-մերոս կը պանծա. կամ Տելեմաքն ու Կալիփսոսն, և որ իրոք ժողովրդա-կան վեպեր են»¹⁰:

Նույն կերպ Սրվանձտյանցը խոսում է նաև ժողովրդական երգերի բնույթի, էություն մասին, անդրադառնում բնական, աշխատանքային, հասարակական այն պայմաններին ու միջավայրին, որոնց մեջ ստեղծ-վում, տարածվում են դրանք: Նա բացահայտում է մասնավորապես այն բարերար ազդեցությունը, որ ունի ժողովրդական երգը ինչպես մարդ-կանց, այնպես էլ կենդանիների վրա:

«Մանուցյալ է ամենուն թե,—գրում է նա,—ուր որ ծաղկունք, ծառք, ջուրք, թռչունք, մարդ, արտորայք, լերինք, անտառք, բուրաստանք, հո-վաստանք իրենց հայրենիք կը ճանչնան... այն աշխարհի մարդիկ... ի բնութենե զգացյալ ամեն հոգի երգող կը լինի և նվագող: Մեր աշխարհի մեջ կը տեսնաս ուղեւոր մը իր երկայն ուղեւորությանը մեջ կընթանա՝ խաղ ասելով. երիվար հեծանող՝ իր ձինը լավ քալեցնելու համար խաղ մը կ'ըսե. դրաստավորն... և հերկարարն պատշաճ իմաստով, պատշաճ եղա-նակավ քաղցրաձայն կը կանչեն խաղեր. և այնքան սովորած են անա-

¹⁰ Գ. Սրվանձտյանց, Մանանա, էջ 149—150:

առնեք, երբ վարիչն լուս, անասունն կը կենա: Ձմեռն ձյուն կը սրբե, խաղ կ'ըսե, փայտ կը կտրե, խաղ կ'ըսե: բուրգ ու բամպակ կը գդե, կը մանե կամ շալ ու կտավ կը գործե, խաղ կ'ըսե: Տիկինը նստած կով կամ այծ կը կթէ, երգ մը կը մըմնջե, ճախրակ կը մանե, մանուկը կ'օրորե, յամոր կը շաղախե, ավել կ'ընե, քաղհանք կ'ընե, ծաղիկ կը փնջե, միրգ կը հավաքե, բանջար կը ժողովե, կար կը կարե, վերջապես, ինչ որ կ'ընե, ավլական ձայնիվ եղանակ մը կը մըմնջե...»¹¹:

Սրվանձառյանցը առաջ է քաշում ժողովրդական երգերի և նալ աշխարհիկ ու հոգեոր բանաստեղծության միջև եղած կապի հարցը, առաջինը մեր գրականության մեջ՝ դիտում այն ավերացությունը, որ թողել են ժողովրդական երգերը Գրիգոր Նարեկացու տաղերից մի քանիսի վրա:

Մեջբերելով հատկապես Նարեկացու նշանավոր «Ծննդյան մեղեդին» և «Հարության տաղը», նա գրում է. «Կը տեսնա՞ս Ռշտունցվո մը երգն. Աչքն ի ծով, Այտն նոնենի. կուսին նկարագիր՝ Բերանն երկթերթի. Վարդն ի շրթանց կաթեր. Ծոցն լուսափայլ՝ կարմիր վարդով լցալ...: Կը տեսնա՞ս Ռշտունցի հոտաղ եղնավարին սրբազնացուցչալ երգն. Ընտիր նկարագիր սալլին որայից խրձաբարձ...»¹²:

Հակադրվելով այն կարծիքին, ըստ որի Նարեկացու հիշյալ տաղերի «տիպն ու ոճը» հատուկ է եղել միայն Նարեկացուն, Սրվանձառյանցը եղբակացնում է. «Ուշադիր մը մինչև ցայսօր իսկ Նարեկյան կրնարին (սահմանին) Հայոց ժողովրդական բերան գտնված երգերեն կրնա համոզվիլ թե նույն ինքն Ս. Գ. Նարեկացվույն ոճն ոչ թե իր հատկական անձնական, այլ հայրենի դավառի տեղական ժողովրդյան ընդհանուր ոճն է»¹³:

Ժողովրդական հեքիաթների ու երգերի մասին Սրվանձառյանցի հայտնած մտքերն ու կարծիքները, շնայած իրենց հարևանցի բնույթին և համառոտությանը, բացահայտում են ժողովրդական բանահյուսության տվյալ ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունները:

Իր ճանապարհորդությունների ընթացքում լինելով Հայաստանի բազմամթիվ գավառներում, քաղաքներում, գյուղերում, ավաններում, վանքերում, ամրոցներում, շենքերում, ավերակներում, լեռներում, ձորերում, դաշտերում ու անտառներում և տեղական ժողովրդից լսելով

¹¹ Գ. Սրվանձառյանց, Մանանա, էջ 235—236:

¹² Նույն տեղում, էջ 242:

¹³ Նույն տեղում, էջ 237—238:

վերջիններիս հետ կապված ղանադան հիշարժան հուշապատումներ և ամանդություններ, Սրվանձտյանցը գրի է առել դրանք, քաջ գիտակցելով դրանց ճանաչողական արժեքն ու նշանակությունը, իբրև «պատմությունը լուսավորող ճառագայթների»:

Գարեգին Սրվանձտյանցի վերջին ժողովածուն նրա «Համով-հոտով» է: Այն լույս է տեսել երկու հրատարակությամբ. առաջինը՝ 1884 թվականին, Կ. Պոլսում, երկրորդը՝ 1904-ին, Թիֆլիսում (իբրև Սրվանձտյանցի երկերի ժողովածուի Ա հատոր): Օժտված լինելով հեղինակի մյուս ժողովածուների բնորոշ հիմնական հատկանիշներով, «Համով-հոտովը», դրա հետ միասին, ունի նաև իր առանձնահատկությունները: Դրանք են. 1) Բանահյուսական նյութերի նկատելի գերակշռությունը՝ աղագրական, տեղագրական և այլ կարգի նյութերի համեմատությամբ. 2) Սկզբնաղբյուրների մատուցման առավել հարադատություն և ճշգրտություն. 3) Ժողովածուի որոշակի ծրագրով կազմված լինելու հանգամանքը և նյութերի առավել կանոնավոր դասակարգումը:

«Համով-հոտով»-ը բաղկացած է երեք տարբեր մասերից կամ բաժիններից, որոնք հեղինակը կոչել է «Ճաշակ»: Ողջ ժողովածուի մոտավորապես $\frac{1}{3}$ -ը (էջ 29—120) կազմող առաջին և երկրորդ «Ճաշակների» մեջ տրված է՝ վան-վասպուրականի, Մանազկերտի, Բաղեշի և Մուշ-Բուխանիի դավառների, քաղաքների ու գյուղերի բնության ու բնակչության տեղագրական-աղագրական փաստացի ու սեղմ նկարագրությունը, համեմված հեղինակի անձնական հույզերով ու մտորումներով: Սրվանձտյանցի սահուն, կենդանի, պատկերավոր ու գեղեցիկ ոճի շնորհիվ այդ նկարագրությունները ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Դրանք ունեն ոչ միայն ճանաչողական, այլև գեղարվեստական արժեք: Դրանց միջոցով մենք լավ պատկերացում ենք կազմում մի կողմից նկարագրով ու առարկաների, երևույթների, մյուս կողմից՝ հեղինակի հայացքների, հասկացողությունների, նրա ճաշակի և զգացողության, նրա ինքնատիպ գրելաձևի մասին:

«Համով-հոտով»-ի «Ճաշակներում» աչքի են ընկնում նաև մի շարք ուշագրավ դիտողություններ ու դատողություններ, որոնք վկայում են Սրվանձտյանցի սուր մտքի և հետազոտական ակնբախ տվյալների մասին:

Խոսելով վասպուրականի նշանավոր վանքերից մեկի մասին, որը հայտնի է Կարմրավոր ս. Աստվածածին անունով, Սրվանձտյանցը առաջ է քաշում հայ դիցաբանական բառահյուսության բեկորների և մեր շա-

րականների միջև եղած աղերսի իր խելամիտ վարկածը. «Կաճմանը, ի՞նչ սիրուն բառ...: Այս առթիվ ներելի՞ է կարծել թե Հայոց հին Աստուծո՞ր և Աստվածուհւո՞յաց, Արամազդներու և Անահիտներու համար երգված դիցաբանությանց փշրյալ ոսկեղեն երգոց բեկորներն՝ ժողոված լինին մեր թարգմանիչք շատ մը թանկագին գոհարներ և անոնցմով շարահորինած լինին այնքան վսեմ շարականներ Տերունական, մանավանդ երբ գիտենք ասոնց մեծ մասն հորինել է խորենացին. նա որ ճաշակ ուներ հնությունց և հնախոսությունց, որ մեծ խնամք պատվ և ավանդեց մեզ գողթնաց երգերն. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծիրանի ծովն» և այլն...: Այո, մեր շարականաց մեծ մասն Աստվածաշնչով բանաստեղծյալ են. իսկ մաս մը՝ Ազգային շնչով ու լեզվով, որ չէր անհետացած մինչև այն օրերը»¹⁴ (ընդգծումը մերն է—Ա. Ղ.):

Նման կարգի ուշագրավ կարծիք-կռահումներ են Սրվանձտյանցի դիտողությունները Վան քաղաքի, Վանա բերդի հնություն և Վան կամ Վանք բառերի ծագման հարցի վերաբերյալ, որոնք տասնամյակներ հետո հիմնականում ճշտվեցին ու հաստատվեցին նորագույն հնագիտական պեղումներով և պատմալեզվաբանական հետախուզումներով:

Քննության առարկա ժողովածուի զլխավոր արժեքը, սակայն, ոչ այնքան վերը հիշված նյութերն ու դիտողություններն են, որքան նրա 3-րդ և 4-րդ «Ճաշակ»-ներում ամփոփված ստեղծագործությունները (էջ 121—384), որոնք փոքր բացառությամբ վերաբերում են հայ ժողովրդական բանահյուսությանը:

Գարեգին Սրվանձտյանցի հայտնաբերած ու հրատարակած բանահյուսական գոհարների շարքում «Սասունցի Դավթից» հետո հիշարժան են նրա «Համով-հոտով» (1884) ժողովածուում աեղ գտած ժողովրդական հեքիաթները, որոնցից առանձնապես արժեքավոր են՝ «Դըժիկոն» կամ «Քաջ Նազարը», «Օձևմանուկ, Արևմանուկը» և «Իմաստուն Զուհակը»: Հիշյալ հեքիաթներում ընդհանրացված սիմվոլիկ կերպարներով դրսևորված են ժողովրդի ձգտումներն ու երազանքները առատության, ազատ, անկաշկանդ կյանքի ու աշխատանքի մասին, բնության և հասարակական կյանքի շար ուժերի դեմ պայքարելու նրա անկոտրում կամքը, գոյություն ունեցող մոռյլ իրականությունը վերափոխելու նրա բուն ձգտումը:

Առաջաբանում խոսելով հեքիաթների ընտրության գործում իր ունեցած սկզբունքների մասին, Սրվանձտյանցը նշում է, որ ինքը ձեռքի տակ

¹⁴ Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 62—63:

ևղած բոլոր նյութերը չէ, որ հրատարակության է հանձնել, այլ դրանցից ընտրել է միայն նրանք, «որոց պարունակությանց մեջ ճարտար գյուտեր, կամ հին միտքեր կան. անոնք, որ սիրուն նկարագրություններ, սուր առածներ և ասացվածքներ ունին. անոնք, որ կյանքի նկարագիր, և փորձ ու խիստ ունին. անոնք, որ գավառի լեզվին ու ոճուն բացատրություն մը կը համարվին. և այլն: Ասոնցմէ կը գտնվին, որ ազգային հին տիպ չունին, բայց արդեն ազգայնացած են: Խոսքն ու լեզուն ալ իշենց ազգաստանությունն կունենան, ինչպէս ազգի մը արջունն՝ ուրիշ ազգի մը արջան հետ, պէս պէս առիթներով»¹⁵:

Սրվանձտյանցը «Մանանա»-ում և «Համով-հոտով»-ում զետեղել է նաև ժողովրդական բազմաթիվ երգեր՝ «Գեղջկական երգեր» խորագրի տակ, ծանոթացնելով մեր գրական հասարակայնությանը հայ ժողովրդի բանաստեղծական քանքարի մի շարք լավագույն նմուշների հետ: Այդ երգերից և՛ բովանդակությամբ, և՛ արվեստով աչքի են ընկնում «Սիրտս նման էր...» սկզբնատողով հայտնի անտունին, «Լուսնակն անուշ»-ը, «Հովերով սերը»-ը, «Մոկացի հայոց հարսանյաց պարերգ»-ը, «Գութանի երգ»-ը, «Փոքրիկ երկրագործ»-ը, «Ծուլլ հնձողներ»-ը, «Արտուտիկ»-ը, «Լազլագ»-ը և «Կոտ ու կես կորեկ»-ը, ուր ինքնատիպ ու գեղեցիկ պատկերներով արտահայտված են ժողովրդի ուրախությունը, վիշտը, ծիծաղը, աշխատանքն ու հանգիստը:

Առանձնապէս մեծ է Սրվանձտյանցի հրատարակած «Ակնա ժողովրդային երգերի» արժեքը, որոնք, ինչպէս հայտնի է, մեր միջնադարյան հռչակավոր «հայրենների» արձագանքներն են: Տեկանցից հետո, Սրվանձտյանցը երկրորդ բանասեր-բանահավաքն է մեզանում, որը հրատարակել է ժողովրդից գրի առնված այդ երգերի մի նոր տաղաշարք: Այդ գործը հետագայում մեծապէս լրացրին ու ամբողջացրին մեր մշտականավոր բանասերներն ու բանագետները (Մ. Աբեղյան, Արշ. Զոպանյան և ուրիշներ)¹⁶:

Բանահայտական վերահիշյալ ստեղծագործությունների (հեքիաթներ, երգեր) հետ մեկտեղ ժողովածուի մեջ կարելի է գտնել նաև ժողովրդական ավանդությունների նմուշներ: Դրանցից ուշագրավներն են՝ Մոխրաբերդ գյուղի (էջ 39—40), Անմահության ակի (71), Սհակ թռչունի (73—74), Խաչվա լճակի (75) և Կերիսա ս. Եղիշեի Լեկեղեցու մասին

¹⁵ Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, էջ 265:

¹⁶ Տե՛ս Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, Ա. Զոպանյան, Հայրեններու բուրաստան, Փարիզ, 1940:

ավանդութիւնները: Նշանակալից է մասնավորապէս Սհակ թուռնի հուղիչ ավանդութիւնը, բերված Բաղիշո գարնան ինքնատիպ ու գեղեցիկ նկարագրութեանը կից:

«Բաղշո ձորի ծառերուն վրա, ամեն իրիկուն երբ արեւ մար կը մըտնա, թփերու մեջեն մի բողբոմուկ, սեղմուկ, ամշկոտ աղջկան մը ծայնի նման, սրտի դպող շվոց մը կը լսվի.—«Սըհակ, սըհակ, սըհակ... երիցս կըկրկնվի. քիչ մը կը լռե, կըթվի թե՛ արծագանքի մը կամ պատասխանվո մը կ'սպասե, ապա անհուշս իր սպասածեն՝ կը կրկնե ու կը կրկնե—«Սըհակ, սըհակ, սըհակ»... մինչև առավոտ: Պըտըտիկ, կատարգլուխ, վախկոտ, ամշկոտ այս թռչնիկն ո՞վ է, հարցուցի բարեկամես.—Վա՛, չգիտես դու, քույր մը ու եղբայր մը եղեր են որբուկ, իրիկուն մը Սահակ իր քրորոջ ծամերը կը սանտրեր, հափշտակվեցաւ հանկարծ, արծի՞վ էր հափըշտակողն թե գաղան՝ Աստված գիտե. ճշալու ձայնին հետ, սիրտ կ'ընէ քրոջ, Աստված, ինձ հավթու թեկը տուր. թոնիմ իմ աղբրուկ գետնեմ: Աստված թե տվեր աղջկան. ու դեռ սանտրն էլ վեր գլխուն: Այն օրեն ի վեր ծառեր ու դռներ կը թափառի, լեռներ ու անտառներ կը թոփ ու կը կանչե. «Սըհակ, սըհակ, սըհակ»¹⁷:

Ինչպէս իր նախորդ ժողովածուներում, այնպէս էլ «Համուլ-հոտուլի» մեջ, Սրվանձտյանցը չի սահմանափակվել միայն բանահյուսական արժեքավոր նյութերի հրապարակումով: Դրա հետ միասին, այս կամ այն առիթով, նա արծարծել է նաեւ բանագիտական հետաքրքիր մտքեր, արել է կարեւոր դիտողութիւններ:

Խոսելով, օրինակ, բանահյուսական երգերի հորինող ու կատարող ժողովրդական «անանուն» երգիչների ու բանասացների մասին, Սրվանձտյանցը մի քանի տողով բացահայտում է նրանց ստեղծագործական խառնվածքի յուրահատկութիւնները, վեր է հանում միեւնոյն բանահյուսական երկի նմանակների ու տարբերակների առաջացման պատճառներն ու ճանապարհները, ընդգծում տվյալ բանասացի կամ երգչի կենցաղային, աշխատանքային, բնական ու հասարակական միջավայրի ազդեցությունը՝ նրա հորինած կամ կատարած ստեղծագործության բնույթի ու բովանդակութեան վրա:

«Կը տեսնվի տարբերութիւն միեւնոյն երգի, միեւնոյն հեքիաթի, որո նկարագրական մասերը կը փոփոխվին, և կը հարմարեցնեն իրենց տնկնդրաց ծանոթ նկարագիրներուն. կենցաղն՝ կենցաղին, սովորութիւնը՝ սովորութեան. դորօրինակ՝ Ակնցին՝ կամուրջի, շուկայի, պան-

¹⁷ Գ. Սրվանձտյանց, Համուլ-հոտուլ, էջ 73—74:

դըխտության, Մսրա, Հալեբի, և մինչև Փարիզի ու Ամերիկայի անունը կուտա: Խիզանցին՝ լեռն, ձոր, եղն, անտառ, հանք, և այլն կը հիշե, ինչպես պարզ կերևի մտադիր եղողին...»¹⁸:

Մի ուրիշ անգամ, անդրադառնալով ժողովրդական բանահյուսության տարբեր տիպի ստեղծագործությունների՝ գրականության մեջ պատշաճ ձևով օգտագործելու անհրաժեշտության հարցին, Սրվանձությանը վկայակոչում է Բաֆֆու օրինակը, իբրև իր ժողովրդի հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին քաջատեղյակ հայ հեղինակներից մեկի:

«Սակայն լավագույնն է գործածել վանոնը (խոսքը՝ ժողովրդական առած-ասացվածքների, հանելուկների, օրհնանքների և անեծքների մասին է—Ա. Ղ.) ազգային վկայերու կամ այլ և այլ գրությունց մեջ, զորօրինակ մեծավ հաջողականությունամբ ի գործ կը դնե պ. Բաֆֆին, գալառացի Հայ ժողովրդական հոգևույն ու մարմնույն քաջածանոթ և քաջակիր վիպասանն»¹⁹:

Հետաքրքրական են Սրվանձությանցի մտքերը հայ և բուրգ ժողովուրդների բանավոր ստեղծագործությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապի և մասնավորապես՝ «Սիամանթո և Խեղարեի» քրդական հայտնի սիրավեպի մասին:

«Քրդերը գտնվելով հայոց հետ երկրացի և կենցաղակից, շատ նյութ կ'ընծայեն հետաքրքիր եղողներուն՝ Հայոց կյանքին. և որովհետև անգիր ժողովուրդ են քրդերը, ինչպես և անոնց չափ անգիր են նաև մեր լեռնագավառացի Հայերը, ու տեղ տեղ քրդախոս, բանահավաք մը կրնա պատվական վաստակներ ձեռք բերել նույն իսկ քրդերեն հորինված երգեր ու վկայերը գրելով»: Եվ ապա. «Կուգամ հիշիլ նաև թե՛ որքան և քրդերենն կ'առնում զայս (խոսքը «Սիամանթո և Խեղարեի» մասին է—Ա. Ղ.), քայց ևս հաճախ լսած ունիմ այլ և այլ ասողներն թե՛ Սիամանդոն է հայու տղա, Սև Հարոն, իսկ Խըջե-Ջարին արդարեւ քրդու աղջիկ է, և Ջըռըդանցի անվանյալ էլին (ցեղին) մեծատան ծնունդ: Խըջե կամ կընե կը նշանակե աղջիկ, Ջարե գուցե Ջարեհ, հոր անունն է, որով կը հասկցվի Ջարեի աղջիկ, կամ Ջարուհի»²⁰:

2

Մինչև Գարեգին Սրվանձությանցի աշխատությունների հրապարակ

¹⁸ Գ. Սրվանձությանց, Համով-հոտով, էջ 118:

¹⁹ Նույն տեղում, էջ 266:

²⁰ Նույն տեղում, էջ 267—268:

գալի, այդ նյութերը մեղանում մեծ մասամբ մնում էին անհայտության մեջ, «իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները մոռացության ու անհայտության մեջ»²¹։ Հայ բանասերներն ու գրողները աղոտ պատկերացում ունեին ժողովրդի բառ ու բանի, նրա հավատալիքների, նախապաշարումների, վարք ու բարքի, ծեսերի, սովորույթների, առասպելների, ավանդությունների, հեքիաթների, վեպերի, սուրբների, առածների, երգերի, հանելուկների, օրհանգների ու անեծքների մասին։ Սրվանձությանցը առաջիններից մեկն էր հայ իրականության մեջ, որն իր հայտնաբերած, գրի առած ու հրատարակած ազգագրական-բանահյուսական հարուստ նյութերով մեծապես նպաստեց ազգագրության, բանագիտության և գրականության զարգացմանը։ Իր ժողովածուներով նա մի նոր աշխարհ բացեց բանասերների ու գրողների առաջ, առատ նյութ մատակարարելով նրանց գիտական ու գրական ստեղծագործություններին համար։

Գարեգին Սրվանձությանցի, իբրև ազգագիր-բանահավաքի կարևոր մի առանձնահատկությունն էլ այն է, որ նա գրի առնված նյութերի վրա դրոշմելով հանդերձ իր անհատականության անջնջելի կնիքը, հիմնականում հարազատ է մնացել այդ նյութերի բուն ժողովրդական բնույթին ու էությունը, պահպանել է նրանց սկզբնաղբյուրի նշանակությունը։

Գարեգին Սրվանձությանցի գրի առած բանահյուսական լավագույն նյութերը մեղանում անփոխարինելի ատաղձ են հանդիսացել բազմաթիվ բանագիտական հետազոտությունների և գրական ստեղծագործությունների համար։ Այսպես, նշանավոր լեզվաբան-բանասեր Քերովբե Պատկանյանը իր «Նյութեր հայերեն բարբառներն ուսումնասիրելու համար» խորագրով մատենաշարի 2-րդ պրակում, ուրիշ ստեղծագործությունների հետ, 1875 թ. հրատարակում է նաև Սրվանձությանցի գրի առած «Սասունցի Դավթի» պատումը, կցելով նրան Մշո բարբառի բառարանը և համառոտ քերականական ծանոթություններ նույն բարբառի վերաբերյալ²²։

Տարիներ անց, Մ. Աբեղյանը, «Սասունցի Դավթի» Սրվանձությանցի և իր գրի առած Մոկաց պատումների հիման վրա, «Մուրճ» ամսագրի մի շարք համարներում տպագրում է «Ազգային վեպ» խորագրով մի ըն-

²¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 146—147։

²² К. Патканов, Материалы для изучения армянских наречий, вып. 2, СПб., стр. 1—27.

դարձակ հետազոտություն, որի մեջ հանգամանորեն քննության է առնում վեպի պատմական և դրուցադնական հիմքերի հարցը և հարակից ուրիշ խնդիրներ²³։

Ղաղարոս Աղայանը Սրվանձությանցի հրատարակած «Յանձանուկ, Արեմանուկ» և «Իմաստուն ջուհիակը» հեքիաթների հիման վրա գրում է իր համանուն հայտնի հեքիաթները։

Հովհաննես Թումանյանը, օգտվելով Սրվանձությանցի հրատարակած համապատասխան բանահյուսական նյութերից (օգտագործելով նաև այլ սկզբնաղբյուրներ), ստեղծում է իր հուշակալվոր «Քաջ նազարը», «Փոքրիկ հրկրագործ», «Ծուլլ հնձողներ», «Արտուտիկ» մանկական գողտրիկ ոտանավորները և «Սհակ թռչուն» լեզենդը և այլն։

Գարեգին Սրվանձությանցի հրատարակած բանահյուսական նյութերը մտել են նաև մեր դասագրքերի մեջ և թարգմանվել ուրիշ լեզուներով։ Այսպես, ժամանակի ականավոր հայ մանկավարժներից Սեդրակ Մանդինյանը 1881 թ. գրական լեզվի փոխադրելով «Սասունցի Դավթի» Սրվանձությանցի գրի առած պատումը, այն ղեկեղում է «Ազգային-դիցազնական աշխարհ» վերնագրով իր կազմած դասագրքի մեջ²⁴։ Նույն թվականին Գր. Խալաթյանցը և Ար. Հովհաննիսյանը ուսանողների և գերմաներենի են թարգմանում Սրվանձությանցի պատումը և հրատարակում այն հիշյալ լեզուներով²⁵։

Գարեգին Սրվանձությանցի դրական, ազգագրական, ուղեգրական երկերը և հատկապես նրա բանահյուսական ժողովածուները բառ սրժանվուն բարձր են գնահատվել հայ մշակույթի անցյալի շատ ականավոր գործիչների կողմից։

Դեռևս 1881 թ. անվանի հայագետ Գրիգոր Խալաթյանցը, Սրվանձությանցի հրատարակած ժողովածուների առիթով, հատուկ նամակով գիմելով հեղինակին, գրել է. «Մեծ է այն ծառայությունը, որ Դուք մատուցիք և շարունակում եք մատուցանել հայ ժողովրդական գրականության Ձեր թանկագին ժողովածուներով։ ... Բավական է ասել, որ մենք հայերս մի 5—10 տարի առաջ չունենալով ժողովրդական անգիր գրականության ժողովածուներ, տեղիք էին տվել շատերին կարծելու, թե հայ ժողովուրդը չուրկ է որևէ բանաստեղծական ավանդությունից. բայց այժմ՝ շնորհիվ մանավանդ Ձեր հարուստ ժողովածուներին՝ ամենքին ականերև է, որ հայք

²³ «Մուրճ», 1889, № 10 և 11, 1890, № 1 և 2։

²⁴ Ս. Լեւոնիյան, Ազգային-դիցադնական աշխարհ, Թիֆլիս, 1881։

²⁵ Գ. Մրվանձությանց, Համով-հոտով, էջ ԺԲ—Ի։

ևս ունին ժողովրդական գրականություն, ոչինչ պակաս վսեմ, գեղեցիկ ու բանաստեղծական, քան շատ եվրոպական ազգերի գրականությունը»²⁶։

1883 թ. արտահայտվելով Սրվանձությանցի ժողովածուներից «Կայծերի» համար իր քաղած նյութերի մասին, Բաֆֆին հետևյալ կերպ է բնութագրել նրանց հրատարակչին. «Մեր գրականության մեջ ոչ ոք Սրվանձությանցի չափ չէ ուսումնասիրել և չէ հավաքել մեր ժողովրդական ավանդությունները, սովորությունները, մեր նախապաշարմունքները... նրա չորս ամենահետաքրքիր գրքերը խիստ հարուստ գանձ են մեր հնագետների հետազոտության համար»²⁷։

Այլևի ուշ, 1915 թ. անդրադառնալով Սրվանձությանցի և նրա հրատարակած բանահյուսական ժողովածուներին, Հովհաննես Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերին էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ։ «Մի Աբովյան կամ մի Սրվանձությանց,— գրել է նա,— կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»²⁸։

Սրվանձությանցի և նրա երկերի մասին նույն կերպ են արտահայտվել Ղևոնդ Ալիշանը, Ծերենցը, Սեդրակ Մանդինյանը, Մանուկ Աբեղյանը և շատ ուրիշներ։

Գաբրիել Սրվանձությանցը բարձր է գնահատվել նաև մեր օրերում։ Նրա հայտնաբերած ու գրի առած բանահյուսական մեծարժեք նյութերը, սկսած «Սասունցի Դավթից» և վերջացրած ժողովրդական հանելուկներով, իրենց պատշաճ տեղն ու գնահատությունն են ստացել վերջին տասնամյակներին մեղանում հրատարակված բանագիտական բոլոր կարևոր գործերում։

Հայ բանագիտության համար Գաբրիել Սրվանձությանցը պատմական աննախագիպ և բացառիկ դեր է կատարել, հայտնագործելով հայ ժողովրդի ստեղծած աղջային մեծ վեպի առաջին պատումը։ Այդ հայտնագործումով էր, որ մեղանում հաստատուն հիմքեր դրվեցին ոչ միայն հայոց Սասունականի բազմաթիվ նոր պատումների հայտնաբերման ու գրառման, այլև հայ էպոսագիտության հետագա զարգացման համար։

²⁶ Տե՛ս Գ. Սրվանձությանց, Համով-հոտով, էջ ԺԹ—Ի։

²⁷ «Մշակ», 1883, № 143։

²⁸ Հովհ. Թումանյան, Հայոց դեռերը, Թիֆլիս, 1915, էջ 42։ Նույնի՝ երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 377—378։

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆ

Մանուկ Աբեղյանի գիտական հետազոտության հիմնական բնագավառներին մեկը տասնամյակներ շարունակ հանդիսացել է հայ ժողովրդի դարերի խորքից եկող բանավոր ստեղծագործությունը: Վերջինիս են նվիրված գիտնականի մի ամբողջ շարք մնայուն գործեր: Դրանք հայոց լեզվի ու գրականության մասին գրված նրա բազմաթիվ աշխատությունների հետ, դասական հայագիտության կոթողներից են:

Իր հետազոտական մտքի խորությամբ, ընդհանրացումներ անելու մեծ կարողությամբ և բանասիրական աշխատանքի հմտությամբ, Աբեղյանը հայ բանագիտության ամենակարկառուն դեմքն է:

Հայագիտության տվյալ մարդու գիտնականն իր առաջին քայլերը սկսել է անցյալ դարի 80-ական թվականների վերջերին, երբ բանագիտությունը մեզանում արդեն զգալի ճանապարհ էր անցել:

Կանգնած լինելով ժամանակի հայկական, եվրոպական և ռուսական առաջավոր գիտության դիրքերի վրա և քննադատորեն ու ստեղծագործաբար յուրացնելով իր նախորդների բանագիտական ժառանգությունը, Աբեղյանը կես դարից ավելի պիղծեց, ուսումնասիրեց և մեկը մյուսի հետևից հրապարակ հանեց հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հազարամյա գանձերը և իր ինքնուրույն ու ծանրակշիռ աշխատություններով նոր, աննախընթաց աստիճանի բարձրացրեց հայ բանագիտությունը:

1

Մ. Աբեղյանի գիտական տեսագաշտում, իբրև բանագետի, առաջին հերթին կանգնած է եղել բազմադարյան հայ վիպական բանահյուսությունը իր հիմնական ստեղծագործություններով:

Գիտնականի անունը ամենից առաջ և անխզելիորեն կապված է հայ ժողովրդի ազգային մեծ էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի կամ «Սասունցի Դավիթի» հետ։ Իր հետազոտությունները սկսելով վերջինիս պատմաներից մեկի պրալմամբ (1886 թ.) ու հրատարակումով (1889 թ.)¹, գիտնականը մինչև իր կյանքի վերջին տարիները բազմիցս անդամադարձել է նույն թեմային։ Այսպես, 1889—90 թթ. «Մուրճ» ամսագրում տպագրվում է «Սասնա ծռեր»-ին նվիրված նրա առաջին ուսումնասիրությունը «Ազգային վեպ»² վերնագրով, հիմնված վեպի տպագրված հրկու պատմանների վրա։

Տարիներ անց (1906—1908 թթ.) «Ազգագրական հանդես»-ի մի շարք գրքերում հրատարակվում է Աբեղյանի «Սասնա ծռեր»-ին նվիրված երկրորդ ընդարձակ ու բազմակողմանի հետազոտությունը՝ «Հայ ժողովրդական վեպը»³ վերնագրով, հիմնված մեր վեպի արդեն հրատարակված 15 պատմանների վրա։

Ավելի ուշ (1936—51 թթ.) Մ. Աբեղյանի խմբագրությամբ և Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ հրեք մեծագիր հատորով լույս է տեսնում հայկական էպոսի առկա տպագիր ու անտիպ պատմանների գիտական հրատարակությունը՝ «Սասնա ծռեր»⁴ ընդհանուր վերնագրով։

1939 թվականին Մ. Աբեղյանը ամենագործուն մասնակցությունն է ունենում «Սասունցի Դավիթ» հաղարամյակի տոնակատարությանը, լինելով վերջինիս գաղափարի հղացողներից մեկը և վեպի համահավաք հյուսվածք բնագրի առաջին ճյուղի («Սասնասար և Բաղդասար»)՝⁵ կազմողը։

Նույն 1939 թվականին տպագրվում է գիտնականի մատենագիտական բնույթի աշխատությունը՝ «Մատենագիտություն «Սասունցի Դավիթ»

¹ Մ. Աբեղյան, Դավիթ և Մհեր, Շուշի, 1889։

² Մ. Աբեղյան, Ազգային վեպ, «Մուրճ», 1889, № 10 և 11, 1890, № 1 և 2։

³ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, արտատպված «Ազգագրական հանդես»-ից։

⁴ «Սասնա ծռեր», խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ.-Օհանջանյանի, Ա. Հատ., Երևան, 1936, Բ. Հատ., Ա. մաս, Երևան, 1944, Բ. Հատ., Բ. մաս, Երևան, 1951։

⁵ «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, կազմեցին՝ Մ. Աբեղյան, Գ. Արուլ և Ա. Ղանալանյան, խմբագրությամբ՝ տկապ. Հ. Օրբելու, Երևան, 1939։

հայ ժողովրդական վեպի մասին»⁶ վերնագրով, ուր գիտնականը տալիս է 1874—1939 թթ. վեպի մասին լույս տեսած նյութերի ու գրականության սեղմ բնութագիրն ու գնահատականը:

Սոսկական այս թվարկումն իսկ պերճախոս ցույց է տալիս այն մեծ աշխատանքը, որ կատարել է գիտնականը հայ ժողովրդի ազգային էպոսի հայտարարման, հրատարակման և հետազոտության բնագավառում: Հուանձնապես արժեքավոր է եղել նրա կատարած գործը «Սասնա ծռեր»-ի ուսումնասիրության ուղղությամբ:

Աբեղյանը եղել է և մնում է մեր վեպի ամենահմուտ հետազոտողը: Ճիշտ է, նրա հետ միասին, նրանից առաջ ու հետո, «Սասնա ծռեր»-ի մասին գրել են և ուրիշները⁷, սակայն ոչ մեկը նրա նման մանրամասն, բաղմակողմանի ու խորը չի ուսումնասիրել այն:

Հայ ժողովրդական վեպին նվիրված իր հետազոտությունների մեջ գիտնականը բացահայտել է «Սասնա ծռեր»-ի հորինման ու ձևավորման մոտավոր ժամանակը, վիպական գործողությունների ու գործողանձանց պատմական ատաղձը, առասպելաբանական-հեքիաթային մոտիվները, ցույց է տվել վեպի տարածման ճանապարհները, մանրամասն քննության է ենթարկել նրա տեղագրությունը, կապն ու հարաբերությունը հայոց հին վեպերի ու առասպելների հետ, ոտանավորի շափը (սսմունքի եղանակը), ասացողների արվեստը, վեպում արտահայտված հավատալիքները, բարոյական գաղափարները և այլն: Հարցերի այս շարքի մեջ կան այնպիսիք, որոնք արժարժել են ուրիշներն էլ, սակայն Աբեղյանը նոր և ինքնուրույն մոտեցում է ցուցաբերել դրանց նկատմամբ, ճշտել, լրացրել կամ քննադատել ու մերժել է դրանք:

Առանձնապես նշանակալից են նրա հետևությունները «Սասնա ծռեր»-ի ազգային բնույթի, յուրօրինակ բնօրրանի, ժամանակաշրջանի, պատմական, աշխարհագրական ատաղձի և ոտանավորի շափի մասին:

Մինչև Մանուկ Աբեղյանը մեզանում առաջագրված չի եղել «Սասնա

⁶ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս, բիրլիոգրաֆիա, պրակ Ա, կազմեցին Մ. Բարսյան և Ս. Միրաբեյան, ներածությամբ և խմբագրությամբ սյրոֆ. դր. Մ. Աբեղյանի, Երևան, 1939, էջ 15—23: Նույնը նաև ԽՍՀՄ գիտ. ակադ. հայկ. մասնաճյուղի հրատարակած «Սասունցի Դավիթ» հորեկանական ժողովածուի մեջ, Երևան, 1939, էջ 9—59:

⁷ Սովետական Գ., Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, Խալաթյանց Բ., Հայ ժողովրդական պոեզիայի վեպը, Վիննա, 1903, Կառայանց Ա., Ջոջանց տուն, Սասնա ծռեր վեպի պատմական, Վաղարշապատ, 1907 և այլն:

ծներ»-ի համազգային ստեղծագործություն լինելու հարցը: Նա առաջինը հավաստեց, որ մեր վեպը սկզբնապես ստեղծվելով Սասնո միջավայրում, իր մեջ եղած «կենդանի աղբային սաղմերի» շնորհիվ տարածվել է ամբողջ հայություն մեջ և դարձել է «համազգային վեպ»:

«Վեպը սկիզբն առնելով Սասունում ու Տարոնում, պատմվում է Բաղեշու և Մշու կողմերը, Խլաթում, և ապա Բուլանըխում, որտեղից անցել է դեպի Հյուսիս՝ Արձնեշ և Կաղզվան, ուր XVIII դարում արդեն կապված է եղել որոշ տեղի հետ: Այնուհետև մտած է Այրարատի, էջմիածնի գավառը, ուր տեղացիներն արդեն յուրացրել են և արեւելյան բարբառով հն պատմում: Վեպը ընտանի է Արագածի լանջերում, Աբարանում: Մյուս կողմից՝ Շատախի, Ռշտունյաց ու Մոկաց կողմերում, ուր վեպն այժմ ավելի կենդանի է, անցել է Վան՝ կապվելով Մհերի դռան հետ, և այնտեղից Աբաղայի դաշտով մտել է Պարսկահայք, հատկապես խոյի և Մակվա կողմերը, ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողության տեղերը», — գրել է նա այդ առթիվ⁸:

Աբեղյանը հավաստել է նաև «Սասնա ծներ»-ի բուն ժողովրդական, գեղջիկական ստեղծագործություն լինելու հանգամանքը: Տակավին 1890 թվականին, նա նշել է, որ՝ «Սասնու տերերը հանդիսանում են իբրև ժողովրդի սիրելի, աղնիվ տիպեր, որոնց գլխավոր ուշ ու միտքը նորա վերա է դարձրած, որ իրանց երկիրը պաշտպանեն օտար բռնությունների դեմ: Մտա մեկիքները, ընդհակառակը, ժողովրդի համար սիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեփական ժողովրդի վերա բռնություններ են իշխում»⁹:

Ավելի ուշ, 1906 թվականին անդրադառնալով նույն խնդրին, Աբեղյանը գրել է. «Վեպը թեպետ և պատմում է Սասնու տերերի հայ ազնվականների և իշխանների մասին, բայց գրեթե ոչ մի ազնվական բան չունի իր մեջ, այլ աղնվական և նույնիսկ թագավոր անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Վեպն ամբողջապես ռամկական, գեղջիկական բրնավորություն ունի (ընդգծումը մերն է — Ա. Ղ.). հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք տեսնում այնտեղ, նրա նիստ ու կացը, պարապմունքը, բարքերը և այլն»¹⁰: Եվ ապա. «Ասացողները իրենց կյանքն ու

⁸ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը (տե՛ս «Աղագորական հանդես», 13-րդ դիրք, 1906, № 1, էջ 18):

⁹ Մ. Աբեղյան, Աղբային վեպ (տե՛ս «Մուրճ», 1890, էջ 39):

¹⁰ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը (տե՛ս «Աղագորական հանդես», 13-րդ դիրք, 1906, № 1, էջ 22):

հոգին են պատկերացրել վեպի մեջ և մենք այնտեղ գտնում ենք մեր գյուղացու կյանքի բազմազան կողմերը բավական մանրամասն և սիրով նկարագրված»¹¹;

Հայ բանագիտության մեջ առաջին անգամ Աբեղյանի կողմից է դրվել ու լուսաբանվել նաև «Սասնա ծռեր»-ի բնօրրանի կարևոր հարցը:

Խոսելով այն մասին, թե երբ և որտեղ է հորինվում վեպն ընդհանրապես, գիտնականը գրել է. «Դիցաբանական-պատմական վեպերի համար հարկավոր է իրական կյանքից վերցրած սխրագործական նյութ. հարկավոր են ժողովրդական հերոսներ, որոնք արժանի լինեն ժողովրդական ընդհանուր սքանչացմանը, և ժողովուրդն իր հափշտակության րոպեներում մոռանալով պատմեր և երգեր նրանց արարքների մասին»¹²:

Եվ ապա. «Ամեն ազգի մեջ ևս մի որևէ կամ մի քանի նշանավոր պատմական դիպված առաջ են բերում վիպական բանաստեղծություն. և այս կամ այն վեպը ծնունդ է առնում մի որոշ տեղում, որ ավելի շահագրգռված է պատմական դեպքով»¹³:

Անդրադառնալով իր բուն խնդրին, Աբեղյանը մի ան մի թվում է այն հասարակական-քաղաքական, գաղափարական, աշխարհագրական, կուլտուր-պատմական գործոնները, որոնց ազդեցությամբ պայմանավորված է վեպի ծնունդը տվյալ միջավայրում: Այդ գործոններից մեկը, նրա համոզմամբ, եղել է սասունցոց ինքնամփոփ, պահպանողական կենսաձևը, որ շատ կարևոր է դուրսագնական վեպերի պահպանման ու հարստեման համար: «Մոկացոց և Սասունցոց բերնից:— գրել է նա,— բնական է, որ մենք լսեինք հին դուրսագնական վեպի մնացորդներ, այն պատճառով, որ Հայաստանի այդ կողմերի ժողովուրդը միակ ժողովուրդն է, որ առանձնացած, ինքնուրույն կյանքով է ապրել, որի մեջ քաղաքակրթական դարգացումը ոչ միայն հնումը, այլև նորումս դեռ ոտք չի դրել»¹⁴:

Մյուս գործոնը գիտնականը համարել է այն, որ Սասունը և Տոթոսի լեռները՝ վանա լճի հարավային կողմերում, Հայաստանի այն սակավաթիվ վայրերից մեկն է եղել, «ուր ավերմունքն այնքան մուտք չի գործել, և ուր աղգային անկախության կտրիճ ոգին կենդանի է մնացել քիչ ու շատ»¹⁵:

¹¹ Նույն տեղում, 14-րդ գիրք, 1906, № 2, էջ 55:

¹² Մ. Աբեղյան, Ազգային վեպ (տե՛ս «Մուրճ», 1889, № 10, էջ 1594):

¹³ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 17—18:

¹⁴ Մ. Աբեղյան, Ազգային վեպ (տե՛ս «Մուրճ», 1889, էջ 1749—1750):

¹⁵ Նույն տեղում, էջ 1596:

Նրա կարծիքով՝ «Սասունցիք ունեցել են իրանց վեպերի համար նյութ, որովհետև նրանք հերոսական կոիվներ են տվել թուրքերի և թաթարների դեմ ... Նրանք պահել են իրանց հին վեպերը, որովհետև իրանց հայրենիքում են մնացել և շնորհիվ իրանց երկրի ամուր դրուժյան, առանձնացած կյանք են վարել և սրահպանել են ազգային առանձնահատկությունները»¹⁶։

Մ. Աբեղյանի տված վերոհիշյալ բացատրությունները ըստ ամենայնի հիմնավոր են։

Հիշված գործոնները այն «հնությունն ու հասարակական ձևերն» են (Կ. Մարքս), առանց որոնց չեն կարող ստեղծվել ու հարատևել դյուցազնական վեպերը։

«Սասնա ծռեր»-ի հետ կապված կարևոր հարցերից մեկը, որ բացահայտել է Մ. Աբեղյանն իր ուսումնասիրությունների մեջ, վեպի գոյատևման ժամանակի կամ, իր խոսքով ասած, «հնության» հարցն է։

Ճիշտ համարելով Սրվանձոյանցի դիտողությունը «Սասնա ծռերի» առաջին և վերջին ճյուղերի ծագման ժամանակի մասին, ըստ որի դրանք՝ «Քրիստոսից առաջ կատարված դեպքեր են»¹⁷, Աբեղյանը դարգացնում ու խորացնում է բանիբուն բանահավաքի հարևանցի այդ տկենարկը։ Նա «Սասնա ծռերի» առաջին մասի («Սանասար և Բաղդասար» ճյուղի), որոշ չափով նաև վերջին մասի («Փոքր Մհեր») հնությունը կապում է Հայաստանի պատմության սեպագրական ժամանակների հետ։ Գիտնականի կարծիքով, հենց այդ ժամանակներում էլ (մեր թվականությունից մոտ ութ դար առաջ) պետք է ապրած լինեին և վեպում հիշվող Սենեքերիմի որդիները՝ Սանասարն ու Բաղդասարը (=Աբամելիքը)¹⁸։

«Սակայն վեպի երեք ճյուղերն ևս միատեսակ հնություն չեն վերցում,—գրում է գիտնականն այդ առթիվ և անմիջապես շարունակում է,—Աբամելիքի և Մհերի ճյուղերն ավելի հին են երևում, այնինչ Դավթի ճյուղը՝ համեմատաբար ավելի նոր ... որն իբրև հատված մտել է Աբամելիքի և Մհերի ավելի հին վեպերի մեջ, որոնք սեպագրական ժամանակների հետ են կապված թե տեղով, թե անուններով ու անցքերով»¹⁹։ Եվ քիչ անց ավելացնում. «Բայց և այնպես չի կարելի ասել, թե Դավ-

¹⁶ Նույն տեղում։

¹⁷ Սրվանձոյանց Գ. Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1894 (Առաջարան)։

¹⁸ Մ. Աբեղյան, Ազգային վեպ, «Մուրճ», 1889, էջ 1747։

¹⁹ Նույն տեղում, էջ 1747։

թի վեպը բոլորովին նոր է... Այդ վեպի հնության ամենից գլխավոր ապացույցը հենց այն է, որ նա իր բոլոր մանրամասնություններով կատարյալ դուրսգաղնեղություն է, և ոչ զուտ պատմական վեպ»²⁰:

Իր տեսակետը Աբեղյանը հիմնավորում է վեպի նշված էջերի, մասնավորապես «Սասնա սար և Բաղդասար»-ի պատմության ամբողջ ընթացքը և այդ պատմության մեջ երևան եկող գործող անձերն ու աշխարհագրական վայրերը հանգամանորեն համեմատելով ու զուգահեռելով՝ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի և սրա Աղրամելիք ու Սանասար անուններով որդիների վերաբերյալ հղած բերլիական հայտնի ավանդազրույցի բովանդակության ու անունների հետ, որ առկա է նաև Մ. խորենացու և Թ. Արծրունու «Պատմություն»-ներում:

Վեպի Աբեղյանի կատարած հետազոտությունների ոլորտում հիմնական ու էական տեղ են գրավում նրա պատմաաշխարհագրական պըրպըտումները: Նա ամենայն մանրամասնությամբ քննության է առնում «Սասնա ծռեր»-ի տեղայնացման և պատմական ատաղձի կարևոր խընդիրները և անում իր ուշագրավ հետևությունները: Դրանցից առաջինն այն է, որ՝ «Աշխարհագրական հայտնի անունները, որ կան «Սասնա ծռեր»-ի ծանոթ պատմվածքներում ... պարզ ցույց են տալիս, որ վեպի ամեն մի գործողություն կապված է որևէ տեղի հետ, որ իրապես կա և մեր երկրի պատմության մեջ մի դեր է կատարել հատկապես այն շըրջանում, երբ Սասունը նշանավոր է հանդիսացել»²¹:

Երկրորդ հետևությունն այն է, որ՝ «... Մեր ժողովրդական վեպն յուր մեջ պահում է պատմական հիշողություններ մեծ մասամբ 9-րդ դարու կեսից մինչև 13-րդ դարը»²²: Եվ որ՝ «Հաջորդ դարերը միայն անունների ու մասամբ դեպքերի փոփոխություն են մտցրել վեպի էական կողմի մեջ»²³:

Վեպի Դավթյան ճյուղի միջուկը, ըստ Աբեղյանի, կազմում է Սասունի պատմությունը IX դարի երկրորդ կեսին: «Այս ժամանակ ահա կատարվում է Սասունի պատմության մեջ հայտնի այն եղերական դեպքը, որ ցնցում է ամբողջ Հայաստանը, որ և արժանանում է ժողովրդական զրույցների և մեր պատմագիրների ուշադրությանը: Դա է հարկահանության համար կոխը, որ կազմում է վեպի պատմական միջուկը»²⁴:

²⁰ Նույն տեղում, էջ 1748:

²¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, էջ 67:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 92:

²⁴ Նույն տեղում:

Պատմաաշխարհագրական մանրագնին հետադոտությունների արդյունք հանդիսացող այս հետեւություններով վերջնականապես ճշտվում է վեպի տեղագրութունը, որոշվում նրա պատմական հիմքը և հաստատվում այն ճշմարտությունը, որ «Սասնա ծռեր»-ը հղել է հայ ժողովրդի բուն աղգային վեպերից մեկը, որի մեջ ալլափոխված ձևով արձագանք են գտել VII—X և հետագա դարերում նրա մղած աղատագրական կոիվները՝ Բաղդադի խալիֆների, մսրամիլիքների և ուրիշների դեմ: Մինչև Աբելյանի քննության առարկա գործերի լույս տեսնելը, այս ուղղությամբ մեղանում կատարված պատմաբանասիրական պրպտումները (Բ. Խալաթյանի, Ստ. Կանայանցի և այլոց), պարունակելով հանդերձ առանձին ճշմարտացի կռահումներ, դիտողություններ ու հզրակացություններ, ընդհանուր առմամբ քիչ հիմնավորված, բավական տարտամ, հաճախ կամայական կամ պատահական լինելու հետեանքով, չէին լուծում վեպի աշխարհագրական տեղայնացման և պատմական հիմքի կարևոր հարցերը:

Անհրաժեշտ է հիշատակել նաև Աբելյանի նշանակալից գիտական ծառայությունը «Սասնա ծռեր»-ի ոտանավորի բնույթի ու առանձնահատկությունների բացահայտման գործում: Իր «Դավիթ և Մհեր» պատումի առաջաբանում (1889 թ.), ապա նաև «Հայոց լեզվի տաղաչափություն» (1933 թ.) նշանավոր ուսումնասիրության մեջ, հանգամանորեն քննության առնելով վեպի տվյալ կողմը, բանագետն ապացուցում է, որ «Սասնա ծռեր»-ը զրեթև ամբողջապես ոտանավոր է, ճիշտ նույն չափով, որով հորինված են նրա մեջ առկա երգային հատվածները: Անդրադոտնալով այդ ոտանավորի էական կողմերին, նա գտնում է, որ վեպի պատումների մեծ մասը «յամբական պարզոտնյա աղատ ոտանավոր է անապետի խառնուրդով և անապետյան աղատ ոտանավոր յամբի խառնուրդով»²⁵: Աբելյանի հավաստմամբ այդ ոտանավորները «սովորաբար միմյանց հետ խառն գործ են ածվում անխտիր, բայց իրենց թվով իշխող են յամբական տողերը: Հաճախ դրանց հետ միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապետյան տողեր, և երբեմն նույնիսկ յամբական տողեր աղատ ոտերի (աղատ տակտերի) խառնուրդով, այլև պատահում են տողեր, որոնց մեջ յամբերն ու անապետները հավասարաթիվ են, կամ որոնք ունեն 5 5 /5=3 2 կամ 2 3/, կամ մի այլ անդամավոր կազմություն, ինչպես և 4 3 3=2 2 3 3...»: Նա միաժամանակ դի-

²⁵ Մ. Աբելյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 360—370: Նույնի՝ «Դավիթ և Մհեր», Շուշի, 1889 (Առաջարան):

տում է, որ «վկայի պատումների մեծ մասի ուղիղության ոտքը լսելի է ավելի պատմական ու նկարագրական հատվածների, ինչպես և երգերի մեջ»²⁶։

«Սասնա ծռերի»-ի ոտանավորի շափի էական կողմերը պարզելուց բացի, բանագետը նկատել է նաև այդ ոտանավորի՝ խորենացու Պատմության մեջ բերված բանահյուսական բառացի հատվածների ոտանավորի հետ ունեցած նմանությունը կամ նույնությունը։

«Հավ ուշադրություն դարձնողը,—գրել է նա,—կտեսնի որ արդի ժողովրդական վկայի (իմա «Սասնա ծռեր»-ի—Ա. Ղ.) ձայնական տաղաչափությունը, որ բոլորովին նոր է մեր բանահյուսության մեջ, շատ մոտ է մեր հին հեթանոսական վկայերի շափին («Երկնէր երկին» և մյուս հատվածները խոր. Պատմության մեջ)»²⁷։

«Սասնա ծռեր»-ի ոտանավորով հորինված լինելու հանգամանքը հավաստելով, Աբեղյանը դրանով իսկ ապացուցել է, որ մեր վեպը ձևական կողմից պահպանել է իր ժանրային նկարագիրը, այլ խոսքով՝ շափածո էպոսը չի վերածվել արձակ հեքիաթի, ինչպես լինում է սովորաբար, երբ այդ էպոսը ժամանակի հոլովումով, քայքայման է ենթարկվում։

Հայոց հին «Վիպասանքի» ոտանավորի «Սասնա ծռեր»-ի ոտանավորի հետ ունեցած նմանության փաստը արձանագրելով, Աբեղյանը դրանով իսկ բացահայտել է մեր վիպական բանահյուսության մեջ հիշված ուղղությամբ գոյություն ունեցող ավանդույթի դարավոր հարատևման ուշագրավ հանգամանքը։

Մ. Աբեղյանի ուշադրությունը «Սասնա ծռեր»-ի նկատմամբ չեն սահմանափակվել միայն վերջինիս համակողմանի ուսումնասիրության խնդիրների շրջանակով։ Նա առաջիններից մեկն է եղել մեզանում, որ լավ ըմբռնելով, թե ինչ մեծ գանձ և ինչպիսի շնորհակալ ու ազնիվ նյութ է ներկայացնում իրենից մեր վեպը, առաջ է քաշել նրա գրական մշակման անհրաժեշտության կարևոր խնդիրը, լրջորեն հաշվի առնելով այդ գործի ողջ դժվարությունը։ «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վեպը,—գրել է նա այդ առթիվ,—որ մերն է, մեր սեփականը, մեր ազգի դարավոր պատկերը... Ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով, և երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նյութը նույն ժողովրդական

²⁶ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 360—370։

²⁷ Մ. Աբեղյան, Դավիթ և Մհեր, Շուշի, 1889 (Պաշարան)։

(ընդգծումը մերն է—Ա. Ղ.) ոգով մշակե գեղարվեստորեն, դա կլինի մեր աղգային բանաստեղծության մարդարիտը...»: Եվ ապա, «Այդ հանճարը խմելով հայրենի կենդանի աղբյուրից, ինչպես Դավիթն իր հայրենական անմահական աղբյուրի ջուրը, մի անգամից պիտի աճի, հսկայական դառնա և մեր աղքատիկ գրականությունը այդ ուժով ու զորությամբ պատռի ու ճանապարհ բանա ընդհանուր աղբերի գրականության մեջ, ինչպես Սասնա փորձրիկ գետը, որ լեռներից իջնելով՝ գալիս զարկում էր անագին գետի մեջ, «ու կը կտրեր զէջ գետ, ու կը շերտեր շուրի մեշտեղ, ու հպամ լե կը խառնվեր մեջ էջ գետին ու կերթեր»²⁸:

Պատկերավոր այս ղուգադրության մեջ երևան է եկել մի կողմից հայրենասեր գիտնականի խորը գիտակցությունը իր ժողովրդի աղգային հոյակապ հուշարձաններից մեկի գաղափարային և գեղարվեստական մեծ արժանիքների մասին, մյուս կողմից՝ բացահայտված է նրա լուրջ մտահոգությունը հայրենի գրականությունը միջաղգային լայն ճանապարհ դուրս բերելու ուղղությամբ²⁹:

2

Հայ վիպական բանահյուսության բնագավառում Աբեղյանի կատարած հետազոտությունները շեն սահմանափակվել միայն «Սասնա ծռեեր»-ով և առասպելներով: Պակաս նշանակալից չէ բանագետի երախտիքը նաև հայ ժողովրդի հին վեպերից մեկի հայտնաբերման և վերականգնման գործում: Մեր խոսքը «Պարսից պատերազմ» կոչված վեպի մասին է:

Քաջածանոթ լինելով ժողովրդական բանահյուսության բովանդակության ու արվեստի առանձնահատկություններին ընդհանրապես և հայ վիպական բանահյուսության ընդհանուր ոգուն ու ոճին մասնավորապես, Աբեղյանը հաջողությամբ կարողացել է վերականգնել հիշյալ վեպերի նկարագիրը, արտածելով այն մեր մի շարք հնագույն պատմագրական

²⁸ Մ. Աբեղյան. Հայ ժողովրդական վեպը, էջ 211—212:

²⁹ Ավելորդ չենք համարում այստեղ հիշատակել «Սասնա ծռեր»-ը դրական մշակման ենթարկելու Աբեղյանի փորձի մասին, որ նա կատարել է անցյալ դարի վերջերին: Դիտենականի անձնական արխիվում պահպանված վեպի վերամշակած հատվածները ուղադրավ են հատկապես վեպի աղգային-ժողովրդական ընդհանուր ոգուն ու ոճին ունեցած իր հաբազատությամբ:

հուշարձաններից, վերջիններիս մեջ պահպանված (այլափոխված ու մըշակված ձևով) առանձին վիպական սլուծեաների, մոտիվների, պատումների ու զրույցների հիման վրա, հիմնական գծերով պարզել նրա կառուցվածքն ու բովանդակությունը:

Գիտնականն ամենից առաջ անդրադարձել է «Պարսից պատերազմ» պայմանական անունը կրող ժողովրդական վեպի մատենագրական աղբյուրներին (Ագաթանգեղոս, Բուզանդ, Խորենացի, Սեբեոս), բանասիրական միջոցներով որոշելով, թե ո՞ր աղբյուրի մեջ, ի՞նչը և ինչպե՞ս է պահպանվել այդ վեպից: Նա այնուհետև մի առ մի վերականգնում է վեպի սերունդները կամ «ճյուղերը» (1. Խոսրով, Մամիկ-Նոնակ, 2. Տրդատ, Արտավազդ, 3. Խոսրով, Վաչե, 4. Տիրան և Արշակ, 5. Պապ և Վարազդատ, Մուշեղ, 6. Մանվել, Արշակ), որով և նա մոտավորապես պարզում է հիշված վեպի ընդհանուր բովանդակությունը³⁰:

Անդրադառնալով «Պարսից պատերազմի» «միության կենտրոնին», Աբեղյանը նշում է, որ այդ «միությունը» տվյալ դեպքում հայոց և պարսից մեջ տեղի ունեցող երկարատև պատերազմն է, որի շուրջը պատմվում են սերունդների հաջորդությամբ բաղմաթիվ վեպեր, ճիշտ այնպես, ինչպես Շահնամի միությունը կազմում է Իրանի և Թուրանի կռիվը. որ իրար հետ կապում է բաղմաթիվ միմյանց հաջորդող սերունդների մասին պատմված տարբեր վեպեր³¹:

Ամփոփելով իր դատողություններն ու դիտողությունները «Պարսից պատերազմի» մասին, Աբեղյանը գալիս է այն եզրակացության, որ «Մենք ունեցել ենք մի հին մեծ ազգային վեպ, որ արդեն պատրաստ է եղել 5-րդ դարում, պատրաստ՝ ոչ այն մտքով, թե միակերպություն ստացած մի որոշ հաստատուն պատմվածք է եղել, այլ բաղմաթիվ ու բազմադան զրույցներ, մեծ մասամբ իրարից անկախ խմբված են եղել Պարսից պատերազմի շուրջը և պատմվել մի քանի սերունդների վրա, հաճախ միևնույն միջադեպերը մի հերոսից մյուսին տրվելով կամ երկուսի, երեքի վրա ևս պատմվելով³²:

Ավելի ուշ Աբեղյանը որոշում է նաև «Պարսից պատերազմ» վեպի չափածո լինելու հանգամանքը և ըստ այսմ տողատում այն. «Թեպետ պատմագիրները (Բուզանդ և Ագաթանգեղոս) մեր երկրորդ հին վեպի

³⁰ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, էջ 103—114, 117—124:

³¹ Նույն տեղում, էջ 124:

³² Նույն տեղում, էջ 147:

իսկական բնագիրը ճշտությամբ չեն բերել,—գրել է նա այդ առթիվ,—
բայց կան մոտավորապես բառացի կտորներ, ուստի և ոտանավորը դեռ
տեղ ունի նրանց գրքերի մեջ, կամ ճիշտ ասած, վեպի ոտանավորներն
ամբողջությամբ չեն վերածված արձակի: Չափածոությունը պարզ երևում
է նրանց շատ տողերի մեջ: Ոտանավորի չափը նույնն է, ինչ որ նաև մեր
բազմաթիվ հոգևոր երգերի և Վիպասանքի մեջ, այլև «Սասնա ծռեր»-ի
ու վիպական երգերի»³³: «Պարսից պատերազմ» վեպի գոյությունը Աբեղ-
յանը հիմնավորում է մի ուրիշ եղանակով ևս: Մոտենագրական համա-
պատասխան սկզբնաղբյուրների հիման վրա վեպի ընդհանուր ուղղա-
գիծը սահմանելուց հետո, նա որոնում է այդ վեպի մնացորդները հե-
տագա շրջանի գրավոր ու բանավոր հուշարձաններում, ելնելով այն
հանգամանքից, որ՝ «ժողովրդի մեջ հին լրույցները հեշտությամբ չեն
մոռացվում»³⁴:

Այդ մնացորդները բանագետը գտնում է ամենից առաջ VII և հե-
տագա դարերի մի քանի հայ պատմիչների (Սեբեոս, Հովհան Մամիկոն-
յան, Մովսես Կաղանկատվացի, Ստեփանոս Օրբելյան), և ապա՝ VIII
դարի կեսերին և IX դարի սկզբներին ապրած մի արաբացի մատենա-
գրի (Էլ-Վակիդի) մոտ և, վերջապես՝ մեր նոր վեպի, «Սասնա ծռեր»-ի
մեջ:

Սեբեոսի և Հովհան Մամիկոնյանի մոտ նա գտնում է, օրինակ, Մա-
միկոնյանց նախնի եղբայրների Հայաստան գալու, Վահանի, Վարդանի և
Մուշեղի մասին լրույցները, Դեմետրի և Գիսանեի պատմությունը, հյու-
սիսական ազգերի դեմ կռիվը և այլն. Կաղանկատվացու և Օրբելյանի
մոտ՝ Սյունյաց Անդոկի և Բաբելի զրույցը, Էլ-Վակիդիի մոտ («Միջա-
դետքի և Հայաստանի նվաճման պատմությունը» գրքում)՝ հին վեպի եր-
կու հերոսներին՝ Մուշ(եղ)ին և Բակուրին, «Սասնա ծռեր»-ի մեջ այդ զըլ-
խավոր գործող անձանցից Շապուհ արքային, Մուշեղին, Պապին, այլև
հին վեպի ընդհանուր ոգին (անկախության պաշտպանում, հարկի խըն-
դիր և այլն)³⁵:

Զբավականանալով «Պարսից պատերազմ»-ի վերականգնումով և
ներա մնացորդների հայտնաբերումով, Աբեղյանը ցույց է տալիս նաև դա-
րերի ընթացքում այդ վեպի կրած փոփոխությունները: Նրա կարծիքով,

33 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հտ. Ա, Երևան, 1944, էջ 249:

34 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, էջ 126:

35 Նույն տեղում, էջ 141—149:

«Պարսից պատերազմ»-ի Մուշեղի ճյուղը հատկապես ապրել է Տարոնում և ստացել է տեղական բնավորություն: Կաղմվել է մի նոր վեպ «Տարոնո պատերազմ»: Այնուհետև այս վեպն արաբացոց ժամանակի ազդեցությամբ փոփոխություն է կրել: Պարսից դեմ կռիվը դարձել է արաբացոց դեմ: Վեպն այնուհետև IX դարու երկրորդ կեսին Սասունում և Տարոնում տեղի ունեցած ղեպքերի ազդեցության տակ բոլորովին կերպարանափոխ է եղել և ապա հաջորդ դարերի ազդեցությունը ևս կրելով, գլխավորապես մինչև XIII դարը, կաղմվել է մեր նոր վեպը: Տարոնո պատերազմը պարսից դեմ դարձել է Սասնա կռիվ Մարա Մելիքի դեմ: Հին անունները կամ մոռացության են տրված շատ հին միջադեպերի հետ, կամ թե, ինչպես Մուշեղ, Պապ և Շապուհ՝ արքան, ետ են մղված նորերի առաջ: Այդ կերպարանափոխությունը կատարվել է մեկ այն պատճառով, որ Սասունն անբաժան է եղել Տարոնից, մեկ էլ որ Սասնու IX—XIII դարու ղեպքերը նման են եղել հին վեպի մեջ պատմվածներին»³⁶:

Աբեղյանը «Պարսից պատերազմ» վեպի ստեղծումը իրավացիորեն կապում է մեր ժողովրդի պատմական անցյալի մի շրջանի հետ (II—V դարեր), որը հատկապես հարուստ է եղել ռազմաքաղաքական կարևոր իրադարձություններով և հերոսական դրվագներով, երբ հրապարակի վրա են դրված եղել նրա անկախության ու ազատության, քաղաքական ու կուլտուրական ինքնորոշման հարցերը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդպիսի պատմական շրջաններում են սովորաբար ստեղծվել ժողովուրդների կյանքում ազգային-դյուցազնական մեծ վեպերը:

3

Վեպի նման հայ վիպական բանահյուսության հնագույն և կարևոր ստեղծագործություններից են նաև ժողովրդական առասպելները: Դիցաբանական-դյուցազնական այդ ստեղծագործությունների արմատները թաղված են հայ ժողովրդի վաղնջական պատմության խորը շերտերում և լուսաբանում են այդ պատմության գրավոր աղբյուրներում չարձանագրված շատ մութ կետեր:

Մանուկ Աբեղյանը նաև հայ ժողովրդական առասպելների ամենահմուտ հետազոտողն է: Նա հիմնավորապես ղբաղվել է այդ առասպելների ուսումնասիրությամբ, իր խորաթափանց մտքի լուսարձակով լու-

³⁶ Նույն տեղում, էջ 147:

սավորելով դրանց հետ կապված բանասիրական վիճելի ու մութ հարցերը:

Հայկական առասպելների թուումնասիրությանն է նվիրված բանագետի «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» վերնագրով հանգամանալից ու ծավալուն հետազոտությունը: Այն նախապես տպագրվել է էջմիածնի «Արարատ» ամսագրի 1898—1899 թթ. մի շարք համարներում և ապա արտատպվել առանձին գրքով (1899 թ.):

Հեղինակն այստեղ գիտական սուր քննադատության է ենթարկում մեզանում արտահայտված այն կարծիքը, որի համաձայն Խորենացու «վեպ» կոչված աղբյուրները իբր թև ինքնագիր են և շինծու, որ «վեպ» անվան տակ նրա մոտ «ծածկված» են մի ամբողջ շարք զանազան թարգմանական և գրավոր հիշատակարաններ, որոնք և Խորենացու իսկական, բայց «թաքցրած աղբյուրներն» են: Ըստ նույն կարծիքի՝ Խորենացու հաճախակի հիշատակած «հայոց վեպը» «սովորաբար գրքային ծագում ունի և մեծ մասամբ Աստվածաշնչի մոտիվների շատ ու քիչ ճարպիկ փոխադրոթումն (искусная переработка) է, որ հենց իրեն պատմագրի գրչին է պատկանում»³⁷:

Մ. Արեղյանը բազմաթիվ կովաններով ապացուցում է, որ Խորենացու Հայոց պատմության մեջ հիշված առասպելներն ու վեպերը իրոք եղել են հայերի մեջ, և որ՝ «Խորենացին կամ ինքն անձամբ, կամ յուր աղբյուրների միջոցով օգտվել է հայ ժողովրդական առասպելներից»³⁸:

Իր հայեցակետը բանագետը հիմնավորում է պատմահոր մի շարք ակնարկների ու վկայությունների և նրա օգտագործած բանահյուսական նյութերի բազմակողմանի ու խոր վերլուծումով, հատուկ քննության նյութ դարձնելով յուրաքանչյուր առանձին խնդիր, ամեն մի փաստ ու բառ: Նա նախ և առաջ հանդամանորեն հետազոտում է Խորենացու Պատմության մեջ եղած բանահյուսական տերմինները (վեպ, Զրույց, վիպասանք, Առասպելներ, Երգեր, Երգք վիպասանաց), մերժում վերջիններիս՝ էմինի, խալաթյանի և այլոց կողմից տրված սխալ մեկնությունները և ճշտում այդ տերմինների բուն իմաստն ու նշանակությունը: Նույն կերպ նա քննության նյութ է դարձնում մի քանի բառերի ու դարձվածքների (Բան, Բանք, Երգք բանիցն, Երգարանք բանավորք, Բան երգոցն,

37 Г. Халатянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, М., 1896, стр. 342.

38 Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899, էջ 594:

ի Բանսն՝ որ զնմանէ, Բան ի նմանէ, Ասել, Վիպասանք, Երգք վիպասանաց, ի թիւ ասել, Թուել, Թուելեաց երգք) նշանակութիւնը հոգեկանացու Պատմութեան մէջ³⁹:

Աբեղյանը պարզում է նաև քերթողահոյ հայացքն առասպելի մասին:

Նա գտնում է, որ հոգեկանացու աշխի՝ «ըստ ժամանակի հասկացողութեան, ամեն մի գրաւոր հիշատակարան, թեկուզ անվավեր մի գրքովածք, որովհետև յուր մեջ հավատալի բան ունի, ավելի մեծ արժեք ունի, քան թե առասպելը, որը, եթէ չէ մեկնված և միջի «հավաստին» առած, նույնիսկ սուտ պատմութիւն է համարուած: Եվ որովհետև հոգեկանացին պատմութիւն է գրում և ոչ թե առասպելաբանութիւն, ուստի և որքան կարելի է քիչ, այն էլ հաճախ «մեկնելով» է օգտուում առասպելներէ, որպէսզի մի՞ գուցէ յուր գրած պատմութեան արժեքն ընկնի առասպելներով»⁴⁰:

Շարունակելով իր հետազոտութիւնը, Աբեղյանը մի առ մի վերլուծում է հոգեկանացու Հայոց պատմութեան մեջ բերված Վահագնի (96—175), Հալկի (176—258), Անգեղ Տորքի (159—283), Տիգրանի (379—510), Շամիրամի (510—549) և Վարդգեսի (550—568) առասպելները, վիպասանքի պատմականացումն և առասպելական կողմերը (283—379) և այլն:

Հալկի ու Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Անգեղ Տորքի, Վահագնի պատմութիւնները, նրա կարծիքով, դիցաբանական կամ դիցազնական առասպելներ են՝ շատ շնչին պատմական գույն ստացած: Նույն բովանդակութիւնն են ունեցել, ըստ գիտնականի, սկզբնապէս և Տիգրանի ու Աթաղահայի, Արտավազդի ու Արգավանի կողմերը և Վիշապ Արտավազդի շղթայվելը Մասիսի մէջ:

Պատմական հիշողութիւնները բանագետի հավաստմամբ սկսվում են Արտաշատի հիմնադրումից (180 թ. մ. թ. ա), հայոց բնիկ, հարազատ և առաջին թագավորութեան հիմնադիր Արտաշեսից (Ա): Այնուհետև ժողովուրդը երգել և պատմել է նրա մերձավոր հաջորդ ու զավակ Մեծն Տիգրանին (ծնված շուրջ 140 թ. մ. թ. ա.), սրա որդի Արտավազդի և թոռան՝ Արտաշեսի (Բ) պատմութիւնները և նրանց հարաբերութիւնը մարաց հետ: Այս բնիկ հարստութեան հիշողութիւնների վրա ավելացել են

³⁹ Նույն տեղում, էջ 10—27, 28—70:

⁴⁰ Նույն տեղում, էջ 94—95:

Միհրդատի, Հրադամիւղի և Արշակունյաց հարստութեան հիմնադիր Տրդատ Ա-ի պատմութեանց հիշողութեանն: Վերջին պատմական հիշողութեանն է Տրդատ Ա-ի ժամանակ ալանների արշավանքը (72 թ. մ. թ.):

Պատմաառասպելական երգերն ու զրույցները Աբեղյանը բաժանում է երկու շրջանի.

ա) Տիգրանի շրջան, որին վերաբերում են և Վահագնի ու Վարդգեսի առասպելները, ամպրոպային Վահագն՝ Տիգրանի որդի դարձած, իսկ Վարդգեսը նրա հոր՝ Երվանդի փեսա:

բ) Արտաշեսի շրջան, որին վերաբերում են և Սանատրուկի, Երվանդի, Արտավազդի ու Արգաշանի առասպելները. Այս պատմութեաններն արդեն միացած են եղել և մի ամբողջականութեան են կազմել իբրև հայոց «Վիպասանք», թեպետ և կարող էին նույն Վիպասանքի առանձին միջադեպերն իբրև անկախ զրույց և երգ ևս պատել թե՛ ժողովրդի և թե՛ վիպասանների մեջ:

Աբեղյանը գտնում է, որ Տիգրանի և Արտաշեսի շրջանները վիպական ոգու համեմատ, ձգտել են միանալու, կենտրոն ունենալով մարերի, որ է վիշապազանց հետ ունեցած հարաբերութեանը թե՛ ըստ պատմականին և թե՛ ըստ առասպելականին⁴¹:

Քննության առարկա աշխատութեան մեջ առանձնապես լավ է տրված Վահագնի առասպելի դիցաբանական էութեան մեկնաբանութեանը: Հակառակ ուրիշ բանասերների, որոնք Վահագնին համարել են՝ պատերազմի կամ քաջութեան, որսի և հաղթութեան⁴², կամ արեգակի⁴³ աստված, Աբեղյանը համոզիչ ապացուցում է, որ Վահագնը իր սկզբնական կերպաբանքով եղել է հեթանոս հայերի կայծակի կամ ամպրոպի աստվածը, համապատասխան հնդկական Ինդրային և Ագնիին, գերմանական Թորին, պարսից Վերթրազնային, Տիշտրիային և այլն:

Վահագնը իբրև ամպրոպային աստված ծնունդ է երկնքի ու երկրի, երկնային ծիրանի (ամպերի) ծովի և երկրային բույսերի՝ հատկապես կարմիր հղեգների, որ (ամպերի) ծովի մեջ բոցավառվում է, կայծակի աստված Վահագնի ծննդյան ժամանակ: Իբրև ամպրոպի աստված՝ նա հրամազ, բոցամորուք, արեգակնաշյա պատանյակ է:

⁴¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 595—598:

⁴² Հ. Դեյլեր, Հետազոտութեան հայ դիցաբանութեան, թարգմ. Հ. Թորոսյանի, Վենետիկ, 1897, էջ 36:

⁴³ Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 86:

Իբրեւ ամպրոպի աստված նա ծնվելուն պես վազում է վիշապի կամ վիշապների դեմ կռվելու: Վահագնի ծնունդն ու արտաքինն ամբողջապես բնական օդերևույթից են վերցրած: Կռիվն էլ օդերևույթի ամպրոպային կռիվն է, քանի որ նրա թշնամի վիշապն ամպրոպային օդերևույթի անձնավորումն է: Նույնը հաստատվում է «Վիշապաքաղ» մակդիրով, որը ցույց է տալիս, թե Վահագնի կռիվը վիշապների դեմ մեր ժողովրդի մեջ հին և նոր ժամանակներում հայտնի «վիշապ հանելն» է: Իբրեւ ամպրոպի աստված նա «քաջ» մակդիրն է կրում և քաջություն շնորհում, քանի որ ամպրոպային աստվածներն, ինչպես Ինդրան, ամենազորն են, ուժեղ ու քաջ: Հելլենիստական ժամանակներում Վահագնը նույնացել է Հերակլեսի հետ, մերձեցել է նաև Ապոլոնին, քանի որ վերջինս էլ ամպրոպային հատկություններ ունի: Վահագնի մեջ ևս տեսել են արեգակի մարմնավորման երևույթը, քանի որ ամպրոպի և արեգակի երևույթների անձնավորումները, բնության մեջ եղած նմանության պատճառով, շատ ազդերի առասպելների մեջ իրար են փոխանակում կամ իրար տեղ անցնում⁴⁴:

Մ. Աբեղյանը վերոհիշյալ կարծիքը ապացուցում է ոչ միայն հայկական հավատալիքների ու ժողովրդական բանահյուսության հարուստ տվյալներով, այլև հնդեվրոպական ուրիշ ժողովուրդների համանման նյութերով⁴⁵:

Ըստ ամենայնի հիմնավոր են նաև Աբեղյանի փաստարկները Հայկի առասպելի ժողովրդական բնույթն ապացուցելիս: Իրավացիորեն քննադատելով էմինի, Խալաթյանի և ուրիշների խորենացու Պատմության 10-րդ գլխում հիշված՝ «Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» արտահայտության ոչ ճիշտ ըմբռնումը, Աբեղյանը առասպելի ժողովրդական բնույթը հաստատում է նրա բովանդակության մեջ եղած վիպաբանահյուսական մոտիվներով:

Բանագետի քննութունից պարզ երևում է, որ խորենացու կողմից ոչ մի, թեկուզ և մութ ակնարկ իսկ չկա Հայկի պատմության ժողովրդական զրույցներից քաղած լինելու վերաբերյալ, ինչպես կարծում են էմինը, Խալաթյանը և ուրիշներ: Քերթողահայրը պարզապես հայտնում է, որ միայն գրավոր աղբյուրից է քաղել այն: Իսկ այդ գրավոր աղբյուրը, Աբեղյանի համոզմամբ, կարող է «գիտնականների հերյուրում լինել ամբողջապես»: Ըստ նրա՝ «Տասներորդ գլխում Հայկի պատմության մեջ

⁴⁴ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 174—175:

⁴⁵ Նույն տեղում, էջ 134—174:

հիշված հին անգիր զրույցները Հայկի և Բելի առասպելի հետ առնչություն չունին, այլ Տարոնում և Արարալում մարդկանց հառաջագույն բնակություն լինելուն են վերաբերում»⁴⁶:

Մի շարք զուգահեռ օրինակներով (Դավիթ և Գողիաթ, Սմբատ և Հեփթաղ, Տրդատ և Գոթաց իշխան, Սամ և Քերքուլյի և այլն) Աբեղյանն այնուհետև ցույց է տալիս, որ Հայկի և Բելի զրույցն իր բովանդակությամբ ոչ միայն ժողովրդական վիպական ոգուն հակառակ չէ, այլև մոտիկից հիշեցնում է նման տիպի բազմաթիվ զրույցներ⁴⁷: Նա գտնում է, որ «Հայկի կոիվը յուր մանրամասնությունների մեջ, գրեթե սկզբից մինչև վերջ տարած է շատ վիպական ձևերով, դուցադնական, վիպական կերպարանքով»: Ըստ Աբեղյանի այդ մանրամասնություններն են.

1. Երկրի ղզրդալը կրկու կողմերի հսկաների հարձակման ժամանակ:
2. Բելի դեսպան ուղարկելը Հայկին:
3. Խստությամբ և կոպտությամբ խոսելը:
4. Բազմաթիվ մակդիրներ և այլն⁴⁸:

Բանագետի հավաստմամբ Հայկի առասպելի ժողովրդական լինելը ապացուցող կարևոր փաստերից մեկն էլ, Վանա ծովի շուրջը Հայկի ու Բելի մասին պատմվող ժողովրդական զրույցներն են, որոնք նա ուրիշ բանասերների նման անպատճառ խորենացու աղդեցությամբ ժողովրդի մեջ մտած բաներ չի համարում, այլ՝ խորենացուց անկախ, հին ժողովրդական զրույցների մնացորդներ, որոնք կապված մնում են Վանա ծովի շրջակայքին և հատկապես այդ ծովի շուրջը եղած տեղագրական անունների հետ⁴⁹:

Այս ամենը նկատի ունենալով, ինչպես և այն, որ Հայկ՝ հսկա նըշանակությամբ և իբրև առասպելական որսորդ Օրիոնին հավասար գործածված են գտնում թարգմանիչների կողմից, Աբեղյանը գալիս է այն եզրակացության, որ «Հայկի ու Բելի առասպելն ամենայն նավանակափությամբ ժողովրդական ճիմումն ունի: Նույն է, հավանորեն, մի տեղական առասպել հսկա որսորդ Հայկի և մի օտար բռնավոր հսկայի՝ Բելի կովի մասին, որոնց համար Վանա լճի շուրջը տեղեր են ցույց տվել»⁵⁰:

⁴⁶ Մ. Աբեղյան. Հայ ժողովրդական առասպելները, էջ 188:

⁴⁷ Նույն տեղում, էջ 225:

⁴⁸ Նույն տեղում, էջ 223—243: (

⁴⁹ Նույն տեղում, էջ 243:

⁵⁰ Նույն տեղում, էջ 247:

Բանասիրական-բանագիտական հետազոտության բացառիկ հաջող օրինակ է Տիգրանի առասպելի աբեղյանական ուսումնասիրությունը:

Հակառակ Մ. էմինի, Գր. հալաթյանի, Մ. Գարագաշյանի և ուրիշների, որոնք կարծել են, թե հորենացին Տիգրանի պատմությունը վերցրել է Մար-Աբասից (սխալ հասկանալով պատմահոր ականարկն իր աղբյուրի մասին), Աբեղյանը մանրամասն հետազոտելով այդ պատմությունն ու նրա բուն աղբյուրը («Հյուսումն պիտոյից» կոչված ճարտասանական ժողովածուն), ապացուցում է, որ հորենացին Տիգրանի պատմությունը վերցրել է ոչ թե Մար-Աբասից, այլ ժողովրդական երգերից: «հորենացին,—գրել է նա,—Տիգրանի պատմությունը Մար-Աբասից չէ առնում: Նա երկու տեղ հիշում է, որ այդ պատմությունն առնում է մի գրավոր աղբյուրից, որի հեղինակի անունը, ծանոթ ենթագրելով, չէ տալիս, այլ բավականանում է միայն նորան գովելով: Տիգրանի պատմության մեջ հիշած «ասէ», «ասէ որ պատմեն», «ասում է պատմողը» խոսքերը վերաբերում են այդ հեղինակին: Այդ գրվածքը, որ հորենացին կոչում է «Հիւսումն պիտոյից» կամ «Պատմութիւն հիւսման պիտոյից», եղել է մի բանահյուսական ու ճարտասանական գրվածք, հավանորեն «չորս հագներգության» բաժանված: հորենացին անձամբ չէ օգտված յուր հիշած ժողովրդական երգերից, այլ յուր աղբյուրի հեղինակն է ճարտասանորեն մշակել ժողովրդական բանաստեղծությունը: Երգերի հիշատակությունը նա յուր աղբյուրից է առել»⁵¹:

Բանագետը միաժամանակ ապացուցում է, որ ժողովրդական երգերի մեջ հիշված Տիգրանը ոչ թե կյուրոսի ժամանակակից Տիգրանն է, ինչպես սխալմամբ գրել է հորենացին (հավանորեն վերցնելով իր աղբյուրից), որ մոլորության մեջ է ղցել բանասերների մեծ մասին, այլ Լուկուլոսի ժամանակակից Տիգրան 2-րդը կամ Մեծը⁵²:

Նշանակալից է նաև Աբեղյանի ուսումնասիրության այն մասը, որ նվիրված է Վիպասանքի պատմական կողմին: Պատմական դեպքերի ու դեմքերի և ժողովրդական բանահյուսության նյութերի զուգահեռ համագրումով գիտնականը կարողացել է բացահայտել Արտաշեսյան վեպի պատմական ատաղձը, ցույց տալ, թի ինչպես վիպական Արտաշեսի կերպարի մեջ վիպական բանահյուսությանը հատուկ եղանակով համակըցվել են պատմական տարբեր անձնավորությունների (Արտաշես Ա, Արտաշես Բ, Արտաշես Գ և Տրդատ Ա) կյանքի և գործի դրվագները⁵³:

⁵¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 445:

⁵² Նույն տեղում, էջ 449—474:

⁵³ Նույն տեղում, էջ 286—385 և հտվն.:

Մեծ է Աբեղյանի քննության առարկա աշխատության արժեքը ոչ միայն հայ բանագիտության, այլև հայ ժողովրդի պատմության և հայագիտության համար ընդհանրապես: Իր այդ աշխատությամբ Աբեղյանը

1) ճշտեց կամ ի նորո պարզեց հայկական առասպելների բանահյուսական-ժողովրդական բնույթը, ըստ էության հիմնավորելով նրանց դիցաբանական-գլուցադնական էության և կրած պատմական խավավորման հարցերը.

2) տարբերազատեց խորհնացու Հայոց պատմության մեջ առկա բուն պատմական և ժողովրդական բանահյուսությունից սերող նյութերը, դրանով իսկ մեծապես դյուրացնելով այդ նյութերի օգտագործումը ինչպես պատմության, այնպես էլ բանագիտության համար.

3) վերջնականապես հաստատեց խորհնացու Պատմության բանավոր աղբյուրների վավերականությունը, դրանով իսկ վերականգնելով այդ պատմության ոմանց կողմից ոտնահարած հեղինակությունը:

Հալ վիպական բանահյուսության Աբեղյանի տեսությունը բոլորովն է վիպական երգերի ծագման և ձևավորման, ժանրային առանձնահատկությունների բացահայտման, կատարման ու գոյատևման հարցերին նրավիրած նրա ուսումնասիրությամբ, որի արդյունքները համառոտակի կարելի է խտացնել հետևյալ հինգ կետերի մեջ.

ա) «Կատարված դեպքերի անմիջական ազդեցության տակ» ծագած լացի ու կոծի, ինչպես և դուսանների սկզբնական պատմական երգերը վիպական այն նախնական տարրերն են, որոնք հորինված են կանոնավոր ոտանավորով, բաղկացած են մեկ կամ երկու երկատող տներից (բեյթ) և ունեն քնարական բնույթի կրկնակներ: Դրանց մեջ պատմվում են տվյալ թեմայի տարբեր կողմերի մասին:

բ) «Միմյանցից անկախ այդ երգերը... իրենց ընդհանուր կրկնակով և երգված նյութի նույնությամբ հարում են իրարու» և կազմում փոքր-ինչ ավելի մեծ երգ, մասերի թույլ կապակցությամբ («Լեռնի երգը»):

գ) «Զարգացման հետագա աստիճանի վրա վիպական երգերն ընդարձակված են և հորինվում են արդեն ազատ ոտանավորներով», ինչպես մեծ վեպերը: Երգը դեռ բաժանվում է մեծ ու փոքր հատվածների, որոնք վերջանում են կրկնակով: Բովանդակությունը դեռ մեկ դեպքի պատմություն է, ինչպես «Սասնա ծռեր»-ի մեկ միջադեպ («Մոկաց Միրզա»):

դ) Հաջորդ փուլում արդեն երևան է դալիս «երկու տարբեր տարրերի գեղարվեստական հարակցությունը», որ վեպերի կառուցվածքի առանձնահատկություններից է, որով առավել ընդարձակվում է պատմը-

վածքը, և հարակցումը կատարվում է ոչ թե մեքենայաբար, այլ նյութի վերամշակությամբ: Առկա է դեռ քնարական կրկնակը («Կարո՞ս խաչ»): Նույն հարակցումը կատարվում է նաև տարբեր երգ-գրույցների հետ՝ հերոսի նույնությամբ և տեղից-տեղ գնալու ընթացքով («Նարեկացի»): Այս դեպքում կրկնակ չկա, բայց պահպանվում է դեռ որոշ քնարականություն:

և) Եվ, վերջապես, վերջին աստիճանում վիպական երգը զրկվում է կրկնակից ու քնարականությունից, դառնում է մեկ ամբողջական երգ կամ երգախառն պատմվածք՝ ազատ ոտանավորով, ինչպես «Սասնա ծռեր»-ը: Հարակցումը կատարվում է տարբեր, մասամբ ընդհանուր բնույթի գրույցներից, ինչպես «Սասնա ծռեր»-ում («Ասլան աղա»):

Դրանով պատմական-վիպական երգը աստիճանաբար մոտենում է «Սասնա ծռեր»-ին, որը շատ ընդարձակ չափերով զարգացած է ու հարակցված:

Երգերի նշված պատմական դարգացումը Աբեղյանը իրավացիորեն համարում է երկար ժամանակի արդյունք, և երգերից յուրաքանչյուրը՝ արդասիք զարգացման տարբեր փուլերի ու ձևերի⁵⁴:

Աբեղյանի այս գրույթները, որոնք ունեն որոշակի օրինաչափությունների բնույթ, բխում են հեղինակի ձեռքի տակ եղած հայկական վիպերգերի բովանդակության, ձևի, կատարման եղանակների ու ժանրային հատկանիշների կոնկրետ ուսումնասիրությունից, ժանրային ու տիպաբանական առումներով՝ ունեն նաև ընդհանուր բանագիտական արժեք:

4

Հայ վիպական բանահյուսության հետ զուգընթաց Մ. Աբեղյանը տասնամյակներ շարունակ հետևողականորեն զբաղվել է նաև հայ ժողովրդի հարուստ ու հին քնարական ստեղծագործություններով:

Փաստական հարուստ նյութի վրա հիմնված մասնագիտական մանրակրկիտ հետազոտության արդասիք է գիտնականի «Հին գուսանական ժողովրդական երգեր» (Երևան, 1931 թ.) խորագրով մեծարժեք բանագիտական-բանասիրական ուսումնասիրությունը, որը նվիրված է հայ ժողովրդի դարերի խորքից եկող քնարական բանահյուսության կարևոր տեսակներից մեկին:

⁵⁴ Մ. Աբեղյան, Երկեր, Ա, Երևան, 1966, էջ 512—513:

Հիշված աշխատության մեջ հենվելով Բուզանդի, Նդիշեի, Խորենացու, Նարեկացու և ուրիշ հայ հին հեղինակների հաղորդած համապատասխան տեղեկությունների ու ակնարկների վրա, Աբեղյանը հավաստում է, որ հայոց մեջ հնուց սիրված են եղել ուրախության, սիրո և լացի քանավոր անանուն երգեր, որոնք հորինել ու կատարել են անպրագնատ անուս ժողովրդական երգիչ գուսաններն ու գուսանուհիները: Գիտնականը միաժամանակ նշում է, որ տվյալ երգերը երկար ժամանակ մնացել են առանց գրի առնվելու, որովհետև գրագետ եկեղեցականները եկեղեցուն հակընթաց գայթակղություն են համարել գուսանությունը: Նվ միայն XIV—XV դարերից՝ «գալիս է ժամանակ, երբ նույնիսկ կրոնավորներից գրավոր «սիրո քաներ», այսինքն սիրո երգեր են պահանջվում»⁵⁵: Այդ ժամանակներից է, ահա, որ գրի են առնվում նաև վերը հիշված գուսանական-ժողովրդական երգերը:

Գիտնականի հավաստմամբ X և հետագա դարերի մեր մի շարք գրչագիր տաղարաններում բազմիցս հիշատակվող «հայրեն» կամ «հայերեն» կոչվող անսնուն տաղերը, ինչպես նաև XIX և XX դարերում Ակնի, Վանի և այլ կողմերում գրի առնված ժողովրդական սիրո, ուրախության, լացի, պանդխտության («անտունի») երգերի մի զգալի մասը հայոց հին գուսանական այդ երգերն են, որոնք սկզբից ի վեր գոյություն են ունեցել մեզանում և շարունակել են բերանացի ապրել մինչև մեր օրերը, ենթարկվելով, բնականաբար, վերամշակման ու նորոգման թե՛ բովանդակությամբ. թե՛ ձևով (լեզու և այլն)⁵⁶:

Մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով «հայրենների» տարբերակները, Աբեղյանը բացահայտում է ժամանակի ընթացքում նրանց կրած փոփոխությունները, միջին հայրենի լեզվական ձևերի վերածումը նորի և շատ տաղերի ամբողջական վերամշակումն ու լեզվական առումով նոր ստեղծագործությունների վերափոխումը: Այս ճանապարհով, ըստ գիտնականի, առաջ են եկել բազմաթիվ տարբերակներ, երբեմն մի երգի համար մի քանիսը, որոնք հին երգերի վերամշակություններ են իբրև նոր երգեր և միմյանցից տարբերվում են հաճախ ոչ միայն լեզվով ու ձևով, այլև բովանդակությամբ: Այդ տարբերակներից զատ՝ «հայրենների» մեջ Աբեղյանը դրսևում է ժողովրդական երգերին հատուկ մի կարևոր հատկանիշ ևս՝ տողերի և տների շարժունությունը, երբ միևնույն տները (երկտողերը) կամ տողերը հանդես են գալիս տարբեր եր-

⁵⁵ Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 184:

⁵⁶ Նույն տեղում, էջ 259:

դերի մեջ, այսինքն՝ երգիչները ազատ վերաբերմունք են ունեցել գեպի այդ երգերը: Նույն շարժուն վիճակի մեջ են և քառյակներն ու ավելի մեծ հայրենները, որոնք Երևան են գալիս և՛ միմյանց հետ միացած, և՛ իրարից անջատ՝ նայած երգիչների տրամադրությանն ու հիշողությանը: Այդ սլափառությամբ, միևնույն քառյակները գտնվում են այլևայլ քառյակների հետ միացած:

Հայրենների նշված բոլոր հատկությունները ժողովրդական բանարվեստի ճանաչված մասնագետին իրավացիորեն բերել են այն հետևություն, որ դրանք բերանացի ավանդված տաղեր են եղել և մեկ ժամանակի ու մեկ անհատի ստեղծագործություն չեն, այլ ընդհանրական: Դրանց, վրա աշխատել են բազմաթիվ սերունդներ, և դրանք փոփոխություն, վերամշակություն ու զարգացում են կրել երգիչների բերանին՝ երգվելու ժամանակ, այն էլ դարերի ընթացքում: Մի խոսքով, այդ փոքրիկ տաղերն ապրել են ժողովրդական երգերի կյանքով և իբրև ժողովրդական երգեր գրի են առնվել զանազան ժամանակներում ու տեղերում և զանազան մարդկանց ձեռքով, տարբեր տաղաշարքերով ու բազմազան տարբերակներով, ճիշտ ինչպես մեր ժամանակի ժողովրդական երգերի ժողովածուներն են⁵⁷:

Ահա թե ինչու, անդրադառնալով հայոց հին գուսանական ժողովրդական երգերը XVI դարում ապրած աշուղ Նահապետ Քուչակի անվան հետ կապելու անհիմն վարկածին, որը ցարդ գոյատևում է տվյալ հարցի մասին մակերեսային տեղեկություն և մոտեցում ունեցող որոշ մտավորականների շրջանում, հարկ է ընդգծել, որ ինչքան շուտ վերանա տվյալ մոլորությունը, այնքան ավելի կշահի հայ բանագիտությունը: Եվ ոչ միայն բանագիտությունը: Դա մի հարց է, որ գիտականից բացի, ունի նաև ազգային-հասարակական կարևոր նշանակություն, քանի որ ժողովրդի կողմից դարերի ընթացքում ստեղծված քնարերգության իսկական մարգարիտները մի անհատ աշուղի վերագրվելուց, վերադարձվում են դրանց բնական տերերին՝ ժողովրդին ու նրա ընդերքից ելած բազմաթիվ «անանուն» տաղանդավոր գուսաններին ու գուսանուհիներին:

Պատահական չէ այս առումով այն փաստը, որ տակավին դարասկզբին «հայրենները» Նահապետ Քուչակին վերագրող այնպիսի մի նըշանավոր մշակութային գործիչ, ինչպիսին Արշակ Չոպանյանն էր, առիթ ունենալով մոտիկից ծանոթանալու Մ. Աբեղյանի վերը նշված տեսակետին, միտվեց հրաժարվելու իր նախկին կարծիքից, գրելով. «Անհնար է,

57 Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, էջ 113—115:

որ ատոնց (խոսքը «Հայրենիքի» մասին է—Ա. Ղ.) հեղինակն ըլլա Վանցի Քուչակը, ինչպես կը հայտարարե Արիստակես Վ. Տեկանց՝ ՀԵՆԸՎԻԹԵՐ ինչ փաստի վրա հիմնվելով»⁵⁸ (ընդգծումները մերն են—Ա. Ղ.):

Ի վավերացումն սեփական այս դիրքորոշման, նույն Չոպանյանը, նախկինում տպագրած «Նահապետ Քուչակի դիվանը» իր ժողովածուն, տարիներ հետո, մեծապես լրացրած գրչագրերից քաղված «Հայրենիքի» նոր տաղերով ու տաղաշարքերով, վերահրատարակեց «Հայրենիքու բուրաստան» խորագրով⁵⁹:

Հայ ժողովրդի քնարական բանահյուսության մի ուրիշ կարևոր բաժնի հանգամանակից ուսումնասիրությանն է նվիրված Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղեր» հետազոտությունը, որն առաջին անգամ լույս է տեսել առանձին գրքով՝ Վաղարշապատում, 1904 թ. և ապա, նշանակալից լրացումներով վերահրատարակվել Երևանում՝ 1940 թ., իբրև «Ներածություն» նույն հեղինակի «Ժողովրդական խաղիկներ»⁶⁰ ստվար հատորի:

Իր ուսումնասիրության սկզբում անգրադառնալով խաղիկների անվանման հարցին բանադետը նշում է, որ դրանք ընդհանուր անունով կոչվում են խաղ, սակայն երբեմն էլ հիշվում են իբրև տաղ: Նա հավաստում է նաև, որ խաղ բառը միաժամանակ նշանակում է պար. քանի որ քննության առարկա երգերը (քառատող, եռատող, մանավանդ երկատող) գրեթե բոլորն էլ թե սկզբնապես և թե հետո, մեծ մասամբ պարերգեր են եղել:

Գալով խաղիկների ընդհանուր բնույթին և հեղինակներին, Աբեղյանն ընդգծում է դրանց գերադանցորեն գյուղական բանաստեղծություններ և սիրո երգեր լինելը, ստեղծված գեղջուկ պատանիների ու երիտասարդների կողմից:

Կանգ առնելով խաղիկների հատկապես բովանդակության վրա, գիտնականն արձանագրում է, որ դրանք հարուստ են սիրո հետ կապված իրական կյանքի ղանաղան դրույթյուններով ու գործողություններով, համեմատված են ժողովրդական սովորություններով, կենցաղային գծերով ու բարքերով, ճիշտ այնպես, ինչպես մեր հին գուսանական ժողովրդա-

⁵⁸ Ա. Չոպանյան, Հատընտիր էջեր Քուչակյան տաղաշարքեն, Փարիզ, 1926, էջ 6:

⁵⁹ Ա. Չոպանյան, Հայրենիքու բուրաստան, Փարիզ, 1940:

⁶⁰ Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, գյուղական փոքր երգեր իրենց փոփոխականերով, խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, 1940:

կան երգերը: Այդ սիրո խաղերը հաճախ նաև աշխատանքի երգեր են, հարուստ՝ բազմաթիվ աշխատանքային մոտիվներով:

Ուշագրավ է ուսումնասիրության «Հասարակական խավերը խաղերի մեջ» գլուխը, ուր բազմաթիվ բնորոշ օրինակներով բացահայտված է «հարուստների» անաշխատ ու ապահով կյանքը, սեփական ու ալլազդի «ցեցերի» ճիրաններում թաքտացող աշխատավոր հայ գեղջուկի տընտեսական և իրավական անմխիթար վիճակը:

Ժողովրդական խաղիկների վերլուծումը բանագետն ավարտում է «Բնությունը խաղերի մեջ» գլխով: Հերքելով մեղանում ոմանց մեջ գոյություն ունեցող այն թյուր պատկերացումը, որի համաձայն հայ գյուղացին բնության մեջ ապրելով հանդերձ, իբր չի տեսնում և չի սիրում այն, նա բազմաթիվ խոստով օրինակներով ապացուցում է, որ խաղերի մեջ բավական լայն տեղ ունեն բնության նկարագիրն ու բնությանից առնված նմանությունները:

Հետադոտության մեջ հանգամանալից ուսումնասիրության առարկա է դարձել խաղերի ներքին կազմությունը (= հորինվածքը) և արտաքին արվեստը (= ոտանավորը): Արձանագրված է, որ դրանք մեծ մասամբ պարզ ու անպաճույճ ստեղծագործություններ են, որոնց մեջ արտահայտված է ժողովրդական երգերին հատուկ զուգահեռականությունը կամ խաղերի բաժանվելը իրար համապատասխան մասերի, որոնք որևէ առընչություն ունեն իրար հետ: «Խաղի էական մասը,— գրում է հեղինակը,— որի մեջ է բուն իմաստը, գրեթե միշտ երկրորդ երկատողն է, իսկ առաջին երկատողը սովորաբար երկրորդի լրացումն է որևէ կողմից, նրա սկսվածքը, նախապատրաստությունը, բացատրությունը և այլն: ... Որքան հաջողությամբ հարմարեցված են իրար երգիկների այս երկու զուգահեռական մասերը, և որքան սերտ ու ներքին է այս երկու մասերի կապակցությունը, այնքան ավելի գեղեցիկ է խաղը»⁶¹:

Խաղերի ոտանավորը սովորաբար ունի 5, 6 և 5, 7, 8, 7 և 8, 9, 10, 11, 12 վանկանի տողեր: Ինչ վերաբերում է հանդերձին, ապա դրանք բավական զորեղ են ու հնչեղ, «որոնք տողերի վերջում զուգահեռանգ շարվելով և արագ հաջորդելով իրար, փառաբանում են մարդու ականջը և զարդարում բանաստեղծությունը»⁶²:

Մինչև սույն հետազոտությունը հայ ժողովրդական բանարվեստի

⁶¹ Մ. Արեղյան, Ժողովրդական խաղիկներ, էջ 50—59:

⁶² Նույն տեղում, էջ 67:

շովյալ տեսակը չէր դարձել հատուկ ուշադրության առարկա: Աբեղյանն առաջինն էր մեղանում, որ համակողմանի ու մանրամասն բացահայտեց բուն գեղջկական այդ երգերի էությունը, որոշեց նրանց տեղն ու դերը մեր բանավոր քնարերգության մեջ:

Մանուկ Աբեղյանի բանագիտական գործունեությունը չի պարփակվել միայն հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների պատմատեսական խնդիրների արծարծումով ու լուծումով: Նա շնորհակալ մեծ գործ է կատարել նաև այդ բանահյուսության կարևոր հուշարձանների խմբագրման, ի մի բերման և հրատարակության ուղղությամբ, հանդես բերելով աղբյուրագետ-բանասերի իր անուրանալի ձիրքն ու հմտությունը:

Վարպետորեն օգտագործելով դրա համար հայ բանասիրության երկարամյա ու հարուստ փորձը պատմագրական հին հուշարձանների ուսումնասիրման ու հրապարակման բնագավառում, բանագետը մշակել և հաջողությամբ իրականացրել է բանահյուսական տարբեր տիպի ստեղծագործությունների հրատարակության պատրաստման իր ուրույն աբեղյանական եղանակը:

Տվյալ գործում նա առաջնորդվել է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների կոլտուր-պատմական, հասարակական-ազգային և գեղարվեստական արժեքի վերաբերյալ իր ունեցած ըստ ամենաչնի բարձր կարծիքով: Դրանով է պայմանավորված այն մանրակրկիտ, լուրջ և օրինակելի վերաբերմունքը, որ բանագետը հանդես է բերել ժողովրդական բանահյուսության խնչպես վիպական, այնպես էլ քնարական տարբեր բնույթի ստեղծագործությունների երանգների ու նրբերանգների (տարբերակ, մոտիվ, բառ, տեղ, կրկնակ, արտաքերություն եղանակ, շեշտ...) նկատմամբ:

Աղբյուրագիտական-բանասիրական օրինակելի սկզբունքով են իրականացված Մ. Աբեղյանի կողմից (Կ. Մեխր-Օհանջանյանի ամենահույսգուն աշխատակցությամբ) «Սասնա ծռեր»-ի հոյակապ հատորները: Նույն սկզբունքով է Աբեղյանը իրականացրել «Գուսանական ժողովրդական տաղեր»-ը: Այն պարունակում է տարիների անձանձիր աշխատանքով, բաղմամբիվ գրչագրերից հայտնաբերված շուրջ 500 գուսանական ժողովրդական երգեր («հայրեններ») իրենց բաղմամբիվ տարբերակներով, որը Արշ. Զոպանյանի հրատարակած «Հայրեններու բուրաստան»-ի հետ հայ ժողովրդի բանաստեղծական հանձարի ամենախոսուն վավերագրերից մեկն է:

Աղբյուրագիտական-բանասիրական հար և նման սկզբունքներով է պատրաստված նաև Աբեղյանի «Ժողովրդական խաղիկներ» սովոր հատորը (մասնակի աշխատակցությանը Կոմիտասի): Վերջինս ամփոփում է տասնյակ տարիների ընթացքում անձամբ հեղինակի գրառած և բազմաթիվ բանահյուսական-ազգայրական տպագիր ու ձեռագիր ժողովածուներից, ինչպես նաև մի շարք պարբերականներից հավաքված հայ ժողովրդական խաղիկների (գյուղական փոքր երգերի) շուրջ 3500 նմուշից: Իրենց տարբերակներով, որը բավական ամբողջական պատկերացում է տալիս հայ ժողովրդի բանաստեղծական խոսքի ամենատարածված տեսակներից մեկի մասին:

Մ. Աբեղյանի բանագիտական աշխատություններում, ինչպես յուրաքանչյուր մեծ գիտնականի գործերում, անշուշտ, կան առանձին վիճելի կետեր, որոնք, սակայն, երբեք չեն կարող նսեմացնել այն, ըստ ամենայնի գրական գերը, որ կատարել է նա տվյալ բնագավառում: Հայոց լեզվին և հին գրականությանը նվիրված նրա բազմահատոր աշխատությունների նման, դրանք կարևորագույն ներդրումներ են հայագիտության բնագավառում ընդհանրապես, և հայ բանագիտության բնագավառում մասնավորապես:

Այդ գործերի մեջ ցայտուն կերպով հանդես են եկել վաստակաշատ բանագետի հսկայական գիտելիքները, փաստերի նրա հոյակապ իմացությունը, հումկու տրամաբանությունն ու հետազոտական սուր միտքը: Այդ գործերից շնչում է նրա բուն սերը դեպի իր հայրենիքն ու հարազատ ժողովուրդը, երևան է գալիս նրա անկաշառ նվիրվածությունը վերջինիս հարուստ ու հին մշակույթի ուսումնասիրության գործին:

Ահա թե ինչու, առանց Աբեղյանի բանագիտական ծանրակշիռ ժառանգության բազմակողմանի ու խոր ուսումնասիրության՝ չի կարելի ճիշտ ըմբռնել ու գնահատել հայ ժողովրդական բանահյուսության մի շարք կարևոր ժանրերն ու ստեղծագործությունները (առասպել, վեպ, գուսանական ու ժողովրդական երգ...): Առանց այդ ժառանգության դրսևական փորձի բարեխիղճ յուրացման, չի կարելի հետազոտել հայ ժողովրդական բանահյուսության տակավին չուսումնասիրված ժանրերն ու ստեղծագործությունները (հեքիաթ, առակ, զրույց...): Վերջապես, առանց այդ ժառանգության խորը և խելամիտ օգտագործման, անհնար է գրել հայ ժողովրդական բանահյուսության ու բանագիտության իսկական, գիտական պատմությունը:

ԿՈՄԻՏԱՍ

Կոմիտասի մասին իբրև երգահանի, խմբավարի, ժողովրդական երգերի ձայնագրող աղագրադետի և դրանք մշակող արվեստագետի շատ է գրվել թե՛ հայերեն և թե՛ ուրիշ լեզուներով: Քիչ է շոշափվել ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքերը գրի առնող, խմբագրող ու վերականգնող, վերլուծող, բնութագրող ու գնահատող Կոմիտաս բանահավաքի ու բանագետի կատարած շնորհակալ աշխատանքը: Այդ մասին նշվել է գլխավորապես այն ժամանակ, երբ խոսք է բացվել Կոմիտասի կատարած բազմազան երաժշտական գործունեության մասին: Վերը հիշված հարցերը իբրև բանագիտական բնույթի հարցեր, բնականորեն, մասնագիտական հատուկ քննության առարկա չեն դարձել մեծ արվեստագետի թողած ժառանգության մեջ զբաղվող երաժշտագետների կողմից: Մինչդեռ այդ հարցերը էական են ոչ միայն Կոմիտասի կատարած գործի ամբողջական պատկերը վերականգնելու առումով, այլև հայ բանագիտության համար, այնքանով, որքանով դրանք յուրովի լրացնում են այդ պատմության կարևոր էջերից մեկը:

Մեր ձեռքի տակ եղած փաստերի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու համադրումը ցույց է տալիս, որ Կոմիտասը, ժողովրդական երգերի մեղեդիների հետ, որոնց ձայնագրումը, մշակումը, հետազոտությունն ու տարածումը կապված էր նրա կոչմանը և իր զբաղմունքի հիմնական առարկան էր, պատշաճ ուշադրություն է հատկացրել նաև այդ երգերի բանաստեղծական խոսքին: Նա հիմնալի զգացել և լավ գիտակցել է այդ խոսքի ինչպես գեղարվեստական, այնպես էլ ճանաչողական արժեքը և, մասնագետ բանահավաք-բանագետից ոչ պակաս, մտահոգվել է այն փրկելու և գնահատելու գործով:

Դեռևս 1891 թ. Կոմիտասը կատարել է ժողովրդական երգերի եղանակների ու բառերի իր առաջին պրառումները: Այդ է վկայում նույն թը-

վականին վերաբերող նրա մի ձեռագիր տևարակը, ուր կան թվով 37 գեղջկական երգեր (աշխատանքային, կենցաղային, սիրային բովանդակությամբ): Դրանց լավագույն նմուշներից են՝ «Գարուն ա», «Երկինքն ամպեր է», «Արաղը հեշտացել ա» հայտնի երգերը¹:

Կոմիտասյան գրառումների երկրորդ ժողովածուն դարձյալ վերաբերում է 90-ական թվականներին: Խոսքը բանահավաք Հովսեփ Ծանիկյանի 1895 թ. հրատարակած «Հնութիւնք Ակնա» գրքի վերջում գետնի վրա «Շար Ակնա ժողովրդական երգերի» խորագրով հավելվածի մասին է: Այստեղ կան թվով 25 սիրո, պանդխտության, հարսանեկան և այլ երգեր Արեւմտյան Հայաստանի Ակն գավառի քարբառով, որոնցից 22-ը, նույն Ծանիկյանի վկայությամբ, գրի առել ու ձայնագրել է Կոմիտասը 1892 և 1894 թվականներին²: Դրանցից են՝ «Աղվոր էս չունիս խալատ», «Մի լար մարիկ, մի լար», «Ուսկի՞ կուգաս վարի էգուն», «Աս գիշեր Համբարձում է», «Աղջիկ իջի՛ր դուր բաց» և այլն³:

Ժողովրդական երգերի մեղեդիների ու բառերի գրառման ուղղությամբ Կոմիտասի կատարած հաջորդ մեծ գործը նրա հայտնի «Աղգագրական ժողովածուն» է: Այն ամփոփում է 255 երգ՝ գրի առնված 1890—1904 թթ. Հայաստանի տարբեր վայրերում (Իգդիր, Կոլբ, Ապաբան և այլն)⁴: Այստեղ ամփոփված ստեղծագործություններից են՝ «Ծիրանի ծառ, բար մի տա», «Չինար ևս, կեռանալ մի», «Հոլ արա, կզո ջան», «Իմ չինարի յարը», «Չեմ, չեմ», «Կումն առա», «Հով արեք, սարեր ջան» և այլն:

Կոմիտասյան գրառումների հերթական (4-րդ) հավաքածուն կազմում են Արարատյան դաշտի գյուղերում 1913 թ. նրա հայտնաբերած 60 երգերը (սպարերգեր, սիրային, կենցաղային երգեր և այլն): Դրանցից

¹ Հայկական ձայնահիշերից եվրոպական նոտաների և փոխադրել և համապատասխան ծանոթագրություններով օժտելով հրատարակել է Մ. Աղայանը (տե՛ս Կոմիտաս, Աղգագրական ժողովածու, հ. 2, Երևան, 1950):

² Զ. Ծանիկյան, Հնութիւնք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 501—502:

³ Դրանց միջնադարյան և նոր ժամանակների բաղմամբով տարբերակները տարիներ անց լույս տեսան Մ. Արեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր» (Երևան, 1946) և Ա. Չոպանյանի «Հայրեններու բուրաստան» (Փարիզ, 1940) մեծածմբ ժողովածուների մեջ:

⁴ Առաջին անգամ լույս է տեսել 1931 թ.: Ժողովածուի մեջ տեղ գտած երգերի եղանակները հայկական ձայնահիշերից եվրոպական նոտաների է փոխադրել Սպ. Մելիքյանը, կցելով համապատասխան ծանոթագրություններ ու առաջաբան (տե՛ս Կոմիտաս, Ժողովրդական երգեր, «Աղգագրական ժողովածու», ՀեՄՀ Պետհրատի երաժշտական սեկտոր, 1931):

առանձնապես ուշագրավ են՝ «Հոյ իմ նազանի յարքս», «Երևան բաղ եմ արել», «Ալագյոզ աշերդդ», «Թագվորամեր դուս արի» և այլն⁵:

Նշված ժողովածուներով չեն սպառվում ժողովրդական երգերի կոմիտասյան գրառումները: Այդ շարքը պետք է լրացվի Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի կրածշտագիտական բաժնի ջանքերով վերջին տասնամյակներին ձևոք բերված ձեռագիր ժողովածուներով: Դրանցից առաջինը պարունակում է 238 երգ (հարսանեկան, կենցաղային, երգիծական, պանդխտության և այլ բնույթի), երկրորդը՝ 368 երգ (բաղմաղան բովանդակությամբ): Դրանցից 255-ը կազմում են Կոմիտասի հայտնի «Ազգագրական ժողովածու»-ի բնագիրը, իսկ 113-ը նոր երգեր են, գրի առնված 1904 թ. հետո: Այդ երկու ծավալուն ժողովածուներից բացի, կոմիտասյան նորահայտ ձեռագրերի մեջ կան ժողովրդական երգերի ևս 8 փոքր ժողովածուներ, գրի առնված 1901, 1909 և այլ թվականներին⁶:

Ժողովրդական երգերի գրառման գործում Կոմիտասի համար, իբրև կրածշտագետի, առաջնայինը, բնականորեն, եղել է դրանց մեղեդիների արձանագրման մտահոգությունը: Այդ իսկ պատճառով, երգերի ձայնագրման ընդունված կանոնի համաձայն, հա հաճախ գրի է առել խոսքի մի մասը միայն: Սակայն քաջ ըմբռնելով ժողովրդական երգերի լավագույն նմուշների խոսքի գեղարվեստական անուրանալի արժանիքը, նա մի շարք դեպքերում արձանագրել է դրանց լրիվ բնագրերը: Այդօրինակ գրառումներ են նրա առաջին (1891 թ.) և չորրորդ (1913 թ.) ազգագրական ժողովածուները:

Հայ ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի կոմիտասյան գրառումները ճշմարտացի պաղափար են տալիս մեզ այն նկարագրի վերաբերյալ: Դր ունեցել են այդ երգերը անցյալ դարի վերջերին և ընթացիկ դարի սկզբին: Դրանք հավաստի սկզբնաղբյուրներ են հայ ժողովրդական բանաստեղծության բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների գիտական հետազոտության համար: Այդ գրառումները լավ պատկերացում են տալիս մեր գեղջկական երգերի հիմնական

⁵ Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. 2, «Հայ ժողովրդական երգեր և պարեր», Երևան, 1952:

⁶ Հիշատակված ժողովածուների մանրամասն նկարագրությունը կարելի է գտնել Ռ. Աթայանի հաղորդում-հոդվածներում. տե՛ս «Տեղեկագիր» (ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների), 1953, № 6, էջ 79—83: «Սովետական արվեստ», 1955, № 4, էջ 42—48 և այլն:

Բանագիտության համար նշանակալից արժեք ունեն նաև այն տեղեկությունները, որ հաղորդել է Կոմիտասը ժողովրդական երգերի հեղինակների ու կատարողների վերաբերյալ: Հայտնի է, որ հայ բանահավաքներն անցյալում ընդհանուր առմամբ քիչ են ուշադրություն դարձրել ժողովրդական բանասացների: Դրա պատճառը եղել է այն պատկերացումը, որ գոյություն է ունեցել մեզանում (և ոչ միայն մեզանում) ժողովրդական բանահյուսության նկատմամբ, իբրև անհեղինակ և անդամ ստեղծագործության: Անգամ մեր օրերում, երբ հիմնականում վերացված է հիշյալ սխալ պատկերացումը, և ավանդական բանահյուսությունը, իրավացիորեն, համարվում է իր հիմքով անհատական և բնույթով միայն հավաքական ստեղծագործություն, դարձյալ միշտ չէ, որ գեղջուկ վիպասանները, գուսանները, ավանդախոսները, առակախոսները, հեքիաթասացները և մյուսներն արժանանում են պատշաճ ուշադրության: Այլ է եղել Կոմիտասի մոտեցումը: Նա հատուկ ուշադրություն է նվիրել իր գրի առած գեղջիկական երգերի հեղինակներին ու կատարողներին, կարևոր կենսագրական տեղեկություններ է հաղորդել նրանց ինքնության, ապրած կենցաղային, աշխատանքային, սոցիալական, բնական-աշխարհագրական միջավայրի, երգաստեղծման մթնոլորտի ու հանգամանքների վերաբերյալ: Այս առումով առանձնապես նշանակալից են այն տվյալները, որ հաղորդել է Կոմիտասը հայ գեղջուկ պարերգերի և լոռու գութաներգի մասին¹³:

Պարերգերի վերաբերյալ նա գրել է. «Պարերգերը հատ-հատ և թըռուցիկ զգացումների մի շար են և բովանդակության համաձայն էլ արտահայտություն են ունենում: Բուն պարերգի ստեղծվելն ու մեռնելը մեկ է լինում: Մի բոպետում է հղանում. և երբ անցնում են բոպեն նկարագրող հանգամանքները, տանում են և իրենց հետ համապատասխան պարերգի լղանակը: Քիչ երկար կյանք են վայելում այնպիսիները, որոնք դուր են գալի որևէ գրավիչ հատկություններով՝ շափով, լղանակով, բառերի պատկերավորությունով և այլն. կամ այնպիսիները, որոնք իրական անցքի, դիպվածի են վերաբերում և կապված են որոշ անձի հետ: Եթե նույնիսկ նման դեպքերն ու անուններն էլ շփոթեն, լղանակը պահում են:

Դուր չեկած երգին կարևորություն չեն տալիս. հարյուրավոր երգեր զանազան տեղեր վայրկենապես բռնկվում և վայրկենապես էլ հանգչում են:

¹³ Կոմիտաս, Հոգիածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 17—26, 69—

Այս կարգի երգերն ավելի արժեք ունեն ուսումնասիրության համար, կտրուկ բովանդակությունով, զգացմունքների և մտքերի տեսականներն ու փոխադարձ առնչությունը պարզ, որոշակի նկատելու և սահմանելու համար:

Պարերգերը շուտ են մոռանում մեկ էլ այն պատճառով, որ յուրաքանչյուր եղանակ, իսկապես, ունի մի տուն բուն բանաստեղծություն և կրկնակ, իսկ պարը երբեմն ժամեր է տևում: Այսքան երկար ժամանակի ընթացքում, եթե եղանակը փոխել չխնդրեն, անընդհատ երգում են՝ օգտորվելով ուրիշ երգերի և խաղերի պատրաստի բառերի պաշարից, որից յուրաքանչյուր գուղացի գիտի մի քանի տասնյակ տուն:

... Երգի բառերն ավելի են ապրում, քան եղանակը, որովհետև նույն եղանակով կրկնվող յուրաքանչյուր տուն բերում է իր հետ նոր թարմ պատկեր, ուշադրություն գրավում, հետաքրքրություն շարժում և կյանք ապահովում»¹⁴:

Լուու գութաներգի մասին Կոմիտասը գրել է. «Գործն ու երգը վարողն է ավագ հոտաղը. եթե նա նկատում է, որ հոտաղը կամ մաճկալը անուշադիր են, չեն քաշում, փոխանակ գոմշի անունը տալու և խրախույս կարդալու, անուշադիրներին է դիմում: Այսպես, օրինակ, երբ երգում է՝ գալիս, գալիս ա և տեսնում, որ մեկը չի քշում, անմիջապես վրա է բերում բշի, հուսալ բացագանչելով և ապա շարունակում է՝ Ա՛յ, ակը լալիս է և այլն: Կամ երբ տեսնում է, որ չեն երգում՝ բարկանում, զայրանում է, որ քշելու ժամանակ չեն երգում՝ ասելով Հորի՛քն ելալ, ա՛յ լալիկ հուսալ, ա՛յ հաւր հուսալ, այսինքն՝ երգի, ռավել տուր՝ ռավելն ելալ. և այլն:

Հայտնի մաճկալները, եղնարածները, հոտաղները կարողանում են ինքնուրույնություն ու թարմություն մտցնել գութաներգի հո-ռովելի մեջ, նորանոր բառեր ու բաներ ավելացնելով, ստեղծելով՝ տեղին ու վայրկյանին համապատասխան: Յուրաքանչյուր փոփոխություն, յուրաքանչյուր արտասովոր բան գութանավորի ուշն է գրավում և իսկույն, երգի միջոցով, արտահայտություն գտնում: Օրինակ, վար են անում գյուղի դիմաց. ամբողջ գյուղը խոր քնի մեջ է. դիցուք երեխան է լաց լինում. մայրը ճրագ է վառում՝ հոգալու համար, որ լացը կտրի: Այս ճրագ վառելը գութանավորին երևալուն պես, ուշադրություն է դարձնում և ահա, ավագ հոտաղը երգում է, իբրև ռավել. «Ա՛յ ճրագ վառող հաւսին եմ

¹⁴ Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 28—29:

ասում հա» և այլն: Կամ լուսաբացին տեսնում է, որ գյուղի հարսները, կուժերն ուսած, աղբյուր են գնում ջրի: Հոտաղն այս նկատելով ձայնում է. «Ա՛յ աղբյուրը գնացող հարսին եմ ասում հա» և այլն. և կամ, երբ իրենց համար հաց են բերում, հեռվից նշմարելով, ուրախ ձայն է տալիս. «Բարձրիս ա, խաշիլը գալիս ա» և այլն»¹⁵:

2

Արգասավոր է հղել Կոմիտասի կատարած գործը նաև ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի խմբագրման և վերականգնման ուղղությամբ: Դա մի գործ է, որը սերտորեն կապված է տվյալ ստեղծագործությունների մեղեդիների ներդաշնակման ու մշակման ուղղությամբ նրա իրականացրած մեծ աշխատանքի հետ: Ըստ արժանւոյն բարձր գնահատելով ժողովրդական երգերի բովանդակությունն ու արվեստը, Կոմիտասը լրջորեն զբաղվել է ոչ միայն դրանց սկզբնաղբյուրների սոսկական գրառմամբ, այլև ջանք չի խնայել այս կամ այն պատճառով խաթարված դրանց իսկատիպ բանաստեղծական խոսքի վերաստեղծման բանագիտական մանրակրկիտ աշխատանքով:

Բաղմասթիվ ժողովրդական երգերից նա ընտրում է դրանց լավագույն օրինակները, վերջիններս միացնում, ձուլում է ներքնապես իրար մոտ ու հարազատ նյութերին: Պահպանելով սկզբնաղբյուրների ամբողջականությունը, նա մեկը մյուսի բնական շարունակությունը հանդիսացող առանձին երգերից կազմում է համեմատաբար ընդարձակ նոր ստեղծագործություններ, որոնք ըստ ամենայնի, հարազատ լինելով ժողովրդական երգերի էությունը, յուրովի լրացնում, զարգացնում և հարստացնում են այդ երգերի մեղեդին և բանաստեղծական խոսքը, աչքի ընկնելով իրենց բովանդակության ու ձևի կատարելությամբ:

Հիշյալ կարգի խմբագրական վերականգնում-վերաստեղծումների բնորոշ օրինակներից են Կոմիտասի՝

«Կալի երգը», հյուսված՝ «Հոռո, լո, լո», «Արի, արի, քի դուրբան», «Հաշանը դարման արա», «Հոլ արա, եղո» և «Հոլել, հոլել» սկզբնատողերով հինգ տարբեր երգերի միացումից (տե՛ս «Աղգագրական ժողովածու», № 20, 28, 41, 74)։

«Միրզանի ծառը», հյուսված՝ «Միրանի ծառ, բար մի տա», «Հա տվեք,

¹⁵ Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 73—74։

հետ տվեք» և «Հով, հով, հովն ընկավ» սկզբնատողերով երեք տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», № 8, 9, 10).

«Քեկեւ, ցոկեւր», հյուսված՝ «Քեկեր, ցոկեր» և «Սարի սովոր» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», № 302, 310, 311).

«Առավոտուն բարի լուսը», հյուսված՝ «Գացի արտեր, բռնի լոր», «Հաղար երնեկ» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», № 44, 112).

«Հով լինին», հյուսված՝ «Հով, հով, հով էղնի» և «Դե թուք, թըռեք» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», № 214 Ա, 214 Բ) և այլն:

* * *

Ժողովրդական երգերի մեղեդիների հետ միասին նաև դրանց բանաստեղծական խոսքի վերականգնման և վերաստեղծման ուղղությամբ Կոմիտասի կատարած բանագիտական-բանասիրական վերոհիշյալ աշխատանքի ակունքները, ինչպես նկատուցինք վերը, հասնում են 900-ական թվականների սկզբները և սերտորեն կապված են ապագա նշանավոր հայագետ Մանուկ Աբեղյանի հետ:

Կոմիտասի ու Մ. Աբեղյանի կողմից ժողովրդական խաղիկների ուղղությամբ կատարված համատեղ աշխատանքի մասին մեզ բավական հստակ ու առարկայական պատկերացում է տալիս այն ձեռագիր ժողովածուն, որը սյահպանվել է Մ. Աբեղյանի անձնական արխիվում և ներկայումս գտնվում է Երևանի Ծարենցյի անվան գրականության ու արվեստի թանգարանի Մ. Աբեղյանի ֆոնդում (№ 11): Ժողովածուն բաղկացած է 138 մեծագիր էջերից, որոնցից 24-ը գրված չեն: Տիտղոսաթերթի դեր կատարող առաջին էջին Մ. Աբեղյանի ձեռքով (կապույտ և կարմիր մատիտներով) նշված է. «Սկզբնականը Կոմիտասի հետ միասին կազմված. ամբողջապես ևս բաղդատել եմ 38 ժողովածուների հետ, նըշանակել վարիանտներն ու նրանց տեղերը, ինչպես նաև նոր քառյակները, ամբողջը արտագրել եմ վեց տետրակի մեջ» (խոսքը-այն սովոր, ընդհանուր կոչված տետրերի մասին է, որոնք մենք 30-ական թվականներին բաղմիցս տեսել ենք գիտնականի աշխատասենյակի զրասեղանին): Ժողովածուի ձեռագրի գրված առաջին 4 էջերին, նույն Մ. Աբեղյանի ձեռքով (սև, կապույտ ու կարմիր մատիտներով) թվարկված են այն աղ-

բյուրները, որոնցից քաղված են նշված «վարիանտները նաև նոր քառյակները և դրանց տարբերակները»: Հինգերորդ էջից սկսվում են ժողովրդական այն նույնատիպ երգերը, որոնք գրանցված են Կոմիտասի ձեռքով (սև թանաքով): Վերջիններս հաճախակի ընդմիջարկված են Մ. Աբեղյանի գրած երգերով (սև և կապույտ մատիտներով): Դրանք առանձին թերթիկներով փակցված են Կոմիտասի գրառած երգերի տակին կամ կողքին: Նույն կերպ համապատասխան տեղերում առանձին թերթիկների վրա շատ տեղերում փակցված են ժողովրդական այն տպագիր երգերը, որոնք հանված-կտրված են զանազան ժողովածուներից ու երգարաններից (օրինակ, Արշ. Բրուտյանի «Ռամկական մրմունջները», լույս տեսած 1897 թ. Ալեքսպոլում, Աղ. Մխիթարյանցի «Տաղեր ու խաղեր»-ը, լույս տեսած 1900 թ. նույն տեղում և այլն): Այդ ևն հուշում մեկ խնդրո առարկա ձեռագրում փակցված տպագիր ժողովրդական երգերի նմուշների ոչ միայն բովանդակությամբ, այլև տառաձևերի նույնությամբ վերահասակ գրքերի ժողովրդական երգերի բովանդակության և տառաձևերի հետ:

Կոմիտասի ձեռքով գրված երգերի ընդհանուր թիվը մեր հաշվումով 1212 է, մոտավորապես այդքան էլ կաղմում է Մ. Աբեղյանինը:

Ե. Զարենցի անվան թանգարանի ժողովածուի հետագա ճակատագրի մասին տեղեկանում ենք 1940 թ. Մ. Աբեղյանի՝ Երևանում լույս տեսած «Ժողովրդական խաղիկներ» խորագրով ծավալուն հատորից (պարունակում է 3433 խաղիկներ, իրենց բազմաթիվ տարբերակներով), որի տիտղոսաթերթին կարդում ենք. «Ժողովրդական խաղիկներ, գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով. խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի»:

Նույն հատորի «Առաջաբան»-ում Կոմիտասի աշխատակցության չափը պարզաբանելու համար Աբեղյանը գրել է. «Այս աշխատության սկիզբը դրվել է իմ և Կոմիտասի «Հաղար ու մի խաղ» ժողովրդական երգարանը խմբագրելու առթիվ, 1900 թվին: Այդ ժամանակներում ժողովրդական երգերը շատ սիրված էին իրենց հղանակների պատճառով: Կոմիտասն զբաղված էր եղանակների մշակումով, իսկ ես՝ ժողովրդական երգերի ուսումնասիրությամբ: Երկուսս էլ ունեինք բավական թիվով քառյակներ ժողոված. ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից ու Գ. Ճամարանի աշակերտներից, որոնց անունները ցավով, չեմ կարող հիշատակել այստեղ, որովհետև չեն պահպանված (ընդգծումը մերն է—Ա. Ղ.): Բայց այդ ամենը բավական չհամարելով, ինչպես գրել

և մի ուրիշ տեղ¹⁶, ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր: Այս միևնույնը կատարել տվինք և հաջորդ տարիները, այնպես որ մեզ մոտ հավաքվեցին տասնյակ հազարավոր թերթիկներ, որոնց վրա գրված էին ժողովրդական երգեր:

1900 թ. աշնանն արգեն սկսեցինք աշխատել ժողովրդական երգա-
քանի վրա (ընդգծումը մերն է—Ա. Ղ.). բայց մի երկու ամիս շանցած՝ տե-
սանք, որ նախ պետք էր այդ հավաքած նյութերը մշակել, այնպիսի դը-
րուժյան բերել, որ դրանցից օգտվել կարելի լիներ: Թողինք երգարան
կազմելը և սկսեցինք բաղդատել մեր ունեցած ժողովրդական երգերը,
որպեսզի կարողանայինք որոշել անիմաստ և աղճատված երգերը և օգ-
տրվել միայն իմաստալից վարիանտներից: Երկու տարի միասին պա-
րապեցինք այդ աշխատանքով: Երկար տևեց այդ, որովհետև հեշտ չէր
քառյակների փոփոխակներն իրար մոտ բերել: Գործը հնարավոր եղավ
արագ առաջ տանել միայն այն ժամանակ, երբ ես նկատեցի, որ քառա-
տողերի ամենահաստատուն մասը հանգերն են, և առաջարկեցի թողնել
քառարանի կարգով դասավորությունը և հանգերի կարգով դասավորել
ձեռքի տակ ունեցած խաղերը: Հետևանքն այն եղավ, որ նույն քառյակ-
ներն իրենց վարիանտներով իրար մոտ եկան, և մենք տեսանք, որ միև-
նույն քառատողը զանազան մարդկանց ձեռքով և զանազան ժամանակ-
ներում գրված լինելով՝ հաճախ բառացի կրկնված է տասը, քսան և ավել-
ի անգամ: Այսպիսով, մեր թերթիկների ամենամեծ մասը ոչնչացավ. և
մենք ունեցանք 1263 քառյակ իրենց վարիանտներով:

Հետագայում միասին շարունակեցինք մեր սկսած գործը: Կոմիտա-
սին չէր հետաքրքրում բանասիրական աշխատանքը: Նա թողեց այդ:
1902 թվականից հետո ես մենակ աշխատեցի: Շարունակելով մենակ ժո-
ղովել և բաղդատել քառյակները՝ ես բազմաթիվ ուրիշ այդպիսի փոքր
երգեր էլ ձեռք բերեցի իմ ընկերներից ու ծանոթներից: Ժողովածուն
հետզհետե մեծացավ:

Նույն ժամանակներում մտադիր էի լույս ընծայել այդ ժողովածուն
և դրա համար իբրև ներածություն պատրաստեցի մի ուսումնասիրու-
թյուն: Բայց շուտով թողի այդ միտքը, կիսատ գործ համարելով իմ ու-
նեցած խաղերի հրատարակությունն, առանց նկատի առնելու և տպա-
գրվածները: Ուստի 1905 թ. առանձին հրատարակեցի հիշված ուսում-

¹⁶ «Կոմիտաս», ժողովածու՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, կազմեց
Ռուբեն Թերլեմեզյան, էջ 53—69, Մ. Արեղյան, Հիշողություններ Կոմիտասի մասին:

նասիրութիւնը («Ժողովրդական խաղեր» վերնագրով), որ և մասամբ օգտագործվում է այս գրքի «Ներածութեան» մէջ:

Այնուհետեւ սկսեցի արդեն տպագրված երգերը համեմատութեան առնել, և գտա, որ դրանց մէջ բաղմամբիւ քառյակներ և վարիանտներ կան, եւս էս շունեմ, և որ ժողովրդական խաղերի ժողովածու կարելի չէ կազմել՝ առանց սպառիչ կերպով ի մի հավաքելու նաեւ տպագրվածները: Այդ աշխատանքը կատարել էի մինչև 1914 թ. և ապա տարիներ ընդհատելուց հետո՝ Ասքանազ Մոսվյանի հորդորով վերսկսեցի և ավարտեցի 1927 և 1928 թվերին... Ստացվեց մի մեծ ժողովածու, որի մէջ հեշտութեամբ կարելի է գտնել ուղած խաղն իր փոփոխակներով, միաժամանակ և իմանալ, թե տվյալ խաղը որ գրքի մէջ և սրա որ էջում տպւած կա»¹⁷:

Բերված փաստերը, եթե մի կողմից վկայում են Կոմիտասի և Մ. Աբելյանի գիտական համագործակցութեան մասին, ապա մյուս կողմից ճշգրտում են յուրաքանչյուրի կատարած աշխատանքի չափը ժողովրդական երգերի հավաքման և բաղմամբի գործում:

3

Ուշագրավ է Կոմիտասի սկզբունքային դիրքորոշումը ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի կարևոր նշանակութեան հարցում: Նրա համոզմամբ, եթե երգի մեղեդին բացահայտում է տվյալ ստեղծագործութեան քնարական էութիւնը, ապա բառերը կամ բանաստեղծական խոսքը, հիմնականում արտահայտում են այդ ստեղծագործութեան բովանդակութիւնը, միտքը, պատմում որեւէ դեպքի մասին, վերարտադրում այս կամ այն իրավիճակը, միջավայրը¹⁸:

Նրաժշտական և բանաստեղծական ձիրքը, խոսքի և մեղեդու հորինման ու կատարման կարողութիւնները Կոմիտասը համարում է հատկութիւններ, որոնք ժողովուրդը՝ իմա գյուղացին, ձեռք է բերում իր մեծ ուսուցչից՝ բնութիւնից¹⁹:

Հակառակ մեղանում ժամանակին ընդունված և ավանդույթի ուժով

¹⁷ Պրոֆ. դր. Մանուկ Աբելյան, Ժողովրդական խաղիկներ, Հայպետհրատ, 1940, էջ 110—111:

¹⁸ Կոմիտաս, Շոգվածներ և ուսումնասիրութիւններ, Երևան, 1941, էջ 11—13:

¹⁹ Նույն տեղում, էջ 29:

այժմ էլ մասամբ շարունակվող այն մոտեցման, որով ժողովրդական երգի բանաստեղծական խոսքն ու մեղեդին քննարկվում ու զնաճատվում են իրարից մեքենայորեն անջատ, Կոմիտասը դրանք դիտել է ներքին կապի մեջ, իբրև ստեղծագործական անխզելի միասնություն: Այդ է պատճառը, որ ժողովրդական երգերի տարբեր ժանրերը բնութագրելիս նա հավասարապես կարևոր տեղ է հատկացրել թև՝ բառերին և թե՛ մեղեդուն:

Իր հոգվածներում և ուսումնասիրություններում երաժշտագետը բալամիցս անդրադարձել է ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի և մեղեդու ներդաշնակության փաստին: «Որևէ երաժշտություն,—գրել է նա,—ներկայանում է մեկ առհասարակ երկու նկարագրով: Կա երաժշտություն, որ բնագրի խոսքերի հետ ներքին կապ չունի. դա պարզապես մեկուդիա է, մի որոշ եղանակ՝ հարմարեցրած բառերին: Կարելի է այդ եղանակին ուրիշ բնագիր տալ կամ բնագրին ուրիշ եղանակ դնել, առանց անպատեհության: Այդ տեսակ երաժշտության օրինակներ շատ կան թե՛ մեղանում և թև՝ օտարների մոտ:

Բայց կա և այնպիսի երաժշտություն, ուր բնագիրն ու եղանակները քաջարձակապես իրար են զուգորդված: Անկարելի է մինը բաժանել մյուսից, որովհետև librettiste-ի և compositeur-ի ստեղծագործ մտածումի մեջ կատարյալ նույնություն և միություն կա: Այդպես են, օրինակ, մեր ժողովրդական երգերը, որի թև խոսքերը և թե՛ եղանակը միաժամանակ ստեղծել է ինքը՝ ժողովուրդը»²⁰:

Նույն միտքը տարբեր երանգներով Կոմիտասը արտահայտել է նաև հաջ ժողովրդական երգերի առանձին տեսակներին անդրադառնալիս: Խոսելով, օրինակ, մեր գեղջկական պարերգերի մասին, նա ընդգծել է բառերի կարևոր դերը եղանակների ստեղծման ու պաճապանման գործում: Նրա կարծիքով՝ պարերգերը իրենց բովանդակության համաձայն ունենում են և համապատասխան երաժշտական արտահայտություն: «... Երբ պոկ է գալի մի եղանակ իր բուն և հիմնական բառերից, կորցնում է հավասարակշռող նեցուկը, կանգուն պահող հենարանը և անհայտանում»²¹:

Կոմիտասի հավաստմամբ՝ «Ժողովուրդը երգում է այնպես, ինչպես խորհում է և խոսում: Երգը և խոսքը միատեսակ կարողություն են. որքան լավ խորհի մարդը, այնքան լավ կիտսի և կերգի»²²: Եվ ապա. «Խոս-

²⁰ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 162:

²¹ Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 28—29, 52—53:

²² Տե՛ս «Սովետական Հայաստան», № 218, 1969 թ.:

քըն ու ձայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունը, իրր երկվորյակ քույրեր, բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից, բնազդաբար և առանց կանխակալ նախապատրաստություն ունենալու»²³:

Մի այլ անգամ բացահայտելով խոռու գութաներգի էությունը, Կոմիտասը նրա մեջ երաժշտական եղանակի հետ կարևոր տեղ է հատկացնում նաև բանաստեղծական խոսքին: Նա գրում է. «Շինական կյանքի մութն ու լույսը, գործն ու հույսը ծնում են մեր գոլտրիկ գութաներգը:

Շինական այն կախարդ վարպետն է, որ կարգում է հարազատորեն բնությունը, ստեղծում բազմաբեղուն մտքեր, նոցա փչում է իր հզոր ու պարզ շունչը, դրոշմում է իր բնավորության էականով ներքին և արտաքին լրիվ կյանքով և կնքում է բառերով ու եղանակով իր հարազատ զավակը՝ գութաներգը»²⁴ (ընդգծումը մերն է—Ա. Դ.):

Բառ ասելով, ինչպես այլուր, այնպես էլ այստեղ, Կոմիտասը հասկանում է երգի բանաստեղծական խոսքը, նրա բովանդակությունը:

Հ. Աճառյանի վկայությամբ, Կոմիտասը միշտ ասելիս է եղել, որ՝ «ժողովրդական բանահյուսությունը իր հոգվույն մեջ զուգընթաց էր ժողովրդական երաժշտության հետ»²⁵:

Ժողովրդական տարբեր տիպի երգերի, այդ թվում նաև պարերգերի ուրիշ-մի, մեղեդու և բանաստեղծական խոսքի միասնության վերաբերյալ Կոմիտասի արտահայտած վերոհիշյալ մտքերն ու դիտողությունները արդյունք են նրա կատարած երկարամյա նուրբ ու խորազնին քննությունների, խարսխված երաժշտագետի տրամադրության տակ եղած փաստական հաբուստ նյութի վավերական հիմքերի վրա: Դրանք ինքնաբերաբար արձագանքում են տվյալ հարցի շուրջը Ա. Ն. Վեսելովսկու սինկրետիկ արվեստի մասին արտահայտած և միջազգային ճանաչում գտած համապատասխան մտքերին ու դիտողություններին²⁶: Նույն հարցի վերաբերյալ Կոմիտասի ասույթները ըստ ամենայնի ճշմարտացի լինելով, ունեն սկզբունքային կարևոր նշանակություն ոչ միայն հայ, այլև ընդհանուր բանագիտության և երաժշտագիտության համար:

²³ Կոմիտաս. Հողվածներ և ուսումնասիրություններ, էջ 24:

²⁴ Նույն տեղում, էջ 99:

²⁵ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 76—77:

²⁶ А. И. Веселовский, Историческая поэтика, М., 1940, стр. 200—201.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

Դեռևս 1899 թվականին, Վարդան Այգեկցու անունով հայտնի առականերին նվիրված իր նշանավոր աշխատությունն իբրև մագիստրոսական դիսերտացիա պաշտպանելիս, Ն. Մառը արձանագրել է, որ հայագիտությունը չի կարող հիմնվել միայն բանասիրության վրա, այս բառի նեղ հիմաստով: Հնագիտությունն իր օժանդակ առարկաներով և աղագրությունը բանահյուսության հետ, նրա կարծիքով, պակաս չպետք է հետաքրքրեն հայագետին, քան լեզվաբանությունն ու գրականությունը: Նման հայացք ունենալով հայագիտության խնդիրների վերաբերյալ, Մառը, ինչպես իր «Վարդանի առականերում», այնպես էլ բազմաթիվ ուրիշ աշխատություններում, ուսումնասիրության առարկա է դարձրել հայ ժողովրդի թե՛ նյութական և թե՛ հոգեոր մշակույթի գրեթե բոլոր բնագավառները, այդ թվում նաև նրա դարերի խորքից եկող բանավոր ստեղծագործությունը, դիտելով դրանք Հայաստանի նախաբնիկ ու հարևան ցեղերի ու ժողովուրդների, ինչպես նաև հեռավոր ուրիշ ազգերի լեզվի, հնությունների, պատմության, գրականության, հավատալիքների ու բանարվեստի հետ ունեցած համապատասխան կապերի ու շփման ոլորտում:

Ինչպես հայագիտության մյուս հարցերի լուսաբանման ժամանակ, այնպես էլ ժողովրդական բանահյուսության խնդիրները քննարկելիս Մառին առաջնորդել, ստեղծագործական դրդում է տվել այն ինքնաբերական հետաքրքրությունն ու անկաշուռ վերաբերմունքը, որ ունեցել է նա իր հրկարամյա գիտական գործունեության ընթացքում հայ ժողովրդի պատմական ճակատագրի և նրա ստեղծած հին ու մեծ մշակույթի նկատմամբ:

Ն. Մառի բանագիտական մտքերն ու դիտողությունները ցրված են փոփոխականի՝ «Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը», «Հայկական մշակույթը և նրա պատմական արմատները», «Վովկասյան կուլտուրական աշխարհը և Հայաստանը», «Հայագիտության խնդիրների շուրջը», «Ամառային ուղևորություն դեպի Հա-

¹ Н. Я. Марр, К вопросу о задачах арменоведения, СПб., 1899, էջ 6—7.

յաստան», «Վարդանի առակաների ժողովածու», «Մ. Խորենացու աղբյուրների հարցի շուրջը», «Սարգսուրի արձանագրությունները», «Դարձյալ Չեղեբի բառի մասին» և մի քանի ուրիշ աշխատություններում:

1

Նիկողայոս Մառը առաջիններից մեկն է եղել մեղանում, որ արծարծել է հայ ժողովրդական բանահյուսության հնագույն ծագման, հայերի՝ իրենց հեռավոր նախնիներից ստացած բանահյուսական ժառանգության կարևոր հարցերը, փորձել է համապատասխան փաստերով, ծագումնաբանորեն ու պատմականորեն հիմնավորել դրանք:

Խոսելով ուրարտական թագավորների մղած պատերազմների հայ ավանդական բանահյուսության մեջ ունեցած արձագանքների մասին, նա այդ առնչությամբ արձանագրել է այն հանգամանքը, որ գիտություն մեջ տակավին շատ քիչ են արծարծվել Հայաստանի բնակիչների գիտակցության մեջ պահպանված հնագույն բանավոր հիշողությունների այնպիսի փաստեր, ինչպիսիք են, օրինակ, Խորենացու «Հայոց պատմություն» մեջ առկա Տրդատի, Արշակի, Վաղարշակի և այլոց վերաբերյալ վիպական պատումները, ուր պատմահոր շարադրանքի մեջ մերթ ընդ մերթ մուտք են դործում ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն և ժողովրդական տրամադրությունը²:

Մի ուրիշ անգամ, անդրադառնալով հայկական կենդանական էպոսի ծագման ու հնության հարցերին, Մառը հավաստել է այդ էպոսի մի շարք նմուշների Հայաստանի նախաբնիկներից մնացած լինելու հանգամանքը: «Անհիշելի ժամանակներից,— դրել է նա,— Հայաստանում գոյություն ունեին հեքիաթներ կենդանական աշխարհի վերաբերյալ, թերևս և կենդանական էպոս: Գրական այդ հարստության հիմնական մասը, հայերը, հավանորեն, ժառանգել էին Հայաստանում բնակվող նախաարիական տարրից»³:

Այլ առիթով անդրադառնալով արևելյան հեքիաթների և հայկական կենդանական դրույցների մեջ եղած աղերսին, գիտնականը հինվելով Հերոդոտի համապատասխան մի ակնարկի վրա, գտնում է, որ առականը

² Н. Марр и Н. Орбели, Археологическая экспедиция 1916 года в Ван, Петербург, 1922, т. 2, 61;

³ Н. Марр, Сборники притч Вардана, часть I, СПб., 1899, т. 2, 577:

Հայաստանում պետք է շատ հնուց հայտնի լինեին: Նրա կարծիքով, Լթե ամենազգուշավոր հետազոտողներն անգամ չեն կարող բացասել, որ Նյուլլպոսն իր առակներով Հունաստանում հայտնվել է Փոքր Ասիայից, լինելով թերևս փոյուգացի, ապա միանգամայն բնական է ընդունել, որ Հայաստանում տարածում են ունեցել, իհարկե, բանավոր ճանապարհով, փոյուպիայում բուն դրած առակներ, թերևս հենց իրենց՝ Հայաստանում բնակություն հաստատած փոյուգացիների միջոցով⁴:

Հայ ժողովրդական բանահյուսության հնագույն ծագման և հայերի՝ իրենց հեռավոր նախնիներից ստացած բանահյուսական ժառանգության վերոհիշյալ կարևոր թեզը Ն. Մառը հիմնավորել է կուլտուրական փոխանցման ու հաջորդակցության սկզբունքով: Նրա կարծիքով, խնդիրն այստեղ է թնիկյապես նորոգված կամ վերաստեղծված, նոր կազմության ունեցող բնակչության մեջ կործանված հասարակության գաղափարների ու երազանքների պահպանման մասին է, անկախ դրանց պահպանվածության շափից ու աստիճանից⁵:

Հայագիտությանը, ինչպես հայտնի է, ոչ միայն շհերքեց հայ ժողովրդական բանահյուսության հնագույն ծագման և Հայաստանի նախաբնիկ ցեղերից մեր ժողովրդին անցած բանահյուսական երկերի և ընդհանրապես նրանց հոգևոր ժառանգության Մառի կողմից շատ տարիներ առաջ շրջանառության մեջ դրված վերահիշյալ դրույթը, այլև ժամանակի ընթացքում նորանոր փաստերով հիմնավորեց ու հաստատեց այն:

2

Հայ բանագիտության համար նշանակալից արժեք են ներկայացնում Ն. Մառի ասույթները ժողովրդական ավանդույթունների մասին:

Ն. Մառին է պատկանում մեզանում հայկական ավանդույթունների մի զգալի մասի Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների հետ ունեցած սերտ կապի և այդ ավանդույթունների պահպանման ու հարատևման գործում հիշյալ հուշարձանների խաղացած նշանակալից դերի բացահայտման առաջնությունը:

Խոսելով դարձյալ նույն խորենացու Պատմության մեջ պահպանված հայկական հին վեպի վիշապազույններին վերաբերող հատվածների մասին, Մառը նշել է, որ հեթանոսական աստվածների հետ միասին հայ ժողովուրդը հաբեթական ընտանիքից իբրև ժառանգություն հետք բե-

⁴ Նույն տեղում, էջ 517:

⁵ Н. Мэрр и Н. Орбели, Археолог. эксп. 1916 года в Ван, Петербург, 1922, էջ 60:

րել է իր զարմանալի էպոսը, որի վիշապներին վերաբերող մասը, շնայած ամբողջությամբ չի հասել մեղ, ունի համաշխարհային նշանակութիւն⁶:

Խորենացու այդ տողերը, Մառի կարծիքով, բոլորովին նոր արժեք են ստանում մեր օրերում, երբ Գեղամա լեռներում հայտնաբերվեցին վիշապներ կոչված քարե կոթողները, որոնց հնութիւնը նա հասցնում է մինչև մեր թվականութեանը նախորդող 5-րդ հազարամյակը⁷:

Գիտնականի դիտողութիւնների մեջ բնութեկի են երկու կարևոր հանգամանք.

ա. վիշապադուներին վերաբերյալ հայկական հին վկայք, իբրև համաշխարհային նշանակութիւն ունեցող հուշարձան դիտելը: Դա անկասկած ճիշտ միտք է, այն չափով, որ չափով որ տվյալ վկայք կապվում է մի այնպիսի պաշտամունքի հետ, որի նյութական վկա ձկնակերպ քարե կոթողները գտնվել են նաև Հայաստանից դուրս:

բ. Նշված քարե կոթողների ծագման ժամանակաշրջանի վերաբերյալ արված ակնարկը, որի հիման վրա հնարավոր է դառնում որոշելու նաև վիշապադուների վերաբերյալ վեպի հորինման մոտավոր ժամանակը: Եթե վիշապ-ձկների քարե կոթողները գոյութիւն են ունեցել մեր թվականութիւնից առնվազն հինգ հազար տարի առաջ, ապա բնական է նույնպիսի հնութիւն վերագրել նաև դրանց պաշտամունքի հետ կապված բանահյուսական երկերին:

Մի այլ առիթով, անդրադառնալով ուրարտական թագավորների ռազմական գործողութիւնների վերաբերյալ Հայաստանում պատմվող ժողովրդական ավանդութիւններին, Մառը նշել է, որ այդ ավանդութիւնները տեսանելի օժանդակութիւն էին գտնում Հայաստանում գրտնրված սկապգիր արձանագրութիւնների փաստի մեջ, որոնք թեև արդեն չէին հասկացվում, բայց որոնց մեջ ժողովուրդը շարունակում էր տեսնել նույն այդ թագավորների շինարարական գործերը⁸:

Հենվելով Մառի վերոհիշյալ մտքի վրա, կարելի է վստահ առաջ քաշել բանավոր ավանդութիւնների ու գրույցների ժողովրդի հիշողութեան մեջ պահպանվելու գործում նյութական մշակութի հուշարձանների (արձանագրութիւններ, բերդեր, տաճարներ, կամուրջներ և այլն) ունեցած:

⁶ Н. Я. Марр, Армянская культура, ее корни и донисторические связи («Язык и история», кн. I, Л., 1936, էջ 82),

⁷ Նույն տեղում, էջ 68:

⁸ Н. Я. Марр и И. Орбели, Археол. эксп. 1916 года в Ван, Петербург, 1922, էջ 60.

դերի հարցն ընդհանրապես, և հայկական բանահյուսության տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող մի շարք ավանդությունների պահպանման գործում Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանների ունեցած կարևոր դերի հարցը մասնավորապես:

Պերճախոս է այս առումով վանի մոտ գտնվող հայտնի «Մհերի դուռն» իր սեպագիր արձանագրություններով: Կասկածից վեր է, որ այս հնագույն հուշարձանին ենք գլխավորապես պարտական Մհերի դիցաբանական կերպարի վերաբերյալ մեզ հասած մի շարք ավանդություններով ու զրույցներով: Պատահական չէ այն փաստը, որ այդ ավանդություններն ու զրույցները ամենից շատ ու ամենից լավ պահպանվել են հենց Վասպուրականում, մասնավորապես վանի շրջակայքում, այնտեղ, ուր գտնվում է «Մհերի դուռ» կոչված քարաժայռը:

Ուշագրավ է նաև Կաղզվանի գավառում գտնվող «Խանդութի բերդը», որն իր մոտակայքում ապրող բնակչության մեջ երկար դարեր կենդանի է պահել «Սասնա ծռերի» ամենագեղեցիկ հատվածներից մեկը՝ Դավթի և Խանդութի սիրավեպը⁹, Կարևի է բերել նման կարգի ուրիշ շատ օրինակներ:

Նյութական մշակույթի հուշարձանները, սակայն, միայն ժողովրդի հիշողության մեջ չէ, որ կենդանի ու վառ են պահել իրենց հետ ավել կամ պակաս չափով կապված վաղնջական ավանդություններն ու ավանդական զրույցները: Նույն այդ հուշարձաններն են, որ հաճախ պատճառ են դարձել նաև ժողովրդական ավանդությունների գրականության մեջ մուտք գործելուն:

Այս տեսակետից էլ դարձյալ ցայտուն օրինակ կարող է ծառայել հայ գրականությունը, որի հին և նոր շրջանի շատ հեղինակներ՝ Խորենացուց մինչև Աբովյան և հետո, իրենց պատմագրական երկերում, տարբեր առիթներով հիշելով կամ նկարագրելով նյութական մշակույթի որևէ հուշարձան, ի միջի այլոց, մեջ են բերել նաև այդ հուշարձանի հետ կապված ժողովրդական ավանդությունները:

Հայաստանի համար հատուկ կարևորություն ունի Մառի տվյալ միտքը, իբրև մի երկրի, ուր շատ են թե՛ բանավոր ավանդությունները և թե՛ նյութական մշակույթի հնագույն հուշարձանները:

Ուսանելի է նաև գիտնականի ըստ ամենայնի զգաստ և քննադատական դիրքորոշումը ավանդությունների նկատմամբ, իբրև ճանաչո-

⁹ Ղ. Խնկիճյան, Աշխարհագրություն, հտ. Ա., Վենետիկ, 1806, էջ 121:

ղական որոշակի արժեք ներկայացնող յուրահատուկ պատմական սկզբնաղբյուրների:

Ն. Մառը միանգամայն իրավացի է, երբ գտնում է, որ հայ գրական-նության վաղնջագույն դարաշրջանի փաստացի հետազոտության արդյունքները այլևս թույլ չեն տալիս կառուցելու հին հայերի ներքին կյանքի վերաբերյալ զգալի շափով ավանդությունների վրա հիմնված ժամանակակից պատկերացմանը: Սակայն նույն այդ արդյունքներն էլ, նրա հավաստմամբ, իրավունք չեն տալիս մեզ հախուռն կերպով դնել նետելու հայկական բոլոր գրական և պատմական ավանդությունները, քանի որ դրանք կարող են հնարավորություն տալ, և արդեն տալիս են, ավանդական շերտավորումները՝ հետագա դարերի այդ յուրահատուկ գիտական լուսաբանությունները, դուրս կորզել ավանդությունների միջուկը կազմող իրական փաստերից: Հիշյալ շերտավորումները կոպտոր-պատմական նյութի նշանակություն կստանան այն դարաշրջանների բնութագրման համար, երբ դրանք ծագել են: Կատարված ստուգումները, ըստ Մառի, ցույց են տալիս, որ հայկական հնօրյա ավանդությունները չափազանց ուշագրավ տվյալներ են պահպանել մեզ համար, և մեր խնդիրն է ոչ թե բացասել, այլ բացատրել դրանք: Գիտնականը չի մոռանում հիշեցնելու, որ ավանդությունների վերջնական ձևավորման ժամանակաշրջանը զգալիորեն հեռանում է դրանց մեջ նկարագրված դեպքերից: Մառը միաժամանակ նշում է, որ ավանդությունների ստեղծման մեջ որոշ բաժին ունեն միջին դարերը, մի հանգամանք, որ թևադրում է մեզ մեր հետաքրքրությունը հայ գրականության նկատմամբ շատ համառոտ-կեղ միայն վերջինիս հին շրջանով¹⁰:

3

Բանագիտական հաջորդ հարցը, որն իր ինքնատիպ մեկնաբանությունն է գտել Մառի աշխատություններում, հայ և ուրիշ ժողովուրդների բանավեճի մեջ եղած փոխհարաբերության խնդիրն է:

Սկզբունքային նշանակություն ունեցող այդ կարևոր հարցին շատերն են անդրադարձել մեղանում: Այն առանձնապես նշանակալից տեղ է գրավում հայկական դիցարանին նվիրված բանագիտական գործերում, որ հեթանոսական շրջանի հայ և օտար աստվածների և վերջիններիս մասին

¹⁰ Н. Я. Марр, К вопросу о задачах арменоведения, СПб., 1899, էջ 10:

վիպող առասպելների նմանությունները մեծ մասամբ բացատրված են փոխառության կամ ազդեցության դործոններով:

Մառի մոտեցումը տվյալ դեպքում բոլորովին այլ է: Չթխտելով հանդերձ հայ դիցարանի և բանահյուսության մեջ տեղ գտած փոխառության և ազդեցության որոշակի փաստերը, նա վերահիշյալ նմանությունների արմատները հիմնականում թաղված է տեսել տեղական հողի մեջ:

Գիտնականը գտնում է, որ հաբեթական (իմա՝ տեղական) էթնիկական աշխարհի, Կովկասի բնակչության այդ ցեղային հիմքի ու նախահիմքի նկատմամբ մեր ունեցած գիտելիքների խորացման հետ, հայ բանահյուսության մեջ դիտված «ազդեցությունների» և «փոխառությունների» երևույթները (այսպես կոչված «իրանիզմը» և այլն) անկենդան բաներ դուրս եկան, կամ էլ՝ պարզապես արդյունք տեղական ու առհասարակ Առաջավոր Ասիայի բուն հեթանոսական էթնոկուլտուրական երևույթների, իրանական և ուրիշ կուլտուր-պատմական շերտավորումների երանգով կատարված հարմարեցման¹¹:

Հունական Պրոմեթեոսի, կովկասյան Ամիրան-Ամթանի և հայկական Մհերի միջև եղած ակնհայտ նմանություններն, օրինակ, նա բացատրել է հիշյալ կերպարները ստեղծող ժողովուրդների հնուց եկող պատմական աղերսով և էթնոկուլտուրական ընդհանրություններով: Ամիրան-Մհերին համարելով այսպես կոչված հաբեթական ընդհանուր ծագում ունեցող և կամ իրենց ծագման մեջ շեշտված հաբեթական (իմա՝ տեղական) տարր պարունակող աբխազ, վրաց և հայ ժողովուրդների հնագույն դիցաբանական կերպարներից մեկը, Մառը իր կարծիքը հիմնավորել է աբխազական՝ Aberskil, վրացական՝ Amiran և հայկական՝ Meher անունների հնչյունական ուղղակի նմանությամբ և մանավանդ հիշյալ կերպարների՝ դարբնոցի և վերջինիս պաշտամունքի հետ ունեցած առնչակցությամբ: «Այդ արև-հերոսը,—գրել է նա,—սրբազան կրակի գյուտարարը, կամ ըստ հունական վարկածի՝ երկնքից կրակի հափշտակիչը, որն իր ճակատագրով սերտորեն կապված է դարբնոցի հետ, հանդիսանում է հերոսի փոխակերպված արև-աստծու մասին հաբեթական հնագույն զրույցներից մեկը»¹²:

Առավել ուշագրավ են Մառի մտքերը հայկական Կուառ և ուկրաինական Կիև քաղաքների մասին հիշյալ երկու ժողովուրդների մեջ ստեղծ-

¹¹ Н. Я. Марр, Избранные работы, т. I, 1933, էջ 87:

¹² Н. Я. Марр, Кавказовед. и абхазск. язык, «Избранные работы», т. I, 1933, էջ 74:

ված հայտնի լեգենդների աղերսի վերաբերյալ, որ նա արտահայտել է այդ լեգենդներին նվիրված իր մի հատուկ հետազոտության մեջ:

Էթնոմշակութային և պատմալիզվաբանական բազմաթիվ տվյալների դիտարկմանն այստեղ հաստատել է, որ մինչև մեր թվականության V—IV դարերը, Վանա լճի ափին գտնվող Կուառ կոչված քաղաքի և վերջինս կառուցող Kuar, Mel-te և Hor-+e-an անուններով երեք եղբայրների մասին եղած հայկական լեգենդը նյութականորեն շփվում է Հայաստանի պատմության հնագույն շրջանի հետ և նման է Կիև քաղաքի և սրա կառուցող Кий, Щек և Хорив անուններով երեք եղբայրների մասին վիպող ուկրաինական համապատասխան լեգենդին: Մառը միաժամանակ հավաստում է, որ այդ երկու ստեղծագործություններն էլ ծագել են Պոնտական ծովափին վաղնջական դարերում հորինված սկյութական մի ավանդությունից, ցույց տալով, թե ինչպես հիշյալ ավանդությունը կիսվելով տվել է երկու առանձին տարբերակներ՝ մեկը հայկական, մյուսը ուկրաինական¹³:

Կարևոր են նաև Մառի մտքերը այն ազդեցության մասին, որ ունեցել է հայ բանահյուսությունը Արևելքի ու Արևմուտքի տարբեր ազգերի բանավոր ստեղծագործության վրա:

Հայտնի է, որ մեր բանագետներից ոմանք, երբեմն ծայրահեղության մեջ ընկնելով, ուրիշ ժողովուրդներից հայերի կատարած բանահյուսական փոխառությունների հարցում, անտեսել են այդ երևույթի հակառակ կողմը: Մառի մոտեցումն այստեղ էլ տարբեր է:

Խոսելով, օրինակ, այն կարևոր դերի մասին, որ ունեցել է խաչակրաց արշավանքը եվրոպական և արևելյան ժողովուրդների հեքիաթների տարածման գործում, նա գրել է. «Խաչակրաց արշավանքներին, որոնք մերձեցրին կրիկյան հայերին Եվրոպայի հետ, այս խնդրում պետք է, իհարկե, նշանակալից դեր հատկացնել: Սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ եթե հայերը Կիլիկիայում և հարևան իշխանությունների մեջ կարող էին ընդունել եվրոպական հեքիաթներ, ապա միևնույն ճանապարհով արևելյան մոտիվները կարող էին հայերից անցնել եվրոպացիներին: Դիսավոր հարցն այստեղ, ի միջի այլոց, այն է, որ ձեռագրական բեկորների հիման վրա պարզվի միջնադարյան հայ հեքիաթների բնույթն ու քանակը, և վերջիններիս առնչությունը, եթե այն գոյություն ունի, եվ-

¹³ Н. Я. Марр, Книжные легенды об основании Куара в Армении и Киева на Руси, «Избр. работы», т. V, 1936, էջ 44—66, „Язык и история“, т. I, 1936, էջ 82—83:

լուսակա՛ն հեքիաթների հետ: Իսկ հայերի ու հվրոպացիների շփման ուղիները շատ բազմազան էին: Հայ ժողովրդի ստեղծագործություններին հվրոպացիք կարող էին ծանոթանալ բուն հվրոպայում, հայկական գաղութներում, թերևս, օրինակ՝ Սալերնոյում»¹⁴:

Մի ուրիշ անգամ անդրադառնալով «Տրիստան և Իզոլդա» էպոսի ծագման ու տարածման խնդիրներին, Ն. Մառը այն համարում է հաբեթական միջավայրի ծնունդ, որը ներկայացնում է զուտ հաբեթական կամ հաբեթականների հետ խառնված որոշ ժողովուրդների բարբերը: «Հայ ժողովուրդը,—գրել է նա,—այդ էպոսի, համամարդկային աղբյուրից սերող կուլտուրական այդ ավանդի ոչ միայն ավագ ժառանգորդներից մեկն է, այլև ավագագույն ժառանգորդը մնացած բոլոր ժողովուրդների մեջ, նրա ամբողջականության հավատարիմ պահապանը, սնուցողն ու տաճածողը Արևելքում և Արևմուտքում»¹⁵:

Մի այլ առիթով անդրադառնալով միջնադարյան Հայաստանի առակների ժողովածուների միջազգային տարածմանը, Մառը նշել է, որ «հայկական ժողովրդական գրքերը իրենց տեսակի մեջ առաջինն էին, որոնք նպաստեցին տարբեր ազգերի գրագետ խավերի մերձեցմանը, սկսած արաբներով բնակեցված Միջագետքից և Սիրիայից, մինչև Կուկասյան լիճները»¹⁶:

Նույն միտքն է նա արտահայտել նաև հայոց վիպասանների և ժողովրդական երգիչների ստեղծագործությունների մասին խոսելիս: «Հարևան և նույնիսկ հեռու գտնվող ազգերից ո՞րն է, որ չի օգտվել հայ ժողովրդի մշակութային արժեքներից, որոնք գալիս են վիպասաններից և հասնում են մինչև աշուղների երգերը»,—գրել է նա այդ առթիվ¹⁷:

4

Ն. Մառն ուշադրալ ասությանը ունի նաև հայ բանահյուսության և հայոց հին ու միջնադարյան գրականության կապի ու փոխհարաբերության հարցի վերաբերյալ:

Հիանալի իմանալով ինչպես հայ ժողովրդական բանահյուսության, այնպես էլ հայոց հին և միջնադարյան գրականության հարուստ փաս-

¹⁴ Н. Марр, Собрания притч Вардана, часть I, СПб., 1899, էջ 370—371:

¹⁵ «Язык и история», т. I, 1936, էջ 84:

¹⁶ Նույն տեղում, էջ 67:

¹⁷ Նույն տեղում, էջ 73:

տերը, մեծանուն հայագետը կարողացել է թափանցել այդ փաստերի խորքը, բացահայտել դրանց ծնող ու սնող հասարակական պայմանները, կատարել ճշմարտացի կուսհումներ և հիմնավոր հղրակացություններ:

Հայ հին պատմիչների ժողովրդական բանավեպի և մասնավորապես հեքիաթների նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքինա ճիշտ կերպով բացատրել է համապատասխան հասարակական-գաղափարական դրդապատճառներով:

«Հայ գրականությունը,—գրել է նա,—անցյալում ընդհանրապես քիչ էր հետաքրքրվում հրկրայինով ու իրականով, իսկ այնպիսի աշխարհային բաների մասին, ինչպիսիք էին ժողովրդական հեքիաթները, դուրսացրեցին միջավայրի նկատմամբ լուսավորչալ խավերի ունեցած ընդհանուր արհամարհական վերաբերմունքի պատճառով, պահպանում էր քար լուսնություն»¹⁸:

Մի այլ առիթով վերստին անդրադառնալով հայոց հին գրականության ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի հարցին, Ն. Մառը հավաստում է, որ այդ գրականությունը իր դոները փակել է այն ամենի հանդեպ, որ քրիստոնեական չէ: Հայ գրողները լուսնյուն են պահպանել հարազատ ժողովրդի բանավոր ստեղծագործության մասին, նրանց համար ժողովրդական հեքիաթներն ու հրգեղը արգահատանքի առարկա են հղել. նրանք խուսափել են այդ հեքիաթներից ու հրգերից, ինչպես սատանայական ուրվականներից: Եզնիկը դրանց մասին հիշատակում է հպանցիկ կերպով, իբրև ուշադրության անարժան բաների: Գիտնականի համոզմամբ, հայ հին հեղինակներն իրենց էությունը չէին կարող հետաքրքրվել ոչ ժողովրդական էությունով, ոչ էլ հաճույքով այն վերաբերադրել թղթի վրա¹⁹:

Հայոց հին գրականության ավանդական բանահյուսության հետ ունեցած փոխհարաբերության հարցում կենտրոնական և կարևոր տեղ է գրավում Մովսես Խորենացու ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած դիրքորոշման խնդիրը: Մեր պատմիչ-գրողներից ոչ մեկը, այս տեսակետից, այնքան նյութ չի տվել զատողությունների ու վեճերի, որքան Խորենացին: Եվ դա բնական է: Խորենացին հայոց հին գրականության այն հղակի դեմքերից է, որը առավել լուրջ վերաբերմունք է ունեցել ժողովրդական բանահյուսության նկատմամբ և մյուսներից ավել-

¹⁸ Н. Марр, Сборники притч Вардана, часть I, СПб., 1899, էջ 523:

¹⁹ Н. Марр, К критике истории М. Хоренского, СПб., 1898, էջ 25—26:

լի է օգտագործել վերջինիս նմուշները: Ահա թե ինչու, հայկական հին բանահյուսության մասին գրող հայ և օտար բոլոր բանագետները անխառն անդրադարձել են հորենացու Պատմության աղբյուրներին: Նրանցից ոմանք, ծայրահեղության մեջ ընկնելով, առաջ են քաշել այն տեսակետը, ըստ որի, հորենացու գրքի զգալի մասը շարագրված է բանահյուսական նյութերի հիման վրա²⁰: Ուրիշները, ընդհակառակը, փորձել են բոլորովին ժխտել այդ նյութերի առկայության փաստը²¹: Քչերն են միայն, որ կարողացել են ճշտորեն որոշել ժողովրդական բանահյուսության տեղն ու դերը պատմահայր երկում և տալ դրա գիտական վերլուծումըն ու գնահատականը²²:

Այդ քչերից է և Ն. Մառը: Խորենացու Պատմության աղբյուրների քննությանը նվիրված իր մի աշխատության մեջ, նա տվել է մեզ ղբաղեցնող հարցի սպառիչ պատասխանը: Գիտնականի կարծիքով Խորենացին մեկից ավելի անգամ իր բացասական վերաբերմունքն է արտահայտել ժողովրդական բանահյուսության հանդեպ, միաժամանակ բավական լայն տեղ հատկացնելով այդ բանահյուսության նյութերին: Պատմահայր այդ հակասական մոտեցումը, Մառի կարծիքով, հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք ունենում նրա երկակի վիճակը. մի կողմից հայրենի երկրի քաղաքական պատմության վերաբերյալ հավաստի տվյալների բացակայությունը, մյուս կողմից նախորդ հեղինակների գրվածքները, ուր իբրև պատմության մեջ էին բերված առելի ժողովրդական բանահյուսության նյութերը, չսիրված ռամական լեզվով, անընդունելի բանաստեղծական ձևերի մեջ: Մառի հավաստմամբ Խորենացին ակամայից է օգտվել այդ նյութերից, այն էլ ոչ այնքան մեջբերելով դժանք, որքան հիշատակելով դրանց մասին իբրև հանրահայտ բաների. երբեմն միայն բերելով առանձին քաղվածքներ ու տողեր, նա իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է դրանց մեջ առկա պատմական միջուկի բացահայտման վրա²³:

Հակառակ Գր. Խալաթյանի, որի կարծիքով Խորենացու «վեպ» կոչ-

²⁰ Մ. Էմին, *Վէպը հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850*:

²¹ Г. Халатянц, *Армянский эпос в Истории Армении* М. Хоренского, М., 1896.

²² Մ. Արևլյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899*:

²³ Н. Я. Марр, К вопросу об источниках Истории Моисея Хоренского, «Виз. временник», т. I, 1895, № 263—366.

ված աղբյուրները շինծու են, և որ «վեպ» անվան տակ «ծածկված են միամբողջ շարք զանազան թարգմանական ու ինքնագիր գրավոր հիշատակարաններ», որոնք հորենացու իսկական, բայց «թաքցրած» աղբյուրներն են և, որ հորենացու շատ անգամ հիշած «հայոց վեպը» սովորաբար գրքային ծագում ունի և մեծ մասամբ Աստվածաշնչի մոտիվների շատ ու քիչ վարպետ փոխադրածումն է, որ հենց իրեն պատմագրի գրչին է պատկանում²⁴, Մառը գտնում է, որ այդ «վեպը» իրականում եղել է ժողովրդի մեջ, բայց եկեղեցական հեղինակների ժողովրդական բանահյուսության նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի պատճառով շատ քիչ է գրի առնվել:

«... Ժողովրդական մոտիվների աղքատությունը հայ գրականության մեջ,—գրել է նա,—պետք է բացատրել ոչ թե հայկական վեպի աղբյուրների բացակայությամբ, այլ այն թշնամական զգացումով, որ տածում էին հայ գրագետները հարազատ վեպի նկատմամբ: Այդ երևույթը, ի միջի այլոց, միայն հայ գրականության մեջ չէ, որ նկատելի է»²⁵:

Որ հորենացու Պատմության մեջ հիշատակված առասպելներն ու վեպերը իսկապես վերցված են հայ ժողովրդի ավանդական բանահյուսությունից, հաստատվում է մի շարք անառակելի փաստերով, որոնք կարելի է գտնել Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Մ. հորենացու Հայոց պատմության մեջ» խորագրով ուսումնասիրության մեջ, լույս տեսած Մառի հիշյալ քննադատությունից մեկ տարի հետո (գրված լինելով վերջինիս հետ միաժամանակ), ուր, ի դեպ, տրված է նաև Մառի կարծիքի գնահատականը, իբրև «լուրջ և մտացի քննադատություն»²⁶:

Գալով ժողովրդական բանավիճակի և մասնավորապես կենդանական դրույցների ու առակների նկատմամբ հայ միջնադարյան հեղինակների ունեցած բարյացակամ վերաբերմունքին, ապա այդ երևույթը Մառը իրավացիորեն բացատրել է փոփոխված հասարակական պայմանների շնորհիվ գրականության մեջ ժողովրդական ստեղծագործության նկատմամբ առաջ եկած հետաքրքրություն:

²⁴ Г. Халатянц, Арм. эпос в Истории Армении Монсея Хоренского, М., 1896, էջ 205.

²⁵ Н. Я. Марр, К вопросу об источн. Истории М. Хоренского, «Виз. временник», вып. I и II, էջ 252—253.

²⁶ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. հորենացու Հայոց պատմության մեջ, էջ 5:

«Բաւական էր միայն,—գրել է նա,—որ սշխարհականը ձեռն առնէր գրիչը, որպէսզի բարձրանար վարագույրը»։ Այդպիսի աշխարհական հեղինակներից գիտնականը հիշում է Գրիգոր Մագիստրոսին, որին և մենք, նրա ասելով, պարտական ենք հայոց կենդանի հնութեան մի շարք պատահիկների պահպանման համար²⁷։ Մի ուրիշ առիթով Մառը գրել է. «Կենդանական հեքիաթները հայերի մեջ չէին դադարում ապրել գոյուղացիական միջավայրում, ուր դրանք քշված էին քրիստոնեական լուսավորութեան ջատագույնների կողմից և կրթված դասերի անտարբերութեամբ կամ արհամարհանքով։ Իսկ երբ միջին դարերում հայոց գրականութեան աշխարհականացման հետ, ժողովրդական հոսանքը ճանապարհ հարթեց իր համար դեպի Վարդանյան ժողովածուները, ապա նույն այդ ճանապարհով էլ ժողովրդական ստեղծագործութեան շիթը կենդանական հեքիաթների աշխարհից մուտք գործեց հիշյալ ժողովածուների մեջ»²⁸։

Կենդանական այդօրինակ հեքիաթներից են սերում, ըստ Մառի, Վարդանյան ժողովածուներում տեղ գտած՝ «Եզն ու ձին» (№ 294); «Օձն ու ճեղքը» (№ 192, 417), «Արջն ու խաղողը» (№ 349, 405) և բազմաթիվ ուրիշ առակներ (էջ 532—567)։ Իբրև ապացույց հիշյալ առակների ժողովրդական ծագման, գիտնականը մատնացույց է անում հայ ժողովրդի մեջ տարածված մի շարք առած-ասացվածքներ, որոնք, նրա կարծիքով, կարող էին հիմք հանդիսացած լինել Վարդանյան նշված առակների սյուժեների համար²⁹։

Հայ ժողովրդական բանահյուսութեան վերահիշյալ տարրերը, Մառի կարծիքով, Վարդանյան ժողովածուների մեջ մտցվել են տարբեր ժամանակ, տարբեր մարդկանց կողմից։ Նա իրավացիորեն այդ գործում չի տեսնում ոչ գիտակցված աշխատանք և ոչ էլ մտածված ծրագիր։ Ինչ վերաբերում է նյութերի ընտրութեանը, Մառը գտնում է, որ եթէ այն իրոք տեղի է ունեցել, ապա՝ հայ գորղները սկզբում կարող էին առաջնորդվել լոկ հեքիաթային սյուժեների բարոյախոսական-նպատակների համար ունեցած ճկունութեամբ կամ շարժունութեամբ, իսկ ավելի ուշ էլ՝ դրանց հետաքրքրաշարժութեամբ³⁰։

Նույն երևույթը, ըստ Մառի, տեղի է ունեցել նաև բանաստեղծութեան ասպարեզում։ Խոսելով միջնադարյան հայ տաղերգուների աշխար-

²⁷ Н. Марр, Сборн. притч Вардана, часть I, էջ 533.

²⁸ Նույն տեղում, էջ 581։

²⁹ Նույն տեղում, էջ 523։

³⁰ Նույն տեղում, էջ 569։

հիկ բովանդակությամբ տաղերի մասին, նա ընդգծում է դրանց մեջ առկա ժողովրդական գուսաններից սերող «հայոց ցեղային հաղարամյա շնորհը»³¹:

Առանձնապես կարևոր են այն դիտողությունները, որ արել է Մառը եկեղեցական գրականության վրա ժողովրդական բանահյուսության ունեցած ազդեցության մասին:

Այս առումով հարկ է առաջին հերթին հիշատակել Մառի հետևյալ դիտողությունը Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ ինքնաբերաբար մուտք գործած հնօրյա ժողովրդական բառ ու բանի և վերջինիս այդ թարգմանության համար ունեցած կարևոր նշանակության մասին. «Թարգմանություն և միևնույն ժամանակ հարուստ դանձ հայոց ազգի հեթանոսական վերապրումների, հայ ժողովրդական հեթանոսական անգնահատելի ասացվածքների, որոնք արտակարգ ինքնուրույնություն են տալիս Աստվածաշնչի հայերեն թարգմանության»³²:

Խոսելով քրիստոնեական գրքային սյուժեների ժողովրդի բանավոր ավանդության մեջ կրած վերափոխությունների մասին, Մառը գտնում է, որ «մեղանում բերանից բերան անցնող աշխարհիկ վեպը այդ ուղղությամբ ժամանակին տվել է ազատ և տարերային ստեղծագործության գեղեցիկ նմուշներ, որոնք բավարարել են ժողովրդի գեղարվեստական պահանջմունքները»³³:

Մի ուրիշ անգամ նա նշել է, որ քրիստոնեությունը ժողովրդի հետ իր կապը պահպանելու նպատակով դեպի նոր կրոնը ճանապարհ էր հարթում նախաքրիստոնեական ժողովրդական պատկերացումների, ռամկական տոների, պաշտամունքների և վիպական հերոսների միջոցով, իբրև բնորոշ օրինակ հիշատակելով հին Հայաստանի բնակչության վիպական գրույցների հերոս, առավոտյան լուսաբացի աստվածություն Կարմիր Վարդանին³⁴:

Կրոնագաղափարական նույն այդ հոդի վրա էլ, գիտնականի հայեցակետով, հայ եկեղեցական երաժշտության մեջ ներթափանցել են ժողովրդական մեղիսի տարրերը, աղգային գույն և ինքնուրույն նկարադիր

³¹ Ն. Մառ, Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը, Փարիզ, 1925, էջ 11—12:

³² Նույն տեղում, էջ 11:

³³ Նույն տեղում, էջ 11—12:

³⁴ Н. Марр, Сборн. притч Вардана, часть 1, էջ 523:

հաղորդելով այդ երաժշտությանը: «Բայց մեզ համար,—գրել է նա այդ առթիվ,—առանձին նշանակություն ունի հայկական մինչև անգամ եկեղեցական երգեցողության ինքնուրույնությունը, որի աղբյուրն ի զուր կը փնտրեինք հայ ազգի ցեղային ժողովրդական ավանդույթներից դուրս»³⁵:

Հայտնի է, որ քրիստոնեական եկեղեցին, նրա հետ նաև քրիստոնեական գրականությունը մեկանում, ոչ միայն հալածել, այլև օգտագործել ու ծառայեցրել է իր շահերին ժողովրդական բանահյուսությունը: Դրա լավագույն օրինակները մեր վարդապետական գրքերն են, որոնք զգալիորեն ներթափանցված են բանահյուսական սյուժեներով ու մոտիվներով:

5

Գիտնականի տեսադաշտից դուրս չի մնացել նաև ավանդական հայ բանահյուսության հասարակական-գաղափարական բովանդակության հարցը: Եվ դա միանգամայն բնական է:

Ն. Մառը այն գիտնականներից էր, ովքեր գիտության տեսական և բանասիրական հարցերը, առիթը ներկայանալիս, միշտ շաղկապել են հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի երևույթների հետ:

Տասնամյակներ շարունակ զբաղվելով հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրությամբ, նա միշտ իր ուշադրության կենտրոնում է ունեցել նրա պատմական ճակատագրի, պետական, քաղաքական կյանքի հուզող հարցերը: Մշակույթի որևէ հուշարձանի բաղմակողմանի, խոր վերլուծմամբ Մառը հաճախ կարողացել է բաց անել պատմական հեռավոր անցյալում Հայաստանի կյանքում դրություն ունեցող տնտեսական, հասարակական, քաղաքական և իրավական հարաբերությունների վրա հրկար դարերի ընթացքում իշած թանձր վարագույրը, կամ էլ վերոհիշյալ հարաբերությունների օգնությամբ բացահայտել հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի այս կամ այն հուշարձանի ներքին գաղափարները, գնահատել նրա պատմական արժեքն ու գեղարվեստական արժանիքները:

Խոսելով, օրինակ, հայագիտության առաջ կանգնած կարևոր հարցերի մասին, կամ մեկնաբանելով հայրենասիրության էությունը և մարդ-

³⁵ Ն. Մառ, Հայկական մշակույթը, նրա արձատները և նախապատմական կապերը, էջ 12:

կանց հոգեկան պահանջմունքների խնդիրը, Մառը դրանք սերտորեն զուգորդում է հայրենի հնությունների ու ավանդությունների հետ, վերջիններս համարելով մարդկային-հասարակական լավագույն հույզերի ու մտորումների կենդանի ներշնչարաններ, հայրենասիրության կրակը միշտ վառ պահող կարևոր աղբակներ: «Ով անմասն է հարադատ երկրի ճակատագրին, նա չի կարող հաղորդակից լինել հայրենիքի նկատմամբ տարածվելիք բարձր զգացմանը. ում մեջ խլացված են հարադատ հնությունների ու ավանդությունների հետ կապված լինելու բնածին զգացումները ... նրա մեջ մեղ չպետք է զարմացնեն հոգեկան պահանջների բացակայությունը և անտարբերությունը հումանիտար առարկաների նկատմամբ առհասարակ»³⁶:

Մի ուրիշ անգամ անդրադառնալով Բագրատունի հայ իշխանների հատուկ մտադրություններին՝ գրանցել տալու իրանական ժողովրդական առասպելներն ու զրույցները, Մառը այդ երևույթը բացատրում է այնու, որ հայ ֆեոդալներին հարադատ էր իրանական մշակույթը, և նրանք ձգտում էին այդ մշակույթի սկզբունքներով, ի հակադիր մոտեցմանական քաղաքակրթության, վերականգնել հայկական թագավորությունը, չնայած քրիստոնյա հայ հին հեղինակները, դաստիարակված լինելով հունական ոգով, մուսուլմանականից ոչ պակաս խորշում էին նաև իրանականից³⁷:

Գիտնականի վերոհիշյալ դիտողությունը՝ հիմնված խորեմացու համապատասխան վկայության վրա, որի համաձայն Սահակ Բագրատունին հատուկ պատվեր էր տվել մեր պատմահորը՝ գրի առնելու պարսից առասպելները, ուշագրավ բացատրություն է տալիս Բագրատունի հայ իշխանների իրանական կողմնորոշման հարցին:

Պակաս նշանակալի չէ նաև Մառի մի այլ դիտողությունը հայ ժողովրդի ազգային ինքնության և ինքնապահպանության գործում ավանդական բանահյուսության ունեցած կարևոր դերի մասին: «Քրիստոնյա Արևելքի ամենակուտուրական ժողովուրդներից մեկի մոռացության տրված հիմնական մասը,— գրել է նա հույի մասին,— բանտված էր վայրենացման արհեստական վանդակի մեջ, իջեցված ռայայի ամոթալի վիճակին, արհամարհված ֆիզիկապես տիրապետող մուսուլմանական ցեղի աչքում: Եվ այդ լքված, մոռացության տրված գյուղացիական

³⁶ Н. Я. Марр, К вопросу о задачах арменовед., СПб., 1899, էջ 6:

³⁷ Н. Марр, К вопросу о задачах арменоведения. էջ 10:

բնակչութիւնը, տակաւին ուժեր էր գտնում իր մեջ իր ազգային դեմքի հատկանիշները՝ լեզուն, հավատը և ազգային հպարտութեան զգացումը՝ պահպանելու համար: Ինքնապահպանման այդ գործում,—շարունակում է այնուհետև Մառը,—նրան զորավիգ էր դառնում քրիստոնեւթիւնը, բայց արդեն ոչ թե հիկեղեցական, այլ հինցաղային, իր դարավոր ժողովրդական ուխտագնացութիւններով, վերջիններիս ժամանակ տեղի ունեցող հավաքույթներով ու խաղերով. նրան դաստիարակում էր գրականութիւնը, բայց ոչ գրավոր, այլ բանավոր՝ ժողովրդական գոսաններով ու աշուղներով. նրան ներշնչում էր պատմութիւնը, բայց արդեն ոչ թե պոքային, այլ կենդանի պատմութիւնը՝ արտահայտված ժողովրդական ավանդութիւնների և հնագույն շինութիւնների ավերակների գեղարվեստական ձևերի մեջ»³⁸:

6

Հայ բանագիտութեան համար որոշակի արժեք են ներկայացնում բացատրութեան կարող կամ վիճելի բանահյուսական մի քանի բառ-տերմինների մասին Ն. Մառի հայտնած կարծիքները: Հիմնականում լեզվաբանական մեկնութեան-ստուգաբանութեան բնույթ կրող այդ կարծիքները յորովի լոյս են սփռում բանահյուսական այն ժանրերի էութեան ու առանձնահատկութիւնների վրա, որոնց վերաբերում են դրանք:

Այս առումով առաջին հերթին հիշարժան են այն դիտողութիւնները, որ արել է գիտնականը Մ. Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ հանդիպող «թուելիք» և «երգք թուելեաց» բառերի մասին: Քննադատութեան ենթարկելով այդ բառերին ուրիշների տված մեկնաբանութիւնները, որոնց համաձայն «թուելիք» և «երգք թուելեաց» նշանակում է. 1. ժամանակագրական երգեր (Մ. էմին), 2. մետրիկական ստեղծագործութիւններ (Դյուլորին), 3. հանգավոր գործեր (Մխիթարյաններ), իբրև ըստ էութեան սխալ մեկնաբանութիւններ, Մառը տվել է իր ինքնուրույն և նոր բացատրութիւնը: Հիշյալ երկու բառերը, նրա համոզմամբ, սերում են «թուել» բայից. դրանք հայոց հին բանաստեղծութեան մեջ ունեցել են հատուկ նշանակութիւն և ցույց են տվել ոտանավոր հորինելու կամ արտաբերելու եղանակներից մեկը, որը վերաբերվել է՝ կամ եղանակավոր կարդալուն (на распев) կամ իբրև ռեչիտատիվ արտասանելուն, կամ էլ՝ առոգանումին (գեկլամացիա):

³⁸ Н. Марр, Армянская культура, ее корни и доисторические связи («Язык и история», кн. I. М., 1936, стр. 84).

Յուշց տալու համար «Թուելիք», «երգք Թուելեաց» բառերի և «Թուել» բայի միջև եղած ստուգաբանական ակնհայտ կապը, Մառը բերում է խորենացու «Պատմություն» մեջ հիշատակված Տորքի վերաբերյալ առասպելի հետևյալ հատվածը. «Քանզի կարի իմն անյարմար քուէին և նմա (Տորքին—Ա. Ղ.) երգ բանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն որք ոչ Սամսոնի և ոչ Հերակլեայ և ոչ Սագճկին յարմարին այս զորոյցք: Քանզի երգէին նմա բուն հարկանել...»³⁹ (ընդգծումները մերն են—Ա. Ղ.): Մառը թարգմանում է այն այսպես. «Նրան (տր. հոլ. ի պատիվ նրա) առգանում էին (декламировали) շատ անհարմար բանավոր երգ»⁴⁰:

Մի ուրիշ անգամ հատուկ հոգովածով վերստին անդրադառնալով նույն բառ-տերմիններին, նա առաջ է քաշում մի նոր վարկած, գտնելով, որ «քուել» բայը սերտ կապի մեջ է «քուլեմ» բայի հետ, տարբերվելով այս վերջինից սոսկ մի հնչյունի գծազրուվ. «Թուվելու և եղանակավոր երգեցողության, շվոցի, փսփսոցի հասկացությունները,—գրել է Մառը,—վկայված է և ուրիշ լեզուներում»: Նրա մեկնաբանությամբ քուէին երգ բանիցն նշանակում է՝ հորինում կամ երգում էին վիպական երգեր (былинные песни), իսկ քուելեաց երգն նշանակում է վեպերի երգեր (песни былины), վիպական երգեր (былинные песни)⁴¹:

Ուշագրավ է նաև այն մեկնությունը, որ տվել է Ն. Մառը հայերեն առած բանահյուսական տերմինին: Ի տարբերություն հայ և ալյազգի որոշ հայագետ-լեզվաբանների, որոնք գտնում են, որ առած բառը կազմված է Կժ մասնիկով առ-ն-ուլ բառից (հմտ. արար-ած), կամ առ-ած մասերից, և Կժ-ը համարում են ասել բայի հնագույն ձևը, Ն. Մառը այն (առած բառը) կապում է ավարերեն гасі «խոսք» բառի հետ⁴²:

Ն. Մառի վերը բերված երեք մեկնություն-ստուգաբանություններն էլ բավական համոզիչ են և հավանականության մոտ ոչ միայն լեզվաբանական, այլև բանագիտական առումով, քանի որ դրանք համապատասխանում են ինչպես «Թուելիք», «երգք Թուելեաց», այնպես էլ «առած» բանահյուսական տերմիններին ժանրային էությունը:

³⁹ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփլիս, 1913, գիրք Բ, էջ 115:

⁴⁰ Н. Март, Из летней поездки... СПб, 1891, էջ 4—6:

⁴¹ Н. Март, Θελεογ' erցq спорный термин древнеармянского эпоса. Зап. вост. нм.п. русск. археолог. общ., 1898, т. XI, էջ 300—323

⁴² «Изв. Акад. наук». 1917, էջ 329:

Առանձնապես համոզիչ են «թուելիք» և «երգք թուելեաց» բառ-արտահայտություններին գիտնականի կողմից տրված մեկնություն-ստուգաբանությունները, որոնք մոտիկից հիշեցնում են նույն այդ բառ-արտահայտություններին Մ. Աբեղյանի տված բացատրությունները: Ահա թե ինչ է գրել այդ առթիվ Մ. Աբեղյանը. «Մենք քուելիք բառը (որի սևականն է «թուելեաց») կազմված ենք համարում ոչ թե «թուիլ» (երեալ) բայից, այլ քուել բայից, բայց վերջինս ոչ թե համարել (համբարել, համրել) իմաստով առած, այլ այն իմաստով, որ ունի այդ բայի քիւ արմատը «թիվ ասել» ձևի մեջ: ...Մեր «թիվ ասելը» նույնն է, ինչ որ ֆրանսիացիք recitation բառով արտահայտում են, այսինքն անգիր արած մի ճառ, ոտանավոր կամ արձակ կտոր, իբրև սովորած դաս ասել, արտասանել, առոգանումից (declamation) ցած, իսկ սովորական խոսակցությունից կամ ընթերցումից բարձր ձայնով»: Եվ ապա. «Միևնույն երգերի «վիպասանաց երգք» և «թուելեաց երգք» կոչումները համանման նշանակություն ունին և երկուսն էլ մտածության միևնույն եղանակով են կազմված, միայն տարբեր արմատներից. այսինքն երկու կոչումն էլ վիպն ասելու արտաքին ձևերից են վերցրած: Մտածության նույն եղանակով է կազմված, օրինակ, և ռուսաց сказители (ասող) բառը, որով կոչվում է ռուսաց վեպերի, վիպական երգերի (былины) պատմողն ու երգողը»⁴³:

Հետաքրքրական էն նաև Ն. Մառի գիտողությունները «ղրոյց» բանահյուսական տերմինի, Վահագնի ծննդյան երգի մի երկու տողերի, Արտաշեսի վեպի «շիկափոկ պարան», «Աղատ Մասիս» արտահայտությունների մասին, որոնք բոլորն էլ աչքի են ընկնում իրենց սրությամբ ու համոզությամբ⁴⁴:

Իր «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» գրքում, ուր տրված է հիշյալ տերմինների ու արտահայտությունների բաղմակողմանի գիտական վերլուծությունը, Մ. Աբեղյանը ընդունում և հաստատում է Ն. Մառի գիտողություններէ մեծ մասը⁴⁵:

⁴³ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, էջ 58, 69—70:

⁴⁴ Н. Марр, О начальной истории Анонима... т. I, 1895, էջ 263—366, նույնի, К критике Ист. Монс. Хорен, т. V, 1898, I и 2, էջ 227—269:

⁴⁵ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, էջ 18, 20, 120 և հալ.:

Վերը շարադրված առավել էական կաթփքների ու մտքերի հետ միասին Ն. Մառի աշխատություններում առկա են նաև բանագիտական բնույթի ուրիշ դիտողություններ և ասույթներ: Վերջիններս ինքնին ուշագրավ լինելով, միաժամանակ դրսևորում են անլանի հայագետի մտացի վերաբերմունքն ու մոտեցումը հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության այս կամ այն հարցի, այս կամ այն հուշարձանի նկատմամբ: Այսպես.

Ն. Մառը իրավացիորեն գտնում է, որ.

1. Անգիր բանավիստը ներքնապես ամուր կապված է տվյալ ժողովրդի հնօրյա ազգային հավատալիքների և ավանդույթների հետ: Այն ինչքան ավելի է կապված այդ հավատալիքների ու ավանդույթների հետ, այնքան ավելի է հարուստ: Այս առումով բնորոշ է քրդերի ժողովրդական բանահյուսությունը, որոնք իրենց կապերը շին խզել հնօրյա հավատալիքների հետ անգամ այն ժամանակ, երբ ընդունել են իսլամը: Հայաստանում ժողովրդական երգերի առատությամբ առանձնապես աչքի է ընկել Գողթն գավառը, որի երգերը լավագույն երգերի համբավ են ունեցել, իսկ Գողթնը հայկական այն գավառն է, ուր ավելի երկար ու առավել հանդգնաբար է պահպանվել հեթանոսությունը⁴⁶:

2. Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդական այն ասացվածքները, որոնք վերաբերում են կենդանական աշխարհին և հորինված են առականների թեմաներով: Դրանք պատկերավոր արտահայտություններ են, որոնք նյութ են տվել համապատասխան դրքային ալլաբանությունների, կամ էլ պարզապես հեղինակների կողմից օգտագործված ժողովրդական առակների նստվածքներ են: Ժողովրդական առածասացվածքների գոյությունն ինքնին ցուցանիշ է Հայաստանում բանավոր գրականության ծաղկած լինելուն: Դրանցից երբեմն ստեղծվում, մշակվում էին ժողովրդական առակներ, որոնց նմուշներից մեկն է «Կիլիկ» անուններով մարդու և կնոջ հայտնի առակը և բաղմաթիվ ուրիշներ⁴⁷:

3. Հայ ժողովրդական բանահյուսության հուշարձանների, ինչպես նաև հայկական բարբառների հետազոտության համար հիմնալի նյու-

⁴⁶ Н. Марр, Еще о слове «Челеби», СПб., 1911, էջ 30—31.

⁴⁷ Н. Марр. Сборн. притч Вардана, часть 1, СПб., 1899, էջ 525—526.

թեր են պարունակում Արիստակես Սեդրակյանի «Քնար մշեցոց և յլանեցոց»-ը (1874 թ.), Արիստակես Տեր-Սարգսենցի «Պանդուխտ վանքին» (1876 թ.), Գ. Շիրենցի «Վանա սաղ»-ը (1885 թ.), Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեթաթեներ»-ի մի շարք գրքուկները, և, հատկապես, Գ. Սրվանձությանցի դարագլուխ կազմող ժողովածուները⁴⁸:

4. Մանուկ Աբեղյանի կողմից 1886 թ. էջմիածնում գրի առնված և 1889 թ. Շուշիում տպված «Սասնա ծռեր»-ի 2-րդ պատումը («Դավիթ և Մհեր») հայ ժողովրդական բանահյուսության և մասնավորապես Սասնա դուցադուռների մասին շատ կողմնորոշ արժեքավոր հայտնի հերոսական ասքի եղակի հուշարձաններից է: Այն ուշագրավ է նաև նրանով, որ հորինված է յուրահատուկ ժողովրդական լափածո ոտանավորով և իր ձևով հիշեցնում է հայ պատմիչների մոտ պահպանված ժողովրդական բանաստեղծությունների պատառիկները⁴⁹:

Նիկողայոս Մառի հայագիտությանը մատուցած մեծ ծառայությունները գնահատելիս չի կարելի մոռանալ նաև այն նշանակալի լուծան, որ ներդրել է դիտնականը բանագիտության մեջ: Ծիշտ է, նրա բոլոր ասույթները հավասար արժեք ու նշանակություն չունեն: Դրանց մի մասը հպանցիկ ակնարկներ ու դիտողություններ են միայն. ուրիշներն ունեն լոկ վարկածային բնույթ: Սակայն այդ ասույթների մեջ քիչ չեն և խելամիտ կարծիքները, նոր ու ինքնատիպ դրույթները, արժեքավոր դատողությունները, որոնք, անկասկած, կարող են ազդակ հանդիսանալ նոր հետազոտությունների համար:

Ուսանելի օրինակներ են այս տեսակետից նիկողայոս Ադունցի «Տորք աստված հին հայոց» և «Հին հայոց աշխարհայացքը»⁵⁰, Հովսեփ Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» և «Միջնադարյան Հայաստանի առակները», Գրիգոր Ղափանցյանի «Արա Գեղեցիկի պաշտամունքը» և «Խեթական աստվածները հայերի մեջ» արժեքավոր ուսումնասիրությունները, ուր նրանք հաջողությամբ վարզացրել ու խորացրել են իրենց երբեմնի մեծ ուսուցչի բանագիտական վերոհիշյալ մտքերից ու դրույթ-

⁴⁸ «Зап. Вост. отд. русск. арх. обшч.» հտ. V, էջ 5 (առանձնատիպ):

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Ն. Ադունց, Տորք աստված հին հայոց, Վիեննա, 1911 (տե՛ս «Հուշարձան» հրական ժողովածուն), Հին հայոց աշխարհայացքը (տե՛ս «Պատմագիտական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948):

ներկից մի քանիսը և դրանց ողով կատարել նոր, կարևոր ընդհանրացումներ:

Ավելի ուշ այդ գործը հաջողությամբ շարունակել է Բ. Բ. Պիոտրովսկին: Արեւելյան և Արեւմտյան Հայաստանի տարածքում կատարված նորագույն հնագիտական պեղումների ու հետախուզումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի տվյալների (արձանագրություններ և այլն) հիման վրա նա փորձ է արել ճշտել և նոր լուսաբանություններ տալ ն. Մառի և նրա սաների կողմից հայ ցեղի ծագման ու էազմավորման վերաբերյալ Մ. Խորենացու և հայ ու օտար գրավոր աղբյուրներում հիշատակված ժողովրդական առասպելների և ավանդազրույցների մեջ արտացոլված տվյալների հիման վրա կատարված երբեմնի գիտական վարկածներին⁵¹:

⁵¹ Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959.

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

Հովսեփ Օրբելու հայագիտական բազմաբնույթ աշխատանքների մեջ (հնագիտություն, վիճագրություն, աղբյուրագիտություն, պատմագրական հուշարձանների թարգմանություն) նշանակալից արժեք են ներկայացնում այն գործերը, որ կատարել է անվանի գիտնականը իր կյանքի տարբեր տարիներին՝ հայ ժողովրդական բանահյուսության հուշարձանների հայտնաբերման, պահպանման, հետազոտության և գիտական պրոպագանդան ասպարեզում: Այդ գործերի մեջ թե՛ իր ծավալով և թե՛ նշանակությամբ առաջին տեղը գրավում են հայ ժողովրդի ազգային մեծ էպոսին՝ «Սասունցի Դավթին» կամ «Սասնա ծռերին» նվիրված նրա աշխատանքները:

1

Հայկական էպոսին Հովսեփ Օրբելին առաջին անգամ ծանոթանում է ներկա դարի սկզբներին: Տակավին երիտասարդ ուսանող էր նա, երբ Պետերբուրգում լույս տեսնող Ռուսական հնագիտության Արևելյան բաժանմունքի «Նոթեր»-ի 4-րդ գրքում առիթ ունեցավ կարդալու իր ուսուցիչ Նիկողայոս Մառի գրախոսությունը՝ Մանուկ Աբեղյանի հրատարակած «Սասունցի Դավթի» ժողովրդական դյուցազնական վեպի Մեկաց մի պատումի մասին: Շատ շանցած, 1911 թ. Օրբելին, Ն. Մառի խորհրդով, հնագիտական, բարբառագիտական ու ազգագրական հետազոտություններ կատարելու նպատակով, գիտությունների ակադեմիայի կողմից գործուղվում է Արևմտյան Հայաստան: Մոտ մի տարի մնալով Մոկսում և Վանում, նա մոտիկից շփվում է մոկացի գլխարների հետ, ծանոթանում Սասնա ծռերի մասին նրանց ավանդած պատումներին, իսկ Վանի մոտ՝ Մհերի դռան սեպագրերն ուսումնասիրելիս, լսում է Դավթի որդի Մհերի ավանդական զրույցը:

Տարիներ հետո անդրադառնալով Դավթի և Մհերի Հայաստանի շատ վայրերում թողած վիպական հետքերին, Օրբելին գրել է.

«Մոկս գավառում ինձ ցույց են տվել Բաթմանա կամուրջը, ուր Դավթին ընդհարվում է Մըսրա Մելիքի երկու փահլեանների հետ: Իսկ Վան

քաղաքի մոտ, միջնաբերդից շորս կիլոմետր հեռավորության վրա տեսել են Մհերի հուշակավոր դուռը: Դա իրոք դուռ հիշեցնող մի քանդակ է վիթխարի ժայռի վրա՝ սեպատառ արձանագրությամբ: Քարանձավի մուտքի առաջ, ժայռի մեջ մի փոքր փոս կա. դա այն տեղն է, ուր դուռը բացվելուց առաջ անհամբերությունից սմբակով դոփել է Քուռկիկ-Ջալալին¹:

Վաղուց և լավ ծանոթ լինելով «Սասունցի Դավթին», վեպին ծնունդ ու սնունդ տվող պատմական, տեղագրական ու ազգագրական միջավայրին, Օրբելին, սակայն, հայկական էպոսին ընդհուպ մոտենում է միայն 1939 թ. նրա 1000-ամյակի տոնակատարության շրջանում, երբ Հայաստանի կառավարությունը անվանի գիտնականին հանձնարարում է գրել խավորելու հոբելյանական մի շարք կարևոր միջոցառումներ: Իրեն հատուկ կրքով ու խանդավառությամբ ձեռնամուխ լինելով հարադատ ժողովրդի հնադարյան մշակույթի այդ մեծ հանդեսի կազմակերպման ուղղությամբ իր վրա դրված պատասխանատու աշխատանքներին, գիտնականը կարևոր դեր է կատարում նախ և առաջ «Սասունցի Դավթի» համահավաք հյուսվածք տեքստի հայերեն ու ռուսերեն տարբերակների ստեղծման գործում: Գիտնականի անմիջական մասնակցությամբ, մաս առ մաս քննության առարկա է դառնում հատուկ խմբի կողմից պատրաստված վեպի նոր հյուսվածքը և հաստատվում է սրա վերջնական բնագիրը: Օրբելու ցուցումներով ու հսկողությամբ իրականացվում են վեպի ռուսերեն տողացի և բանաստեղծական թարգմանությունները: Նրա խմբագրությամբ նրևանում լույս են տեսնում «Սասունցի Դավթի» հայերեն և ռուսերեն հոբելյանական հրատարակությունները: Օրբելու անձնական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը կենդանացրել է տպագրում է «Սասունցի Դավթի» ռուսերեն բնագիրը, որն իրավացիորեն համարվում է վեպի հոբելյանական բազմաթիվ հրատարակություններից ամենալավը:

Հոբելյանական հարցերով գիտնականը լինում է մերթ նրևանում, մերթ կենդանացրել, նրևանից մեկնում է Մոսկվա, Մոսկվայից նորից վերադառնում նրևան ...նախաձեռնում, ղեկավարում, ցուցումներ է տալիս, անձամբ մասնակցում այս կամ այն գործին: Նրա մտահղացմամբ և ծրագրով «Սասունցի Դավթի» դարաշրջանին նվիրված հետաքրքիր ցուցահանդեսներ են կազմակերպվում նրևանի պետական պատմաֆիզիկական թանգարանում և կենդանացրել պետական էրմիտաժում:

Հոբելյանական ամբողջ տարվա ընթացքում Օրբելին հաջ և Ասվե-

¹ Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Նրևան, 1956, էջ 53:

տական Միության մյուս ժողովուրդների ամենալայն շրջանների համար, տարբեր տիպի լսարաններում (ուսանողություն, բանվորներ, գրողներ, ղինվորականներ, նավաստիներ, կոլտնտեսականներ, զինականներ) բազմաթիվ դասախոսություններ ու ղեկուցումներ է կարդում «Սասունցի Դավթի» մասին: Կենդանի, պատկերավոր, հետադարձան ներշնչուն խոսքով նա վեր է հանում վեպի կուլտուր-պատմական, գաղափարական ու գեղարվեստական արժանիքները, ընդգծում նրա մեջ մարմնավորված ազատասիրական, հերոսական, խաղաղասիրական, մարդասիրական իդեալները: Հիշենք ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հոբելյանական նստաշրջանում նրա կարդացած ղեկուցումը՝ «Սասունցի Դավթի հայկական մեծ էպոսը» վերնագրով (Երևան), հիշենք հայկական էպոսի հաղարամյակին նվիրված ՍՍՀՄ Գրողների միության VII պլենումում նրա կարդացած ղեկուցումը՝ «Սասունցի Դավթի» և համաշխարհային էպոսները» թեմայով (Երևան): Հիշենք նրա ղեկուցումներն ու դասախոսությունները միութենական գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հատուկ նիստում (Մոսկվա), ՍՍՀՄ Գրողների միությունում (Մոսկվա), Լենինգրադի հոբելյանական կոմիտեի նիստում (Լենինգրադ) և շատ ուրիշներ:

Հոբելյանի ողջ ընթացքում Սովետական Միության տարբեր վայրերում լույս տեսնող թերթերի ու ամսագրերի համար Օրբելին գրում է բազմաթիվ մեծ ու փոքր հոդվածներ: «Սասունցի Դավթի», «Հայ ժողովրդի մեծ էպոսը», «Հերոսական էպոսը» և այլ վերնագրերի տակ դրանք տպագրվել են՝ «Правда»-ում (1939 թ., 15 օգոստոսի), «Известия»-ում (1939 թ., 22 օգոստոսի), «Ленинградская Правда»-ում (1939 թ., 9 սեպտեմբերի), «Вестник АН СССР»-ում (1939 թ., № 8—9, էջ 94—107), «Новый Мир»-ում (1939 թ., № 9, էջ 210—215), «Кр. Новь»-ում (1939 թ., № 8—9, էջ 278—285), Երևանի՝ «Коммунист»-ում (1939 թ., 14 սեպտեմբերի), «Սովետական Հայաստան»-ում (1939 թ., 24 օգոստոսի), «Գրական թերթ»-ում (1939 թ., 30 օգոստոսի), «Խորհրդային գրականություն»-ում (1939 թ., № 8—9, էջ 10—27), «Бакнинский рабочий»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), Ուլան-Տուդի «Красное знамя»-ում (1939 թ., № 9—10, էջ 8—12), «Днепровская Правда»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), «Орловская Правда»-ում (1939 թ., 16 սեպտեմբերի), «Ворошиловградская правда»-ում (1939 թ., 11 սեպտեմբերի), «Омская Правда»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), «Батумский рабочий»-ում (1939 թ., 16 սեպտեմբերի), «Чусовский рабочий»-ում (1939 թ., 12 սեպտեմբերի), «Брянский рабочий»-ում (1939 թ., 10 սեպտեմբերի):

բերի), «Челябинский рабочий»-ում (1939 թ., 10 սեպտեմբերի), «Советская Белоруссия»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), «Красная Тартария»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), Արշանսկի «Ленинский призыв»-ում (1939 թ., 16 սեպտեմբերի), Զլատոուստի «Пролетарская мысль»-ում (1939 թ., 15 սեպտեմբերի), Զերնիգոլի «Большевик»-ում (1939 թ., 8 սեպտեմբերի), Կեմերովոյի «Кузбас»-ում (1939 թ., 14 սեպտեմբերի), Իվանովոյի «Рабочий край»-ում (1939 թ., 12 սեպտեմբերի) և այլն²:

Առանձնապես նշանակալից են հայկական էպոսի հյուսվածո համահավաք բնագրի խմբագրության հայերեն ու ռուսերեն հրատարակությանների համար Օրբելու գրած ընդարձակ առաջաբանները, մասնավորապես Լենինգրադի հրատարակության մեծ առաջաբանը:

«Սասունցի Դավթին» նվիրված իր հետազոտությունների մեջ Օրբելին առաջ է քաշել և նոր մեկնաբանություն է տվել հայկական էպոսի հետ կապված կարևոր հարցերի, բացահայտել է նրա բովանդակության ու արվեստի առանձնահատկությունները: Այսպես, խոսելով «Սասունցի Դավթի» սյուժեի զարգացման, նրա կերպարների, լեզվի ու ոճի մասին, նա գտնում է, որ էպոսի հիմնական սյուժեի զարգացումը բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, որոնք մարդկային հասարակության պատմության արշալույսին սկսեցին ընդունել կենդանական կամ մարդկային ձևեր: Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը ավելի ու ավելի է մոտենում երկրին, ավելի ու ավելի է մոտենում երկրավոր մարդու կերպարանքին: Գիտնականի հավաստմամբ, «էպոսի հերոսները ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի, որ հնադույն մարդն անհամեմատ ավելի սուր էր զգում, քան այն մարդը, որն արդեն վարժվել էր իրեն ինքնակալ աշխարհի թեկուզ մի մասը—խորապես մարդկային են: Սրանք կենդանի մարդիկ են՝ օժտված արիությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ: Նրանց երկրային կյանքը պատկերող զրույցներում վառ արտացոլում են գտել ոչ միայն նրանց սխրագործությունները, այլև մարդկային ղգացմունքները: էպոսի հերոսները սխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում ժողովրդի բարօրությունը, և որովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու

² Մատենագիտական այս ցանկը կազմել ենք հեղինակի անձնական արխիվում պահպանված նյութերի հիման վրա:

ուծ են զգում. այդ սխրանքները նրանց ոչ մի առավելություն չեն տալիս. հերոսները չեն խզում իրենց կապը ժողովրդի հետ: Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անաղարտությունը, պարզասրտությունը, օգնութեան ամեն մի կանչի անհապաղ արձագանքելու հատկությունը:

Չնայած էպոսի լեզվի սեղմությունը, բառերի անսովոր ժլատությամբ, ոճի մոնոտոնիստականությունը, մանրամասնություններ նկարագրելուց խուսափելու ձգտումին, «Սասունցի Դավթի» էջերից, իբրև կենդանի մարդիկ, հառնում են հերոսների կերպարանքները՝ տղամարդ թե կին, որոնք այնքան տարբեր լինելով իրարից բնավորությամբ, միևնույն ժամանակ ունեն ինչ որ ընդհանուր բան»³:

Հայկական էպոսի հետ կապված մյուս կարևոր հարցը, որ զբաղեցրել է Օրբելուն, «Սասունցի Դավթի» պատմական միջուկի ու ձևավորման հարցն է: Դիտնականը իրավամբ մերժում է էպոսի բովանդակությունը և առանձին մանրամասները իբրև Հայաստանի քաղաքական պատմության գեղարվեստական, փոքր-ինչ գունազարդված շարադրանքը համարելու և մանավանդ նրա մեջ վերարտադրված դեպքերն ու վեպի հերոսներին՝ համապատասխան պատմական դեպքերի ու դեմքերի հետ պարզունակ ձևով նույնացնելու փորձերը: Նա միանգամայն ճիշտ կերպով «Սասունցի Դավթի» համարում է հայ ժողովրդի՝ իր անկախության և ազատության համար մղած դարավոր հերոսական պայքարի հանճարեղ գեղարվեստական ընդհանրացումը, նշելով, որ «Սասունցի Դավթի» միջուկը կամ առանցքը հանդիսացել է IX դարում սասունցի գյուղացիների հայտնի ապստամբությունը արաբ հարկահանների դեմ, Խոթեցի Նովնանի գլխավորությամբ, որի մասին հիշատակում է Թովմա Արծրունին: Այդ միջուկի վրա է ձևավորվել, ըստ Օրբելու, էպոսը, իր շուրջը համախմբելով հազարամյակներ դրանից առաջ ծագած առանձին առասպելներ, ավանդություններ ու զրույցներ, ճիշտ այնպես, ինչպես խեցու վրա դրացած աննշան ավաղահատիկի չափով կրային Լուստի շուրջը դարսվում են աղերի աղդեսության տակ պոչացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարդարիտը...

«Էպոսի առանցքը,— գրում է Օրբելին,— անկասկած, կազմել է սասունցիների՝ արաբ նվաճողների դեմ դուրս գալու և նրանց ջախջախելու իրադարձությունը: Այլ հարց է, որ Թովմա Արծրունու հիշատակած Սասնա ապստամբությունը փոքր տեղամաս է ընդգրկում, որ այդ ապստամ-

³ Նովսելի Օրբելի. Հայկական հերոսական էպոսը, էջ 11—13:

բությանը միայն երկու հարյուր հոգի են մասնակցել, որ երկրից արտաքսվել է ոչ թե արաբական խալիֆը, այլ շարքային մի հարկահան: Ժողովրդի հիշողության մեջ պատմական կոնկրետ փաստին ավելացել են զանազան հարակից զրույցներ, և դրանց մեջ գերմարդկային հատկություններ ևն վերագրվել շարքային, սովորական մի մարդու, որը, սակայն, հերոս է, իր կյանքն է նվիրել հայրենիքին, համախմբել իրոք թույլ, իրոք անօգնական, վատ զինված լեռնցիների ուժերը, նրանց հանել այն ժամանակվա իմաստով հիանալի զինված արաբական զորախմբերի դեմ: Նույն հերոսին են վերագրել այն բոլոր հատկանիշները, բնավորության այն բոլոր գծերը, որ այդ ժամանակ ունեցել է երգեր հյուսող, եղևություններ վիպող ամբողջ ժողովուրդը: Ժողովրդին հատուկ այս գծերի հանրագումարից էլ հենց ստեղծվում է հերոսի կերպարը, հերոս, որ գերազանցում է արդեն մարդկային չափանիշները, դառնում է հսկա, ընդունակ յուրացնելու մարդկային առօրյա կյանքի սահմաններից բացահայտորեն դուրս եկող հատկանիշներ»⁴:

Հակադրվելով էպոսի անվականական ծագման տեսության կողմնակիցներին, Օրբելին խոստովանում փաստարկներով հավաստում է «Սասունցի Դավիթ» բուն ժողովրդական ստեղծագործություն լինելը:

1. Վեպը բանավոր ձևով ապրում է ժողովրդական լայն զանգվածներում, պատմվում է ժողովրդի ծոցից դուրս եկած վիպասանների բերանով, ժողովրդի կենդանի խոսակցական լեզվով:

2. Վեպի հերոսները օժտված են ժողովրդական զանգվածներին հատուկ արդարամտությամբ և մեծահոգությամբ: Նրանցից ոչ մեկը, նվազագույն չափով անգամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ձգտում հատուկ իրավունքներ ձեռք բերել իր շրջապատում, չի ցուցաբերում փառասիրության ոչ մի նշույլ:

3. Վեպի հերոսները, ըստ ամենայնի, բացասական վերաբերմունք ունեն իշխանության նկատմամբ. նրանցից ոչ մեկը գահ չի բարձրանում և ոչ էլ իշխանական դոյակի տիրակալ դառնում: Դավիթը և մյուսները սեփական կամքով հրաժարվում են գահից, երբ նույնիսկ ալդալիսի առիթ է ներկայանում:

4. Ի տարբերություն ասպետական ուժանների հերոսների՝ Սասնա ծռերը իրենց ձեռքում կարողանում են ամուր բռնել թև՝ սուրը և թև՝ մուրճը ու գութանի մամը:

Դիտանականի կարծիքով, «Միայն ճնշումից և հարկահանությունից

⁴ Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, էջ 74—75:

հոգնած մարդիկ կարող էին ստեղծել Սասուն քաղաքի հիմնադրման հիասքանչ զրույցը, քաղաք, որտեղ Սանասարն ու Բաղդասարը ժողովրդից հարկեր չեն առնում, մարդկանց չեն շահագործում: Միայն իրենց՝ արյունակից հայ թագավորներից ու իշխաններից ձանձրացած մարդիկ կարող էին ստեղծել այն զրույցը, որտեղ Փոքր Մհերն ընդհարվում է ժողովրդին կողոպտող քյոխվայի հետ, որտեղ Ոստանա իշխանը որոգայթով փորձում է գերի վերցնել Մհերին և Քուռկիկ Ջալալին, փորձ, որը չի հաջողվում հեծյալի ու ձիու դիմադրության շնորհիվ:

«Ազնվագարմների» ուլ և ինչ լինելը փորձելուց հետո միայն ժողովուրդը կարող էր գիտակցել «հասարակ» մարդկանցով նրանց փոխարինելու անհրաժեշտությունը»⁵:

«էպոսն,—ըստ Օրբելու,—ամբողջ ձայնով խոսում է այն խավերի ձգտումների և երազանքների մասին, որոնք հայրենիքի պաշտպանության ու աշխատավոր մարդկանց վիճակի բարելավման համար դարեր շարունակ սխրագործություններ էին կատարում՝ աշխատանքի ասպարեզում, թե ուղմի դաշտում, առանց ազդարարելու այդ մասին արտաքին աշխարհին, և նրանց այդ լուռությունը նույնքան խորն էր, որքան տիրապետող դասակարգի ներկայացուցիչների լուռությունը ժողովրդական ներքնախավի կատարած արիության ու սխրագործությունների հանդեպ»⁶:

Նոր և արժեքավոր են Օրբելու մտքերը «Սասունցի Դավթի» մեջ արտացոլում գտած հին Հայաստանի կոսմիկական առասպելների և մյուս ժողովուրդների առասպելական հնագույն պատկերացումների մասին: Այս կապակցությամբ գիտնականը առաջ է քաշում երկու կարևոր խնդիր.

1. Ինչպե՞ս են ծագել այն առասպելական կերպարները, որոնք մարդկային հասարակության զարգացման ընթացքում արտահայտել են նրա պատկերացումները շրջապատող բնության երևույթների մասին. ինչո՞վ բացատրել տարբեր ժողովուրդների ստեղծած առասպելների ու առասպելական պատկերացումների նմանությունը:

2. Ի՞նչ չափով կարելի է խոսել այդ զրույցների ու պատկերացումների փոխառյալ լինելու մասին. որքանո՞վ են անկախ հիշյալ պատկերացումներն այն ժողովուրդների, որոնք իրարից հեռու են աշխարհագրական կամ ժամանակային մեծ տարածությամբ:

⁵ Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, էջ 86—89:

⁶ Նույն տեղում, էջ 136:

Օրբելին վճռականորեն մերժում է այն տեսակետը, ըստ որի, մարդկային կուլտուրայի, այդ թվում նաև ժողովուրդների բանավոր ստեղծագործության հուշարձանների ստեղծողը հանդիսացել են Միջերկրական ծովի ավազանում բնակվող հնդեվրոպական ժողովուրդները: Գիտնականի կարծիքով, կոսմիկական հնագույն կերպարներում չկա ոչ միայն ժողովրդական, այլև ցեղային տնօրեն, քանի որ գրանք ծագել են այն ժամանակ, որը տակավին չէին ձևավորվել ոչ ժողովուրդները և ոչ էլ ցեղերը: «Քարին, կրակին, մետաղին նման պայմաններում և տարբեր ժամանակներում տիրապետելը,—գրում է Օրբելին,—զարգացման նույն ուղին է անցել երկրագնդի զանազան մասերում: Մաքուր մտածողությունը, որը պայմանավորվում է նրա տնտեսական կյանքի զարգացմամբ և որն իր զարգացման ընթացքում նույն ուղիով է ընթանում, աշխարհի տարբեր ծայրերում գրեթե միևնույն է համանման ձևերով, համանման կերպարներով, համանման առասպելներով, այդ կերպարների պայքարն արտացոլող ավանդավիպերով: Եվ հաղարավոր սերունդների կողմից բերններան պատմվելով, այդ առասպելները, ավանդությունները, բնություն, գաղանի և մարդու դեմ մարդու մղած պայքարի փորձի այս բոլոր կուտակումները հաճախ մեղ են հասնում զարմանալիորեն նման ձևվերով»⁷:

Օրբելին գտնում է, որ պրիմիտիվ մարդու մտածողության սահմանափակությունը, որտեղ էլ ապրելիս լինել արդ մարդը և այն պատկերացումների սահմանափակությունը, որոնցից նա կարող էր օգտվել բնության ու վերջինիս երևույթներն արտահայտելու համար, բնականաբար հանգեցրել են նրա գիտակցության համար անմատչելի, ահարկու բնության երևույթների նույնանման գրեթե մահը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ պատկերացումներն ստեղծվել են աշխարհագրականորեն: Իսկ անցանկի տարածություններով, ժամանակի տեսակետից բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հաղարավյակներով իրարից հեռու մարդկանց մտածողության մեջ⁸:

Ելնելով վերոհիշյալ ճիշտ մեկնակետից, գիտնականը հետաքրքիր համեմատություններ է անցկացնում Սանասարի ու Բաղդասարի, հունական Դիոսկուրոսների, Կաստոր ու Պոլլիդես փրկարար եղբայրների, Հնդկաստանի Աշվինիների և Իրանի Ասպինների, Արմազանի ու Անգրոմեդեի, սասունցի արտատեր պառավ կնոջ, Դեմետրի և դեմոնական

⁷ Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, էջ 107—108:

⁸ Նույն տեղում, էջ 112:

էրդայի, Դավթի, Աբիլլեսի և Զիգֆրիդի, Մհերի, Միթրայի, Պրոմեթէսի և Ամիրանի և բազմաթիւ ուրիշ դիցաբանական-վիպական կերպարների միջև: Նշելով վերջիններես ընդհանրութունները, Օրբելին միաժամանակ ընդգծում է նաև նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկութունները, բացահայտում այդ առանձնահատկութունների պատճառ հասարակական-տնտեսական հանգամանքները: Այսպէս. խոսելով Դեմետրեի, էրդայի և սասունցի պառավի նման կերպարների միջև գոյութուն ունեցող տարբերութունների մասին, գիտնականը դա բացատրում է այն հանգամանքով, որ երկրագործական Հայաստանը և անասնապահական Սասունը, որն աննշան չափով էր կերակրւում պրիմիտիւ հացաբույսով՝ կորեկով, պետք է, սր իրենց պանթեոններում էապէս տարբեր տեղ տալին բերքի հովանավոր աստվածուհուն: Նույն կերպ բացատրւում է նաև Անթէյի և Սանասարի միֆական կերպարների միջև եղած տարբերութունը: Զրով հարուստ, սակայն ցանքատարածութուններով աղքատ Հելլադայում Անթէյն իր ուժն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրութունն ամբողջապէս կախւած է ուռգումից, Սանասարի զորութեան աղբյուրը ջուրն է:

Տարբեր ժողովուրդների առասպելալիպական ստեղծագործութունների մեջ եղած նմանութուններն ու ընդհանրութունները հիմնականում բացատրելով նրանց հասարակական-տնտեսական պայմանների նմանութեամբ ու ընդհանրութեամբ, Օրբելին տվյալ հարցում չի բացասում նաև փոխազդեցության հնարավորութունը: Նրա կարծիքով, առասպելների ու վիպերգութունների զարգացման և զանազան ցեղերի ու ժողովուրդների միջև սկսւած հաղորդակցության ընթացքում այս կամ այն կողմի հատուկ կերպարներն ու մտապատկերները կարող էին փոխադարձաբար ազդել միմյանց վրա, իրար վրա շերտավորւելով, բարդանալ: Իբրև նման շերտավորման ու բարդացման օրինակ նա հիշում է այն պատժի տեսակը, որին դատապարտւում է Պրոմեթէսը, պատիժ, որ աշխարհագրորեն կապւած է Կովկասի հետ և կրում է Ամիրանի, Ամրանի, Աբրսկիլի ու այլ տիտանների մասին: Կովկասյան ժողովուրդների չլուսած առասպելների հետքերը: Դրա հետ միասին գիտնականը նշում է, որ այս շերտավորումները ոչ մի հիմք չեն տալիս Պրոմեթէսի կերպարը հիմնական գծերով կախման մեջ դնել կովկասյան վիպերգութուններից, որովհետև մահւմ հանգամանքը կամ մահապատժի ձևը չի կարող հիմք համարվել այս կամ այն հերոսի կամ հսկայի կերպարի և տիպի համար:

«Սասունցի Դավթի» և մյուս ժողովուրդների էպիկական զրույցների

վերաբերյալ Օրբելու կատարած գիտական էքսկուրսիաների մեջ բացառիկ ցայտունությամբ երևան է եկել նրա լայն, բազմակողմանի ու խորը ծանոթությունները տարբեր ժողովուրդների ավանդական բանահյուսության ու մշակույթի բնագավառում:

Գիտնականի քննության առարկա աշխատությունների մեջ քիչ չեն այլ կարգի ուշադրավ գիտողություններ ևս: «Սասունցի Դավթի» որոշ պատմներում պահպանված մի շարք ռեալական արտահայտությունների, վերապրուկային մոտիվների ու մոմենտների հնարամիտ բացատրությունների ու համոզիչ մեկնաբանումների միջոցով, գիտնականը կարողանում է ետ տանել հին Հայաստանում գոյություն ունեցող վաղեմի սոցիալական հաստատությունների վրա իշած դարերի վարագույրը: Այսպես, խոսելով «Սասունցի Դավթի» մեջ մի շարք անգամներ հիշատակվող «Սասնա տուն» և Փոքր Մհերի համար գործածված «Սասնա տան վերջին խոյը» արտահայտությունների մասին, Օրբելին դրանք համարում է Հայաստանի լեռնային շրջանների տնտեսաձևի վերաբերյալ վկայի թանկագին վկայություններից, և այդ առթիվ տալիս է իր, ըստ ամենայնի, ուշագրավ բացատրությունը: Հենվելով Թովմա Արծրունու մի վկայության վրա, որի համաձայն խուլիցի լեռնականների «տոհմական տները» զբաղվել են իրարից բավական հեռու, Օրբելին «Սասնա տուն» արտահայտության տակ հասկանում է ֆեոդալական կյանքի հունը չմտած և կլանի տարրերը պահպանող սոցիալ-տնտեսական մի միավոր, իսկ «Սասնա տան խոյ» արտահայտությունը համարում է տան տոտեմի, տոհմի հովանավոր տոտեմի հիշողությունը: Մի ուրիշ անգամ, անդրադառնալով էպոսի կանացի կերպարներից Դեղձուն-Ծամին և Իսմիլ-խաթունին, գիտնականը վերջիններիս մեջ գիտում է մայրիշխանության արձագանքները, նկատի ունենալով առաջինի՝ ամենքից բարձր կանգնած՝ տանտիրուհի, տան մեծ մայր, բայց ոչ երբեք թագուհի լինելու հանգամանքը, իսկ երկրորդի՝ ինքն իր համար կենակից ընտրելու փաստը: Այսօրինակ մեացուկներ ու արձագանքներ են գիտվում էպոսի մեջ մեթեորային երկաթի օգտագործման պատմությունը, քեռի Թորոսի ու նրա սրբիների՝ նահապետական կարգերն ու տոհմական ընտանիքն արտացոլող նկարագրությունը և նման մի շարք ուրիշ գրվագներ:

Հայկական էպոսին նվիրված Օրբելու հետադոտություններում ցատտուն կերպով ի հայտ են եկել անվանի գիտնականին բնորոշ առանձնահատկությունները: Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ նա հանդես է գալիս լայն պատրաստությամբ, ինքնուրույն մտածելակերպով:

ստեղծագործական մեծ թուրքով: Գիտնականը չի հակասում ուրիշներին, այլ առաջադրում է սեփական վարկածներն ու եզրահանգումները: Ինչպես իր մյուս գործերում, այնպես էլ այստեղ, Օրբելին ուսումնասիրության¹ առարկայի հետ կապված խնդիրները չի սահմանափակում լուկ աղագային շրջանակներով: «Սասունցի Դավիթ» վեպը նա համարձակորեն դուրս է բերում միջազգային ասպարեզ և դնելով աշխարհի տարբեր էպոսների հետ մի նժարի վրա, ընդգծում է նրա ինքնատիպությունն ու գաղափարական, գեղարվեստական արժանիքները:

Հայկական էպոսը Օրբելու տեսադաշտից դուրս չի գալիս նաև վեպի հոբելյանից հետո: Իրեն հարազատ այդ թեմային գիտնականը անդրադառնում է նաև իր կյանքի հետագա տարիներին:

Պատերազմի ժամանակ, օրինակ, նա սովետական բանակի զորամասերում հրամկազմի, զինվորների ու նավաստիների համար մի շարք դասախոսություններ է կարդում հայկական էպոսի մասին, շեշտելով հատկապես վերջինիս հայրենասիրական, ազատասիրական և հերոսական գծերը: Նույն թեմայով նա հոգևածներ է գրել և զեկուցումներ է կարդացել նաև հետպատերազմյան տարիներին: Հիշարժան է այս տեսակետից 1956 թ. ձմռանը Լենինգրադի համալսարանի ուսանողության և դասախոսների բազմամարդ լսարանում նրա կարդացած դասախոսությունը:

Նույն 1956 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը ուսերեն և հայերեն լեզուներով լույս է ընծայում Օրբելու «Հայկական հերոսական էպոսը» խորագրով գիրքը, որի մեջ ի մի են բերված և վերամշակված ձևով ներկայացված են «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի Երևանի՝ հայերեն, ուսերեն և Լենինգրադի՝ ռուսերեն հրատարակչությունների համար հեղինակի գրած ընդարձակ առաջաբանները, ինչպես նաև գրողների միություն հոբելյանական պլենումում և միութենական ակադեմիայի հատուկ նիստում 1939 թ. հայկական էպոսի մասին նրա կարդացած երկու զեկուցումները:

«Հայկական հերոսական էպոսը» աշխատության նշանակությունը չի սահմանափակվում զուտ բանագիտական նոր հարցադրումներով: Լինելով տվյալ թեմային նվիրված ուսերեն առաջին գիրքը, գրված միջազգային ճանաչում ունեցող անվանի գիտնականի կողմից, այդ աշխատությունը ժամանակին նշանակալից չափով նպաստեց «Սասունցի Դավիթ» մասսայականացմանը Միության բազմազգ ժողովուրդների մեջ, իսկ ավելի ուշ, համառոտ տարբերակով թարգմանվելով նաև ուրիշ լեզուներով (ֆրանսերեն, չինարեն և այլն) և իբրև առաջաբան օգտագործվելով

վնայի հոբելյանական բնագրի հիշյալ լեզուներով կատարված թարգմանությունների համար, քիչ նշանակություն չունեցավ հայ ժողովրդի ազգային էպոսի մասսայականացման գործում:

2

Հովսեփ Օրբելին շնորհակալ աշխատանք է կատարել հայ ժողովրդական բանահյուսության ուրիշ ժանրերի գրառման և հետազոտման բնագավառում ևս:

Արժեքավոր գործ է նրա «Մոկաց տեքստեր» ընդհանուր խորագրով ծավալուն աշխատությունը, որն ամփոփում է հեղինակի 1911—1912 թթ. Արևմտյան Հայաստանի Մոկս գավառում կատարած բարբառադիտական, բանագիտական և աղբարդական հետազոտությունների արդյունքները՝ ինչպես տեղացի հայերի, այնպես էլ քուրդ բնակչության վերաբերյալ: Այդ արդյունքների մեջ, տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող Մոկսի հայերից գիտնականի գրի առած բանահյուսական նյութերն են: Իրենց ժանրային նկարագրով այդ նյութերը ունեն հետևյալ պատկերը.

1. Ժողովրդական հեփիարներ («երկու գող», «Թագավորի աղջկին ու հավատարիմ ծառան» և այլն): 2. Մանրապատում գույցներ, կենդանական վեպեր, առակներ («Կաճեթցին ու շերեփը», «Ողմեցին ու ջորին» և այլն): 3. Վիպական երգեր, բալլադներ («Մոկաց Միրզա», «Ասլան-Աղա»): 4. Աշխատանքի և ծիսական երգեր («Սանդի երգ», «Թագավորի գովը», «Փեսային ու հարսին զուգելու երգեր», «Մննդյան երգ», «Անձրև բերելու երգ»): 5. Երգիծական և մանկական երգեր: 6. Առածներ և ասացվածքներ: 7. Հանելուկներ և շուտասելուկ:

«Մոկաց տեքստեր»-ի արժեքը աներկբա է հայ բանագիտության համար: Ժողովածուն ընդգրկում է մի շարք թարմ, ինքնատիպ նյութեր և հին գրառումների նոր տարբերակներ, որոնք զգալիորեն լրացնում են մեր պատկերացումները Մոկսի հայ բնակչության բառ ու բանի վերաբերյալ: Ի տարբերություն այդ ուղղությամբ մեր ձեռքի տակ եղած ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ նյութերի, որոնք գրի առնված լինելով մեծ մասամբ զանազան սիրող բանահավաքների կողմից, գիտության համար միշտ չէ, որ լիովին պիտանի են, Օրբելու գրառումները՝ նրա կիրառած մասնագիտական փորձված սկզբունքների (գիտական տառադարձում, հարադատ գրառում, համապատասխան ծանոթագրություններ և այլն) շնորհիվ, ըստ ամենայնի վստահելի են:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել Օրբելու ծառայությունը Մոկաց տեքստերի ուսերեն թարգմանություն գործում: Տիրապետելով թե՛ Մոկաց բարբառին և թե՛ ուսերեն ժողովրդական լեզվին, թարգմանիչը կարողացել է գտնել հայերեն ժողովրդական բառերի և ախտահայտությունների համարժեքները ուսերենում և տալ իսկական գիտական թարգմանություն, որը դրսևորում է բնագրի բոլոր առանձնահատկությունները:

Ինչպես պատմաազգագրական, այնպես էլ բանագիտական-բարբառագիտական ինքնուրույն արժեք ու նշանակություն ունի նաև «Մոկաց տեքստեր» աշխատության ծավալուն առաջաբանը: Տեղում կատարված գիտարկումների ու հետախուզումների հիման վրա այստեղ տրված է Մոկաց գավառի աշխարհագրական և բնական առանձնահատկությունների, նրա բնակիչների, աշխատանքային կյանք ու կենցաղի, սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական հարաբերությունների, նիստ ու կացի, բանավոր ստեղծագործության և վերջինիս հեղինակների ու կատարողների ճշմարտացի բնութագիրը:

«Մոկաց տեքստերի» արժեքը կրկնապատկվում է նրանով, որ այն վերջին վկայություն-վավերականներից մեկն է Արևմտյան Հայաստանի ժաղկուն ու շեն գավառներից մեկի բնակչության լեզվի, նիստ ու կացի, աշխատանքային առօրյայի, մասնավորապես նրա գունեղ ու հարուստ բանահյուսության վերաբերյալ, բնակչություն, որի ճնշող մեծամասնությունը անխնայորեն ոչնչացվեց 1914—1916 թթ. թուրքական ջարդարարների կողմից կաղամկերսված արչունոս նախճիրի ժամանակ⁹:

Հովսեփ Օրբելին ունի հայագիտական մի կարևոր աշխատություն ևս, որն իր նյութով սերտորեն առնչվում է ժողովրդական բանահյուսությանը: Այդ աշխատությունը նրա 1968 թվականին լույս տեսած («Հետմահու») «Միջնադարյան Հայաստանի առակները» խորագրով ծավալուն ուսումնասիրությունն է¹⁰: Բանահյուսական, գրական և իրավաբանական աղբյուրների հիման վրա կատարված այս հետազոտությունը նվիրված է Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և Ողիմպիանու առակներում արտա-

⁹ «Մոկաց տեքստերին» մենք ժամանակին հանգամանորեն ծանոթացել ենք հեղինակի կողմից սիրվիրորեն մեզ տրամադրված ձեռագրի հիման վրա: Աշխատության հրատարակությունը դանազան պատճառներով մինչև վերջերս չէր իրականացվել: Այն լույս տեսավ միայն 1982 թ. (տե՛ս *И. А. Орбели, Фольклор и быт Мокса*, изд. «Наука», М., 1982).

¹⁰ *И. А. Орбели. Избранные труды*, т. I, изд. «Наука», М., 1968.

Սույն աշխատության ձեռագրի հիման վրա Հ. Օրբելին 1956 թվականին հրատարա-

ցում գտած XII—XIII դարերի Հայաստանի հասարակական և մշակութային կյանքի վերլուծությունը:

Իր աշխատության մեջ Օրբելին տարբեր առիթներով անդրադառնում է նաև ժողովրդական առակներին ընդհանրապես և հայ ժողովրդական առակներին մասնավորապես, անում ինքնատիպ ու կարևոր դիտողություններ:

Նրա ուշադրության առարկան են դարձել նախ և առաջ ժողովրդական առակների իսկատիպ հավաքական ստեղծագործության արգասիք լինելու հանգամանքը և հատկապես նրանց որոշակի սոցիալական միտվածությունը: Օրբելին, այնուհետև, անդրադարձել է ժողովրդական առակների սյուժեներին միջազգային տարածվածության հարցին: Յուրովի արձագանքելով դիտության մեջ ժամանակին ընդունված այսպես կոչված թափառիկ սյուժեների հայտնի տեսությանը, նա միաժամանակ ընդգծել է յուրաքանչյուր առանձին ժողովրդի կողմից առակների միջազգային դանձարանը մոծված ինքնուրույն լուծան, բացահայտել վերջինիս բնորոշ առանձնահատկությունները: Ժողովրդական առակների վերաբերյալ Օրբելու առաջ քաշած ուշադրավ հարցերից է նաև այս կամ այն առակի բովանդակության ու գեղարվեստական ձևի մեջ սուրախոս ասացողի խողացած կարևոր դերի հարցը: Առանձնապես արժեքավոր են նրա այն դիտողությունները, որոնք վերաբերում են ժողովրդական առակների, իբրև բանավեպի ուրույն մի բաժնի, ժանրային առանձնահատկություններին:

Օրբելու վերոհիշյալ բոլոր դիտողությունները կարելի է ամփոփել հետևյալ հիմնական կետերի մեջ.

1. Ժողովրդական առակները հասարակական ընդերքի ընթերցման շատ ավելի սուր ու ցայտուն արտահայտություններ են, քան այն խուլ ակնարկները, որոնք, առանձին դեպքերում, կարող էր թույլ տալ իրեն արհեստավոր վարպետը՝ իր կողմից գեղադարձված հախճապակու, կամ նրա աշակերտը՝ իր կոփած պղնձե սափորի վրա: Իրենց այդ հատկանիշների շնորհիվ է, որ ժողովրդական առակները միշտ և ամենուր հանդիսացել են բարոյահասարակական ներգործման ամենասուր զենքերից մեկը¹¹:

կեց միջնադարյան Հայաստանի առակների ոչ մեծ մի հատընտիր ժողովածու, համառոտ առաջաբանով և ծանոթագրություններով (տե՛ս Иосиф Орбели, Басни средневековой Армении, изд. АН СССР, М.—Л., 1956.

¹¹ Н. А. Орбели, Избранные труды, т. I, М., 1968, էջ 204, 205.

2. Առականների ստեղծման մեջ մասնակցություն են ունեցել բոլոր ժողովուրդները: Ապրելով ժողովրդական բանավեպստին հատուկ դարավոր կյանքով, դրանք ժամանակի ընթացքում, առանձին պատմությունների և ամբողջական ժողովածուների ձևով, ի մի են բերվել լավագույն մտածողների աշխարհայացքի համեմատ, մի ժողովրդից անցել են մյուսին, և թարգմանվելով կտրել են հաղարավոր կիլոմետրեր՝ Ինդոսի և Գանգեսի հեռավոր ափերից հասել մինչև Սենայի վրա գտնվող Փարիզի աստվածամոր հրաշալի տաճարը:

Առականներում առկա սովորական վայրի կենդանիները տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ միշտ չէ, որ ներկայանում են հար և նման գծերով, հատկություններով ու սովորություններով: Հայ ժողովրդական առականներում, օրինակ, ուրիշ ազգերի առականների խորամանկ աղվեսը հաճախ հանդես է գալիս տուժածի դերում (նրան խաբում է մերթմարդը, մերթ՝ թռչունների արքա արծիվը և այլն)¹²:

3. Ժողովրդական առականների բովանդակության ու արվեստի արժանիքները մեծապես կախված են այդ առականը կատարող առակախոսներից: Եթե վերջիններս բնությունից օժտված և վարպետ մարդիկ են, ապա նրանք պատմելիս նոր շունչ ու կյանք են տալիս ավանդաբար բերանից բերան անցած առակի կմախքին, մի նոր ու հետաքրքիր տարբերակ ստեղծում նրանից: Իսկ եթե առակախոսը կատարողական ձիրքից զուրկ է և ունի խրատաբան-բարոյախոսի հակումներ, ապա նա իր ողջ ուշադրությունը նվիրում է առակի բարոյախոսությանը, և նրա պատմած առակը ստացվում է միևնույն առակի շատ սովորական մի վերապատում-կմախք¹³:

4. Ժողովրդական առակի, իբրև բանահյուսական ուրույն ստեղծագործության, ամենաբնորոշ հատկանիշներից մեկը նրա համառոտությունը կամ սեղմությունն է: Այդ համառոտությամբ կամ սեղմությամբ պետք է բացատրել նրա մեծ կենսունակությունն ու դյուրաշարժությունը, ժողովրդի կողմից առանձնապես սիրված լինելը: Անկախ այն հանգամանքից, թե որ ժողովրդին է պատկանում տվյալ առակը, այն միշտ սեղմ է: Ժողովրդական առակի համառոտությամբ ու սեղմությամբ էլ կարելի է տարորոշել այս կամ այն դրական առակի ակունքները, նրա ծագումն ու բնութիւնը: Ինչքան ավելի հեռու է տվյալ առակագրի ստեղծագործությունը ժողովրդից, այնքան ավելի է այն աչքի ընկնում ձևի իր ճապաղությամբ: Այդ

¹² Նույն տեղում, էջ 211:

¹³ Նույն տեղում, էջ 378:

բանը ակնբախ կդառնա, եթե մենք համեմատենք, օրինակ, լաֆոնտենի առակները ֆրանսիական կամ որևէ այլ աղբի բուն ժողովրդական առակների հետ¹⁴։

5. Քանի որ ժողովրդական առակի պատմողական մասում արտահայտված միտքը շատ հստակ է, ուստի և այն բարոյախոսություն համար շունի հատուկ բաժին կամ էլ այդ բաժինը սահմանափակվում է երկու-երեք խոսքով միայն, որոնք ընդհանրացման բնույթ չունեն։ Այդ խոսքերը տվյալ դեպքի կամ պահի առթիվ ունկնդիրներին, երբեմն էլ ուղղակի առակը գրի առնող բանահավաքին հասցևագրված խոսքեր են։ Վստ է այն առակը, որն առանց բարոյախոսության անհասկանալի է, որն իր պատմողական մասով իսկ պարզ պատկերացում չի տալիս ունկնդրին առակախոսի միտումի մասին։ Առակի բարոյախոսական մասի առաջացումն ու զոյությունը պայմանավորված է նրա ձևի սեղմությամբ, խոսքերի ժլատությամբ, ապրած երկար դարերի, իսկ երբեմն էլ հազարամյակների կյանքով։ Մնունդ լինելով այդ կյանքի, առակի բարոյախոսական մասը փոխվում է վերջինիս փոփոխմամբ և մեծապես կախված է այն բանից, թե ու՞մ կողմից է պատմվում առակը¹⁵։

6. Երբ կրճատվում ու սեղմվում է առակի պատմողական մասը և մնում են միայն մի քանի առավել կարևոր ու սուր նախադասություններ, տեղի է ունենում այն միջանկյալ քայլը, որից հետո առակի պատմողական մասը վեր է ածվում առածի կերպարանք ստացած բարոյախոսության։ Այդ է պատճառը, որ ավելի հաջող, սուր և տվյալ դիպվածին լավ հարմարվող առակներն ունեն իրենց առածատիպ համարժեքները ամենատարբեր ժողովուրդների մոտ։ Նույն այդ պատճառով էլ տաղանդավոր առակագիրների գրչի տակից դուրս եկած ամենահաջող, գունեղ և սրամիտ առակները վեր են ածվում առածատիպ թևավոր խոսքերի և լայն տարածում են ստանում իրենց ժողովրդի մեջ¹⁶։

Օրբելու վերը բերված դիտողությունները բանագիտության համար ունեն նշանակալից արժեք։ Դրանք նոր յուշս են սփռում ժողովրդական առակների հասարակական բովանդակության, ժանրային ու կատարողական մի քանի առանձնահատկությունների վրա, յուրովի լրացնում ու ընդլայնում բանագիտության մեջ այդ առթիվ հայտնված մտքերն ու դիտողությունները։

¹⁴ Н. Орбели, Избр. труды, т. 1, М., 1968, էջ 378։

¹⁵ Նույն տեղում, էջ 376, 379։

¹⁶ Նույն տեղում, էջ 379։

Գիտնականի կատարած բանագիտական աշխատանքների ուրվագիծն ամբողջացնելու համար նշենք նաև տարիներ առաջ նրա ունեցած մասնակցությունը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ձեռնարկած հայ ժողովրդական հեքիաթների բաղմահատոր հրատարակության գիտական սկզբունքների մշակման գործին¹⁷ և հիշյալ հրատարակության ընդհանուր խմբագրությունը ստանձնելու նրա համաձայնությունը: Այդ խմբագրությունը, ցավոք, կիսատ մնաց գիտնականի վերահաս մահվան պատճառով (նախատեսված 10 հատորից Օրբելու ընդհանուր խմբագրությամբ լույս են տեսել միայն առաջին երեք հատորները)¹⁸:

Անուրանալի են Հովսեփ Օրբելու ծառայությունները հայ ժողովրդական բանահյուսության հուշարձանների հայտնաբերման, գրառման, ուսումնասիրության և պրոպագանդման գործում: Այդ ծառայություններով անվանի գիտնականը իր արժանի տեղն է ապահովել հայ բանագիտության նշանավոր երախտավորների շարքում:

¹⁷ Տե՛ս հայ ժողովրդական հեքիաթների բաղմահատոր հրատարակության գիտական սկզբունքների մշակման հարցին նվիրված Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի 1956 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի արձանագրությունը:

¹⁸ Տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 1, Երևան, 1959, հատ. 2, 1959, հատ. 3, 1962:

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Կարապետ Մելիք-Օհանջանյանը սովետահայ բանագիտության հիմնադիրներից է: Նրա անվան հետ են կապված գիտության տվյալ մարզին վերաբերող ինչպես բուն հետազոտական, այնպես էլ գիտակաղմակերպչական, բանահավաքչական և խմբագրական բազմաթիվ կարևոր գործեր:

Իբրև բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանը աչքի է ընկնում իր լայնահուն գիտելիքներով և հետախուզական պրպտող մտքով: Նա քաջատեղյակ էր ոչ միայն հարազատ ժողովրդի հին ու նոր հարուստ բառ ու բանին, այլև արևելյան ու արևմտյան մի շարք ազգերի բանավոր ստեղծագործության նշանավոր հուշարձաններին, բանագիտության պատմության ու տեսության ընդհանուր հարցերին, միջազգային բանագիտական մտքի անցած ուղուն: Հայ ժողովրդական բանահյուսության հարցերը գիտնականը սովորաբար քննարկում ու լուծում է այլևայլ ժողովուրդների բանահյուսության հետ ունեցած ընդհանրությունների և առանձնահատկությունների տեսանկյունից: Կ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական աշխատանքներում արժարժված են հիմնականում անմշակ թեմաներ, առաջադրված ու լուծված են լուսաբանության կարոտ նոր հարցեր: Իր գիտական վերլուծություններն ու տեսական եզրակացությունները բանագետը հաջողությամբ կարողանում է զուգորդել աղբյուրագիտական-տեքստաբանական հետազոտությունների հետ:

Ստեղծագործաբար օգտագործելով ինչպես հայ, այնպես էլ ռուսական և եվրոպական դասական ու նորագույն բանագիտության նվաճումները, Կ. Մելիք-Օհանջանյանը կարողացել է իր նոր և ինքնուրույն լուծանքներ, ժամանակակից հայ բանագիտության գանձարանը:

Կարապետ Մելիք-Օհանջանյանի բանագիտական առաջին աշխատանքները

տանքները լույս են տեսել 1934 թ.: Դրանցից մեկը՝ «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում ու հայ մատենագրության մեջ» խորագրով ուսումնասիրությունն է, մյուսը՝ «Ռոստամ-Ջալ» հայ-իրանական ժողովրդական վեպի անտիպ պատմակերպից մեկի հյապարակումն է, համապատասխան մասնագիտական առաջաբանով և գիտական ապարատով¹:

«Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում ու հայ մատենագրության մեջ» աշխատությունում աղբյուրագիտական-բանասիրական մանրակրկիտ քննության են ենթարկված Ագաթանգեղոսի և Բուղանդի «Պատմություններում» արձագանք գտած Իրանի առասպելական ու վիպական մոտիվները: Իր քննության արդյունքները բանագիտը ամփոփել է երեք կարևոր կետերի մեջ:

ա) Հայերն ու պարսիկները, իբրև երկու հարևան ժողովուրդներ, իրենց պատմական կյանքում ապրել են քաղաքական և կուլտուրական նմանակ պատմական պրոցես, նրանք ականատես են եղել պատմական այնպիսի իրադարձությունների, որոնք իրենց կնիքն են դրել յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի հետագա հազարամյա կյանքի պատմության վրա (քրիստոնեությունը՝ Հայաստանում, զրադաշտականությունը՝ Իրանում): Այս հոգի վրա էլ ահա, երբեք ժողովուրդների վիպական ստեղծագործության մեջ մենք դիտում ենք մի շարք ակնբախ նմանություններ:

բ) Ագաթանգեղոսի և Բուղանդի «Պատմությունների» մեջ առկա ակնարկները՝ հայ միջավայրում Իրանի առասպելների ու վեպերի զուգահեռների գոյության մասին, մեղանում «պատմական» իրադարձություններ դիտվելով, քննության շեն ենթարկվել համեմատական բանագիտության տեսանկյունով:

գ) Իրանի վիպաշխարհը, որ դարեր շարունակ արհամարհվել ու հալածանքի է ենթարկվել հայ կղերի կողմից, որպես «փծուն և անճոռնի առասպելք», «անմիտ և անհանճար բանից հարմարանք», «առասպելաց բարբաջմունք», հյուրընկալվել ու գնահատվել է քաղաքական նախապաշարումներից զերծ հայ աշխատավոր գյուղացու խրճիթում, վերամշակվել ու ազգակցվել է մեր ժողովրդական վեպի ամենից սիրված Թուլան Դավթի բանավոր պատումներին, ծնունդ տալով «Ռոստամ-Ջալի» և «Բե-

¹ Տե՛ս «Ֆիրդուսի», գիտական ժողովածու նվիրված բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին: Հրատարակություն Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի, Երևան, 1934, էջ 1—116 և էջ 150—230:

ծան-Մենիժայի» բաղմաթիվ հայկական բարբառախոս ուշագրավ նմանակներին ու տարբերակներին:

Ծերերորդ գործում («Հայ-իրանական ժողովրդական վեպը») համեմատության մեջ են դրված՝ «Շահ-Նամեն», «Բարդու-Նամեն» և ուրիշ իրանական վիպական ստեղծագործություններ «Ռոստամ-Ջալ» ժողովրդական վեպի հայկական պատումների հետ:

Կ. Մելիք-Օհանջանյանի հետազոտությանը պարզվում է, որ՝

հայկական պատումների մեծ մասի անունները կրկնվում են Իրանի վիպասքներում: Դրանք ընդհանուր առմամբ վերարտադրում են Իրանի վիպասքներում նկարագրված Իրան-Ռուրանի հաղարամյա անհաշտ կոնվը: Հայկական պատումները վեպի վերամշակման բնագավառում ազատ են եղել Իրանում գոյություն ունեցող ստեղծագործական եղանակներից. հայկականը բուն ժողովրդական ստեղծագործություն լինելով՝ զերծ է Իրանի անհատական-գրական ստեղծագործության ամենաէական հատկանիշներից՝ անհատական շեշտ, քնարական զեղումներ, նկարագրություններ՝ բնության և բնավորության խորհրդածությունների կարգով և այլն: Վերարտադրելով իրենց անմիջական ճանաչողությունից հեռու Իրան-Ռուրանի պայքարը, հայկական պատումները տեղ-տեղ շփոթում են նրանց հերոսներին և վիպական միջադեպերը: Այդ պատումները հայացքի են ոչ միայն Իրանի հերոսներից շատերին, այլև վիպական շատ գրվագներ պատմում են «Սասնա ծռերի» դրվագների նմանությամբ, հայ վեպին հատուկ ստեղծագործական եղանակներով ու ձևով:

Առանձնապես ուշագրավ է Կ. Մելիք-Օհանջանյանի վերջին հետևությունը: Դա ցույց է տալիս, որ օտար, հերոսական Իրանի վեպն այնքան հոգ է գտել հայ աշխատավոր գյուղացու միջավայրում, այնքան է հարադատացել, որ ցեղակցելով հայ վեպի հերոսներին, սրանց էլ է մասնակից դարձնում Իրան-Ռուրանի կովին, Իրանի փահլևանների սխրագործություններն էլ հայկական ձևով է պատմում: Այն ամբողջապես հարադատացել է, «ազգայնացվել», վերամշակվել է հայ վեպի ոգուն, աշխարհըմբռնման և ձևավորման համեմատ և դարձել «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի կողմնակի ճյուղերից մեկը: Գիտնականը հավաստում է, որ արդի հայ «գուսանը», ասացողը, ճիշտ է գիտակցում, որ «Ռոստամ-Ջալ»-ը ծագումով հայկական չէ, բայց նա սիրում է այդ «նաղլը», ամենայն հոգատարությամբ մշակում ի իր հոգեկան աշխարհի լավագույն և հարազատ «հեքիաթներից» մեկը համարում:

30-ական թվականներին գլխավորելով Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի, իսկ վերջինիս վերակազմումից հետո նաև Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը, Կ. Մելիք-Օհանջանյանը հատուկ աշխատանք է տանում նոր ծագող սովետական բանահյուսության և մասնավորապես լենինին նվիրված ժողովրդական ստեղծագործությունների հայտնաբերման ու գրառման ուղղությամբ։ Այդ նպատակով նա բաժնի աշխատակիցների միջոցով պարբերական գործուղումներ ու գիտարշավներ է կազմակերպում դեպի Սովետական Հայաստանի տարբեր շրջանները։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում բանագետին հաջողվում է, ի շարս այլ նյութերի, ձևեր բերել նաև լենինին նվիրված բավական երգեր, վիպերգեր, զրույցներ, ասեր, հեքիաթներ։ Ընտրելով ու դասակարգելով վերջիններս, Կ. Մելիք-Օհանջանյանը պատրաստում է առանձին մի ժողովածու և կցելով նրան մի ընդարձակ ներածական ուսումնասիրություն, «Լենինը հայ ֆուկլորի մեջ» ընդհանուր խորագրով լույս է ընծայում 1936 թ.²։

Կ. Մելիք-Օհանջանյանի անմիջական ջանքերով գլուխ բերված հիշյալ գիրքը, իբրև լենինին նվիրված բանահյուսական առաջին ծավալուն գործերից մեկը, ուշագրավ երևույթ էր ոչ միայն սովետահայ, այլև ողջ սովետական բանագիտության համար։

Հատուկ ուշադրության է արժանի գրքի ներածական ուսումնասիրությունը։ Թեմա ունենալով Սովետական Միության բազմազգ ժողովուրդների և գլխավորապես Սովետական Արևելքի և Հյուսիսի ժողովուրդների ժամանակակից նորաստեղծ բանահյուսությունը, գիտնականը բնութագրում է վերջինիս հիմնական ժանրերը, բովանդակության ու ձևի առանձնահատկությունները, համեմատելով այն նույն այդ ժողովուրդների ավանդական բանահյուսության հետ։ Կ. Մելիք-Օհանջանյանը հատկապես կանգ է առնում սովետական բանահյուսության մեջ եղած լենինյան ստեղծագործությունների վրա, բացահայտում դրանց գաղափարական և գեղարվեստական հատկանիշները, հանգամանորեն խոսում «Լենինին փաշա» հայկական հայտնի հերոսական ասքի մասին։ Բանագետը դտնում է, որ արդի բանահյուսությունը, մասնավորապես վիպական երգերն ու «վեպը», որպես մասսաների անգիր ստեղծագործություն, ուշա-

² Տե՛ս «Լենինը հայ ֆուկլորի մեջ», Երևան, 1936 թ., հրատարակություն Հայաստանի պատմության և գրականության ինստիտուտի։

գրավ է նաև տեսական առումով: Նրա կարծիքով, մեր օրերում առաջ եկած բանահյուսությունը, հատկապես վերջինիս լենինյան ցիկլը, հնարավորություն է տալիս քայլ առ քայլ հետեւելու այդ բանահյուսության գոյացման և աստիճանական զարգացման փուլերին, ծանոթանալու նրա կրած ազդեցություններին, փոփոխություններին և ներկա դրությանը, նրա գոյացման կոնկրետ օրինակի վրա լուսաբանել ընդհանրապես վիպական ստեղծագործությունների ծագման ու աստիճանական զարգացման հարցերը: Բանագետի հավաստմամբ սովետական բանահյուսությունը հետաքրքրական է նաև իր ձևի և գեղարվեստական պատկերավորման միջոցների տեսակետից: Այստեղ քննության արժանի է նաև հին ու նոր բանահյուսության միաձուլման ընթացքը, հին ձևի ու նոր բովանդակության համատեղման կրեուլթը, հնի փոխակերպումը:

Անհրաժեշտ է նկատի առնել և այն ճշմարտացի դիտողությունները, որ առաջինը մեզանում կատարել է Կ. Մելիք-Օհանջանյանը «Լենին փաշայի» մասին, իբրև՝ «Սասնա ծռերի» բարերար ազդեցությունը կրած վիպական բանահյուսության ինքնատիպ մի ստեղծագործության, որն աչքի է ընկնում թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական տեսակետից և որպիսիք քիչ կան ոչ միայն հայկական, այլև խորհրդային Միության ժողովուրդներին՝ Լենինին և Հոկտեմբերյան հեղափոխությանը նվիրված բանահյուսության մեջ, մի ստեղծագործություն, որը զերծ լինելով առասպելաբանությունից և կրոնական տարրերից, աչքի է ընկնում ունալիստական միտվածությամբ:

1946 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը հրատարակում է իր «Միթրա-Միհրը Սասնա ծռերի մեջ» խորագրով ուսումնասիրությունը³: Այստեղ նա քննության առարկա է դարձնում հայ դիցաբանական պանթեոնի չուսումնասիրված հարցերից մի քանիսը (Միթրա-Միհրի հայանուն արբանյակները, Ժուկ ու Ժամանակի ժողովրդական հավատալիքը, Հայկ համաստեղության անունն ու էությունը): Գայթակղիչ է հեղինակի առաջ քաշած նոր վարկածը հայոց ավանդական նախահոր՝ դյուցազն Հայկի վերաբերյալ: Ըստ այդ վարկածի, Հայկի և Բելի կուլին նվիրված հայտնի վիպաառասպելական դրվագի մեջ պետք է նշմարել երկու տարբեր էթնոսների պատկանող ժողովուրդների գաղափարական պայքարի արտահայտությունը: Մելիք-Օհանջանյանը գտնում է, որ՝ Բել=Քրոնոսը Ասորեստանի

³ Տե՛ս «Գրական-բանասիրական հետախուզումներ», ժողովածու, գիրք Ա, Երևան, 1946, էջ 269—327: Հրատարակություն Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի:

պոտենցիալ ուժի անձնավորումն է, իսկ Հայ-Քրոնոսը՝ Հայաստանինը։ Քանի որ այդ երկու ժողովուրդները կոչում են իրար հետ, ապա բնական է, որ նրանց գերագույն աստվածներն էլ պայքարի դուրս գան միմյանց դեմ։ Իր թեզն ապացուցելու համար բանագետը բերում է համապատասխան փաստեր ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների լեզվի ու բանահյուսության, պատմության ու հնագիտության բնագավառներից։

Հետաքրքրական է նաև այն փորձը, որ արել է նա Հայկի կերպարի՝ «Սասնա ծռերի» մեջ ունեցած արձագանքները գտնելու ուղղությամբ։ Մելիք-Օհանջանյանը հետաքրքիր օրինակներով ցույց է տալիս, որ դուցազն Հայկը «Սասնա ծռերի» մեջ հանդես չի գալիս իբրև մի միաբնական, հերոսական կերպար, այլ որ նրա հատկանշական դիմագծերը վերաբաշխված են վեպի մի շարք հերոսների և գլխավորապես երկու մարդկայնացած հերոսների մեջ։ Դրանք են մի կողմից՝ կյանքը ժողովրդի բարօրության համար զոհաբերող, հայրենի երկրի ազատությունն ընդդեմ բռնակալ Մսրա Մելիքի պաշտպանող Թառլան Դավիթը, մյուս կողմից՝ հայրենի երկրի բարեկեցության մասին մտածող, շեներ ու բնակավայրեր կառուցող, սերունդը հովանավորող, խրատ ու դաստիարակություն տվող Քեռի Թորոսը, որոնք ստադիալ զարգացմամբ ժառանգել են հին հայկական դիցարանի աստվածների ու դուցադուռների հայր, ամենակարող Հայկի հիմնական հատկանիշները։

1947 թ. Կարապետ Մելիք-Օհանջանյանը հրապարակ է հանում պատմաբանասիրական բնույթի մեկ ուրիշ հետաքրքիր հետազոտություն՝ «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» խորագրով¹։ Մեկնակետ ունենալով հայ և ալլազգի որոշ հայագետների, մասնավորապես Մանուկ Աբեղյանի տեսակետը՝ Բուզանդի Պատմության բանահյուսական ակունքների վերաբերյալ, ինչպես և նկատի ունենալով Ն. Ադոնցի ու Մարկվարտի կողմից հույն, լատին և պարսկական աղբյուրներից վկայակոչված համապատասխան տեղեկությունները III—IV դարերում Մերձավոր Արևելքում և Հայաստանում տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների մասին, բանագետը ցույց է տալիս, որ Բուզանդի Պատմության Գ դպրության 20 և 21-րդ գլուխները, ուր նկարագրված են Հայոց Տիրան թագավորի հետ կապված դեպքերն ու դեմքերը, ամբողջապես վիպական ծագում ունեն։

Բուզանդի հաղորդածը Տիրան թագավորի օրոք Հայաստանում կա-

¹ Տե՛ս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1947, № 6, էջ 59—77։

տարված քաղաքական-հասարակական իրադարձությունների վերաբերյալ, նրա կարծիքով, չի հաստատվում նույն այդ իրադարձություններին տեղյակ ժամանակակից օտար պատմական գրավոր աղբյուրների տվյալներով, ուստի և պետք է ենթադրել, որ մեր պատմիչը, ամենայն հավանականությամբ, օգտվել է հայ ժողովրդական վեպից ու ըրույցներից:

Պատմիչի հաղորդումներն իրենց բնույթով համընկնում են այն վիպական մոտիվներին, որ մենք գտնում ենք ինչպես հայ, այնպես էլ այլալդի բանահյուսական հուշարձաններում, ուստի և կարելի է հաստատապես ասել, որ դրանց հիմքը կղել են համապատասխան բանավոր աղբյուրներ:

Այդ են հաստատում նաև Տիրան-Տրդատի կյանքի հետ կապ ունեցող Բուզանդի հիշատակած բոլոր տեղանունները՝ Աղիորսք, Դալարիս-Ածուղ և Ոսիա-Ոխսա, որոնք ոչ թե իրական-պատմական աշխարհագրական անուններ են կղել մինչ տիրան-տրդատյան Հայաստանում, այլ անորոշ ու անհայտ վայրեր, որոնք այդպես են «կնքվել» ժողովրդական վիպասանների և գուսանների կողմից: Այդ է հաստատում և Ճարտուկ-Ճանճկեն երիվարի միջադեպը, բանահյուսական շրջիկ մի մոտիվ (տե՛ս «Փյոռօղլի», «Կառ ու Քուլուկ» և այլն), որը հարակցման կարգով միացել է Տիրան-Տրդատի վեպին և վերամշակվել ու տեղայնացվել է Հայաստանում ծավալված ռազմաքաղաքական և հասարակական իրադարձությունների համեմատ:

1964 և 1968 թթ. լույս են տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական երկու արժեքավոր հոդված-ուսումնասիրությունները: Դրանցից առաջինը կրում է «Ագաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը»⁵, իսկ երկրորդը՝ «Ագաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր աղբյուրները»⁶ խորագրերը: Երկու հոդվածներն էլ շարադրված են գիտնականի բաղմամբ հետախուզումների արդյունք հանդիսացող «Լուսավորչի վեպը» ձեռագիր ծավալուն աշխատության հիման վրա: Բանագետն այստեղ հավաստում և պատմագրական ու բանահյուսական նոր, հարուստ փաստերով հաստատում է հայագիտության մեջ մինչ այդ արդեն արձանագդրված այն իրողությունը, ըստ որի, Ագաթանգեղոսի «Պատմությունը» ոչ այլ ինչ է, բայց կթև ժողովրդական վի-

⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 53—82:

⁶ Տե՛ս «Մառ և հայագիտության հարցերը» ժողովածուն՝ նվիրված ակադ. Ն. Մառի ծննդյան 100-ամյակին, Երևան, 1968, էջ 95—118:

սյական մոտիվները մի արժեքավոր ժողովածու, ենթարկված հեղինակային (գրական-գաղափարախոսական) հիմնական վերամշակման:

Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքով՝ Ադաթանգեղոսի վիպական այդ մոտիվների մի մասը մատենագրական ծագում ունի, որպես գրական փոխառություն, որն իր հերթին սերում է ժողովրդական բանահյուսությանը, մյուս մասը սերտորեն շաղկապված է հայ իրականության հետ, իբրև Հայաստանի իրական-պատմական իրադարձությունների վիպական-բանահյուսական արձագանք: Ադաթանգեղոսի կողմից հյուրընկալված բանահյուսական նյութերի մեջ, ըստ հեղինակի, կան նաև շրջիկ ժողովրդական-վիպական մոտիվներ, որոնք հնուց ի վեր տարածված են եղել Իրանի բարձրավանդակից մինչև հեռավոր Եվրոպա, եգիպտական անապատներից մինչև Ռուսաստանի և Մոնղոլստանի տափաստանները:

Ադաթանգեղոսի «Պատմության» մեջ պահպանված բանահյուսական նյութերը Կ. Մելիք-Օհանջանյանը բաժանում է չորս հիմնական վիպական ցիկլների. 1. Մինչ-Գրիգորյան կամ հայ-իրանական, 2. Տրդատյան, 3. Լուսավորչի վեպը և 4. Տրդատ և Հովհաննիս:

Հանգամանորեն կանգ առնելով «Լուսավորչի վեպի» վրա, հեղինակը, մերթ Եմերթ, անդրադառնում է նաև վերոհիշյալ մյուս վիպաառասպելական ցիկլներին և մեր հին ու նոր ժողովրդական վեպերին:

Բանագետի հավաստմամբ Գրիգորի «կյանքի» մանկության հատվածն իրական-պատմական չէ: Հայ մատենագիրների հաղորդումները նրա մանկության մասին գոյություն են ունեցել «պատմական» Գրիգորից դարեր առաջ և պատմվելիս են եղել, ինչպես այդ ցույց են տալիս հարևան այլ ժողովուրդների առասպելները արևի ու զարնան բուսականության աստվածության մասին, որն ամենայն հավանականությամբ պաշտվել է նաև հին Հայաստանում, ունենալով հավանորեն «Լուսավորիչ» անունը կամ մականունը: Հետագայում այդ հեթանոսական առասպելը միաձուլվել է Գրիգորի «պատմությանը» և քրիստոնյա հայ կղերի ձևերով վերամշակվել ու նվիրագործվել, հիմք ընդունելով, ի շարս այլ «պատմությունների», առանձնապես Մովսես մարգարեի և ուրիշների մանկության «պատմությունը»: «Լուսավորչի վեպի» պատմականացումը տեղի է ունեցել, մի կողմից, տուրք տալով հայ-պստրական կղերի առաջնության հավակնություններին (Գրիգորը համարվել է Պարթև Արշակունիների օրինական ժառանգ), մյուս կողմից, բավարարություն է տրվել հունասիրական կրոնական-քաղաքական հոսանքին (Պարթևազն Գրիգորը դարձել է հունական հոգևոր մշակույթի սան):

Առանձնապես ծանրակշիռ և հասարակականորեն նշանակալից են այն աշխատանքները, որ կատարել է Կ. Մելիք-Օհանջանյանը հայ ժողովրդական վեպի սկզբնաղբյուր-պատումների գրառման, գիտական հրատարակության և թարգմանության բնամարդում: Այս տեսակետից պետք է առաջին հերթին հիշատակվի նրա կատարած շնորհակալ մեծ աշխատանքը «Սասնա ծռերի» նոր պատումների հայտնաբերման ուղղությամբ: Որքան էլ տախտիկնակ թվա, սակայն անհերքելի փաստ է այն, որ մինչև 1930-ական թվականները մենք չենք ունեցել Սասունում ծնված և իր հիմնական բովանդակությամբ, աշխարհագրական տեղավայրերով, գրված լիարժեք ու գեմքերով վերջինիս հետ սերտորեն կապված մեր ժողովրդական վեպի բուն Սասունի պատումները, չնայած այն հանգամանքին, որ դրանց գրառումը մեղանում սկսվել է տակավին անցյալ դարի 70-ական թվականներից: Կարապետ Մելիք-Օհանջանյանն է այն առաջին գիտնական-բանահավաքը մեղանում, որը հատուկ ուշադրություն դարձնելով այդ խնդրին, հայտնաբերել ու տպագրել է «Սասունցի Դավթի» երկու արժեքավոր պատումները բուն Սասունի բարբառով: Դրանցից առաջինը նա գրել է առել 1932 թ. հուլիսի 24-ին, Թալինի շրջանի Իրինդ գյուղում, բրնձիկ Սասունի Ճախրերկան գյուղացի 85-ամյա Քեոի Թամոյից, որը սասունցիների մեջ հայտնի է եղել իբրև լավ բանասաց, իբրև «Սասնա ծռերի» ստուգապատում պատմության միակ գիտակն ու անաղարտ պահպանողը: Բանահավաքի վկայությամբ Քեոի Թամոն «Տավթի բազմութունը» եղելություն է համարել, ասելով միաժամանակ, որ ինքը, իբր թե, տեսել է «Տավթի գիժքը», որը մեկ լիտր է քաշելիս եղել և պահվելիս է եղել Սասունի Գոմաց վանքում, և որ հետագայում կոիվների ժամանակ քրդերը այրել են այդ գիրքը⁷:

«Սասնա ծռերի» սասունական երկրորդ պատումը Կ. Մելիք-Օհանջանյանը գրել է առել նույն 1932 թ. հուլիսի 29-ին Թալինի շրջանի Աշնակ գյուղում, դարձյալ բնիկ սասունցի, Սասնա Դոմրդեր գյուղացի Առաքել Սարուխանյանից, որը «Սասնու Տավթի» իր պատումը լսել է հայրենիքում եղած ժամանակ⁸:

Բացի պատմական հատուկ արժեք ներկայացնող վերոհիշյալ երկու

⁷ Տե՛ս «Սասնա ծռեր», Բ հատոր, Ա մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1944, էջ 153—197:

⁸ Նույն տեղում, էջ 199—223:

պատումներից, բանագետն անձամբ գրի է առել հայ ժողովրդական վեպի ուրիշ 6 արժեքավոր պատումներ ևս (2 հատ Ալաշկերտի, 1 հատ Մոկաց, 2 հատ Շատախի, 1 հատ Կանկթի բարբառներով): Վերջիններիս մեջ պետք է առանձնապես նշել ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումը⁹, որը իրավացիորեն համարվում է «Սասնա ծռերի» մեզ հայտնի բոլոր պատումներից ամենաընդարձակներից ու լավագույններից մեկը¹⁰:

Հայ ժողովրդական վեպի բնագավառում Մելիք-Օհանջանյանի կատարած մյուս աշխատատար և ծանրակշիռ գործը՝ «Սասնա ծռերի» 1000-ական էջանոց երկու հատորների պատրաստման մեջ նրա ունեցած գործուն մասնակցությունն է:

Հայտնի է, որ երբ տարիներ առաջ Հայաստանի պետհրատը իր գեղարվեստական բաժնի վարիչ Նիկոլ Չարենցի միջոցով առաջարկեց Մանուկ Աբեղյանին՝ հանձն առնելու «Սասնա ծռերի» ժողովրդական սկզբնաղբյուր-պատումների գիտական ամբողջական հրատարակության պատրաստման գործը, մեծանուն հայագետը առկա սակավաթիվ բանագետներից իրեն գործակից ընտրեց Կ. Մելիք-Օհանջանյանին:

1932 թ. սիրով ու ոգևորությամբ ձեռնարկելով «Սասնա ծռերի» պատումների հրատարակության գործը, Կ. Մելիք-Օհանջանյանը Մանուկ Աբեղյանի հետ միասին մի շարք տարիների ընթացքում հավաքեց, դասավորեց ու խմբագրեց հայ ժողովրդական վեպի հրապարակում եղած տպագիր, անտիպ և նոր գրի առնված շուրջ 53 պատումները: Աբեղյանի հետ նա պատրաստեց «Մուրի» հատորների յուրաքանչյուր բարբառային խմբին կցված ներածականները՝ բաղկացած համապատասխան քերականական գիտելիքներից, աշխարհագրական, ազգագրական ու այլ կարգի տեղեկություններից, կազմեց անհրաժեշտ ծանոթագրություններ վեպի պատումներում դրսևորված սուսպենդիական, պատմական, կենցաղային և այլ մոտիվների ու երևույթների վերաբերյալ, պատճառատեղ պատումներում գործածված օտար և բարբառային բառերի ու դարձվածքների ընդարձակ բառարանը: Աբեղյանի հետ միասին նա գրեց նաև «Մրռերի» առաջին հատորի սկզբում դրված ներածականը՝ վերջինիս մեջ բնութագրելով վեպի ծագումն ու կազմությունն ընդհանրապես և «Սասունցի Դավթի» պատմականությունը, սոցիալական բնույթը, շեղարվեստական առանձնահատկությունները՝ մասնավորապես: Մանուկ Աբեղյանի

⁹ Նույն տեղում, էջ 247—353:

¹⁰ Նշված 8 պատումներից 4-ը տպագրված է «Սասնա ծռերի» և հատորում (1936), իսկ 4-ը՝ Բ հատորի Ա գրքում (1944):

մահվանից հետո (1944 թ.) Մելիք-Օհանջանյանը կաղմեց «Ծոերի» բոլոր պատումների ճյուղագրությունը, հատուկ անունների ու առարկայական լիակատար ցանկերը, պատրաստեց վեպի տարածման աշխարհագրական քարտեզը, որոնք լույս տեսան 1951 թ. «Սասնա ծռերի» և հատորի Բ մասի վերջում:

«Սասնա ծռերի» հատորները անսպառ գանձաբան են ոչ միայն հայագիտության տարբեր մարզերի աշխատողների ուսումնասիրության, այլև մեր գրողների ու արվեստագետների նորանոր ստեղծագործական հղացումների համար: Ահա թե ինչու, Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի կողմից այդ հատորների վրա կատարված բազմամյա բեղմնավոր աշխատանքը ունի կուլտուր-պատմական մնայուն և անուրանալի արժեք ու նշանակություն:

Հայ ժողովրդական վեպի բնադալառում Կ. Մելիք-Օհանջանյանի կատարած մյուս կարևոր աշխատանքը «Սասնա ծռերի» 10 լավագույն պատումների ռուսերեն թարգմանության գործն է, շուրջ 40 տպագրական մամուլի ծավալով: Այդ գործը թարգմանչի պատրաստած համապատասխան գիտական ծանոթագրությունների և առաջաբանի, ինչպես և նույն այդ պատումների հայերեն սկզբնաղբյուրների հետ միասին ծրագրված էր լույս ընծայել Մոսկվայում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտների համատեղ հրատարակությամբ, «Սովետական ժողովուրդների էպոսներ» մատենաշարով:

«Ծոերի» պատումների սովյալ թարգմանության մեջ ցայտուն կերպով երևան են եկել մի կողմից թարգմանչի բանագիտական խոր իմացությունները, մյուս կողմից՝ նրա թարգմանչական փորձն ու հմտությունը: Այդ թարգմանությունները աչքի են ընկնում ինչպես սկզբնաղբյուրի թղթանդակության ճշգրիտ ու հարադատ վերարտադրությամբ, այնպես էլ այդ սկզբնաղբյուրի ոգու և երանգավորման պահպանումով, նրա ոճական ու արտահայտչական առանձնահատկությունների համարժեք հնչեղությամբ:

«Սասունցի Դավիթ» հոբելյանական հյուսվածո համահավաք հրատարակության ռուսերեն թարգմանությունը, որը լույս տեսավ 1939 թ., չի կարող փոխարինել ներկա թարգմանությունը և հիմք ծառայել բուն գիտական հետազոտությունների համար, քանի որ այն չունի բառիս խոսկական սուռնով սկզբնաղբյուրի արժեք: Այդ հրատարակությունը ժամանակին կատարեց և այժմ էլ կարող է կատարել մեծ դեր մեր ժողովրդա-

կան վեպի տարածման, նրա ընդհանուր բովանդակության և գաղափարական միտվածության մասին պատկերացում տալու գործում: Իբրև վեպի բազմաթիվ պատումներից կատարված ուրույն մի ծաղկաքաղ, համահավաք մասսայական ընթերցողին կարող է պատճառել նաև համապատասխան գեղագիտական բավականություն: Սակայն նույն այդ համահավաքը չի կարող լիովին բավարարել հարցասեր գիտնականի պահանջները՝ ճանաչելու մեր վեպն այնպես, ինչպես որ նա կա, առանց խմբագրական միջամտությունների, իր բնական անաղարտ վիճակում՝ սերտորեն միահյուսված ժողովրդական բանասացների ու նրանց ունկրդիներների հարազատ միջավայրի հետ: Մինչդեռ Կ. Մելիք-Օհանջանյանի կատարած հիշյալ թարգմանությունը, իբրև «Ծերի» բուն սկզբնաղբյուր-պատումների ըստ ամենայնի ճշգրիտ թարգմանություն, ընձևում է բոլոր հնարավորությունները՝ բազմակողմանի ու խոր ուսումնասիրելու մեր վեպի բուն բովանդակությունը, նրան ծնունդ տվող պատմական միջավայրը, նրա սոցիալական ու քաղաքական բնույթը, գեղարվեստական արժանիքները: Այն հնարավորություն է տալիս նաև պարզաբանելու «Սասունցի Դավիթ» հարաբերությունը մյուս ժողովուրդների էպոսների հետ, որոշելու նրա ուրույն տեղը աշխարհի էպիկական ստեղծագործությունների շարքում:

Կ. Մելիք-Օհանջանյանը յուրովսանն նպաստել է նաև հայկական էպոսի միջազգային տարածման, «Սասնա ծերի» համբավը Հայաստանից մինչև Եվրոպա ու Ամերիկա հասցնելու շնորհակալ գործին: Նրա մասնագիտական կարևոր դիտողությունները հաշվի առնելով են կատարվել «Սասունցի Դավիթ» անգլերեն (Լ. Զ. Սյուրմեյան), լեհերեն (Ի. Սիկիրիցկի) և էստոներեն (Բ. Կաբուր) թարգմանությունները:

Հայտնի է, որ ամերիկահայ անվանի գրող Լեոն-Ջավեն Սյուրմեյանը վեպի իր կատարած անգլերեն թարգմանությունը բնագրին ավելի հարազատ և առավել ճշգրիտ դարձնելու նպատակով հնուավոր Լուսնից սիւսի բերեց Երևան, Կ. Մելիք-Օհանջանյանի հեղինակավոր խորհուրդները լսելու և նրա հավանությունը ստանալու համար: Նույն կերպ վարվեցին նաև «Սասունցի Դավիթ» լեհ թարգմանիչ Իգոր Սիկիրիցկին և էստոնացի Բորիս Կաբուրը¹¹:

Ի լրումն հայկական Լիդոսի բնագումարում Կ. Մելիք-Օհանջանյանի

¹¹ Տե՛ս «Սովետական Հայաստան» (օրաթերթ), 1966 թ., № 37 (13691), «Գրական թերթ», 1967 թ., № 52 (1411):

կատարած բաղմաթիվ շնորհակալ դործերի, հիշենք մի կարևոր փաստ էս: Կ. Մելիք-Օհանջանյանի մտահղացմամբ և նրա անմիջական ու գործուն դրդումով Երևանի քաղաքային սովետը հաշվի առնելով Հայաստանի գրողների միության վարչության համապատասխան միջնորդությունը՝ 1962 թվականին Երևան քաղաքում շիրմաքար-հուշարձան կանգնեցրեց «Սասնա ծռերի» լավագույն բանասացներից մեկի՝ ալաշկերտցի Մանուկ Թորոյանի (Թորոյի Մանուկ) գերեզմանին¹²: Հայ ժողովրդի բազմադարյան կյանքում իր նախադեպը չունեցող պատմական միջոցառում էր դա, պերճախոս վկայություն Սովետական Հայաստանի կառավարության մեր ազգային մեծ վեպը ստեղծող և այն սերնդից-սերունդ հաղորդող հասարակ մարդկանց նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի:

Նշված գործերով չեն ավարտվում անվանի բանագետի հայ ժողովրդական բանահյուսության հուշարձանների պահպանման, խմբագրման, հրատարակման և ուսումնասիրության ասպարեզում կատարած աշխատանքները¹³: Բերված փաստերն էլ, սակայն, լիովին բավական են ցույց տալու համար հայ բանագիտությանը նրա մատուցած անուրանալի ծառայությունները:

¹² Տե՛ս «Սովետական Հայաստան» (օրաթերթ), 1962 թ., № 268, «Գրական թերթ», 1962, № 47 (1167):

¹³ Կ. Մելիք-Օհանջանյանը ուշագրավ ակնարկներ ու դիտողություններ ունի նաև «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուին (Երևան, 1957, էջ 9—27), Կիրակոս Գանձակեցու «Պատմությանը» (Երևան, 1961, էջ ԽԲ—ՄԲ) կից իր գրած ընդարձակ առաջարկներում և այլուր:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Հայ բանագիտության հարյուրամյա պատմության մեջ քիչ անուններ կան, որոնց հետ կապված լինի այս կամ այն պատմաշրջանում բանագիտության զարգացումը:

Այդ սակավ անունների մեջ իր հաստատուն տեղն ունի ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Արամ Ղանալանյանը: Սովետական շրջանի հայ բանագիտության ընթացքն ու զարգացումը անխղիճորեն կապված է Արամ Ղանալանյանի անվան հետ:

Ծնվել է 1909 թվականի փետրվարի 12-ին՝ Ախալցխայում, գիտության հարգն ու արժեքը գիտակցող Տիգրան Ղանալանյանի ընտանիքում: Տարրական և յոթնամյա կրթությունն ստացել է հայրենի քաղաքում, իսկ միջնակարգը՝ Թբիլիսիում: 1925 թ. ավարտում է Թբիլիսիի 72-րդ աշխատանքային դպրոցը, երկու տարի անց ընդունվում Երևանի պետհամալսարանի պատմագրական ֆակուլտետը: Այստեղ ուսանելով լեզվագրական բաժնում, նա աշակերտում է նշանավոր հայագետներ Մ. Աբեղյանին, Հր. Աճառյանին, Գր. Ղափանցյանին, Ա. Տերտերյանին և մասնագիտանում հայոց լեզվի ու գրականության մեջ: Հայ ժողովրդական բանահյուսության նկատմամբ ցուցաբերած մասնագիտական հետաքրքրության պատճառով՝ շորորոգ կուրսում, ըստ ժամանակի բուհական ընդունված կարգի, համարվում է «առաջ քաշված» ուսանող հիշյալ առարկայից, որը այդ ժամանակ դասավանդում էր Մանուկ Աբեղյանը: Վերջինիս խորհուրդներով ու ցուցումներով Ա. Ղանալանյանը խորամուխ է լինում ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության մեջ: 1931-ին ավարտելով համալսարանը, նա աշխատանքի է անցնում Երևանի դպրոցներում իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1932 թ. իր համալսարանական դասախոս Յ. Խանդադյանի հանձնարարաձեռնով և Կ. Մելիք-Օհանջանյանի օժանդակությամբ Ղանալանյանը աշխատանքի է ընդունվում Հայաստանի նյութական կուլտուրայի պատմու-

թյան ինստիտուտը: Այս թվականից էլ սկսվում է Ա. Ղանալանյանի գիտական գործունեությունը: Սկզբում նա աշխատում է հիշյալ ինստիտուտում, ապա Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտներում ռախ իբրե կրտսեր, ապա և ավագ գիտաշխատողի պաշտոններով, ամենուրեք և միշտ պրազվելով հայ ժողովրդական բանահյուսության հետազոտությունը: 1942 թվականին Ա. Ղանալանյանը պաշտպանում է թեկնածուական գիտերտացիա՝ «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» թեմայով: 1943—59 թվականներին նա աշխատում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչի պաշտոնում: Այս տարիներին էլ նա ուղղություն ու ընթացք է տալիս սովետահայ բանագիտական մտքի զարգացմանը: Իր գիտահետազոտական աշխատանքներին գուզընթաց, Ա. Ղանալանյանը զբաղվում է նաև գիտամանկավարժական գործունեությամբ: Տարիներ շարունակ նա եղել է Երևանի պետհամալսարանի (1937—41), Աբովյանի անվան (1934—51) և Երևանի պետական հեռակա մանկավարժական (1936—48) ինստիտուտների հայ ժողովրդական բանահյուսության առարկայի սիրված ու հարգված դասախոսը, ուսանողների մեջ ջերմ սիր ու հետաքրքրություն արթնացնելով հարազատ ժողովրդի բանավոր հոգևոր մշակույթի նկատմամբ: Երկար ժամանակ նա է եղել հայ բանահյուսության գծով գիտական կադրեր պատրաստող, նրա ձևերի տակ է դաստիարակվել ու աճել արդի հայ բանագետների մի ամբողջ սերունդ: Իր գիտական ծանրակշիռ վաստակի համար Ա. Ղանալանյանը 1965 թվականին ընտրվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի լիդիայի անդամ, 1977-ին՝ իսկական անդամ, 1967-ին նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի պատվանուն: 1970 թ. Ա. Ղանալանյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Հայկական ավանդությունները» թեմայով և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: «Սասունցի Դավիթ» հերոսավանդի համահավաք բնագիրը կազմելու համար՝ 1940 թ. նա պարգևատրվում է Սովետական Հայաստանի Գերագույն սովետի պատվոգրով, 1951-ին՝ «Պատվո նշան»՝ ջրանշանով: Նա երկար տարիներ եղել է Մ. Աբեղյանի անվան գրականության, հնագիտության և աղագրության ինստիտուտների, Մաշտոցի անվան մատենադարանի գիտական խորհուրդների անդամ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դոկտորական աստիճաններ շնորհող մասնագիտացված գիտական խորհրդի նախագահ

հի տեղակալ և մինչև իր կյանքի ավարտը «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալն էր:

* * *

Արամ Ղանալանյանը գիտական ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ հայ բանագիտության մեջ պատմական հերթափոխություն էր տեղի ունենում: Հայ բանագիտության դասական սերունդը, հանձին Մսնուկ Աբեղյանի, աստիճանաբար թողնում էր ասպարեզը, այն զիջելով բարձրացող նոր սերնդին: Բանագիտական հին ու նոր սերունդը յուրովի կամրջող Կ. Մելիք-Օհանջանյանը իր տարբեր դեպումունքների պատճառով, ապա և իրադարձությունների բերումով՝ միառժամանակ հեռանում է ասպարեզից: Իսկ մինչ այդ և այդուհետև սովետահայ բանագիտության առջև ծառանում են նոր խնդիրներ, ծագում են նոր հեռանկարներ, որոնք հրատապ լուծում ու ընթացք են պահանջում: Սովետահայ բանագիտության առաջընթացի գործը իր ուսերին է վերցնում հայ բանահյուսության երիտասարդ, շնորհունակ մասնագետ Արամ Ղանալանյանը: Վերջինս յուրացնելով հայ դասական բանագիտության ստեղծած կայուն ավանդները, իր մեծ ուսուցիչ՝ Մ. Աբեղյանի, ապա և իր բարեկամ Կ. Մելիք-Օհանջանյանի անմիջական ցուցումներով ձևոնարկում է հայ ժողովրդական բանահյուսության հետազոտմանն ու համակարգմանը:

Ա. Ղանալանյանը շատերի նման չեկավ հակադրվելու իր նախորդներին, «հերքելու» նրանցը և «հաստատելու» իրենը, այլ նա դառնում է հայ դասական բանագիտության շարունակողն ու զարգացնողը՝ միայն նոր պահանջներով ու նորոգ տեսակետներով:

Ա. Ղանալանյանի մոտաքը հայ բանագիտության սնդաստանը չի նշանավորվում հեղաշրջիչ փոթորկումներով և ոչ իսկ մեծադրուդ հավաստիացումներով. նա ներս է մտնում իբրև մի համեստ, բայց խոհուն ու պայծառամիտ աշխատավոր և իր գործունեությունն անմիջապես սկսում «սև» ու սրտամաշ աշխատանքով: Առաջին գործը՝ Մ. Աբեղյանի խորհրդով հայ ժողովրդական բանահյուսության մատենագիտության ատեղծումն էր, որը լինելով երկաթատե տքնության արդյունք, դառնում է այն հաստատուն նախահիմքը, որից հետագայում նա միշտ ելնում և որի վրա խարսխում էր իր գիտական աշխատությունները: Ապա՝ 1932—34 թվականներին Կ. Մելիք-Օհանջանյանի ցուցումներով նա մշակում է

Ե. Լալայանի 1915—16 թթ. բանահյուսական խմբարշավի ձեռագիր նյութերը և կազմում շուրջ 1000 հեքիաթի համառոտագրությունները՝ հայկական հեքիաթների ապագա լիակատար համաբարբառի համար: Այս նախնական «սև» աշխատանքները յուրովի նախապատրաստում են նրա անցումը գիտահետազոտական ինքնուրույն գործունեության:

Ա. Ղանալանյանի բանագիտական գործունեությունը միատարր ու միակողմանի չէ. սովետահայ բանագիտության առաջամարտիկի նրան վիճակված պատմական դերը պարտադրում էր առարկայի բազմազան ու համալուրջմանի ընդգրկում, նյութի ու մեկնաբանությունների մատուցման ալլազան եղանակներ: Բանահյուսական տեքստաբանություն, առանձին ժանրերի տեսական հետազոտություն, բանագիտության տեսություն և պատմություն, գրականության և բանահյուսության փոխառնություններ, բանահյուսության դասընթացի մշակում, հայ բանահյուսության և բանագիտության մասնաշաղկապանացում և պրոպագանդում, բանահավաքություն, — ահա այն հիմնական բնագավառներն ու խնդիրները, որ բնորոշում են Ա. Ղանալանյանի շուրջ կեսպարզա գիտական գործունեությունը: Եվ այսուամենայնիվ նրա գիտական վաստակի ժանրության կենտրոնը բանահյուսական տեքստաբանությունն է և առանձին ժանրերի գիտական ուսումնասիրությունը: Այստեղ է երևան գալիս և առարկայանում գիտնականի վերլուծական մտքի տաղանդն ու բանասիրական կարողությունները:

1937 թ. լույս է տեսնում Ա. Ղանալանյանի գիտական երախտյոթը՝ «Հայ շինականի աշխատանքի երգերը»¹: Որքան էլ ժողովրդական երգերը մեր բանահյուսության ամենալավ ուսումնասիրված տեսակներից էին, այնուամենայնիվ դիմաց ինքնատիպ մաս կազմող աշխատանքային երգերը մնացել էին տակավին չհետազոտված: Եվ ահա, ձեռնամուխ լինելով դրանց, Ա. Ղանալանյանը 1934—36 թվականների ընթացքում բանահյուսական-աղագրական տպագիր ու անտիպ ամենատարբեր աղբյուրներից և անձամբ ժողովրդից զրահում ու հավաքում է մեր գուղական աշխատանքային երգերի մի պատկառելի ժառանգություն, այն ենթարկում գիտական դասակարգման ու հետազոտության: Նա ստեղծում է հայ դեղձական աշխատանքային երգերի գիտական համահավաք բնագիրը, ուր երգերը համակարգված էին ըստ աշխատանքի տեսակների: Աշ-

¹ Հայ շինականի աշխատանքի երգերը, կազմեց և խմբագրեց Արամ Ղանալանյան, Երևան, 1937, 266 էջ:

խատույթունն օժտված էր ներածական մի ամփոփ ուսումնասիրությամբ, ուր քննված են աշխատանքային երգերի ծագման, գրառման, բովանդակության հիմնական մոտիվները, արվեստի և գրական մշակման խնդիրները: Այն մի ամբողջական գիտական աշխատույթուն էր, որը տակավին 1935 թվականին ձևագիր վիճակում արժանացել է Միլքոնյան մրցանակի: Իր գիտաբանասիրական արժեքից բացի, «Հայ շինականի աշխատանքի երգերը» ուշադրով էր նախ պատմական առումով. մեր բանագիտության պատմության մեջ, «Սասնա ծռերից» հետո, դա բանահյուսական հուշարձանների երկրորդ գիտական համահավաք ժողովածուն էր: Եվ այսպե՛ս այն նշանակալից էր մեթոդաբանական տեսակետից ևս. առաջին անգամ մեղանում հատուկ ուշադրության և ուսումնասիրության էր արժանանում ժողովրդի սոցիալական կյանքի բանահյուսությունը, ուր անմիջականորեն հնչում էր աշխատավոր ժողովրդի ձայնը անցյալի իր անաղատ իրավիճակի, սոցիալական ծանր պայմանների, դուքային ու դասակարգային անհավասարության, աշխատանքի մարդու հոգու սվայտանքների, հույսի ու հասարակական ձգտումների մասին: «Հայ շինականի աշխատանքի երգերն» այսպիսով ձեռք էր բերում նաև դարաշրջանին համապատասխան քաղաքացիական ու գաղափարաբանական նոր հնչողություն:

Ա. Ղանալանյանը իր այս երախայրիքով հանդես էր գալիս իբրև հատուն ու կազմակերպված գիտնական: Բայց նա կանգնած չի մնում այդ մակարդակին: Իր գիտամանկավարժական բազմազան դեպումունքներին ադրնթեր, 40-ական թվականների սկզբներին նա սկսում է դեպզվել հայ բանահյուսության ամենաբազմաբանակ, բայց և ամենաարժեքավոր ու բնավ չհետադուրված ժանրով՝ առած-առացվածքներով: Հայ բանահավաքների ջանքերով, շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում, տպագիր ու անտիսյ աղբյուրներում կուտակվել էր առած-առացվածքների մի պատկառելի ժառանգություն: Բանահյուսական այդ տեսակը, էությունը թեպետ շատ գայթակղիչ, բայց մանր ու բազմաբանակ լինելու պատճառով շարժում էր բանագետների երկյուղը, ուստի և մնում անձեռնմխելի: Ա. Ղանալանյանը իր անձանձիւր աշխատասիրությամբ, դժվարությունները հաղթահարելու համբերատար ձգտումով ղեմ է գնում ընդունված կարծիքին և ձևափոխում հայկական առած-առացվածքների համահավաքման, դրանք անձամբ իր և ուրիշների կողմից նոր գրառումներով համալրելու, գիտական դասակարգման ու հետազոտության մեծ և արդյունավետ գործը:

1951 թվականին լույս է տեսնում «Հայկական առածանին»² և իսկույն իր վրա բեկեռում գիտական հասարակության ուշադրությունը՝ թե՛ մեղանում, թե՛ Միության մեջ և թե՛ արտասահմանում: «Առածանու» նկատմամբ ծայր առած բռնուն հետաքրքրությունը պայմանավորված էր մի քանի առարկայական հանգամանքներով. ամենից առաջ կարևոր նշանակություն ունեւր նյութի որակը: Հայ իրականության մեջ առաջին անգամ ի մի էին բերվում, զտվում ու դասակարգվում, մեկ միասնական համակարգման ենթարկվելով՝ մեկ գրքի մեջ ամփոփվում հայ ժողովրդի մտքի վաղնջական, բայց միաժամանակ կենդանի գոյատևող իմաստուն ասույթները:

«Առածանին» դառնում էր ժողովրդի դարավոր իմաստությունն ամփոփող մի յուրօրինակ գանձարան, որին սիրով ու հիացմունքով էին դիմում բոլոր հայերը՝ մասնագետ-գիտնականից սկսած, վերջացրած ամենաշարքային ընթերցողով: Ապա. մեղանում առած-ասացվածքները առաջին անգամ էին արժանանում հատուկ ու ամբողջական հետազոտության, որի շնորհիվ աչք էր բացվում այդ գեղեցիկ ու խորիմաստ ասույթների ժանրային բնույթի, նրանց ստեղծման ժամանակի, նշանցում խտացված պատմահնագիտական հիշատակների, հայ ժողովրդի քաղաքական կյանքի, հոգեկան նկարագրի, պատմաաշխարհայգրական միջավայրի, առած-ասացվածքների սոցիալական ու գաղափարական բովանդակության, բանաստեղծական լեզվի ու արվեստի, ընդհանուր ու փոխառյալ ստեղծագործությունների խնդրի և այլ հարցերի վրա: Դրանցով ամփոփ համակողմանիությամբ գաղափար էր կաղմվում բանահյուսական մի ժանրի մասին, որ դեռ երեկ թեպետ կար, բայց մնում էր տակալին անստույգ ու յիմաստավորված: Եվ, վերջապես, «Առածանին» ընդհանուր գիտական հետաքրքրության առարկա էր դառնում նյութի մատուցման իր ինքնատիպ համակարգով: Թեպետ ուսու ու եվրոպական դարգացած ազգերից շատերն ունեին իրենց առածների ընդարձակ ու համահավաք ժողովածուները, սակայն դրանք նյութի համակարգման սկզբունքով տարբեր էին «Առածանուց»: Դրանք մեծ մասամբ դասակարգված էին առածների ձևավական հատկանիշների վրա, մինչդեռ «Առածանին» համակարգված էր ըստ առած-ասացվածքների իմաստի, որի հետևանքով առաջ էին եկել հիշյալ ժանրի ընդհանուր բովանդակությունն արտացոլող իմաստային բազմապիսի խմբեր ու ենթախմբեր: Ծիշտ է, «Առածանու» համակարգը

² Ա. Տ. Ղանալանյան, Հայկական առածանի, տերստ և հետադոտություն ժողովրդական առածների ու ասացվածքների, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1951, 198 էջ:

տում է, որ «վեպի պատումների մեծ մասի ութմական ոտքը լսելի է ալվելի պատմական ու նկարագրական հատվածների, ինչպես և երգերի մեջ»²⁶։

«Սասնա ծռերի»-ի ոտանավորի շարժի էական կողմերը պարզելուց բացի, բանագետը նկատել է նաև այդ ոտանավորի՝ խորհնացու Պատմության մեջ բերված բանահյուսական բառացի հատվածների ոտանավորի հետ ունեցած նմանությունը կամ նույնությունը։

«Լավ ուշադրություն դարձնողը,—գրել է նա,—կասենի որ արդի ժողովրդական վեպի (իմա «Սասնա ծռեր»-ի—Ա. Ղ.) ձայնական տաղաչափությունը, որ բոլորովին նոր է մեր բանահյուսությունից մեջ, շատ մոտ է մեր հին հեթանոսական վեպերի շարժին («Երկնէր երկին» և մյուս հատվածները խոր. Պատմության մեջ)»²⁷։

«Սասնա ծռեր»-ի ոտանավորով հորինված լինելու հանգամանքը հավաստելով, Աբեղյանը դրանով իսկ ապացուցել է, որ մեր վեպը ձևական կողմից պահպանել է իր ժանրային նկարագիրը, այլ խոսքով՝ շափածո էպոսը չի վերածվել արձակ հեքիաթի, ինչպես լինում է սովորաբար, երբ այդ էպոսը ժամանակի հոլովումով, քայքայման է ենթարկվում։

Հալոց հին «Վիպասանքի» ոտանավորի «Սասնա ծռեր»-ի ոտանավորի հետ ունեցած նմանության փաստը արձանագրելով, Աբեղյանը դրանով իսկ բացահայտել է մեր վիպական բանահյուսությունից մեջ հիշված ուղղությունը գոյություն ունեցող ավանդույթի դարավոր հարատևման ուշադրավ հանգամանքը։

Մ. Աբեղյանի ուշադրությունը «Սասնա ծռեր»-ի նկատմամբ չեն սահմանափակվել միայն վերջինիս համակողմանի ուսումնասիրության խնդիրների շրջանակով։ Նա առաջիններից մեկն է եղել մեզանում, որ լավ ըմբռնելով, թե ինչ մեծ գանձ և ինչպիսի շնորհակալ ու ազնիվ նյութ է ներկայացնում իրենից մեր վեպը, առաջ է քաշել նրա գրական մշակման անհրաժեշտության կարևոր խնդիրը, լրջորեն հաշվի առնելով այդ գործի ողջ դժվարությունը։ «Սիրելի պիտի լինի մեզ համար մեր վեպը,—գրել է նա այդ առթիվ,—որ մերն է, մեր սեփականը, մեր ազգի դարավոր պատկերը... Ուսումնասիրենք այն բազմակողմանի կերպով, և երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նյութը նույն ժողովրդական

²⁶ Մ. Աբեղյան. Հալոց լեզվի տաղաչափություն, էջ 360—370։

²⁷ Մ. Աբեղյան, Դավիթ և Մհեր, Շուշի, 1889 (Առաջարան)։

փրկել ավանդություններն ու ավանդական զրույցները. դրանք գրառվել ու մտել էին գրական-գեղարվեստական, ազգագրական, բանահյուսական, հնագիտական, ուղեգրական, տեղագրական և այլ կարգի ամենատարբեր աղբյուրները՝ մնալով ցրված ու տարյալուծված: Հետևաբար, ձեռնարկել նման մի ժանրի հավաքմանն ու հետազոտությանը, նշանակում էր կատարել մտավոր և ֆիզիկական տեսական լարված աշխատանք: Եվ Ա. Ղանալանյանը, իր առողջական աննախանձելի վիճակից անկախ, շուրջ մեկուկես տասնամյակ ջանասիրտությամբ հաղթահարում է հիշյալ և այլ կարգի դժվարությունները և, ի վերջո, իր տարիների մեղ:լաջան տքնանքը պատկում փայլուն հաջողությամբ: 1969 թ. նա հրատարակում է «Ավանդապատում» ծավալուն հատորը⁴, որն ընդգրկում էր հայ ժողովրդի դարերով ստեղծած ու դարերի խորքից եկող ավանդությունների ու ավանդական զրույցների գիտականորեն կուռ համակարգված ժառանգությունը, ներածական մի ընդարձակ և խորիմաստ հետազոտությամբ:

Ղանալանյանի տարիների աշխատանքը ուղղված էր ոչ միայն ավանդությունների հավաքմանն ու հետազոտությանը, այլև նրանց գիտական համակարգման ճիշտ սկզբունքների մշակման և մանավանդ նյութի և ուսումնասիրության բյուրեղացման վրա: Եվ նա նյութի էությունից բխող ամենաստույգ հետևությունների հիման վրա իսկ կառուցում է իր աշխատության սխեման ու տեսությունը: Ամենից առաջ նա ճշգրտում և վերջնապես որոշարկում է ավանդությունների ու ավանդազրույցների ժանրային սահմանները, որ այնքան շփոթությունների տեղիք էր տվել հայ և ընդհանուր բանագիտության մեջ: Ավանդությունների հիմնական նպատակը համարելով ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջների բավարարումը, այլ գլխավորապես նրանց «համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելը», Ղանալանյանը պահում է բացատրում նաև ավանդությունների ճակատագրորեն անհրաժեշտ կապը որոշակի առարկաների, տեղավայրերի ու անձանց հետ, ինչպես նաև նրանց ավանդման պարզ ու պատահական եղանակը, ձևի ու կառուցվածքի պարզունակությունն ու անկաշուռությունը, վիպական կաշուն բանաձևերի ու ընդհանուր տեղիքների առկայության հրկրորդական բնույթը, ժողովրդի մեջ ժանրի անվան բացակայությունը: Բայց ամենաէականը ավանդությունների տեսակների որոշարկումն է, որը Ղանալանյանը լուծել է փայլուն հաջողությամբ: Մերժելով տարբեր ժամանակներում տարբեր բանագիտ-

⁴ Ա. Ղանալանյան. Ավանդապատում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, 530 էջ:

ների կողմից առաջարկված ավանդությունները ըստ բովանդակավորած մոտիվների էամ էլ ըստ գործող անձանց ու առարկաների դասակարգման սկզբունքները, Ղանալանյանն առաջ է քաշում ավանդություններն ըստ էության տեսակավորելու սկզբունքը: Նա ավանդություններն ու ավանդազրույցները բաժանում է երեք հիմնական խմբի. ստուգաբանական և բացատրական ավանդությունների և վաճառական ավանդազրույցների: Առաջին խմբում նա դասում է ժողովրդի մտքին անհասկանալի բառեր ու անուններ ստուգաբանող ավանդությունները, երկրորդի մեջ՝ բնության ու հասարակության առարկաների ու երևույթների ծագումը բացատրող ավանդությունները, իսկ երրորդի մեջ՝ զանազան իրական ու մտացածին անձանց մասին կենսագրական տեղեկություններ հաղորդող ավանդազրույցները: Բացի այդ, Ղանալանյանը ըստ բնույթի տարբերակում է ևս ավանդությունների երեք խումբ՝ բուն ազգային, միջազգային և եկամուտ կամ փոխառյալ, որ հատուկ է բանահյուսական բոլոր տեսակներին առհասարակ: Ղանալանյանը իր այս մտահանգումները չի թողնում սոսկ տեսական մակարդակի վրա. նա իր տեսական եզրակացությունների հիման վրա էլ կատարում է համահամալս բնագրում ընդգրկված նյութի դասակարգումը, ինչպես նաև ներածական ուսումնասիրությունը: Եթե նա նյութի դասակարգման սկզբունքը դարձնում է ավանդությունների էությունը, ապա ավանդությունների հետազոտության համար հիմնականում՝ նրանց բնույթը, ինչպես նաև դրա տակ համախմբվող գործող անձինք, առարկաներն ու երևույթները:

Ավանդությունների ընդհանուր ժանրային հատկանիշները քննող գլխից զատ, ուսումնասիրությունն ըստ այդմ բաժանվում է երկու հիմնական մասերի. ա) Հայոց ազգային ավանդությունների քննություններից, ուր: ըստ ավանդությունների տվյալների, հետազոտված են հայկական բնաշխարհն ու հավատալիքները, ժողովրդի ներքին կյանքը իր կենցաղով, զբաղմունքներով, հասարակական հարաբերություններով, տարրնվաճող-բռնակալների դեմ ազգային դոյություն ու ինքնության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը՝ ալլաղգի թշնամիներով. հայազգի հերոսներով ու նահատակներով, հայ ազգային հին ու նոր մշակույթի տարբեր կողմերը՝ իր նշանավոր գործիչներով. բ) Միջազգային և եկամուտ ավանդությունների ուսումնասիրությունից, ուր քննվում են տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ տարածված և տեղանացված, ինչպես նաև հարևան ցեղերից ու ազգերից փոխառված ավանդական սյուժեներն ու կերպարները, իրենց ազգային ու միջազգային ձև-

վափոխութիւններով: Տարբերակելով ազգային ավանդութիւնները միջ-ազգայիններից ու փոխառյալներէր, Ղանալանյանը առաջինների տակ փաստորեն երևան է հանում ու առարկայացնում հայ ժողովրդի ծագման սկզբնավորումից մինչև նորագույն ժամանակներն ընկած՝ մի քանի հազարամյակ ընդգրկող նրա ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, բարոյականացողային, կրօնագաղափարախոսական կյանքի տարբեր շրջանների ամենատարբեր կողմերի մասին ունեցած առասպելական, կիսաառասպելական, իրական և հաճախ էլ մտացածին, բայց խորիմաստ հուշապատումները, որոնց մեջ երևան են դալիս ժողովրդի յուրահատուկ պատմահայեցողութիւնն ու աշխարհայացքը՝ իր հազարամյա անցյալի ամենատալքեր երեւոյթների նկատմամբ:

Այն ավանդական հուշապատումները, որոնք ունեն ստույգ պատմական հիմունք, Ղանալանյանը համեմատում է պատմական փաստերի ու վկայութիւնների հետ, բացահայտում նման ավանդութիւնների պատմական միջուկը, միաժամանակ ցուցահանում վիպական, կրօնաառասպելական և բանաստեղծական այն տարրերը, որոնցով բաղադրվել ու մարմնավորվել են ավանդութիւնները, դառնալով յուրատիպ գեղարվեստական ստեղծագործութիւններ: Հետազոտութեան նման պատմահամեմատական եղանակը կազմում է Ղանալանյանի ուսումնասիրութեան բուն մեթոդը և լիովին համապատասխանում քննարկվող նյութի բնույթին:

Ավանդական հուշապատումների ողջ հնութիւնը, հարստութիւնն ու բազմազանութիւնը երևան է դալիս գիտական կայուն սկզբունքներով դասակարգված ավանդութիւններն ու ավանդադրույցներն ընդգրկող ժողովածուի մեջ, ուր կան մոտ հազար ավանդութիւն, շուրջ 400 տարբերակներով: Դրանց ներքին համախումբը կատարված է ըստ առարկաների, կենդանիների, բույսերի և անձանց տեսակի: Յուրաքանչյուր ավանդութեան առարկայի տեղագրման մասին սկզբից տրված է ծանոթութիւն, իսկ աղբյուրներն ու այլ կարգի տեղեկութիւնները համախմբված են «Աղբյուրներ և ծանոթագրութիւններ» բաժնում: Ժողովածուն ունի նաև տեղանունների, անձնանունների, առարկայական տնտեսների ցանկեր, ավանդութիւնների տարածման հիմնական վայրերը ցուցադրող քարտեզ, ավանդութիւններին նւոթ դարձած հուշարձանների կրեք տասնյակի չափ լուսանկարներ:

«Ավանդապատումը» ամբողջութեամբ վերառած մի կուռ ու միասնական գիտական աշխատութիւն էր, աղբյուրագիտական բարձրարժեք

երկ, որը գալիս էր լրացնելու հայ բանագիտության մեջ վաղուց նկատվող բաց տարածություններից մեկը: Այն շուտով թարգմանվում է ռուսերեն և հեղինակի կողմից որոշ շափով համառոտված՝ հրատարակվում է Երևանում 1979 թվին⁵:

Կյանքի վերջին տասնամյակում Ա. Ղանալանյանը «Ավանդապատումի» սկզբունքով աշխատում էր հայ ժողովրդական երգիծական մանրապատումների գիտական համահավաքի կազմման վրա («Երգիծապատում»): Նա տարբեր տպագիր ու ձեռագիր աղբյուրներից արդեն քաղել էր երգիծական զրույցների հարյուրավոր նմուշներ: Սակայն վերահաս մահվան պատճառով այդ արժեքավոր մտահղացումը մնաց անավարտ:

* * *

Ա. Ղանալանյանի բանագիտական ուսումնասիրությունները սոսկ առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերով ու հետազոտություններ չեն սպառվում:

Նա այն գիտնականներից էր, որի համար վճռական նշանակություն ուներ գիտության ժողովրդականացումը: Ժողովրդագիտությունը, որի կարևոր բնագավառներից է բանագիտությունը, ըստ Ա. Ղանալանյանի, ամենից առաջ պետք է ժողովրդին հասցնել և նրա համար դարձնել մատչելի ու հասկանալի: Եվ սա ոչ թե սոսկ մի տեսական պահանջ էր, այլ համառ ու նպատակամիտված զործունեություն, որ ապացուցել է նա իր կեսդարյա գիտական կյանքի ընթացքում:

Ա. Ղանալանյանը սկզբից իսկ զբաղվում է բանագիտական այլևայլ խնդիրների ուսումնասիրությամբ և հայ հին ու նոր ժողովրդական բանահյուսության գիտական մասսայականացումով:

1936 թվականին բանահավաք Գ. Թարվերդյանի հետ միասին Ա. Ղանալանյանը կազմում և հրատարակում է «Հենինը հայ ֆոլկլորի մեջ» բանահյուսական ժողովածուն՝ Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և ընդարձակ առաջաբանով⁶:

Առաջին անգամ սովետահայ բանագիտության պատմության մեջ առանձին գրքով հրապարակ էին գալիս մեծ առաջնորդին նվիրված սո-

⁵ А. Т. Ганалаян, Армянские предания, Изд-во АН АрмССР, Ереван, 1979, 356 стр.

⁶ «Հենինը հայ ֆոլկլորի մեջ», խմբագրություն և ներածություն Կ. Մելիք-Օհանջանյանի, աշխատակցությամբ Գ. Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի, Երևան, 1936:

վնասական շրջանի հայ բանահյուսությունն նմուշները: Այս պատմական նշանավոր փաստը իմաստավորվում էր և այնու, որ սկսնակ բանագետը ավանդական բանահյուսությունը զուգընթաց, իր գիտական գործունեությունը սկսում էր նաև սովետական բանահյուսության հավաքմամբ ու հրատարակմամբ: Ղանալանյանի գիտական շահագրգռությունները այս առումով հետագայում ավելի են խորանում, երբ նա մեկը մյուսի կտեից առանձին գրքերով կամ գիտական պարբերականներում հրատարակ է հանում սովետահայ բանահյուսության նյութերն ու դրանց նվիրված հետազոտությունները: Այս տեսակետից հիշարժան են հատկապես 1946-ին հրատարակած «Հայ ժողովրդական բանահյուսություն» դասընթացի XI պարակր⁷ նվիրված սովետահայ բանահյուսությանը, 1961-ին տպագրած «Լեռներ ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մեջ»⁸ ուշխատությունները և այլն: Նշված ուսումնասիրություններում տրված էին սովետահայ բանահյուսության քննահանույթ բնութագիրը, ավանդական բանահյուսության հետ նրա ունեցած ժառանգական աղբյուրները, բնորոշված ու քննված էին նրա թեմաներն ու հիմնական մոտիվները և, մասնավորապես, լեռնայան ստեղծագործությունները՝ իրենց բաղմապիստությամբ ու գրական-բանաստեղծական վերամշակումներով: Ա. Ղանալանյանը դրանցով հիմք էր դնում սովետահայ բանահյուսության գիտությունը, որ հետագայում շարունակվեց ու զարգացվեց իր աշակերտների կողմից: Բայց Ղանալանյանի գիտական շահագրգռությունների բուն առարկան մնում էր ավանդական բանահյուսությունը: 1938 թվականին նա հրատարակում է «Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից» հատընտիր ժողովածուն⁹ փոքրիկ ներածությամբ, ուր բնութագրված էին հայ բանահյուսության հիմնական հակակրոնական մոտիվները և բացահայտված վերջիններիս սոցիալ-դասակարգային իմաստները: Գիտական երաշխի համակարգով ժողովածուում ամփոփված էին մեծ բանահյուսության վիպական ու քնարական տարբեր տեսակների (առակ, նովել, հեքիաթ, առած, անեծք, երգ, հանգամուր ամուսնք) հակակրոնական բնույթը նմուշները, որոնցով մի ամփոփ պատկերացում էր կազմվում հայ

⁷ Ա. Ղանալանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, պրակ ԺԱ, Սովետահայ բանահյուսություն, ՀՍՍՀ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., Երևան, 1946, 34 էջ:

⁸ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտ., № 7, 1961, էջ 41—54:

⁹ Նմուշներ Հայկական հակակրոնական ֆոլկլորից, ժողովածու, կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Արմֆանի հրատ., Երևան, 1938, 126 + XXXII էջ:

ավանդականն, բանահյուսության սոցիալական գաղափարախոսություն հիշյալ կողմի մասին:

Ա. Ղանալանյանն առանձնակի ծառայություններ ունի մեր ժողովրդական մեծ վեպի՝ «Սասնա ծռերի» գրառման ու պրոպագանդման բնագավառում: 1930-ական թվականների սկզբներին, երբ նախապատրաստվում էր «Սասնա ծռերի» գիտական հրատարակությունը, վեպի նոր պատումներ գտնելու և զբաղելու համար մեղանում առաջ է գալիս վիպահավաքման մի ամբողջ շաբժում, որին գործուն մասնակցություն է ցույց տալիս սկսնակ բանագետ Ա. Ղանալանյանը: 1933 թ., սպարկերտցի Փառիկ Վարդանյանից նա գրառում է «Սասնա ծռերի» Դավթի տարբերակներից մեկը («Թլու Դավիթ»¹⁰), իսկ 1936 թ. բաշկալեցի Վարդան Վարդանյանից՝ դարձյալ մի նոր պատում («Սասունն Տավիթ»¹¹): Այս երկու պատումները այն հիմնավոր նախադրյալներն էին, որոնցով ծայր են առնում երիտասարդ բանագետի նախասիրությունները մեր ժողովրդական վեպի նկատմամբ: Այդ կանխասիրություններն առանձնապես ցայտուն են դրսևորվում «Սասնա ծռերի» հոբելյանական հազարամյակի օրերին, երբ Ա. Ղանալանյանը Հայաստանի կառավարության հանձնարարությամբ, Մ. Աբելյանի և Գ. Աբովի հետ միասին, կազմում է «Սասունցի Դավիթ» հերոսավեպի համահավաք բնագիրը¹², որը խոշոր պատմական գեր խաղաց հայ ժողովրդական վեպի ինչպես համագրային, այնպես էլ միջազգային տարածման ու ճանաչման համար: Ա. Ղանալանյանը կազմել էր տվյալ բնագրի Դավթի ճյուղի «Դավիթ և Նանդուլ» մասը, ինչպես նաև «Պստիկ Մհեր» ճյուղը: Դարձյալ նույն հոբելյանական օրերին Ա. Ղանալանյանը գրում է «Սասնա ծռերին» նվիրված մի քանի հետազոտություն, որոնցից հիշարժան են հատկապես երկուսը՝ «Սասունցի Դավիթ»¹³ և «Սասունցի Դավթի» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը»¹⁴: Առաջինում հեղինակը հանվելով նախորդ հետազոտողների, հատկապես Մ. Աբելյանի վեպի ուսումնասիրությունից հանված հիմնական եզրակացությունների վրա և դրանք համալրելով

¹⁰ «Սասնա ծռեր», հատ. Ա., խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբելյան, աշխատակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Պետհրատ, Երևան, 1936, էջ 815, ժԸ պատում:

¹¹ «Սասնա ծռեր», հատ. Բ., մասն երկրորդ, Երևան, 1951, էջ 617, ԻԱ պատում:

¹² «Սասունցի Դավիթ», Հայ ժող. էպոս, Պետհրատ, Երևան, 1939, 382+XXXI էջ:

¹³ Ա. Ղանալանյան, Սասունցի Դավիթ, Հայ ժող. վեպ, Երևանի պետամալսարանի հրատ., Երևան, 1939, 44 էջ:

¹⁴ «Նորհրդային գրականություն», 1939, № 8—9, էջ 39—56:

նորանոր մտահանգումներով, սեղմ, բայց կռու ու ամբողջական պատկերացում է կազմել տալիս վեպի նյութի, պատմական ատաղձի, գաղափարական բովանդակության, նրանում արտացոլված ժողովրդական կյանքի ու կենցաղի և արվեստի էական հատկանիշների մասին: Գիտապատմական կարևոր նշանակություն ունեին մտանավորապես վեպի գաղափարաբանության և գեղարվեստական առանձնահատկությունների այն նոր բացահայտումները, որոնք աչքաթող էին արվել հայ նախնիաց բանագիտության կողմից. դրանցից են հատկապես՝ հայրենասիրության, ժողովրդասիրության, ազգային համերաշխության ու խաղաղասիրության գաղափարները, դասակարգային պայքարի արձագանքները, իսկ գեղարվեստական պատկերավորման հնարաններից մասնավորապես՝ առածասացվածքների, մակդիրների, չափազանցությունների և հակադրությունների, պատկերների և պատկերավոր համեմատությունների, երգիծանքի առկայությունը և դրանց բանաստեղծական օգտագործման եղանակները: Հիշյալ խնդիրների շոշափումը մեր ավանդական վեպի հետադարձության պատմության մեջ բերում էր մի նոր թարմ շունչ և իր վրա բեկում գալիք ուսումնասիրողների ուշադրությունը:

Երկրորդ ուսումնասիրության մեջ Ղանալանյանը շոշափում էր մի շատ ուշագրավ հարց՝ վիպասացների (և առհասարակ բանասացների) իրենց վիպած վեպերի նկատմամբ ունեցած ստեղծագործական վերաբերմունքը, որը թեպետ մեր բանագիտության մեջ Աբեղյանի կողմից ուշադրության էր արժանանցել տակավին ընթացիկ դարասկզբին, սակայն նորոգ ձևով դարձել էր ժամանակի ռուս սովետական բանագետների հետազոտության հատուկ առարկան: Ղանալանյանն, ահա, հաշվի առնելով թե՛ նախորդ հարցադրումը և թե՛ դրա լուծման ժամանակակից պահանջները, բացահայտում և մեկնաբանում է վեպի վրա վիպասացների զբաղմունքների ու սոցիալական վիճակի, աշխարհագրական միջավայրի, հոգեբանության, աշխարհայացքի, խառնվածքի, ձիրքի ու շնորհքի ունեցած ստեղծագործական ազդեցությունները: Նա այդ ազդեցությունների մեջ Լթե մի կողմից ցուցահանում է կենդանի գոյատևող ժողովրդական վեպի դարավոր փոփոխությունների պատճառների զգալի մասը, ասլա մյուս կողմից վիպասացների մեծամասնության չքավոր, աշխատավորական խավերին պատկանելու փաստով է մեկնաբանում «Սասնա ծռերի» ռամկական-աշխատավորական ոգին ու գաղափարախոսությունը:

Ղանալանյանի ժողովրդական վեպին նվիրված այս երկու ուսումնասիրությունները գաղափարական մի ներքին կապով համալրում են

միմյանց և դառնում «Սասնա ծռերի» արյուաքին ու ներքին՝ միմյանցով պայմանավորված իրակությունները մեկնաբանող մի ամբողջական աշխատություն:

Մեր վիպական բանահյուսության Ա. Ղանալանյանին շահագրգռած մյուս տեսակը՝ հեքիաթներն են, որոնք նրա ուշադրության էին արժանացիլ տակավին իր գիտական գործունեության վաղ արշալույսին: 1950 թվականին լույս է տեսնում Ա. Ղանալանյանի կազմած և խմբագրած հայ ժողովրդական հեքիաթների ստվար հավաքածուն¹⁵։ այն ակնառու էր հատկապես իր ներածական ուսումնասիրությամբ: Այստեղ առաջին անգամ մեր բանագիտության մեջ սեղմ ու ամփոփ գծերով որոշարկվում էին հայկական հեքիաթների հիմնական տեսակները, համակարգվում նրանց սյուժետային գլխավոր տիպերը, բնութագրվում էին հեքիաթների գործող անձինք և բացահայտվում հեքիաթների պոչացման պատմաշրջանները, սոցիալ-դասակարգային հիմքերը, ինչպես նաև հասարակական-գաղափարական գլխավոր միտումները: Այս ներածությունը վերամշակված ձևով վերահրատարակվում է 1965 թվականին¹⁶, համալրված ու ընդարձակված հեքիաթների ազգային ու միջազգային հատկանիշների հարաբերակցության որոշարկմամբ և նրանց հասաձակական-դաստիարակչական, պատմաճանաչողական ու գեղարվեստական կողմերի արժեքավորմամբ:

Միևնույն թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայում Ա. Ղանալանյանի կազմած և ծանոթագրած հայկական հեքիաթների ռուսերեն ժողովածուն¹⁷, ուր սեղմ ու համառոտված տեղակայված էր նաև հիշյալ հետազոտությունը իբրև ներածություն:

Երկու ժողովածուն էլ կազմված էին ներածության մեջ առաջադրված հեքիաթների տեսակների (հրաշապատում և իրապատում), նրանց սյուժետային խմբերի դասակարգման տեսական միևնույն սկզբունքներով և առաջին անգամ հայերեն ու ռուսերեն լեզուներով լույս աշխարհ էին հանում տակավին անտիպ մի շարք հեքիաթներ: Իսկ երբ նկատի ենք առ-

¹⁵ «Հայ ժողովրդական հեքիաթներ», կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1950, 566 էջ: Տե՛ս նաև նույնի ռուսերեն թարգմանությունը՝ «Basma populere Arme-ne», Cartă, Rusă, 1958.

¹⁶ Ա. Տ. Ղանալանյան, Հայ ժողովրդական հեքիաթները, «Պատմ-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 35—48:

¹⁷ «Армянские народные сказки», Вступитель. статья, составление и примечания А. Т. Ганалаяна, изд. «Айастан», Ереван, 1965, 400+XVI стр.

նում այն հանգամանքը, որ Ղանալանյանի կազմած հայերեն ժողովածուն սովետական շրջանում հեքիաթներին առաջին հրատարակություններ, ապա պարզ է դառնում տվյալ հրատարակության գիտապատմական կարևոր նշանակությունը:

